

Երևակում եմ դասավանդողի կյանքի իմ հետքը

Յուրա Գանջալյան

Հողվածներ, վերլուծություններ, թարգմանություն-փոխադրություններ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում 26 ուսումնական տարիներ եմ անցկացրել որպես անգլերենի դասավանդող: Աշխատանքային գործունեության ամբողջ ժամանակահատվածում կրթահամալիրը իմ մասնագիտության մեջ նորանոր բացահայտումներ անելու, ինքնակրթվելու, ստեղծագործելու լայն հնարավորություններ է տվել: Շնորհակալ եմ մեր մանկավարժական «Դպիր» էլեկտրոնային ամսագրին, որտեղ պարբերաբար հրապարակվել են իմ հողվածները, և հիմա, երբ արդեն տարբեր տարիների ընթացքում հրապարակումների քանակը զգալիորեն մեծացել է և երբեմն դժվար է լինում գտնել տվյալ պահին ինձ անհրաժեշտ հողվածը, որոշեցի խմբավորել բոլորն ըստ ուղղվածությունների և հանձնել մեր մեդիագրադարանին՝ էլեկտրոնային գիրք ստեղծելու համար: Կարծում եմ, որ այս էլեկտրոնային գիրքը կերևակի իմ աշխատանքային կյանքի հետքը:

Գիրքը մեծ ակնածանքով պարտրված հարգանքի, սիրո ու երախտագիտության տուրք է Մխիթար Սեբաստացուն, որի անունն է կրում մեր կրթահամալիրը: Մխիթար Աբբահոր մեծ առաքելության մասին իմ հողվածը գրքի առաջնորդողն է, որն իր էությանմբ դուրս է մնում թվարկած բաժիններից:

Բովանդակություն

Էլեկտրոնային գիրքը բաղկացած է 5 բաժիններից

1. [Մխիթար Արքայապետի մեծ առաքելությունը](#)

I «Անգլերենի դասավանդման մեթոդական մշակումներ»

2. [Համացանցի գործածումը՝ անգլերենի դասավանդման հզոր միջոց](#)
3. [Լեզվական խաղեր](#)
4. [Գրել սովորեցնելը ավագ դպրոցում](#)
5. [Մեդիաօլիմպիադաներին ներկայացվող անգլերենի առաջադրանքների ստեղծագործական բնույթը](#)
6. [Ուսուցման առարկան՝ օտար լեզու և ոչ թե լեզվի մասին գիտելիք](#)
7. [To teach the language and not some knowledge about the language](#)
8. [Teaching English in Classes of Pupils with Mixed Abilities](#)
9. [Անգլերենի հաղորդակցական կարողությունները զարգացնելու երկու հնարք](#)
10. [Չյան փաթիլից մինչև ձևագունդ](#)
11. [Լսել, լսել ու նորից լսել](#)
12. [Ինչո՞վ տարբերվեց 2011-2012 ուսումնական տարին նախորդներից](#)
13. [Անգլերենի ուսուցումը միջին դպրոցում](#)
14. [The school website helps to create texts](#)
15. [Հրաժարում անգլերենի դասավանդման շտեմարանային-դասագրքային սահմանափակվածությունից](#)
16. [Դպրոցական կայքը սովորողին բովանդակության սպառողից դարձնում է բովանդակության ստեղծող](#)

II «Ուսումնասիրում ենք այլոց մանկավարժական առաջավոր փորձը»

17. [Լուրջ կրթությունը լուրջ ներդրումներ է պահանջում](#)
18. [Մարկ Բրեյի գիրքը. դիմակայում ստվերային կրթության համակարգին](#)
19. [Երբեք չեմ գովի իմ սովորողին, թե որքան խելացի է նա](#)
20. [Անընդհատ սերտել ու անընդհատ քննություն՝ ևն տալ](#)
21. [Մաթեմատիկական կրթության չինական հիմնարար սկզբունքները](#)
22. [Տեխնոլոգիական կրթությամբ դպրոցի կյանքը կապվում է իրական կյանքի հետ..](#)

III «Համեմատության եզրեր համաշխարհային և մեր կրթահամալիրի մանկավարժական մոտեցումների միջև

23. [Բլոգաֆոնյան դասեր](#)
24. [Windows-ը դասարանում-1](#)
25. [«Շրջված դասարան». ի՞նչ է սա](#)
26. [Անգլերենի դասավանդման մասնագիտական փորձառություն](#)
27. [Ֆինլանդիայում կրթական նոր հեղափոխություն է նախապատրաստվում](#)
28. [Պլանշետները նախակրթարանում](#)
29. [Սովորողների ակումբների մասին](#)
30. [Ուսումնական նյութ](#)

IV «Իմ բողոքը»

31. [Հանրապետական օլիմպիադայի համայնքային փուլից](#)
32. [Կրթությունը Հայաստանում. Մի՛ փնտրիր ակնոցդ. աչքիդ է](#)
33. [2010թ. անգլերենի միասնական քննությունների թեստերը](#)
34. [Ավարտական քննությունը պետք է արտացոլի չափորոշային կարողությունները](#)
35. [Անցյալի իներցիան հաղթահարելու համար հնարամտություն է պետք, այլ ոչ թե ուժ](#)
36. [Զգու՛յշ, Գնահատման և թեստավորման կենտրոնն է առաջարկում](#)
37. [Գնահատե՛լ, թե՛](#)

V «Միիթար Սեբաստացի կրթահամալիրին՝ սիրով»

38. [Ավարտվեց մեր մայիսյան հավաքը](#)
39. [Մեր առաջնեկը՝ մեր զարնանայինը](#)
40. [Գնահատել նշանակում է ստեղծել](#)
41. [Media Public Education ... But Why Media?](#)
42. [Մեդիահանրակրթություն. Իսկ ինչու՞ մեդիա](#)
43. [Կրեդոն ընդդեմ դոգմայի](#)


1. Մխիթար Արքայոզման մեծ առաքելությունը (Դպիր 63)



Աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդներն իրենց մշակութային պատմության մեջ ունեցել են անհատներ, ովքեր անգնահատելի մեծ ծառայություն են մատուցել իրենց մայրենի լեզվի պահպանման ու հարստացման համար, ուրեմն նաև՝ ազգապահպանման համար: Սլավոնական ժողովուրդների համար այդ գործը սկսել են Կիրիլը և Մեֆոդին՝ ստեղծելով սլավոնական այբուբենը 16-րդ դարում, իսկ 1860 թվականին արդեն Վլադիմիր Դալը ստեղծել է ռուսաց լեզվի առաջին ծավալուն բացատրական բառարանը՝ «Толковый словарь живого великорусского языка»:

Գերմանական ժողովրդի համար այս սրբազան գործը սկսեցին Գրիմ եղբայրները՝ 1838 –1854թթ՝ տքնելով գերմաներենի առաջին մեծածավալ բառարանի՝ «Deutsches Wörterbuch»-ի ստեղծման վրա՝ գերմանացիներին հատուկ աշխատասիրությամբ ու գործի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ: Այս բառարանի վրա մոտ հարյուր տարի լեզվաբանների մի քանի սերունդ է աշխատել, անընդհատ հարստացնելով այն և միայն 1961 թվականի հրատարակությունն է համարվել լիակատար՝ իր 32 հատորներով, որոնց մեջ 67000 այունակներում 330000 բառի

բացատրություն է տրված:



1604 թվականին հրատարակվել է անգլերենի առաջին բացատրական բառարանը, որի հեղինակը եղել է Ռոբերտ Բոդրելը: Այս բառարանն ունեցել է ընդամենը 2543 բառ: Անգլերեն առաջին բառարանները եղել են ոչ ծավալուն: Նրանք այդ բառարաններում ընդգրկել են միայն այն բառերը, որոնք քիչ գործածական են եղել և անգլիացիների համար դժվար հասկանալի: Այդ բառարանները կոչվել են «Hard Word Dictionaries – Դժվար բառերի բառարաններ»:

1755 թվականին է լույս տեսել անգլերենի առաջին ընդարձակ բառարանը՝ «A Dictionary Of The English Language», որի համար

անգլիացիները պարտական են Սամուել Ջոնսոնին իր վեց տարվա տքնաջան աշխատանքի համար:

Այո՛, Սամուել Ջոնսոնը վեց տարի տքնաջան աշխատել է, բայց նա իր ձեռքի տակ ունեցել է նախկինում ստեղծված, թեկուզև ոչ ծավալուն բառացանկերով բառարաններ՝ Թոմաս Էլիոտի բառարանը՝ 1538թ, Ռիչարդ Մուլկաստերի «The Elementarie»՝ 1582թ, Ռոբերտ Բոդրելի «The Table Alphabeticall»՝ 1604թ.: Հաշվի առնելով այս նշանակալից աղբյուրների գոյությունը՝ կարելի է պատկերացնել այն տիտանական աշխատանքը, որը 25 տարի (1724-1749) կատարել է մեր Մխիթար Արքայապար Վենետիկի Սբ. Ղազար կղզում իր «Բառգիրք հայկազեան լեզուի» երկատորյակը ստեղծելիս՝ չունենալով հայոց լեզվի բառարանագրության ոչ մի նշանակալից նախադեպ, հայերենի ոչ մի այբբենական բառացանկ: Պատմությանը հայտնի էր միայն Արիստակես Գրչի վեցդարյա վաղեմության

ուղղագրական փոքրածավալ ձեռագիր բառարանը, որը չէր կարող որևէ կերպ Մխիթարին ուղեցույց լինել: Նրա հավակնությունները շատ մեծ էին: Նա ուզում էր իր ժամանակի



եվրոպական չափանիշներին համապատասխան բառարան ստեղծել: Այդքան ցածր կետից այդպիսի բարձր թռիչք ճիշտ է, որ հայոց մեծերը նմանվում են ցածրադիր Արարատյան դաշտավայրից 5000 մ կտրուկ վեր խոյացող Արարատին: Կարող էին չէ՞ այլոց նման լատինական պատրաստի տառերը գործածել որոշ ձևափոխումներով: Ո՛չ, վեր խոյացող թռիչք էր պետք, մեզ պետք էր մեր ուրույն դեմքն ու հոգին, մեզ պետք էր, որ մեր մայրենի յուրաքանչյուր հնչյուն ունենար իր համապատասխան տառը առանց որևէ հատուկ տարբերակման նշանների, մեզ մի Սուրբ Մեսրոպ Մաշտոց էր պետք V դարում: Հայոց

մեծերի երկրորդ կարևոր հատկանիշն այն է, որ նրանք մեր ժողովրդի պատմության ամենադժվար պահերին, երբ այլ ազգերի հետ ձուլման վտանգն է առկա լինում, դիմում են մեր լեզվի օգնությանը: Ստեղծելով հայոց գիրը, Աստվածաշունչը հայերեն թարգմանելով, հայկական տարբեր բնակավայրերում բացելով հայկական առաջին դպրոցները՝ Սբ. Մեսրոպ Մաշտոցը փրկեց հայերին հույների, պարսիկների և ասորիների հետ վերահաս ձուլման վտանգից:

XVIII դարում Արևմտյան Հայաստանում ապրող հայերի մեծ մասի կենցաղը հասկանալի պատճառներով թուրքական էր: Շրջապատող առարկաների անվանումները հայերն ավելի հեշտությամբ թուրքերեն էին ասում, քան հայերեն: Մի ահռելի սեպ էր խրվել հայոց լեզվի, հայոց հոգու մեջ, և այդ ժամանակ մեր մեծերի՝ Մեսրոպ Մաշտոցի, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մազիստրոս Պահլավունու, Ներսես Շնորհալու, Մխիթար Գոշի, Հակոբ Մեղապարտի դարերից եկող փոխանցումավազքին միացավ Մխիթար Սեբաստացին: Նա այդ ահռելի լեզվական սեպը հենց լեզվական սեպով էլ հանեց: Իր կյանքի ընթացքում նա 50 հայերեն գիրք հրատարակեց, որից 14-ի հեղինակն ինքն էր: Ահա թե ինչ է գրում Հ.Սահակ Ճեմճեմյանը իր «Մխիթար Աբբահոր հրատարակչական առաքելությունը» գրքի ներածականում. «Ու կը տեսնենք զինքը խոնարհած հայ մանուկին առջեւ, տալու անոր Աբբենարանն ու Քրիստոնեականը, պատանիին դիմաց՝ սորվեցնելու Քերականն ու Ջարգացելոցը, չափահասին՝ բացատրելու Մոլութիւններէ հրաժարիլն ու Առաքինութիւններու հետեւիլը, կու տայ ամէնուն Աստոյ Շունչը տպագիր, բացատրելով ամէնուն ու Մեկնելով նոյն Գիրքին մեջ պարունակուած երկնային իմաստները, կը հրաւիրէ ամենքը իջնել Պարտեզ հոգեւոր եւ կամ Բուրաստան, Խոկալու համար հոն՝ Քրիստոնեական վարդապետութիւնը, թոյլ տալով մանուկներուն որ Խաղի տետրը առած՝ սթափին ու զուարճանան կրկնելով հաւատքի մասերը. Կընծայէ հուսկ հայ գիտունին՝ բոլոր գանձերը Հայկազեան բառարանին»:

Բառգիրք հայկազեան լեզուի

Հ. Սահակ Ճեմճեմյանն իր վերը հիշատակած գրքում ջանում է որքան հնարավոր է մանրամասն ներկայացնել Մխիթար Սեբաստացու բառարանաստեղծական աշխատանքի

եղանակը: Նա գրում է, որ Միաբանության Մայրավանքի դիվանում պահվում է բառարանի սևագիր օրինակների մի ծրար, որի պարունակությունը թույլ է տալիս բաժանելու աշխատանքի ուղղությունը երեք խմբերի.

ա) Մխիթար Աբբահոր ինքնագիր օրինակը. աշխատանքային այս սաղմնային փուլում նա հիմնականում տվել է Աստվածաշնչում հանդիպող հասարակ անունների՝ գոյականների բացատրությունները՝ աստվածաշնչյան վկայություններով և հետևաբար՝ տալով միայն բառերի այն իմաստները, որոնցով դրանք գործածված են Աստվածաշնչում:

բ) Բառգիրք նախնեաց մատենագրութեան. աշխատանքային այս փուլում Մխիթարը հավաքել է Խորենացու, Նարեկացու, Լաբրոնացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Արծրունու, Ոսկեբերանի, Ագաթանգեղոսի և այլ պատմիչների, գրողների և մատենագիրների գործերում հանդիպող բառերը: Այս փուլի ընթացքում չեն կրկնվել առաջին փուլում հավաքված բառերը:

գ) Բառգիրք Սուրբ Գրքի. այստեղ հավաքված են միայն Աստվածաշնչի բառերը, որոնք ունեն ավելի ճոխացված մեջբերումներ և բացատրություններ:

Հ. Սահակ Ճեմճեմյանը նշում է, որ այս ամենով հանդերձ, Հայկազյան բառարանի հիմնական աղբյուրը յոթ լեզվով գրված Ս. Գիրքն է եղել, որի մեջ եղած բառերի քննությունը և հայերեն օրինակների հետ համեմատությունը ավելի արժանահավատ է դարձրել բառերի բացատրությունները:

Մխիթարի համար մեծ օգնություն է եղել նաև 1620թ տպագրության Կալեպինո Ամբրոսիոյի «Յոթ լեզուների բառարանը»: Ուսումնասիրելով տարբեր լեզուներից հայերենի փոխառությունները՝ Մխիթար Սեբաստացին ջանացել է տալ այդ նոր բառերի ստուգաբանական, գիտական բացատրությունները:

Իր Հայկազյան բառարանում Մխիթարը զետեղեց նաև տարբեր քարտեզներ՝ «Համատարած աշխարհացույց», «Մոլորակների ընթացքը», «Աստղալից երկինքը», «Երկիր Ավետյաց», որոնք բառարանը ավելի հանրագիտարանային դարձրեցին:

Ցավալին այն է, որ Մխիթար Սեբաստացին իր կենդանության օրոք Հայկազյանը չտեսավ տպագրված: Նա վախճանվեց բառարանի առաջին հատորի լույս տեսնելուց 22 օր առաջ՝ 1749թ. ապրիլի 27-ին: 1769-ին տպագրվեց Հայկազյան բառարանի երկրորդ հատորը, որով իրականացվեց Մխիթար Սեբաստացու վաղեմի երազանքը՝ գրաբարից աշխարհաբար և աշխարհաբարից գրաբար բառարանների լույս աշխարհ գալը: Նրա երազանքն էր, որ աշխարհի բոլոր տառաճանաչ հայերը, անկախ իրենց կրթական աստիճանից, կարողանան կարդալ և հասկանալ հայոց հոգևոր ժառանգությունը:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի

1836-1837թթ. Մխիթարյան միաբանության անխոնջ վանահայրերի՝ Գաբրիել Ավետիքյանի (1751-1827), Խաչատուր Սյուրմեյանի (1751-1827) և Մկրտիչ Ավգերյանի (1762-1854), 50 տարիների տքնաջան ու խորահմուտ աշխատանքով լույս տեսավ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը: Այս բառարանում բառերի իմաստները բացի հայերեն բացատրություններից տրվում են նաև տվյալ բառի հունարեն, լատիներեն, թուրքերեն, պարսկերեն, ֆրանսերեն համանիշները: Ինչ խոսք, սա ավելի կատարյալ բառարան է, քան

Մխիթար Սեբաստացու ստեղծածը: Հենց դա էլ կլիներ Մեր մեծ Աբբահոր նվիրական փափագը. կյանքը զարգացում է պահանջում, որ աշակերտները ավելի հեռուն գնան, քան իրենց ուսուցիչը:

Ժամանակակից լեզվաբանները, գրականագետները, հնէաբանները, պատմաբանները, մշակութաբանները ավելի շատ են առիթ ունենում բացելու այս բառարանը, բայց հավատացնում են, որ ցանկացած մասնագիտության մարդկանց համար էլ հետաքրքիր է այն, որովհետև ներկայացված բառերով երբեմն զգում ես անցած կյանքերի, զգացումների, արարքների, գաղափարների ու առարկաների շունչը:

Օրինակ՝

Աշտանակ – ճրագակալ. ինչ գեղեցիկ բառ է, հիմա այն բոլորովին չի գործածվում. գործածվում է «մումակալ» բառը (անգլ. candle stick): Այստեղից՝ աշտանակագարդ (ճրագակալներով զարդարված) բառը. կգտնե՞նք դրա նման սիրուն համանիշ անգլերենում:

Ապալեր – ամայի, անբեր վայր (Երևանից Գյումրի տանող ճանապարհի մեծ մասը ապալեր է:)

Բոցաշավիղ - Նա բոցաշավիղ կյանք ապրեց. այսինքն՝ իրենից հետո լույս թողնելով ապրեց: Ինչու է գործածությունից դուրս եկել այս բառը: Այստեղ տեղին է այն օգտագործել. Մխիթար Սեբաստացին բոցաշավիղ կյանք ապրեց:

Գանձանակ - պահարան, որտեղ գանձն են պահում: Եթե այսպիսի լավ բառ ունենք, մեր ինչին է պետք «երկաթյա չիրկիզվող պահարանը», կամ էլ օտարածին «սեյֆը»:

Այստեղ էլ տեղին է օգտագործել այն այսպես՝ «Մեր մայրենի լեզվի գանձանակն է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը»:

Օգտագործված գրականություն և համացանցային կայքերի հասցեներ

1. Հ. Սահակ Ճեմճեմյան «Մխիթար Աբբահոր հրատարակչական առաքելութիւնը», Վենետիկ, Ս. Ղազար, 1996
2. «Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր» ԵՊՀ, Երևան-1976
3. Լեո «Հայոց պատմություն», Սովետական գրող, Երևան 1985
4. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, Ս. Ղազար, 1836

<http://armscoop.com/>

http://en.wikipedia.org/wiki/Explanatory_Dictionary_of_the_Live_Great_Russian_language

<http://www.literaturecollection.com/a/grimm-brothers/>

<http://grammar.about.com/od/words/a/Samuel-Johnsons-Dictionary.htm>

<http://en.wikipedia.org/wiki/Dictionary>

I Անգլերենի դասավանդման մեթոդական մշակումներ

[Անգլերեն. սովորողներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջներ](#)

2. [Համացանցի գործածումը՝ անգլերենի դասավանդման հզոր միջոց \(Դպիր 21\)](#)

Վերջին տարիների իմ աշխատանքային փորձով համոզվեցի, որ այն, ինչը անհնար էր իրագործել մի քանի տարի առաջ, կամ հնարավոր էր դառնում չափազանց մեծ ջանքերի շնորհիվ, այժմ զարմանալիորեն դյուրին է դարձել շնորհիվ համացանցի: Համացանցը անգլերեն դասավանդողների համար անսպառ աղբյուր է, հատկապես այն դասավանդողների, որոնք համառորեն չեն կառչած միայն դպրոցական դասագրքերից, որոնց արդյունավետությունը երբեմն ձգտում է 0-ի:

Ներկայացվում են որոշ հարցերի պատասխաններ՝ հարցեր, որոնք կարող են տալ այն դասավանդողները, որոնց համար նորը, ավելի արդիականը իրենց ամենօրյա աշխատանքում է:

Հարց 1. Դասագրքերում ձևաբանական, շարահյուսական, բառագիտական վարժությունները շատ քիչ են: Իհարկե, կան տարբեր տեսակի գրքեր գրախանութներում, որոնք շատ թանկ արժեն, և անհնար է դրանցով ապահովել բոլոր աշակերտներին: Ինչպե՞ս կարող է ինտերնետը օգնել մեզ այս հարցում:

[www.nonstopenglish](http://www.nonstopenglish.com) կայքում անվճար տրամադրվում են քերականական բառագիտական հարյուրավոր վարժություններ: Աշակերտը կարող է ստուգել իր գիտելիքները յուրաքանչյուր վարժությունը կատարելուց հետո՝ սեղմելով evaluate:

Ամենից ուշագրավն այն է, որ ոչ մի գրքում հնարավոր չէ գտնել լեզվի բարդության 6 մակարդակներով վարժություններ: Ուսուցչի համար սա իրոք որ գանձ է: Գաղտնիք չէ, որ մեր դասարաններում աշակերտների լեզվական գիտելիքների և կարողությունների մակարդակները նույնպես նույնը չեն: Փաստորեն համակարգիչը հնարավորություն է տալիս տարբեր ընդունակություններով և գիտելիքների տարբեր պաշարներով աշակերտներին միևնույն ժամանակ ակտիվորեն ընդգրկվել դասապրոցեսին: Նման հնարավորություն է տալիս նաև www.easyenglish.com կայքը, որը եռամակարդակ է և ունի գիտելիքների ստուգման հետաքրքիր ձև: Սկզբում նշվում են միայն կատարված սխալները: Աշակերտը նորից է կատարում վարժությունը՝ փոխելով նշված սխալ պատասխանները հնարավոր ճիշտ պատասխաններով: Եթե աշակերտը այլևս չի ուզում պայքարել, նա կարող է պահանջել ճիշտ տարբերակը վիրտուալ պրոֆեսորից՝ բացատրություններով:

Հարց 2. Ինչպե՞ս կարելի է զարգացնել խոսելու ունակությունները համակարգչով: Խոսելն ընդհանրապես երկու ձևով է արտահայտվում՝ մենախոսությամբ և երկխոսությամբ: Իմ աշխատանքային փորձով համոզվել եմ, որ երեխաները խոսում են, երբ ստիպված են լինում խոսել, իսկ նրանք ստիպված են լինում խոսել, երբ խաղի մեջ են, երբ իրադրությունն է ստիպում խոսել: <http://itestj.org/games> կայքում կարելի է շատ հետաքրքիր լեզվական դերային խաղեր գտնել, որոնք նպաստում են բանավոր խոսքի զարգացմանը:

Օրինակ՝

Bang Bang

Level: Easy

Divide the group into two teams. Explain that they are cowboys and they are involved in a duel.

One student from each team comes to the front. Get them to pretend to draw their pistols. Say "how do you say..." and a word in their mother tongue. The first child to give the answer and then "bang bang", pretending to shoot his opponent is the winner. He remains standing and the other one sits down. I give 1 point for the right answer and 5 extra points if they manage to "kill" 4 opponents in a row.

Editor's Note: Instead of saying the word in the students' mother tongue, it would be possible to use a picture or to say a definition ("What do you call the large gray animal with a long nose?")

Submitted by: Liz

Describing Appearances & Characteristics of People

Level: Easy to Medium (Low to low intermediate)

Each student is then give one sheet of paper. One student sits at the front of a room. He/she describes a person and the rest of the class draws the person being described.

It is more interesting if the person being described is known by everyone. Once the student has finished describing that person then he/she reveals who it is and each student shows his/her drawing. The laughter from this is hilarious as the impressions tend to make the character in question look funny.

It is a good idea to encourage students to ask the interviewee student questions about who they are describing.

Submitted by: Darrell

What's the Meaning?

Level: Medium to Difficult

You, the teacher, may need a dictionary do this activity.

- Choose a word which is long, difficult, and unknown to the students, a good word to begin with is: *warmonger*.
- Without using a dictionary, your students write down a definition. (They can work out the definition in groups of three). Allow them a few minutes to think and write.
- Collect the definitions and read them aloud.
- When you have finished reading, they will have to vote which of those is the correct one. (It doesn't matter if none of them is the correct one)
- After they have voted and none of the groups guessed the meaning you read the correct one aloud.

The idea of this game is to let students be creative and practice writing skills.

Then you can have the students to discuss their writings.

Submitted by: Natalia Iglesias from Argentina

Խոսելու ունակությունները զարգանում են խոսելով: Խոսելու անսպառ հնարավորություն է տալիս ինտերնետային <http://itestj.org/questions> էջը իր խոսակցական 150 թեմաներով և մոտավորապես 6000 հարցերով:

- [Accidents at Home](#)
- [Adoption](#)
- [Advertising](#)
- [Age: Youth & Old Age](#)
- [Airplanes](#)
- [Animals & Pets](#)
- [Annoying Things](#)
- [Arguing](#)
- [Art](#)
- [Baseball](#)
- [Basketball](#)
- [Beach](#)
- [Beauty and Physical Attractiveness](#)
- [Behavior](#)
- [Birthdays](#)
- [Cars and Driving](#)
- [Celebrities](#)
- [Charity](#)
- [Children](#)
- [Cities](#)
- [Classrooms](#)
- [Clothes & Fashion](#)
- [College](#)
- [Colors](#) (Also spelled "colours")
- [Comics](#)
- [Community](#)
- [Computers](#)
- [Conflict](#)
- [Corruption](#)
- [Countries](#)
- [Creativity](#)
- [Crime](#)
- [Culture](#)
- [Dangers](#)
- [Dating](#)
- [Death & Dying](#)
- [Diets](#)
- [Disaster](#)
- [Disaster Preparation](#)
- [Discrimination](#)
- [Dreams](#)
- [Drugs](#)
- [Holidays:](#)
 - [Holidays](#)
 - [April Fool's Day](#)
 - [Christmas](#)
 - [Halloween](#)
 - [Saint Patrick's Day](#)
 - [Thanksgiving](#)
 - [Vacations / After a Vacation](#)
 - [Valentine's Day](#)
- [Home](#)
- [Hometowns](#)
- [Honesty and Truthfulness](#)
- [Immigration](#)
- [Internet](#)
- [Jobs, Occupations & Work](#)
- [Languages](#)
- [Likes & Dislikes](#)
- [Love, Dating & Marriage](#)
- [Manners](#)
- [Marriage](#)
- [Martial Arts](#)
- [Meeting People](#)
- [Memory](#)
- [Money & Shopping](#)
- [Motivation](#)
- [Movies](#)
- [Music](#)
- [Names](#)
- [News](#)
- [Parenting](#)
- [Personality](#)
- [Police](#)
- [Politics](#)
- [Poverty](#)
- [Restaurants & Eating Out](#)
- [Retirement](#)
- [School](#)
- [Science and Technology](#)
- [Self-employment](#)
- [Silly Questions](#)
- [Single Life](#)
- [Social Problems](#)

- [Earthquakes](#)
- [Education](#)
- [English Literature & Books](#)
- [English Study](#)
- [Entertainment \(Radio, Games, Gambling, ...\)](#)
- [Environment & Pollution](#)
- [Eye Contact](#)
- [Fads and Trends](#)
- [Family](#)
- [Favorites](#) (Also spelled "favourites")
- [Fears](#)
- [Feelings](#)
- [Food & Eating](#)
- [Free Time and Hobbies](#)
- [Friends](#)
- [Fruits and Vegetables](#)
- [Future](#)
- [Gambling](#)
- [Garage Sale](#)
- [Gardening](#)
- [Gender Roles](#)
- [Generation Gap](#)
- [Gestures](#)
- [Getting to Know Each Other](#)
- [Goals](#)
- [Gossip and Rumors](#)
- [Habits](#)
- [Happiness](#)
- [Have You Ever ...?](#)
- [Health](#)
- [Sports](#)
- [Standardized Exams](#)
- [Stress](#)
- [Supernatural, Ghosts & Superstitions](#)
- [Teenagers](#)
- [Telephones](#)
- [Television](#)
- [Tell me about...?](#)
- [Terror](#)
- [Time](#)
- [Tipping](#)
- [Traffic Accidents](#)
- [Transportation](#)
- [Trauma](#)
- [Travel](#)
- [Tsunami](#)
- [Moving to the United States](#)
- [Volunteer Work](#)
- [War](#)
- [Weather](#)
- [What if ...?](#)
- [Wishes](#)
- [Would you ever ...?](#)
- Drills
 - [Are You Good At ...?](#)
 - [Days](#)
 - [How do you...?](#)
 - [Months](#)

Մի թեմայով հարցերի օրինակ.

Beauty and Physical Attractiveness

A Part of [Conversation Questions for the ESL Classroom](#).

There is a related set of questions at <http://iteslj.org/questions/clothes.html>

- Who do you think is the most beautiful person in your country?
- Who do you think is the most beautiful person alive today?
- Who was the most beautiful person in history?
- Who is the most attractive in your family?
- Does beauty affect one's success in life?

- Is it better to be physically attractive or intelligent?
- Is it better to be physically attractive or wealthy?
- Is beauty related to power?
 - Can you think of anyone who is in a position of power that is not physically attractive?
- Do people spend too much time and money on beauty?
- How much time should be spent on making yourself look better each day?
- Who would you say is beautiful that others maybe wouldn't?
- Do you think people should have cosmetic surgery to enhance their looks?
 - If so what is the minimum age when someone should have plastic surgery?
 - How popular is plastic surgery in your country?
 - What is the most popular feature for cosmetic alteration?
 - Do you think self-esteem affects beauty?
 - Do you think beauty affects self-esteem?
- How important is beauty in your daily life?
- Have you ever noticed anyone ever feeling pressured to be more beautiful?
- What do you think of the proverb, "beauty is in the eye of the beholder?"
 - Do you have any proverbs or idioms from your country that relate to beauty?
- What are some beauty tips that you could share?
- Do you think people with many tattoos can be beautiful?
 - How many tattoos is too many?
 - Would you ever get a tattoo?
 - Do you have a tattoo?
- Do you think people with many piercings can be beautiful?
 - What kind of body piercing, if any, do you feel are acceptable?
 - What kind of piercing, if any, do you feel are unacceptable?
- What personality trait is the most important for inner beauty?
- How do you define beauty, using your own words?
- Would you ever date someone who was not conventionally attractive?
- What makes one person more attractive than another?
- Do you think people from different countries than you see attractive the same way?
- Is there someone famous that is considered beautiful, that you think is not?
- Are beauty pageants good or bad?
- Should children be entered into beauty pageants?
- Do you think one gender or group worries more about beauty than another?
- Would you want your children to be beautiful or talented?
- What are some of the negatives about being beautiful?
- What are some examples of social pressures to improve on natural beauty?
 - For example, lipstick, haircutting, shaving, ...
- What do you think about plastic surgery?

- Would you ever have plastic surgery?

Կգտնե՞ք արդյոք մի գիրք, որը 150 տարբեր թեմաներով 6000 հարց կտա ձեր աշակերտներին: Սովորաբար գրքերը պատրաստի թեմաների տեքստերն են առաջարկում, որոնցից հետո շատ քիչ հարցեր են տրվում: Ինքնուրույն մտածելու խոսք ստեղծելու հնարավորություն չի տրվում:

Հարց 3. Ինչպե՞ս է օգնում ինտերնետը ուսումնական տեքստեր պատրաստելու գործում:

Անգլերեն լեզվով ցանկացած թեմայով տեքստ կարելի է գտնել ինտերնետում:

Դժվարությունը միայն կայանում է նրանում, որ տեքստերի լեզվական բարդությունը շատ հաճախ չի համապատասխանում աշակերտների լեզվական գիտելիքներին ու կարողություններին: Հարկ է լինում դրանք պարզեցնել և համապատասխանեցնել տվյալ դասարանի առարկայական ծրագրի պահանջներին և չափորոշիչներին: Օրինակ՝ վերջերս ինձ անհրաժեշտ էր ժողովրդավարության մասին մի տեքստ պատրաստել 9-րդ դասարանի համար: Իներնետում գտա այս տեքստը.

DEMOCRACY

Democracy is a way of governing a country. The most common definition of democracy is rule by the people. This means, the people consent to the government running the country. People are given an opportunity to choose, through their right to vote, people to represent them in government. They do this in regular, free and fair elections. However, democracy doesn't end there. Democracy also means that the people who have been elected are accountable in various ways to the people who voted for them. They have to act and deliver on the promises they made during elections and they have to be open (transparent) in their actions.

Այս տեքստը ինձ մտքեր է հուշում, որոնք մատչելի ձևով շարադրում են աշակերտների համար՝ արդեն հարմարեցված մեր երկրին: Արդյունքում ստացվում է այս տեքստը.

As we have mentioned democracy is first of all a government “for the people and by the people”. How do the people govern themselves?

There are two basic models of democracy: representative and direct.

By saying “representative democracy” we mean that people take part in different elections. They elect a small group of leaders who then run the government. For example, Armenian people elect the members of our National Assembly. Armenians also elect President of our Republic.

An example of direct democracy is referendum.

Ստեղծվող ուսումնական նյութերը շատ են հարստանում ինտերնետում առկա տարաբնույթ նկարագրողումներով: Օրինակ՝ ներկայացնում եմ մի հատված “Shopping” թեմայով մեր ստեղծած ուսումնական նյութից:

Ինտերնետը անգլերենի ուսուցչի համար մի հզոր միջոց է դասն ավելի արդյունավետ դարձնելու համար: Յուրաքանչյուր դասավանդող թող օգտվի դրանից իր ուժերի ներածին չափով:

If we want to buy tools, we go to the tools department. Here we can find hammers, screwdrivers, pincers, wrenches, saws, axes, nails, screws, drills, electrical saws, paint brushes and so on.



2. Լեզվական խաղեր (Դպիր 24)

Օտար լեզու սովորելու համար պետք է, նախ և առաջ, մեծ նպատակ ունենալ: Այդպիսի նպատակ են բուհական ընդունելության քննությունը, արտասահման մեկնելու կամ բարձր աշխատավարձով աշխատանքի տեղավորվելու ռեալ հեռանկարները: Սովորաբար այս ունկնդիրների հետ աշխատելիս ուսուցիչն առանձնակի դժվարություններ չի հաղթահարում դասն ավելի հետաքրքիր դարձնելու համար: Ուսանողի կարգավիճակը, շատ բարձր աշխատավարձը կամ էլ բարձր կենսամակարդակով արտասահմանյան երկրում ապրելու հեռանկարները միշտ խթանի դեր են կատարում, երբ սովորողը ծուլանում է: Հիմնականում սա է հաջողության խթանիչ ուժը, երբ սովորը այնքան էլ չի փայլում իր ընդունակությամբ, իսկ դասավանդողն էլ միջակություն է լեզվական իր գիտելիքներով ու սահմանափակ մեթոդական հնարքներով:

Բոլորովին այլ բան է մերօրյա հիմնական դպրոցում արդյունավետորեն օտար լեզու դասավանդելը: Բացակայում է մեծ նպատակը՝ ամենօրյա, ամենահաս խթանը:

Սկզբնական խանդավառությունն իր տեղը զիջում է թերաբժեքության զգացողությանը, որն այնուհետև փոխվում է անտանելի ձանձրույթի ու միակ էլքը ստեղծված իրադրությունից դառնում է օտար լեզու սովորելու մտադրությունից հրաժարվելը: Հիմնական դպրոցում դասավանդողը պետք է գտնի մեծ նպատակին փոխարինող մեկ այլ խթանիչ ուժ, որն է՝ **հետաքրքրությունը**:

Օտար լեզվի դասերը ավելի հետաքրքիր դարձնելու ամենաարդյունավետ հնարքներից մեկը լեզվական խաղն է: Լեզվական խաղի ժամանակ աշակերտը կարճ ժամանակահատվածում հայտնվում է մի անելանելի իրադրության մեջ, որից դուրս գալու միակ էլքը օտար լեզվով համապատասխան միտք արտահայտելն է: Դասն ինքնաբերաբար դառնում է աշակերտակենտրոն, գործածվում են խմբային ուսումնական գործունեության տեսակներ, աշակերտների մեծ քանակը մեծ խանգարիչ ուժ չի ունենում:

Ստորև ներկայացնում եմ իմ մշակած և փորձարկված, ինչպես նաև՝ տարբեր աղբյուրներից վերցված լեզվական խաղեր, որոնք կարելի է գործածել անգլերենի և այլ օտար լեզուների

դասավանդման ժամանակ: Որոշ լեզվական խաղեր կարելի է նույնիսկ գործածել մայրենիի լեզվական հմտությունները զարգացնելու նպատակով:

Խոսելու կարողությունները զարգացնող լեզվական խաղեր

Ձևագունդ

Առաջարկվում է մի որևէ աշակերտի կազմել մի պարզ ընդարձակ նախադասություն: Երկրորդ աշակերտը պետք է կրկնի առաջին աշակերտի նախադասությունը և ավելացնի իրենը: Երրորդ աշակերտը կրկնում է առաջին երկու նախադասությունները և տրամաբանական շարունակությամբ ավելացնում իրենը և այդպես շարունակ: Ստացվում է այնպես որ վերջին աշակերտը հանպատրաստից հորինված մի ամբողջ պատմություն է պատմում: Խաղը մեծապես օգնում է մենախոսության կարողությունների զարգացմանը:

Օրինակ՝

The first student:” Last summer I went to the seaside with my family.”

The second student:” Last summer I went to the seaside with my family. We hired a room in a house near the sea.”

The third student: “Last summer I went to the seaside with my family. We hired a room in a house near the sea. We went to the beach every morning.”

Եվ այդպես շարունակ...

Կենդանի բառարան

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Յուրաքանչյուր խումբ ընտրում է իր առաջնորդին, ով համեմատաբար լավ է կարողանում անգլերենով մտքեր արտահայտել: Դասավանդողը առաջնորդներին է տալիս նախօրոք պատրաստված անգլերենով գրված հինգական բառերի ցուցակ: Առաջնորդը պետք է, խոսքն ուղղելով իր խմբին, բառերն այնպես բացատրի, որ խումբը կռահի այն ու միմյանց հետ փոքր խորհրդակցելուց հետո արտաբերի կռահած բառը անգլերեն: Առաջնորդին չի թույլատրվում ցույց տալ առարկան կամ նրա նկարը: Պարտվում է այն թիմը, որը ավելի քիչ բառ է կարողացել գուշակել: Սեփական, չսերտած խոսք անգլերենով արտահայտելու կարողությունն է զարգացնում այս խաղը: Խաղի ընթացքում ուսուցիչը չի ուղղում առաջնորդների քերականական սխալները: Խաղի գերխնդիրը անգլերենով հասկացված լինելն է:

Ընտանեկան արձակուրդ

Դասարանը բաժանվում է վեց աշակերտից բաղկացած խմբերի: Սա դերախաղային գործունեություն է: Գործող անձինք են պապիկը, տատիկը, հայրիկը, մայրիկը, որդին և դուստրը: Պապիկն ուզում է արձակուրդն անցկացնել հանգստյան տանը, տատիկն ուզում է մեծ մաքրություն անել, մայրիկն ուզում է այցելել Սանկտ-Պետերբուրգ իր թանգարաններով, հայրիկն ուզում է ծովափ գնալ, որդին ուզում է միանալ լեռնագնացների խմբին իսկ դուստրը՝ մասնակցել «սուպերսթար» մրցույթին:

Յուրաքանչյուր խումբ գրում է ընտանեկան վեճի իր տարբերակը և բանավոր ներկայացնում է դասարանին: Հաղթում է այն խումբը, որի երկխոսությունները ավելի անսխալ են ու հարուստ բառապաշարով: Հաղթողին որոշում է ուսուցիչը:

Թերություններ և առավելություններ

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Դասավանդողը ներկայացնում է որոշ մտքեր. Օրինակ՝ *վրանային ճամբար, հանգիստը լեռներում, համակարգչային խաղեր, հեռուստատեսային սերիալներ, շատ փող ունենալ* և այլն: Մի խումբը խոսում է տվյալ գաղափարի միայն առավելությունների մասին, իսկ մյուս խումբը՝ միայն թերությունների:

Հնարամիտ գովազդ. վաճառվում է ամեն ինչ

Դասարանը բաժանվում է երեքական աշակերտներից բաղկացած խմբերի: Դասավանդողը խմբերին է տալիս նախօրոք կազմված վաճառքի ամար ամենաանհավանական առարկաների ցուցակներ: Օրինակ՝ *ձնագնդիկ, մեկ լիտր մաքուր անձրևաջուր, ծակ հատակով դույլ, ժանգոտած մեխ* և այլն: Խմբերը այդ առարկաների գործածման այնպիսի հնարավոր տարբերակներ պետք է առաջարկեն, որ լսողի մոտ ցանկություն առաջանա գնել այն:

Իմ երագած բնակարանը

Դասարանը բաժանվում է երեքական աշակերտներից բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր երագած բնակարանը իր բոլոր ժամանակակից հարմարություններով ու ներկայացնի ամբողջ դասարանի դատին: Վերջում քվեարկությամբ որոշվում է ամենալավ բնակարանը:

Բանջարեղենային աշխարհ

Դասավանդողը նախօրոք կազմում է 5 բանջարեղենի անուններով մի ցուցակ և այդ ցուցակում գրված բանջարեղենի անունները կոտակելու համար կազմված 10 հարց: Օրինակ՝ 1. cucumber 2. potato 3. cauliflower 4. cabbage 5. Tomato

1. Can it be boiled?
2. Is it countable or uncountable?
3. Does it grow in the ground?
4. Can you eat it raw?
5. Is it bitter or sweet?
6. Do people eat many/much of them/it in Armenia?
7. What do you eat it with?
8. How big is it?
9. What colour is it?

10. What's the first letter?

Առաջին հարցի պատասխանը լսելուց հետո բանջարեղենի անունը ճիշտ կռահողը ստանում է 10 միավոր: Երկրորդ հարցի պատասխանից հետո՝ 9 միավոր և այդպես շարունակ:

Հատուկ հարցերի շղթա. հարցաքննություն

Դասարանը բաժանվում է զույգերի: Յուրաքանչյուր զույգ պետք է կազմի երկխոսություն, որը ներառում է միայն հատուկ հարցեր ու դրանց պատասխանները: Յուրաքանչյուր հարց հիմնվում է նախորդ պատասխանի վրա:

Օրինակ՝ “I went to the library yesterday.”

“Why did you go there?”

“I went there to borrow a book.”

“Which book did you borrow?”

Եվ այդպես շարունակաբար կառչելով հերթական պատասխանի մի որևէ բառից տրվում է հաջորդ հարցը:

Գրելու կարողությունները զարգացնող լեզվական խաղեր

Դասարանը բաժանվում է վեցական աշակերտներից բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրվում է վեց հորիզոնական սյունակներով ծավալած տետրի մի թերթ: Յուրաքանչյուր թերթի վերևի մասում գրված է մի հարց: Հարցերն ըստ հերթականության այսպիսին են.

Who? (a man's name)

Whom? (a woman's name)

Where?

What did he say?

What did she say?

What did they do?

Առաջին խմբի առաջին աշակերտը պատասխանում է առաջին հարցին և թերթը ծալում է այնպես, որ իր գրածը չերևա: Այնուհետև երկրորդ աշակերտը գրում է երկրորդ հարցի պատասխանը և ծալում է այնպես, որ իր գրածը չերևա: Եվ այդպես մինչև վերջին հարցի պատասխանը: Երբ բոլոր հարցերին բոլոր խմբերը պատասխանել են, յուրաքանչյուր խմբից մի աշակերտ սկսում է կարդալ իրենց ստեղծած պատմությունը հետևյալ ձևաչափով.

(man's name) met (woman's name)

He said ...

She said ...

And so they ...

Դասարանական պայմանագիր

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Մի խումբը գրում է ուսուցչի իրավունքները և պարտականությունները, իսկ մյուս խումբը՝ աշակերտի: Այսպիսով ստեղծվում է

դասարանական պայմանագիր:

Տնտեսում խնայելով

Դասարանը բաժանվում է զույգերի: Յուրաքանչյուր զույգ պետք է գրի, թե ինչպես կարելի է կրճատել էլեկտրական հոսանքի, հեռախոսի, գազի և ջրի վարձերը ամենախելամիտ ձևերով: Վերջում զույգերը ներկայացնում են իրենց գրավոր առաջարկությունները:

Հրավերքի մերժում

Դասարանը բաժանվում է զույգերի: Յուրաքանչյուր զույգի առաջարկվում է մերժման պատասխան նամակ գրել, երբ հրավիրված են՝ գրասխնջույքի, նշանադրության արարողության, հարսանեկան խնջույքի, ժողովի, մի որևէ հարցի քննարկման: Վերջում զույգերը կարդում են իրենց մերժումները: Հաղթում է այն զույգը, ում անկարելի է չներելը:

Բարեբախտաբար ու դժբախտաբար

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Մի խումբը ավետաբեր է, իսկ մյուսը՝ գուժող: Դասավանդողն ասում է ստեղծվող պատմության առաջին նախադասությունը: Ավետաբեր խումբը քքննարկելով ասվածը, գրում է ասված մտքի շարունակությունը սկսելով իր նախադասությունը «բարեբախտաբար» բառով: Մյուս խումբը շարունակում է միտքը «դժբախտաբար» բառով և պատմության մեջ անհանգստացնող լարվածություն է ստեղծում: Եվ այդպես շարունակ: Հուսով եմ, որ առաջարկված լեզվական խաղերը օգտակար կլինեն օտար լեզու դասավանդողներին:

Օգտագործված գրականություն

Thomas Kral “ The Lighter Side of TEFL” A teacher’s resource book of fun activities, 1994
David Seymour & Maria Popova: “700 Classroom Activities”, 200

4. Գրել սովորեցնելը ավագ դպրոցում (Դպիր 37)

Մեթոդական ուղեցույց անզլերեն դասավանդողների համար

Նախարան2
Գրելու վերահսկվող գործունեություն3
Նախադասությունների միջև տրամաբանական կապ ստեղծելը3
Տեքստի ավարտում8
Տեքստի պարզեցված շարադրում9

Աշխատանք տեքստ-նմուշներով (Matrix)9
1. Դիմում9
2. Տեղեկանք11
3. Ինքնակենսագրություն12
4. Պայմանագիր12
Աշխատանք տեքստի տրված պլանի հետ12
Կարճ ինքնակենսագրական տեղեկատվություն, CV13
Հետազոտական աշխատանք գրելը18
Ազատ ստեղծագործաբար գրելու գործունեություն19
Նամակներ գրելը19
Վիճահարույց թեմաներով շարադրություններ գրելը20

Նախաբան

Գրել սովորեցնելը մեր հանրակրթական դպրոցներում սկսվում և ավարտվում է հանրակրթության տարրական աստիճանում և վերսկսվում է միայն որոշ համալսարանների որոշ ֆակուլտետներում: Կրթական ծառայության այս բաղադրիչը պետք է կարևոր համարել կրթության բոլոր աստիճաններում թե՛ հումանիտար և թե՛ բնագիտական ոլորտներում, ինչը արվում է ամերիկյան և եվրոպական կրթական համակարգերում: Գրելը մի կարողություն է, որը ձեռք է բերվում ճիշտ դասավանդմամբ: Գրել կարողանալը պետք չէ շփոթել դեռ խորհրդային ժամանակներից եկող ու տարբեր առիթներով հիմա էլ գործածվող շարադրությունների մրցույթներին մասնակցելն ու հաղթելը՝ մոտավորապես այսպիսի թեմաներով. «Արդյո՞ք ես հայրենասեր եմ», «Հերոսներն անմահ են», «Աշնան գույները», «Կյանքի շեմին», «Ուշացած ծաղիկներ», «Իմ առաջին ուսուցիչը»...: Նմանատիպ շարադրություններ լավ գրողները որպես կանոն օժտված են լինում գեղարվեստական խոսք ստեղծելու բնատուր տաղանդով, որը չունենալը չի կարելի դիտել որպես թերություն: Յուրաքանչյուր սովորող ուսումնառության ընթացքում իրավունք ունի ձեռք բերելու գրելու կարողություններ: Մեր առօրյա կյանքում երբեմն լսում ենք տարբեր անձնավորությունների այսպիսի որակավորումներ. «Անգրագետի մեկն է, մի ինքնակենսագրություն (նամակ, հրավեր, հաշվետվություն, զեկուցագիր, անձնական հակիրճ տեղեկատվություն) էլ չի կարողանում գրել»: Իսկ հանրակրթական դպրոցն արդյո՞ք ձևավորել է այդ կարողությունները ուսումնառության 9 կամ 12 տարիների ընթացքում: Գրելու կարողությունների զարգացումը ամենօրյա հետևողական աշխատանք է պահանջում, որը սահուն անցում է գրելու վերահսկվող դասարանական գործունեությունից դեպի ազատ, ստեղծագործաբար գրելու գործունեությունը:

Գրելու վերահսկվող գործունեություն

Նախադասությունների միջև տրամաբանական կապ ստեղծելը
Աշակերտներն իրավունք ունեն ճանաչելու և բանավոր ու գրավոր խոսքում կիրառելու
նախադասությունները կապող հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

according to ըստ, համաձայն

after հետո

although չնայած

apart from բացի, չհաշված

as բանի, որ

as a result of արդյունքում

as ... as այնպես ... ինչպես, այնքան ... որքան

as compared with համեմատած մի բանի հետ

as far as որքանով, որ; մինչև

as for ինչ վերաբերում է

aside from բացառությամբ

as if կարծես

as long as մինչև այն ժամանակ, երբ

as regards Ինչ վերաբերում է

as soon as հենց, որ

as though կարծես

as to ինչ վերաբերում է

as well as ինչպես նաև

at the expense of մի բանի հաշվին

because որովհետև

because of պատճառով

both ... and և ... և

but for եթե չլիներ

by means of միջոցով

by the time մինչև

by virtue of շնորհիվ

concerning վերաբերյալ

compared with համեմատած

contrary to հակառակ

despite չնայած

directly հենց որ,

due to շնորհիվ

either ... or կամ ... կամ

either նույնպես, երկուսից յուրաքանչյուրը

except բացի, բացառությամբ

except for բացի (նախադասության սկզբում)

failing մի բան չունենալու պատճառով, եթե մի բան առկա չլինի

following հետևյալ

for բանի որ
 for the purpose of նպատակով
 for the sake of հանուն
 furthermore դեռ ավելին
 hardly ... when հազիվ ... երբ
 hence հետևաբար
 however սակայն, որքան էլ որ,
 if եթե
 immediately անմիջապես
 in accordance with համապատասխան մի բանի
 in addition to ի հավելումն մի բանի
 in behalf of հանուն
 in case այն դեպքում, եթե
 in comparison with համեմատած
 in compliance with; in conformity with համապատասխան
 in connection with առումով, կապված մի բանի հետ
 in consequence of հետևանքով
 in consequence հետևանքում
 independently of անկախ
 in exchange for մի բանի փոխարեն
 in favour of ի օգուտ մի բանի
 in order that որպեսզի
 in relation to վերաբերյալ, ինչ վերաբերում է
 in return for փոխարենը
 in so far as որքանով որ
 in spite of չնայած
 in spite of the fact that Չնայած այն բանի, որ
 instead փոխարենը
 instead of մի բանի փոխարեն
 in the course of ընթացքում
 in the event of այն դեպքում, եթե
 in the name of մեկի անունից
 in view of նկատի ունենալով այն, որ
 in virtue of շնորհիվ
 irrespective of անկախ մի բանից
 lest որպեսզի ... չ
 like նման
 moreover դեռ ավելին
 neither ... nor ոչ ... ոչ
 neither ոչ մեկը, ոչ մյուսը
 Nevertheless այնուամենայնիվ
 no sooner ... than չհասցնել մի բան անել... երբ
 not only ... but also ոչ միայն ... այլ նաև

notwithstanding that չնայած, այնուամենայնիվ
 now that հիմա, երբ
 on account of հետևանքով
 on behalf of մեկի անունից
 on condition that այն պայմանով, որ
 on the ground that այն հիման վրա, որ
 on the part of մեկի կողմից
 opposite to դիմաց, հակառակ
 or else թե չէ
 otherwise այլապես
 owing to շնորհիվ
 prior to նախորդող
 provided that; providing that
 այն պայմանով որ, եթե միայն
 regarding վերաբերյալ
 saving բացառությամբ, չհաշված
 since քանի որ
 so as որպեսզի (հետևում է նպատակի պարագա)
 not so ... as ոչ այնքան ... որքան
 so far as որքան որ
 so long as եթե, այն պայմանով, որ
 so that Որպեսզի (հետևում է նպատակի պարագա երկրորդական նախադասություն)
 still այդուհանդերձ, այնուամենայնիվ
 supposing that ենթադրենք, որ
 thanks to շնորհիվ
 therefore ուստի
 though չնայած
 unless եթե ... չ
 until մինչև ... չ
 unlike ի տարբերություն
 up to մինչև
 versus մի բանը մի այլ բանի դիմաց (համեմատելու իմաստով)
 via միջոցով (օգնությամբ)
 whatever ինչ էլ որ
 whenever երբ էլ որ
 whereas այն դեպքում, երբ
 wherever որտեղ էլ որ
 whether թե արդյոք
 while մինչդեռ
 whoever ով էլ որ
 with a view to մտադրությամբ, նպատակով
 within մի ժամանակահատվածի ընթացքում
 with the exception of բացառությամբ

with the purpose of նպատակով
yet մինչդեռ, այնուամենայնիվ, բայց և այնպես

Տեքստի ավարտում

Տրվում է տեքստի սկիզբը մի քանի նախադասությամբ: Աշակերտները պետք է ավարտեն այն օգտվելով տրված բառերից և բառակապակցություններից:

Օրինակ՝

Last year we went to the seaside. We wanted to stay there for two weeks. On the day of our arrival the weather was fine and the sea was calm. ...

Տրված են հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

To change for the worse, rough, stormy, inside the hotel, regret, wish for the better, play board games, not to lose one's hope, to change for the better, on the day of departure.

Տեքստի պարզեցված շարադրում

“Intermediate” մակարդակով գրված տեքստը կարդալուց հետո աշակերտներին առաջարկվում է ավելի պարզ բառերով և բառակապակցություններով վերաշարադրել այդ տեքստի բովանդակությունը երրորդ դեմքով՝ տեքստում հանդիպող ուղղակի խոսքը վերածելով անուղղակիի:

Օրինակ՝

One day I took the opportunity of asking Mrs Fairfax a few questions about Mr Rochester, as I was curious about him, and the housekeeper seemed happy to talk.

“Is he liked by most people?” was my first question.

“Oh yes, his family have always been respected here. They’ve owned the land round here for years,” she replied.

“But do you like him? What is his character like?”

“I have always liked him, and I think he is a fair master to his servants. He is a little peculiar, perhaps. ...”

Պարզեցման հնարավոր տարբերակ.

It was interesting for Jane Eyre to learn something about Mr Rochester, and one day she asked Mrs Fairfax some questions about him. She wanted to know whether people liked Mr Rochester, and Mrs Fairfax answered that his family had lived there for a long time, and people had always respected his family. Then Jane asked Mrs Fairfax if she liked him and what his character was like. Mrs Fairfax answered that she liked him as he was always nice to his servants and added that he was not like other people.

Աշխատանք տեքստ-նմուշներով (Matrix)

Դիմում աշխատանքի ընդունվելու համար

Աշխատանքի ընդունվելու դիմումը պետք է լինի պարզ, ոչ շատ ծավալուն (մեկ էջի սահմաններում) և լինի ամենակարևորի մասին: Ամենակարևորն այն է, որ դուք տեղեկացնեք, որ հենց այն մարդն եք, ում փնտրում է գործատուն:

Դիմումի վերին աջ անկյունում գրվում է դիմողի անունը, ազգանունը, փոստային և էլեկտրոնային հասցեները, հեռախոսի համարը և դիմումի ուղարկման ժամկետը:
Դիմումի վերին ձախ մասում գրվում է գործատուի անունը և ազգանունը, նրա պաշտոնը և ձեռնարկության անվանումը:

Դիմումի առաջին պարբերությունը պետք է լինի այն մասին, թե ինչու՞ ես գրում նրանց, ո՞ր թափուր պաշտոնի համար ես դիմում: Եթե այդ աշխատատեղի թափուր տեղի մասին իմացել ես հայտարարությունից, ապա պետք է նշել, թե որտեղ ես կարդացել այն: Եթե հայտարարության մեջ այդ աշխատատեղը կողավորված է, ապա պետք է նշել այդ կողմը: Երկրորդ պարբերության մեջ պետք է տեղեկացնես, որ դու ունես բոլոր այն որակավորումները և աշխատանքային հմտությունները, որոնք անհրաժեշտ են այդ պաշտոնը զբաղեցնելու համար: Այս մասում անհրաժեշտ է նշել համապատասխան աշխատանքային փորձառության մասին:

Երրորդ պարբերության մեջ կարող ես նշել, որ կարող եմ դիմել քեզ, եթե լրացուցիչ տեղեկությունների անհրաժեշտություն լինի: Դիմումի վերջում կարող ես շնորհակալություն հայտնել աշխատանքի համար դիմելու հնարավորություն ստանալու համար:

Դիմումի օրինակ

XYZ Company

87 Delaware Road

Hatfield, CA 08065

(909) 555-5555

george.gillhooley@email.com

Date

Dear Mr. Gilhooley,

Tigran Vardanyan

Raffi 32, apt. 24 Yerevan 0034, Armenia Tel: (+374)93-54-87-

87 begin_of_the_skype_highlighting (+374)93-54-87-

87 begin_of_the_skype_highlighting (+374)93-54-87-

87 end_of_the_skype_highlighting end_of_the_skype_highlighting

I am writing to apply for the programmer position advertised in the Times Union. As requested, I am enclosing a completed job application, my certification, my resume and three references.

The opportunity presented in this listing is very interesting, and I believe that my strong technical experience and education will make me a very competitive candidate for this position. The key strengths that I possess for success in this position include:

- I have successfully designed, developed, and supported live use applications
- I strive for continued excellence
- I provide exceptional contributions to customer service for all customers

With a BS degree in Computer Programming, I have a full understanding of the full life cycle of a software development project. I also have experience in learning and excelling at new technologies as needed.

Please see my resume for additional information on my experience.

I can be reached anytime via email at george.gillhooley@email.com or my cell phone, 909-555-5555.

Thank you for your time and consideration. I look forward to speaking with you about this employment opportunity.

Sincerely,

Tigran Vardanyan

Տեղեկանք

Հաճախ է հարկ լինում աշխատանքի վայրից անգլերեն տեղեկանք ներկայացնել:

Ահա օրինակը՝

Reference

This is to verify that Yura Ganjalyan has been working as a teacher of English at “Mkhitar Sebastatsi” Educational Complex since September 1989 with a monthly salary of ... AMD.

Ինքնակենսագրություն

Օրինակ՝

Autobiography

My full name is Tigran Hambartsumyan and I was born in Yerevan on October 17, 1982. My father's name is Hakob. I am a computer programmer and work for the Unicomp. My mother is Lucinae Sahakyan. She has the qualification of a geography teacher but she isn't working at present. I also have got a younger sister who is a school-girl.

I got my secondary education at public school after Nardos in Yerevan. When I was in the ninth form I began to pay more attention to humanities and decided to continue my education in the field of linguistics.

I entered Yerevan State University, the faculty of Romano Germanic languages in 1999. Now I am a translator and work for a travel agency in Yerevan. My hobby is photography.

Պայմանագիր

Աշակերտներին սովորեցնում ենք պայմանագիր գրել, օրինակ՝ դասարանական պայմանագիր, աշխատանքային պայմանագիր: Սկզբում գրվում են աշակերտի իրավունքներն ու պարտականությունները, իսկ հետո՝ ուսուցչի: Աշխատանքային պայմանագրի դեպքում սկզբում գրվում են աշխատողի պրավունքներն ու պարտականությունները, իսկ հետո՝ գործատուի:

Աշխատանք տեքստի տրված պլանի հետ

Աշակերտները սկզբում կարդում են լրագրի մի հոդված, իսկ հետո շարադրում են իրենց կարդացածը ըստ տրված պլանի:

Ժամանակը

Time Գործողությունները

Actions

00.04 Պայթյուն շուկայի մոտ

Explosion near the market

04.15 Հրշեջ խմբի, ոստիկանության և շտապ օգնության ժամանումը

Arrival of fire brigade, the police and ambulance

04.15-04.45 Փրկարար աշխատանքներ, զոհեր և սուժամներ

Rescue operations, casualties and survivals

09.00 Պատահարի պատճառների մասին պաշտոնական վարկածը

Official versions on the cause of the explosion

Կարճ ինքնակենսագրական տեղեկատվություն

Աշակերտները պետք է կարողանան լրացնել կարճ ինքնակենսագրական տեղեկատվություն պահանջող հարցաթերթիկ՝ CV.

Writing skills are often the most difficult skills for students of English as a foreign language to acquire. This may be because of the great emphasis on listening, speaking and reading in the classroom.

While there are differences between spoken and written English - for, spoken English has more shortened forms, contractions, omission and colloquial expressions- these differences need not intimidate the learner at the intermediate level, nor prevent the teacher from introducing real writing practice at this stage. And real writing, that is, practicing realistic use of the language (in its simpler written forms), is possible at this stage if the teacher provides good models and useful vocabulary for life like situations.

Letter writing, with its many forms and uses, is another activity that is particularly advantageous for the following reasons:

1. The vocabulary and structures in the letter may be taken from the students' own learned material.
2. The letters may be short and simple in form and style, gradually increasing in length and complexity as the students' progress.
3. The letter writing assignments may vary according to type and style as selected by the teacher and the students.
4. The letters may be corrected and kept in the students' notebooks for actual use as models later on.

The pupils of the low level are to write a short letter in which they make an invitation or thank somebody by using polite expressions.

For example:

An invitation letter

June 25, 2007

Dear Ann,

My family and I would like to invite you to spend the summer holidays at our summer house by Lake Sevan. Our house is near the beach and you will be free to swim and walk along the shore as much as you want.

We will take you to Sevan in our car. You will only have to ask for your parents' permission. We are looking forward to seeing you and do hope that you can come.

Cordially,

Hasmik Avagyan

Expressing thankfulness“ a bread and butter letter”

September 15, 2007

Dear Henry,

Thank you again for the wonderful weekend! I had such a good time visiting you and your family, and I enjoyed meeting all your relatives. I shall never forget the warm hospitality.

I hope that some day you are able to visit me. I would like to return your kindness and hospitality.

Please give my respects to all your family.

Love,

Laura

The pupils of the middle level are expected to write a letter to their friend telling them about their school, family, city, etc.

November 28, 2007

Dear, Jane

I have missed you a lot. Since you have gone our city has changed a lot. During the last few years many beautiful buildings and offices have been built.

In the Republic Square, which is the heart of the city, beautiful fountains were opened to celebrate the 16 anniversary of our independence.

I hope that some day you will return back to our city and we will be able to see these beautiful changes together.

Sincerely,

Ann

The pupils of the high level write requests, official letters keeping the rules of such letter writing.

Request (for catalog)

Superior Books, Ltd. 12/10/05

Fifth Avenue

Catalog Department:

I would like to request a free catalog on American literature books.
Please send it to the address below.

Thank you for your attention.
Sincerely yours,
Ruben

Here are some samples of standards for narrative speech at high schools:

low level	middle level	high level
To form an oral connected speech describing persons, things, phenomena, events: (for example, to describe the chosen profession, people's characters, school and so on)	To form an oral connected speech describing persons, things, phenomena, events and show their common features and peculiarities: (for example, to compare different professions, heroes of fiction books and so on)	To form an oral connected speech describing persons, things, phenomena, events and express one's own opinion: (for example, to make a report on professional preferences of high school pupils)

The teacher can be satisfied with the narrative speech of a pupil of low level if the latter forms his or her speech approximately in this way: I want to become an economist. I think that it is one of the most important specialties wanted in our country. Economists know how to organize our economy. Economists calculate how much to import or export this or that product. Bank clerks are paid higher than teachers or doctors.

Here is a sample narrative speech of a middle level pupil: There are different professions and specialties. We should choose the one which best meets our capabilities and desires. If I don't have a sympathetic heart, I shouldn't apply to a medical college. If I don't have good knowledge, I shouldn't apply to the faculty of physics. If I am not good at languages, I shouldn't apply to the faculty of interpreters or translators. And only if I have a sympathetic heart, good knowledge and fluency in languages, I can gain the right to become a teacher.

Here is a sample narrative speech of a high level pupil: In our country most of the brilliant students of high schools are eager to become economists. They consider this specialty to be prospective and profitable. A large number of school leavers have a desire to become computer programmers as it is

considered to be very interesting and at the same time more profitable than that of an economist's.

...

Here is a text of problem solving for the high level pupils

You have been washed up alone on a desert island after your ship sank. The island is very small and has no water and only a few trees. You have seen some birds but no other animals. There is a small lifeboat containing some useful things two miles from your island. It is also sinking. You have enough time and energy left to swim to it and remove five items only and bring them to your island. With your partner(s) decide which five you want to take and give reasons for your choices.

- 20 meters of rope
- 20 liters of fresh water
- a radio
- 20 tins of food
- a box of matches
- a torch
- a gun
- a knife
- a first aid kit
- a bottle of whisky
- signal flares
- warm clothes
- a mobile phone
- a small dog
- a book about the fish in this area
- 6 bars of chocolate

Here are some samples of standards for reading comprehension at high schools:

Low level	Middle level	High level
To read and comprehend satisfactorily enough adapted short and simple texts within the scope of a known theme with frequently used vocabulary	To read and comprehend adapted texts within the scope of a known theme guessing the meaning of some unknown words by means of word forming components or international words	To read and comprehend original texts within the scope of pupils' interests defining the theme of the text, the type of the text and the basic goal of the narration.

As in elementary and middle schools in high schools as well there are pupils of different levels. At high school the teacher gives the pupils to read some texts. There are three versions of each story for

the pupils of different levels.

For example for the pupils of the low level the teacher gives the following text to read:

“A Thief’s Story” A

Once upon a time, there was a poor family. They had one son. This son often went out to steal things. Every time he brought something home, his mother was happy. Once he brought her some eggs. She didn’t ask him how and where he got them. She just said, “That’s very good.”

Many years passed. The little boy grew up and became a fulltime thief. One day the police caught him and took him to jail. The court said that he must die for his crimes. But before dying, he could have one last wish.

The son asked for his mother. He said that he wanted to see her tongue. The mother came and stuck out her tongue. Then the son cut his mother’s tongue until it was bleeding. Everyone was surprised. They wanted to know why he had hurt his mother.

The son answered, “My mother did not tell me that it is wrong to steal. And so I am here now.”

The court judge decided that the son should not die. The son became an honest man, and lived to an old age.

After reading this text the pupils of the low level comprehend the text in a sufficient degree. They comprehend the texts that are simple and brief, with the vocabulary that they often meet. Version A of the text uses less complex structures and more limited vocabulary.

At the same time the teacher gives the pupils of the middle level to read the same text, which version uses a greater variety of structures and is more idiomatic.

“A Thief’s Story” B

Once upon a time, there was a poor family who had one son. He used to go out and steal things. Whatever he brought home, his mother accepted. Once he brought back some eggs. Instead of asking him how and where he got them, she just praised him and said, “Well done!”

Years passed. The little boy grew up and became a professional thief. The police arrested him, and took him to prison. The court sentenced him to death. When he was given one last request, he asked the jailors to bring his mother to him so that he could see her tongue.

When the mother came, she stuck her tongue out. The son reached over and cut it until it bled. Everyone was astonished and wondered why he had done such a thing.

The son explained: “Instead of warning me not to steal, my mother praised me. If she had told me it was wrong to take things that belong to someone else, I would not be here now.”

Later he was forgiven. He became an honest man, and lived to a ripe old age.

After reading this text the pupils of the middle level try to understand the text, which concerns their interest. The pupils of this level try to guess the meaning of some unknown words by means of word making components, contexts and international words.

For the pupils of the high level the teacher gives the same text, but which is much more difficult than the previous two ones.

“A Thief’s Story” C

Once upon a time, there was a poor family. They had one son, who was a very adroit boy. As the family could hardly make both ends meet, the boy often went out to steal things. Whatever he brought home- it could be food gold or something like that, his mother accepted. One winter day he brought back some eggs. Instead of asking him about the origin of those eggs the mother appreciated her son’s deed

by saying, ”Well done, my dear. Continue like this!”

After many years the little boy grew up and became a professional thief. His picture was stuck in every corner of the streets. But this wonderful life was soon over as the police arrested him, and took him to prison. During the trial the court found him guilty and sentenced him to death. When he was given one last request, he asked the jailors to bring his mother to him so that he could see her tongue.

Everybody was surprised to listen to such kind of wish from the thief’s mouth. After some time, when his mother came, she stuck her tongue out. The son reached over and cut it until it bled.

Seeing this everyone was astonished and wondered why he had done such a thing.

The son explained: “Instead of warning me not to steal, my mother praised me. If she had told me before it was wrong to take things that belonged to someone else, I wouldn’t have been sentenced to death.”

Listening to all these, the judge decided not to punish him and pleaded him not guilty.

Later he became an honest man, found a good job and lived happily to a ripe old age.

After reading this text the pupils of the high level try to give their own opinion and attitude towards this text. They must define the subject and the main problems of the text.

The advantage of graded activities like these is that everyone is working on the same text at a level they find comfortable. The main disadvantage is that teachers need to prepare more material for a lesson.

Conclusion

Arising out of the main points presented above, I can come to the conclusion that the problem of mixed ability classes is highly actual as thousands of English teachers in Armenia are now thinking over the new demands put forward by the educational reforms in our country. One of the main objectives is that the new approach is taking into account the three-level standards of teaching-learning foreign languages.

Teachers mustn’t neglect the pupils who are less capable than others. There are a great variety of classroom activities by means of which they can overcome the difficulty of mixed ability classes.

Bibliography

Հանրակրթության պետական կրթակարգ

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, 2004

Անահիտ Արնատույան և ուրիշներ «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները» 2005

Մ.Գ. Աստվածատրյան և ուրիշներ «Անգլերեն լեզվի առարկայական չափորոշիչ և ծրագիր», 2007

L.G.Alexander “Practice and Progress”

David Seymour & Maria Popova “ 700 Classroom Activities” 2005

Michael Swan “The New Cambridge English Course”

9. [Անգլերենի հաղորդակցական կարողությունները զարգացնելու երկու հնարք](#) (Դպիր 50)

1. Ինչպե՞ս անել, որ ամենաշխուսող սովորողին էլ դրդենք խոսելու

Մենք գիտենք, որ ձևավոր չմշկասահքի մրցումները երկու փուլով են լինում՝ պարտադիր և կամավոր: Մրցումների պարտադիր փուլը երբեք չեն ցուցադրում հեռուստատեսությամբ, որովհետև այն ձանձրալի է ու դիտարժան չէ, բայց դրանց մեջ ներառված են չմշկասահքի այնպիսի կարողություններ, որոնք անհրաժեշտ են կամավոր ստեղծագործական սահքի զարգացման համար: Նույն մոտեցումն էլ պետք է դասավանդման մեջ լինի: Խոսակցական յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման սկզբում սովորողներին ներկայացնում են այն բառերն ու բառակապակցությունները, որոնք սովորաբար գործածվում են տվյալ թեմայի մասին խոսելիս: Բովանդակային առումով այս աշխատանքը կարող է ձանձրալի թվալ, որովհետև սովորողները հիմնականում կրկնում են նույն նախադասությունները որոշ մասնակի փոփոխություններով: Բայց այս հարցում ես համառ եմ ու շարունակում եմ սովորողների հետաքրքրությունը սահմանափակել միայն առաջարկվող բառի, բառակապակցության, նախադասության ու մտքի ձևաբանական ու շարահյուսական ճիշտ ձևի մեջ: Երբ համոզվում եմ, որ սովորողների 80%-ը յուրացրել է պարտադիր կարողությունը և եկել է ստեղծագործելու, սեփական մտքեր արտահայտելու ժամանակը, օգնության է հասնում ինտերնետը և մեր ինտերակտիվ գրատախտակը:

Google-ի որոնողական ցանցում գրում եմ “Conversation questions” և տալիս եմ որոնման հրահանգը, որը բացվելուց հետո ընտրում եմ [Conversation Questions for the ESL/EFL Classroom](#) (I-TEFL-J) և մեր առաջ բացվում է խոսելու մոտ 260 թեմա իրենց մոտավորապես 10000 հարցերով: Այդտեղից կարելի է ընտրել խոսելու համար առաջարկվող հարցերի այն խումբը, որը համապատասխանում է առարկայական ծրագրի մեր ուսումնասիրվող թեմային: Յուրաքանչյուր թեմա տասնյակ հարցեր ունի, հարցեր անսպասելի, հետաքրքրող, ու անկեղծության դրդող: Սովորողները սկսում են վիճել, աղմուկ է լինում դասարանում, բայց դա ստեղծագործական հաճելի աղմուկ է:

2. Ինչպե՞ս անել, որ ամենաչկարդացող սովորողին էլ դրդենք կարդալու և արժևորելու իր ընթերցելով ընկալելու կարողությունը

Սովորողները միշտ էլ դժկամությամբ են ընթերցում դասագրքերի տեքստերը, որովհետև նրանք դա անում են պարտադրված՝ հանուն ինչ-որ դաս սովորելու, հանուն թվանշանի, հանուն ուսուցչի բարյացակամ վերաբերմունքի, հանուն պարտաճանաչության, հանուն այլևայլ բաների, բացի հանուն ամենակարևորից՝ նոր ու հետաքրքիր տեղեկատվություն ստանալու ցանկությունից: Իսկ ինչպե՞ս արթնացնել այդ ցանկությունը: Վերջին երեք տարիների ընթացքում ավելի ու ավելի եմ համոզվում մի հնարքի արդյունավետության մեջ: Բացում եմ հայկական մի որևէ էլեկտրոնային լրագրի կայք, որը նաև անգլերեն տեքստեր ունի: Հայկական լրագիր եմ ընտրում, որովհետև անգլիական և ամերիկյան տեղեկատվությունը շատ հաճախ էապես տարբերվում է քննարկվող հարցերի բովանդակությամբ, լեզվի ոճով, ուր կան այնպիսի արտահայտություններ, որոնք ոչ մի բառարանում չենք կարող գտնել: Բացի դրանից մշակույթն ու հետաքրքրությունների ոլորտն է այլ: Մեր հայաստանյան լուրերը ավելի մոտ են մեզ ու հասկանալի, որը կարևոր է սկսնակ սովորողի համար:

Բացում ենք News.am-ի All News (բոլոր նորությունները) և սկսում ենք ընտրել տեքստը: Սովորաբար ընտրվում է ոչ բարդ լեզվական կառուցվածքներով մի հետաքրքիր տեղեկատվություն: Այնուհետև դասարանը բաժանվում է 2-3 սովորողներից բաղկացած խմբերի, որից հետո հրահանգ է տրվում սկսելու թարգմանությունը: Խմբային աշխատանքը և մրցակցության մթնոլորտը ավելի է մեծացնում սովորողների հետաքրքրությունը: Երբ բոլոր խմբերն ավարտում են իրենց թարգմանությունները, բացում ենք տվյալ տեքստի հայերեն տարբերակը, որը համեմատվում է սովորողների հայերեն տեքստերի հետ: Հաղթում է այն խումբը, որի տեքստն ամենամոտն է բնագրին: Արդյունքում ստացա այն, ինչն ուզում էի. դասարանի բոլոր սովորողները մի քանի րոպե շարունակ ընթերցեցին անգլերեն անձանոթ տեքստ, հասկացան ու թարգմանեցին այն աշխույժ խմբային միջավայրում:

10. [Չյան վաթիլից մինչև ձնագունդ](#) (Դպիր 55)

Ծանոթ մեթոդը՝ խոսքային հմտությունների զարգացման միջոց

Ներկայացնում եմ խոսքի զարգացման «Ձնագունդ» մեթոդը իմ մեկնաբանմամբ, որը կիրառելի է ցանկացած օտար լեզվի առօրյա կյանքում քիչ գործածվող բառերը երկարատև հիշողության մեջ ամրապնդելու համար: Դասի վերջում սովորողները կարողանալու են իրենց խոսքում գործածել քաղաքականությանը և միջազգային հարաբերություններին վերաբերող այնպիսի բառեր և արտահայտություններ, ինչպիսիք են՝ ապրել խաղաղ, միջազգային հարաբերություններ, խաղաղ գոյակցություն, խաղաղության երաշխավոր, թեժ կետ, հակամարտություն, լարված իրադրություն, թուլացնել լարվածությունը, սպառազինության մրցավազք, կրճատել հարձակողական զենքերի արտադրությունը, ստորագրել համաձայնագիր, ստորագրել պայմանագիր: Այս մեթոդը ես միշտ, մոտ 20 տարի, կիրառել եմ, իսկ հիմա համակարգչի և պրոյեկտորի միջոցով ավելի տեսանելի են դառնում աշխատանքի քայլերը:

Դասը ավելի արդյունավետ է լինում, երբ տեքստը ներկայացվում է Power Point ծրագրով՝ յուրաքանչյուր սահիկով ներկայացնելով ամբողջ նախորդ և գումարվող մեկ նախադասությունը: Նոր բառերի, բառակապակցությունների և դրանցով կազմված մտքերի ներմուծման այս մեթոդը զարգացնում է խոսքի ժամանակ պահանջվող ուշադրությունը, լսելու ունակությունը, ուրիշի խոսքի նկատմամբ անտարբեր չլինելու բնավորության կարևոր գիծը: Ներկայացված «Ձնագունդ»-ը ուղղորդվող մենախոսության օրինակ է: Սև գույնով տողերը դասավանդողին են, կարմիր տողերը ներկայացնում են սովորողները: Երբ մի սովորող ասում է իրեն բաժին հասած տողերը, մյուսներն ուշադիր հետևում են նրա խոսքին և նայում էլեկտրոնային գրատախտակին երևացող առաջին սահիկին: Յուրաքանչյուր սովորող կարող է լինել հաջորդ շարունակողը: Դասավանդողն է որոշում, թե ով է լինելու հաջորդը: Առաջին անգամ կարդալով են առաջ գնում, այսինքն՝ ձնագունդը մեծանում է կարդալով: Երբ երկրորդ անգամ է սկսվում պտտվել ձնագունդը, բոլորն աշխատում են որքան հնարավոր է չնայել գրատախտակին:

Խաղաղ ապրել

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: (Շարունակում է դասավանդողը մինչև կարմիրով նշվածը և խոսքը փոխանցում է առաջին սովորողին):

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: (Երկրորդ սովորողը կրկնում է կարմիրով գրվածը՝ նայելով առաջին սովորողին):

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: (Երրորդ սովորողը կրկնում է առաջին, երկրորդ սովորողների և դասավանդողի ասածը): Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար:

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար: Բայց պետք է ասել, որ միջազգային հարաբերություններում շատ հաճախ արվում է այն, ինչի դեմ պայքարում են: (Հիմա արդեն չորրորդ սովորողն է այս ամենը ասում, որին հետևում է դասավանդողի նոր միտքը, և այդպես շարունակ մինչև 12-րդ սահիկը):

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար: Բայց պետք է ասել, որ միջազգային հարաբերություններում շատ հաճախ արվում է այն, ինչի դեմ պայքարում են: Օրինակ՝ ասում են, որ հզոր բանակ ունենալն է խաղաղ գոյակցության առաջին երաշխավորը:

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար: Բայց պետք է ասել, որ միջազգային հարաբերություններում շատ

հաճախ արվում է այն, ինչի դեմ պայքարում են: Օրինակ՝ ասում են, որ հզոր բանակ ունենալն է խաղաղ գոյակցության առաջին երաշխավորը: Իսկ հզոր բանակ ունենալու համար պետք է սպառազինվել:

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար: Բայց պետք է ասել, որ միջազգային հարաբերություններում շատ հաճախ արվում է այն, ինչի դեմ պայքարում են: Օրինակ՝ ասում են, որ հզոր բանակ ունենալն է խաղաղ գոյակցության առաջին երաշխավորը: Իսկ հզոր բանակ ունենալու համար պետք է սպառազինվել: Փաստորեն խաղաղ ապրելու համար անընդհատ պետք է պատերազմի պատրաստվել:

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար: Բայց պետք է ասել, որ միջազգային հարաբերություններում շատ հաճախ արվում է այն, ինչի դեմ պայքարում են: Օրինակ՝ ասում են, որ հզոր բանակ ունենալն է խաղաղ գոյակցության առաջին երաշխավորը: Իսկ հզոր բանակ ունենալու համար պետք է սպառազինվել: Փաստորեն խաղաղ ապրելու համար անընդհատ պետք է պատերազմի պատրաստվել: Գալիս է մի պահ, երբ արդեն հետագա սպառազինումը սպառնալիք է ոչ միայն հնարավոր թշնամու, այլև ողջ մարդկության և նույնիսկ մեր հին ու բարի մոլորակի համար:

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար: Բայց պետք է ասել, որ միջազգային հարաբերություններում շատ հաճախ արվում է այն, ինչի դեմ պայքարում են: Օրինակ՝ ասում են, որ հզոր բանակ ունենալն է խաղաղ գոյակցության առաջին երաշխավորը: Իսկ հզոր բանակ ունենալու համար պետք է սպառազինվել: Փաստորեն խաղաղ ապրելու համար անընդհատ պետք է պատերազմի պատրաստվել: Գալիս է մի պահ, երբ արդեն հետագա սպառազինումը սպառնալիք է ոչ միայն հնարավոր թշնամու, այլև ողջ մարդկության և նույնիսկ մեր հին ու բարի մոլորակի համար: Այդ ժամանակ երկրների ղեկավարները մտածում են լարվածությունը թուլացնել ոչ թե մի նոր գենքի ստեղծումով, որպես թշնամու ստեղծածի հակակշիռ, այլ բանակցությունների միջոցով կրճատել եղած սպառազինումը:

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար: Բայց պետք է ասել, որ միջազգային հարաբերություններում շատ հաճախ արվում է այն, ինչի դեմ պայքարում են: Օրինակ՝ ասում են, որ հզոր բանակ ունենալն է խաղաղ գոյակցության առաջին երաշխավորը: Իսկ հզոր բանակ ունենալու համար պետք է սպառազինվել: Փաստորեն խաղաղ ապրելու համար անընդհատ պետք է պատերազմի պատրաստվել: Գալիս է մի պահ, երբ արդեն հետագա սպառազինումը սպառնալիք է ոչ միայն հնարավոր թշնամու, այլև ողջ մարդկության և նույնիսկ մեր հին ու բարի մոլորակի համար: Այդ ժամանակ երկրների ղեկավարները մտածում են

լարվածությունը թուլացնել ոչ թե մի նոր զենքի ստեղծումով, որպես թշնամու ստեղծածի հակակշիռ, այլ բանակցությունների միջոցով կրճատել եղած սպառազինումը: Այսպիսով հակամարտող կողմերի ղեկավարները հանդիպում են մի երրորդ երկրում և ստորագրում են համաձայնագիր՝ դանդաղեցնելու և կանգնեցնելու սպառազինության մրցավազքը:

Մարդիկ ուզում են խաղաղ ապրել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ուզում են խաղաղ ապրել: Գրեթե բոլոր երկրների ղեկավարներն ասում են, որ միշտ պայքարում են խաղաղ գոյակցության համար: Բայց պետք է ասել, որ միջազգային հարաբերություններում շատ հաճախ արվում է այն, ինչի դեմ պայքարում են: Օրինակ՝ ասում են, որ հզոր բանակ ունենալն է խաղաղ գոյակցության առաջին երաշխավորը: Իսկ հզոր բանակ ունենալու համար պետք է սպառազինվել: Փաստորեն խաղաղ ապրելու համար անընդհատ պետք է պատերազմի պատրաստվել: Գալիս է մի պահ, երբ արդեն հետագա սպառազինումը սպառնալիք է ոչ միայն հնարավոր թշնամու, այլև ողջ մարդկության և նույնիսկ մեր հին ու բարի մոլորակի համար: Այդ ժամանակ երկրների ղեկավարները մտածում են լարվածությունը թուլացնել ոչ թե մի նոր զենքի ստեղծումով, որպես թշնամու ստեղծածի հակակշիռ, այլ բանակցությունների միջոցով կրճատել եղած սպառազինումը: Այսպիսով հակամարտող կողմերի ղեկավարները հանդիպում են մի երրորդ երկրում և ստորագրում են համաձայնագիր՝ դանդաղեցնելու և կանգնեցնելու սպառազինության մրցավազքը: Այս վերջին քայլին դիմում են, որովհետև մարդիկ ուզում են խաղաղ ապրել:

Ստացվեց մի փակ շրջան: Ու նորից է պտտվում ձնագունդը:

Սա շատ լավ զարգացնում է մենախոսությունը: Նույնիսկ այն մարդը, ով երբևէ որևէ տեքստ չի պատմել օտար լեզվով, մի դասի ընթացքում կարողանում է մոտ մի էջի ծավալի չափով խոսք ասել: Այստեղ քաղաքական տերմինները սոսկ օրինակ են:

Կարելի էր նաև այսպես խոսել. Slide 1. It was summer. Slide 2. It was summer, and we decided to go to Batumi. Slide 3. It was summer, and we decided to go to Batumi but we couldn't get the tickets for the train. Slide 4. It was summer, and we decided to go to Batumi but we couldn't get the tickets for the train. We didn't know what to do. Slide 5. It was summer, and we decided to go to Batumi but we couldn't get the tickets for the train. We didn't know what to do, and suddenly the telephone rang. Եվ այդպես շարունակ մինչև ձյան մի փաթիլը մի մեծ ձնագունդ է դառնում: Այս մեթոդը նույնիսկ լեզվական խաղի կարելի է վերածել: Այս դեպքում արդեն մենախոսությունն ուղղորդված չէ: Այն ավելի շատ ազատ է՝ ստեղծագործական: Այստեղ դասավանդողը միայն դիտողի դերում է: Նա կարող է զարմանալ, ծիծաղել, բայց խոսքին չմիջամտել: Առաջին սովորողը ասում է իր նախադասությունը, որից հետո երկրորդ սովորողը հորինում է առաջինի տրամաբանական շարունակությունը մեկ այլ նախադասությամբ: Երրորդ սովորողը հորինում է իրենը՝ սկզբում նայելով առաջին սովորողին, ապա՝ երկրորդին: Վերջին սովորողը հերթով նայելով սովորողներին, որպեսզի չմոռանա յուրաքանչյուրի ասածը, մի մեծ ու հանպատրաստից, երբեմն շատ զվարճալի պատմության վերջաբանն է հորինում:

11. Լսել, լսել ու նորից լսել (Դպիր 56)

Լսելով ընկալելու կարողության զարգացումը ավագ դպրոցում

Ասում են, որ երեխան լսում է՝ դեռ չծնված: Ծնվելուց հետո էլ՝ միջինը մոտ երկու տարի նա լսում է նախքան խոսելը: Ոչ ոք երեխային չի սովորեցնում ածականների համեմատության աստիճանները կամ էլ գոյականի հոգնակի թվի կազմության ձևերը: Նա այդ ամենը սովորում է լսելով:

Օտար լեզու սովորեցնելիս էլ պետք է հետևել այս բնական հաջորդականությանը՝ նախ սովորողին հնարավորություն տալ լսելու, իսկ հետո միայն պատասխան խոսք ակնկալել: Այս կերպ մտածելիս անհեթեթ է թվում տիպային անգլերեն դասագրքի կամ էլ տիպային անգլերեն դասավանդողի ուսումնական տարվա սկզբի սեպտեմբերյան առաջին հանձնարարությունը. «Ինչպե՞ս ես անցկացրել քո ամառային արձակուրդը»: Օտար լեզվի որևէ դասավանդող կարող է խոստովանել, որ դասը սկսել է՝ պատմելով, թե ինքն ինչպես է անցկացրել իր ամառային արձակուրդը:

Սովորողի համար շատ կարևոր է նախ լսել դասավանդողի խոսքը՝ թեմատիկ բառապաշարով ու ճիշտ քերականական կառուցվածքներով: Լսելու ընթացքում սովորողը մտապահում է այդ բառապաշարը, մտքերը և նրա համար արդեն ավելի հեշտ է արտահայտել սեփական մտքերը լսված խոսքի հիման վրա:

Բայց, իհարկե, դասերի մեծ մասը պետք է աշակերտակենտրոն լինի: Դասերի ընթացքում պետք է հնարավորություն տալ սովորողին խոսելու, քանի որ հիմա ինտերնետին միացված համակարգիչը անսահման հնարավորություններ է տալիս սովորողին լսելու վարժանքը կատարելու տանը: Սովորողը հնարավորություն ունի լսելու լեզվակիր երկրի խոսողի կենդանի խոսքը, այլ ոչ թե մեր թորած ջրի նման մաքուր ու անբացիլ երևանյան անգլերենը: Կենդանի խոսք լսելը նախ և առաջ մեզ՝ դասավանդողներիս է պետք:

Իսկ ի՞նչ լսել:

Ավագ դպրոցի 10-րդ դասարանում լսելով ընկալելու վարժանքները նպատակահարմար է սկսել անգլերեն վարժությունների կայքի “Listening Exercises” բաժնից: Այստեղ կարող ենք բացել 610 նկար, որոնց վերաբերյալ տրվում են հարցեր: Սովորողը պատասխանում է հարցերին՝ նայելով նկարներին: Հարցերի լեզվական մակարդակը համապատասխանում է 10-րդ դասարանի լեզվական մակարդակին՝ B1: Այս բաժնում տրված են նաև 600 կարճ երկխոսություններ: Յուրաքանչյուր երկխոսությանը հետևում են բազմընտրական երեք հարցերը՝ պատասխանների ինքնաստուգման հնարավորությունով: Պարզ է, որ այսչափ մեծ քանակի նյութի հետ աշխատանքը հնարավոր չէ իրագործել դասարանում: Դրա մեծ մասը սովորողը պետք է կատարի տանը ինքնուրույն: Հենց այստեղ է հիմնավորվում այն պնդումը, որ ավագ դպրոցում գիտելիքը և կարողությունները ավելի շատ անհատական աշխատանքով են ձեռք բերվում:

11 և 12-րդ դասարաններում կարելի է վերը նշված կայքին զուգահեռ գործածել նաև անգլերեն ուսուցանող [վեկ այլ կայք](http://www.learnenglishfeelgood.com/eslvideo) (<http://www.learnenglishfeelgood.com/eslvideo>), որտեղ հնարավոր է դիտել և լսել լեզվական առումով խնամքով ընտրված հատվածներ տարբեր ֆիլմերից:

12-րդ դասարանի համար առանձնահատուկ ուշադրության է արժանի [Rule 3 For Excellent English. Listen First](#) կայքը, որը նույնպես լսելու համար անսպառ նյութ է տրամադրում: Այստեղ նույնիսկ կան լիամետրաժ ֆիլմեր, որոնց գործող անձանց խոսքերը գրվում են էկրանի ներքևի մասում:

Կայքում կարելի է գտնել նաև տարբեր անսովոր տեսակետներով հետաքրքիր դասախոսություններ: Այստեղ հավաքված են աշխարհի տարբեր ծայրերում ապրող ոչ ստանդարտ մտածողություն ունեցող մարդկանց տեսակետները տարբեր հարցերի մասին: Կայքն արդյունավետ է նրանով, որ բոլոր ձայնագրություններն ունեն իրենց տեքստերը: Սովորողը լսում է իսկական բնագիր խոսք և միևնույն ժամանակ էլ կարողում է լսվող տեքստը: Տեքստերն ու ձայնագրությունները հարյուրավոր են, փաստորեն անսպառ են, որովհետև դրանք ամեն օր համալրվում են նոր նյութերով, ինչպես մեր կրթահամալիրի կայքն է զարգանում:

Եթե 12-րդ դասարանի որևէ սովորող մտադիր է հետագայում կրթությունը շարունակել արտերկրում, ապա նա ստիպված կլինի հաղթահարել նաև ամերիկյան “TOEFL” կամ անգլիական “IELTS” քննությունների լսելով ընկալելու առաջադրանքները, որոնք նույնպես կարելի է գտնել www.english-test.net կայքում:

12. [Ինչո՞վ տարբերվեց 2011-2012 ուսումնական տարին նախորդներից](#) (Դպիր 59)

2011-2012 ուսումնական տարին սկսվեց կրթահամալիրի միջին և ավագ դպրոցում անգլերենի դասավանդման բովանդակային ու նպատակային նոր ծրագրով՝ ըստ լեզուների իմացության համաեվրոպական մակարդակների <http://www.mskh.am/am/11345>: 7-12-րդ դասարանների անգլերենի առարկայական ծրագրերը հիմնականում նպատակաուղղված են եղել լեզվի ուսուցման չորս բաղադրիչների՝ լսելով հասկանալու, խոսելու, ընթերցելով հասկանալու և գրելու զարգացմանը: Կրթահամալիրի բոլոր դասասենյակներն այս տարի կահավորվեցին համակարգիչներով, պրոյեկտորներով և էլեկտրոնային գրատախտակներով, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց մեր ծրագրային դրույթների կատարման համար: Օրինակ, առաջին ուսումնական տարին էր, որ հնարավորություն տրվեց իրականացնելու լսելով հասկանալու մեր ծրագրային պահանջները: Միշտ էլ ասել ու գրվել է, որ լսելով հասկանալը լեզվի դասավանդման կարևոր բաղադրիչ է, բայց երբեք այսպիսի ռեալ ու նպաստավոր պայմաններ չեն եղել ու այն միշտ էլ եղել է օտար լեզվի դասավանդման թույլ ու խոցելի կողմը: Այսպիսով կարելի է փաստել, որ 2011-2012 ուսումնական տարվա ընթացքում էապես զարգացել են մեր կրթահամալիրի սովորողների լսելով հասկանալու կարողությունները սկսած կրտսեր դպրոցի առաջին դասարանցիների

համար փոքրիկ երգ-կարաոկեններից մինչև ավագ դպրոցի սովորողների համար գործածվող աուդիոհոդվածները: Հեղինակային մանկավարժության հեղինակների մայիսյան 7-րդ հավաքին բաց դաս եմ վարել՝ «Ավագ դպրոցում լսելով ընկալելու ունակությունների զարգացմանը նպաստող վարժություններ համացանցից» թեմայով: «Դպիր» էլեկտրոնային ամսագրում լսելով ընկալելու մասին իմ մեթոդական հոդվածն է հրապարակվել՝ [«Լսել, լսել և նորից լսել»](#):

Անգլերենի դասավանդման ծրագրային երկրորդ բաղադրիչը խոսելու կարողությունները զարգացնելն է: Մեր կրթահամալիրում 2011-2012-ը առաջին ուսումնական տարին էր, որ բոլոր դասարանների համար ծրագրով նախատեսվեց բանավոր հաղորդակցվելու թեմաներ: Թեմատիկ տեքստերը ըստ առարկայական չափորոշիչների, կազմում են դասավանդողները: 2012 թ. մարտ ամսից սկսած ավագ դպրոց-վարժարանում սկսեցին գործել երկու անգլերեն լեզվով խոսողների ակումբ. <http://www.mskh.am/am/16330>, <http://www.mskh.am/am/17509>, <http://www.mskh.am/am/17207>, <http://www.mskh.am/am/17559>:

Ակումբների հիմնական նպատակը սովորողներին անգլերեն հաղորդակցվելու ավելի մեծ հնարավորություն տալն է: Անցնող ուսումնական տարվա ընթացքում նոր էին ձևավորվել այդ ակումբները և մասնակիցների թիվն էլ մեծ չէր, բայց կարևորն այն էր, որ սկսեցինք: Ակումբային գործունեությունը 2012-2013 ուսումնական տարում 4 ժամով ներգրավված է ավագ դպրոցի ուսումնական պլանում, որն իմ կարծիքով մեծ դեր կունենա բանավոր խոսքի զարգացման գործում:

Առաջին անգամ ստեղծվեց լսելով հասկանալու և խոսելու կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդական նշանակություն ունեցող տեսադաս՝ <http://www.mskh.am/am/15101>, որը ներկայացվեց Digitech2012-ին: Այդ դասը տեղադրված է Youtube-ում և արդեն ունի 1600-ից ավելի այցելու: Երբ մայիս ամսին հոլանդացի ուսուցիչների խումբ այցելեց մեր կրթահամալիրը, մեր ավագ դպրոցի շատ սովորողներ, իսկ 10-3-ը ամբողջությամբ, հետևում էին այդ խմբին և անգլերենով նրանց հետ հաղորդակցվելու առիթը բաց չէին թողնում: Այդ օրը իմ անգլերենի սովորական դասը վերածվեց մասնագիտական փորձառության:

Լեզվի իմացության երրորդ ծրագրային բաղադրիչը ընթերցելով հասկանալն է: Համակարգչի առկայությունը և ինտերնետի հասանելիությունը անգլերենի իմ կաբինետում հնարավորություն տվեց սովորողներին դասի ընթացքում հատուկ ընթերցելով հասկանալու համար կազմված բնագիր տեքստեր կարդալ և անել դրանց համար նախատեսված վարժությունները, որոնք տեղադրված են այս կայքում՝ <http://www.miguelmllop.com/practice/intermediate/readingcomprehension/readingcompindex.htm>

2011-2012 ուստարում առաջին անգամ ամբողջ կրթահամալիրում գրելու կարողությունները անշարժ վիճակից սկսեցին կենդանության նշաններ ցույց տալ շնորհիվ մեդիաօլիմպիադաների: Միջին և ավագ դպրոցի մեդիաօլիմպիադայի անգլերենի առաջադրանքները միշտ էլ ստեղծագործական պահանջ են ունեցել: Անգլերենից երբևէ ինքնուրույն միտք չգրած սովորողները սկսեցին շարադրել իրենց սեփական մտքերն

անգլերեն, որոնցից լավագույնները տեղադրվեցին

կայքում. <http://www.mskh.am/en/14420>, <http://www.mskh.am/en/14400>, <http://www.mskh.am/en/14205>:

Այս տարվա մարտ ամսից սկսած 10-3 և 12-րդ դասարանի իմ սովորողները սկսեցին տնային աշխատանքների որոշ մասը կատարել էլեկտրոնային եղանակով և դրանք տեղադրել Skydrive-ում՝ տալով ինձ խմբագրելու թույլտվություն:

Այս ուսումնական տարին նշանավորվեց նաև նրանով, որ ստեղծեցի իմ անձնական կայքէջը (բլոգը)՝ <http://ganjalyanyura.wordpress.com/>, ուր տեղադրեցի իմ բոլոր հոդվածներն ու թարգմանությունները:

Անցնող ուսումնական տարին հատկանշական էր նաև նրանով, որ առաջին անգամ Գոշավանք-Գոշ լիճ-Հաղարծին-Սևանա լիճ ուսումնական-հայրենագիտական ճամփորդության պատասխանատուն եղա՝ <http://www.mskh.am/am/20116>:

Այս օրերին դեռ ընթացքի մեջ են պետական միասնական քննությունները: Պետք է նշել, որ անգլերենի խորացված ուսուցման 12-րդ դասարանի անգլերեն մասնավոր չպարապած իմ սովորողների միջին գնահատականը անգլերենից եղել է 14-ը, որն ավելի բարձր է, քան բոլոր քննություն հանձնողների միջին բալը: Դա նշանակում է, որ մեր կրթահամալիրի ավագ դպրոցի անգլերենի խորացված ուսուցման դասարանը կայացել էր:

2012-ի ամառային ուսումնական ճամբարի ընթացքում ես և Շուշան Ազատյանը 10-3 դասարանի սովորողների հետ սկսեցինք անգլերեն-հայերեն պատկերազարդ էլեկտրոնային դպրոցական բառարանի ստեղծման աշխատանքները, որի առաջին արդյունքները ներկայացրեցինք հունիսի 15-ին Նոր դպրոցում, որն ուղիղ կապ ուներ «Digitech Business Forum»-ի հետ:

Չկրկնվելու համար տարեկան հաշվետվության մեջ չեմ նշում իմ բոլոր այլ աշխատանքների, գրած հոդվածների մասին, որոնք նշվել են իմ [կիսամյակային](#), [եռամսյակային](#) և [մայիս ամսվա](#) հաշվետվությունների մեջ:

2012-2013 ուսումնական տարին ավագ դպրոցը սկսելու է նոր ուսումնական պլանով, ինչը մեր ծրագրաստեղծ աշխատանքային խմբին պարտադրում է գրել նոր առարկայական ծրագրեր ընդհանուր դասընթացի, ընտրությամբ և ակումբային գործունեությունների համար:

13. [Անգլերենի ուսուցումը միջին դպրոցում](#) (Դպիր 62)

Որպես ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հանրակրթական հիմնական դպրոցի «Անգլերեն» առարկայի չափորոշիչի և ծրագրի այլընտրանք, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հիմնական (միջին) դպրոցի անգլերենի հանրակրթական առարկայական ծրագրում առանձնակի կարևորություն է տրված ուսումնական միջավայրին, որը թույլ է տալիս անգլերենի դասավանդման հաղորդակցական մոտեցումն իրականացնել SS

ուսումնական միջոցների օգտագործմամբ: Ժամանակակից տեղեկատվական միջոցները, ինտերակտիվ էլեկտրոնային գրատախտակը, դասապրոցեսի ընթացքում համացանցի մշտական հասանելիությունը, դասավանդողի ստեղծած էլեկտրոնային ուսումնական նյութերը, սովորողների և դասավանդողների համակարգչային ծրագրերի գործնական իմացությունը թույլ են տալիս չբավարարվել առարկայական դասագրքով, որքան էլ որ այն անթերի լինի: Այս ամենի առկայությունը հնարավորություն է տալիս սովորողներին և դասավանդողներին ավելի շատ զբաղվել ստեղծական և ստեղծագործական աշխատանքով, չբավարարվել նաև այն հույսով, որ ինչ-որ մի օր դպրոցում ստացած գիտելիքները և կարողությունները օգնելու են առնչվելու համաշխարհային մշակույթի նորություններին, շփվելու ոչ հայախոս անձանց հետ: Այս շփումը ուսումնական տարվա ընթացքում ամենօրյա հասանելի գործառույթ է դառնում և՛ սովորողների, և՛ դասավանդողների համար՝ շնորհիվ ժամանակակից SS միջոցների արդյունավետ գործածման:

Տարբեր դասարանների համար առաջարկվող լեզվական նյութը (քերականությունը) համապատասխանում է ԿԳ նախարարության կողմից հաստատված հանրակրթական ծրագրի առաջարկած բովանդակությանը:

Թվային միջոցները որպես ուսումնական գործիք օգտագործելն օգնում է սովորողին ավելի տեսանելի արժևորել իր ստացած գիտելիքները և ձեռք բերած կարողությունները իր առարկայական էլեկտրոնային փաթեթում, իսկ դասավանդողին էլ՝ ավելի առարկայական գնահատել սովորողի կատարած աշխատանքը: Գնահատման այս համակարգը նկարագրված է ծրագրի «Սովորողի ուսումնական գործունեության գնահատման համակարգը» ենթաբաժնում:

Ներկայացվող ծրագրի մեկ այլ առանձնահատկությունն էլ այն է, որ կարևորություն է տրվում ուսումնական ճամփորդություններին, որոնց ճիշտ կազմակերպումը էապես բարձրացնում է ուսման արդյունավետությունը:

Ծրագրում կարևորվում են նաև դասավանդողների և սովորողների հետազոտական և ստեղծագործական աշխատանքները, երկարաժամկետ և կարճաժամկետ նախագծերը:

Ընդհանուր նպատակը

Հիմք ընդունելով ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչը՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Միջին դպրոցում անցվերենի այլընտրանքային ծրագրով դասավանդումը նպատակաուղղված է սովորողի անմիջական խոսքային, ինչպես նաև SS միջոցներով հաղորդակցվելու և համագործակցելու, ոչ հայախոս անձանց հետ շփվելու, անգլիախոս և այլ երկրների ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթը անգլախոս և այլ երկրների ժողովուրդներին մատչելի դարձնելու հիմնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը մեղիամիջավայրում:

Խնդիրները

Անգլերենով հաղորդակցական իրազեկության զարգացումը ըստ օտար լեզվի իմացության համաեվրոպական մակարդակների (5-րդ դասարանի սկիզբում՝ A1.1, 9-րդ դասարանի վերջում՝ -A2.2) խոսքային գործունեության 4 ուղղություններով՝ լսելով հասկանալը, խոսելը, կարդալով հասկանալը և գրելը:

Ըստ կրթական աստիճանների սովորողներին ներկայացվող եռամսկարդակ պահանջները)

Ուսումնական միջավայրը

Միջին դպրոցում դասարանի սովորողների թիվը 20-22 է: Անգլերենի դասարանական խմբերը ձևավորվում են ըստ սովորողների լեզվական իրազեկության աստիճանի՝ ցածր մակարդակ, միջին և բարձր: Անգլերենի ուսուցումը կազմակերպելու համար դասասենյակ-կաբինետները պետք է կահավորված լինեն համացանցին միացված համակարգչով, էլեկտրոնային գրատախտակով, պրոյեկտորով, ձայնային ուժեղարարներով, ձայնագրիչով, թվային ֆոտոխցիկով, անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն բառարաններով ու տեղեկատվական գրքերով իսկ «Նոթբուքն ինձ դասընկեր» ծրագրով աշխատող դասարաններում՝ նոթբուքերով:

Տանը սովորողը պիտի ունենա համացանցին միացված համակարգիչ, թվային ֆոտոխցիկ և հնարավոր այլ SՏՏ միջոցներ: Դասավանդողը տանը պետք է ունենա համացանցին միացված համակարգիչ, թվային ֆոտոխցիկ:

14. [The school website helps to create texts](#) (Դպիր 71)

Here are some classroom activities which help the students to create texts by expressing their own opinions about an article on the school website and also by making written comments on it both in the native language and in English

These activities also help to create English texts by translating the articles on the school website.

These activities are based on our educational project: Creating the English page of the www.mskh.am

This is the website of the “Mkhitar Sebastatsi” Educomplex. The website is in eight languages: Armenian, English, Russian, Georgian, German, Arabic, Turkish and Spanish. The first and the richest page is, of course, in Armenian because it is our mother tongue. In fact our school website is a real virtual area for the students to create texts in different foreign languages. I am responsible for the English page and my aim is to make its content as close to the Armenian page as possible. But it is not my basic aim. Were it my basic aim I should myself translate all the school website articles into English or the school administration should hire a professional translator. My basic aim is to enable my students to create their own texts. That is the basic feature of the 21st century education: from content consumption to content creation.

The educational environment for this activity

The classroom has a wireless local area network Wi-Fi and is equipped with the teacher's PC connected with a projector which is fixed on the ceiling and a white board. All the students (12-15) have their own notebook/netbooks or tablet computers.

The organization of the activity

To achieve my aim I have to do some preparation work. The students are taught the right ways of using the following online

dictionaries: <http://translate.google.ru/?hl=ru&tab=wT#hy/en/> ;<http://www.translator.am/am/index.html> ; <http://www.lingvo-online.ru/ru>

Before choosing the articles for translation I organize short discussions of the most important and interesting articles which have been published on the school website for the last three days. The texts are in Armenian but the discussions are done in English. In this way the students practice speaking on the topics which they are going to translate. As far as each student has his/her PC they can open different articles read them and offer them to be discussed. The chosen articles one by one appear on the white board and a series of discussions begins. After the discussions the students are given 5-7 minutes to write down their Armenian comments in the comment sections of the chosen articles.

Then the class is divided into 3-4 working groups with 3-4 students in each. The number of working groups corresponds to the number of chosen articles. Each group has its leader who has the highest competency in English among the members of that group. The leader usually works with the Microsoft Office program. He has is page opened with the Armenian text. His team members open this or that online dictionary and quickly help the leader with translations of complicated words and expressions. I myself go from group to group making necessary corrections in their English texts. There is a noise in the classroom but it is a lovely noise of students who are busy creating a new content in English.

The Armenian sentences which have already been translated are deleted. The texts are published on the English page of our school website when I have edited them. When the texts are published on the English page, the students are given 5-7 minutes to write their comments in English. It is easy for them to do it because they already know the content of the article very well. So this activity also promotes students' creative writing abilities.

15. [Հրաժարում անգլերենի դասավանդման շտեմարանային-դասագրքային սահմանափակվածությունից](#) (Դպիր 94)



Տարիներ շարունակ հրաժարվել եմ Ավագ դպրոց-վարժարանում գործածելուց Հայաստանի պետական հանրակրթական դպրոցների համար նախատեսված անգլերենի առարկայական դասագրքերը, քանի որ դրանք չեն նպաստում լեզվական հաղորդակցական կարողությունների զարգացմանը, իսկ 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում սկսեցի աստիճանաբար հրաժարվել նաև որևէ արտասահմանյան դասագրքից՝ ապավինելով միայն մանկավարժության կառուցողական սկզբունքին, համացանցում առկա անսպառ բովանդակության ազատ ընտրությանը և լեզվի ուսուցման նախագծային

ձևին: Ամբողջ տարվա ընթացքում աշխատել եմ պահպանել [«Ավագ դպրոցի անգլերենի ընդհանուր և ընտրությամբ դասընթացների ծրագրում»](#) նշված մանկավարժական մոտեցումները:

Նախագծային աշակերտակենտրոն ուսուցում

Ըստ կրթելու և կրթվելու, ուսուցման և ուսանելու, սովորեցնելու և սովորելու ավանդական գործընթացի սովորողին տրվում էր, բացատրվում էր, փոխանցվում էր պատրաստի գիտելիքը և սպասվում էր, որ սովորողը այն «վերադարձներ» գիտելիքների ստուգման ժամանակ: Եթե նա վերադարձնում էր իր ստացածը, համարվում էր, որ գիտելիքն արդեն ձեռք է բերված և այն հիշվելու է իր ամբողջ կյանքի ընթացքում: Պարտաճանաչ աշակերտն իհարկե սովորում է դասագրքում տպված մի ինչ-որ վեպից հատվածը, ինչքան էլ լինի, որպեսզի կարողանա վերապատմել դասի ընթացքում և ստանալ իր հերթական բարձր գնահատականը, բայց ընդամենը մի քանի օր հետո այդ տեքստն իր բովանդակությամբ ու չօգտագործվող բառապաշարով մոռացվում է: Արդյունքը միայն «սրբության սրբոց» մատյանում նշված բաղձալի գնահատականն է, որը շատ աղոտ ձևով է գնահատում սովորողի գիտելիքներն ու կարողությունները: Կրթական բարեփոխումների հիմնական առանցքը կազմում է անցումը դեպի կառուցողական կրթությանը՝ աշակերտակենտրոն կրթությանը՝ ուսուցման խնդիրների և գործընթացի անհատականացմանը: Այս սկզբունքին համապատասխան դասագրքեր դեռ չեն ստեղծվել: Իսկ միգուցե պետք էլ չէ ստեղծել դասագրքեր և բավարարվել միայն ուսուցման գործընթացի կազմակերպմանը վերաբերող դասավանդողների համար ստեղծված ուղեցեյցներով: Ուսումը շատ ավելի հետաքրքիր է դառնում, իմաստ է ստանում, երբ սովորողն ինքն է կռահում, ստեղծում և շարադրում այն, ինչը արժանի է իմանալու և անելու: Նախագծային աշակերտակենտրոն ուսուցումը հիմնվում է հենց այս նպատակաուղղվածությանը:

Ինչի՞ց սկսեցի և ինչպե՞ս կազմակերպեցի անգլերենի անդասագիրք նախագծային ուսուցումը Ավագ դպրոց-վարժարանի 11-րդ դասարանում 2014-2015 ուստարում: Նախ պետք է խոստովանեմ, որ նախագծային ուսուցումը կարող է արդյունավետ լինել միայն նորբուք/ներբուքով ուսուցման «1+1» ուսումնական միջավայրում, երբ դասասենյակն ապահովված է անխափան ինտերնետային կապով: Սկզբում շատ դժվար էր: Նույնիսկ որոնեցի և համացանցում գտա նման կրթական միջավայրի մարտահրավերները լուսաբանող [հոդված](#), թարգմանեցի այն հայերեն և շատ ուրախացա, որ դրանով հիմնավորվեց իմ առջև ծառայած դժվարությունները: Բայց այդ հոդվածում նահանջ ու հրաժարում կար, ինչը մեր կրթահամալիրում հակացուցված է: Շարունակելով որոնումները՝ գտա ուսումնական գործընթացի մի արդյունավետ մեթոդ, որը կարող էր զգալիորեն հաղթահարել այդ դժվարությունները: [Դա «շրջված դասարանի-flipped class» մեթոդն էր](#): Շատ հնարավոր է, որ իմ այս հոդվածի ընթերցողները նորից չկարդան այդ թարգմանությունը, ու այդ պատճառով էլ վերահրապարակում եմ դրա վերաբերյալ իմ հետևությունը, որն ավելի ամբողջական է դարձնում իմ այժմյան ասելիքը:

Ինչու՞ թարգմանեցի Սինֆիա Ջ.Բրեյմի «Շրջելով դասարանը» հոդվածը, որը հրապարակվել է Վանդերբիլթի (Թեննեսիի նահանգ ԱՄՆ) համալսարանի ուսուցման կենտրոնի մեդիա գրադարանի կայքում 2014թ.: Գրեթե մեկ ուսումնական տարի աշխատելով 1-1 ներթուրքով ուսուցմամբ դասարաններում վերջնականապես եկա այն եզրակացության, որ պետք է բոլորովին հրաժարվել մեզ այնքան ծանոթ ու հարազատ դարձած և ժամանակի ընթացքում քննություն բռնած մեթոդներից: Օրինակ, հասկացա, որ անօգուտ և ծայրահեղ անարդյունավետ է որևէ նոր նյութ դասարանում բացատրելը, սովորեցնելը, ուսուցողական վարժանքներով ու ֆրոնտալ հարցերով ամրապնդելը և տնային աշխատանք հանձնարարելը: Դասավանդման այս ուսուցչակենտրոն ձևը պահանջում է սովորողների համակ ուշադրություն, ու հենց այդ պատճառով էլ բոլորովին չի արդարացնում իրեն: Ինչպես իշխան Համլետը կասեր, «ավելի ձգող մետաղ կա»՝ համացանցին միացված նոթբուքերն ու ներթուրքերը. ու այդ դժվար իրավիճակից ելքեր փնտրելու ճանապարհին առաջին անգամ փորձեցի նոր նյութը ներկայացնել իմ [բլոգում](#)՝ առցանց դասերով: Մովորողը նոր նյութի բացատրությունը կարդում է տանը՝ տրամադրելով դրան իր կարողություններին համապատասխան ժամանակ: Փաստորեն յուրաքանչյուր սովորող ծախսում է այնքան ժամանակ, որքան իրեն անհրաժեշտ է նյութը հասկանալու և յուրացնելու համար: Լեզվական նվազ իրազեկությամբ ու կարողություններով օժտված սովորողն ավելի շատ ժամանակ է ծախսում դրա վրա, քան ավելի մեծ կարողություններ ունեցող սովորողը, և ցանկալի արդյունքը լինում է այն, որ բոլորն են յուրացնում: Հաջորդ օրն արդեն սովորողներն աշխատում են լեզվական նոր կառուցվածքների ամրապնդման վրա յուրաքանչյուրն իր նոթբուքով՝ նյութի յուրացման իր արագությամբ: Մոտենում եմ սովորողներին, դիտում եմկատարվող աշխատանքը, հարցեր եմ տալիս: Ուսուցումը լրիվ դարձել է աշակերտակենտրոն ու անհատական: Մի քանի օր առաջ պարզեցի, որ դասավանդման այս ձևը անուն ունի՝ «Flipped-շրջված»: Շրջված է կոչվում, որովհետև այն, ինչը նախկինում արվում էր դասարանում, հիմա արվում է տանը, և այն, ինչը արվում էր տանը, հիմա արվում է դասարանում: Այս ձևով սկսեցի հաղթահարել լեզվական գիտելիքների ուսուցման դժվարությունները: Նախագծային ուսուցման անցնելու հաջորդ քայլը թեմաների ընտրությունն է:

Նախագծերի թեմաները համապատասխանում են օտար լեզուների առարկայական ծրագրերի թեմաներին՝ հաշվի առնելով նաև կրթահամալիրի ուսումնական օրացույցի այն կետերը, որոնցով հնարավոր կլինի համալրել ու հարստացնել անգլերենի առարկայական ծրագիրը:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում ընտրվեցին և իրականացվեցին հետևյալ թեմաները՝

Առաջին կիսամյակ

1. Մարդկության պատմության ընթացքում եղած ամենակարևոր 10 հայտնագործությունները
2. Մեր ձայնը ընդդեմ պատերազմի. Էռնեստ Հեմինգուեյի «Օերունին կամուրջի մոտ» պատմվածքը կարդալուց հետո

3. Չանգվածային լրատվական միջոցներ
4. Արդյո՞ք ծնողները լավագույն ուսուցիչներն են
5. Ոճի՞ր և պատիժ
6. Հանդուրժողականություն

Երկրորդ կիսամյակ

1. Երկխոսություն բժշկի հետ
2. Կրթական համակարգերը ԱՄՆ-ում, Միացյալ Թագավորությունում և Հայաստանում
3. Հայաստանի քաղաքական համակարգը
4. Ազգային և կրթահամալիրային տոները Հայաստանում
5. Արդյո՞ք միջնակարգ 12-ամյա կրթությունը պետք է պարտադիր լինի:
6. Շրջակա միջավայրը և նրա պահպանումը
7. Ինչպե՞ս եմ հասկանում ՀՀ Սահմանադրության երկրորդ գլուխը մարդու հիմնարար իրավունքների մասին

Թեմաների այս ցանկից երևում է, որ մի փոքր շեղում է արվել 2014-2015 ուստարվա առարկայական ծրագրում նախանշվածից: Պատճառն այն է, որ լեզվի նախագծային ուսուցումը միշտ էլ կապվում է մեր կյանքում, մեր երկրում ու աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հետ: Օրինակ, [«հանդուրժողականություն»](#) թեմային անդրադարձանք Ֆրանսիայի հայտնի դեպքերից հետո, իսկ Էռնեստ [Հեմինգուեյի «Օերունին կամուրջի մոտ»](#) պատմվածքը մեզ համար շատ արդիական դարձավ սահմանային գծում լարվածությունը մեծանալու պատճառով: Կրթության մասին նոր օրենքը պատճառ դարձավ, որ արագ իրականացնենք [«Արդյո՞ք միջնակարգ 12-ամյա կրթությունը պետք է պարտադիր լինի»](#) կարճաժամկետ նախագիծը:

Առաջնային գաղափար

Յուրաքանչյուր թեմայով կարճաժամկետ նախագիծ սկսելուց առաջ միասին վեր ենք հանում այդ թեմային առնչվող առաջնային գաղափարը: Կարևորում ու արժևորում եմ մեր անելիք աշխատանքը: Հարկ է որ սովորողը գիտակցի, թե որքան կարևոր է տվյալ թեմայով խոսելը, կարծիքներ հայտնելը, համապատասխան ու ճշգրիտ (աղեկվատ) գործելը: Օրինակ, [«ՀՀ Սահմանադրության երկրորդ գլուխը մարդու հիմնարար իրավունքների մասին»](#) նախագիծը սկսելուց առաջ մեծապես կարևորեցի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մեր իրավունքների մասին իմանալը: Իրավունքները չիմանալու հակառակ փաստարկներով այնպես արեցի, որ սովորողների մոտ մեծ ցանկություն առաջացավ նորից և ուշադիր կարդալու մեր Սահմանադրության անգլերեն տարբերակը:

Դասավանդող–սովորող, սովորող–սովորող իրավիճակային երկխոսությունների ստեղծում, իմաստի որոնում

Առաջնային գաղափարը պարզելուց հետո ստեղծում ենք տվյալ թեմայի վերաբերյալ տարբեր իրավիճակային երկխոսություններ՝ սկզբում դասավանդող-սովորող, իսկ հետո՝ սովորող-սովորող կողմերով: Այդ երկխոսություններն ուղղորդող դեր են խաղում սովորողների հետագա նախագծային հետազոտական, որոնողական աշխատանքի ուղղվածության համար: Բանավոր երկխոսությունները, քննարկումները մեծացնում են թեմայի նկատմամբ հետաքրքրությունը: Երբ արդեն սովորողները բավականին հետաքրքրված են տվյալ թեմայով, առաջարկում են համացանցում որոնել և գտնել թեմային համապատասխան նյութեր, հոդվածներ: Այստեղ արդեն ցանկացած դասագիրք անմրցունակ է, եթե համեմատենք այն համացանցի հնարավորությունների հետ: Կարճ ժամանակում սովորողները գտնում են տվյալ թեմայի վերաբերյալ բազմաթիվ նյութեր, որոնցից ընտրում ենք ոչ շատ բարդ բառապաշարովներն ու համեմատաբար ամփոփ գրվածները: Նյութը կարդալուց հետո սկսվում է թեմատիկ բառապաշարի առանձնացումը և հայերեն համարժեքների գրառումը: Այս աշխատանքն անելուց հետո սկսվում է ինքնուրույն մտքերի շարադրումը, սեփական կարծիքի գրառումը:

Սովորողներն իրենք են եզրահանգում անում. կարևորը նրա կարծիքն է՝ արտահայտված անզլերեն:

Յուրաքանչյուր թեմա ամփոփվում է [սեփական կարծիքի հրապարակմամբ](#), որը սովորողը պաշտպանում է բանավոր հարցումի ժամանակ: Լավագույն ձևով արտահայտված կարծիքները հրապարակվում են [mskh.am-ի անզլերեն էջում](#):

Եզրակացություն

Ավագ դպրոցում անզլերենի ուսուցման նախագծային ձևն ու ուսուցման անհատականացումն օգնում են իմաստավորել ու ավելի հետաքրքիր դարձնել ուսումնական պարապմունքները, կրթահամալիրի առօրյային, իրադարձություններին մասնակցել՝ որպես ուսումնական աշխատանք: Սովորողը ձեռք է բերում օտարալեզու աղբյուրներից օգտվելու, բանավոր և գրավոր կերպով սեփական կարծիքը արտահայտելու կարողություն, մտահորիզոնի ընդլայնման անսահման հնարավորություն: Ուսուցումն ու ուսուցման արդյունքը անհատականացվում են: Յուրաքանչյուր սովորող աշխատում է ըստ իր ընդունակությունների և նյութի յուրացման իր արագությամբ՝ չխանգարելով մյուսներին: Միևնույն պարապմունքի ընթացքում մի սովորող բանավոր ներկայացնում և պաշտպանում է իր տեսակետը, երկրորդն այդ ժամանակ զբաղված է իր կարծիքը շարադրելով, իսկ երրորդը դեռ չի էլ վերջացրել նյութի, իմաստի որոնման աշխատանքները: Չորրորդը յուրաքանչյուր բույն մեկ մոտենում է ինձ ու հարց տալիս, որպեսզի վստահ լինի, որ ճիշտ ուղու վրա է, իսկ հինգերորդին ամեն պահ լռեցնել է պետք, որովհետև ամեն ինչի մասին ունի պատմականորեն հիմնավորված իր կարծիքը, որը մեծ մասամբ հայերեն է ասում ու բարձրաձայն: Ավանդական ուսուցչի աչքերով եթե կողքից դիտենք մեր այս պարապմունքը, կթվա, որ սա դաս չէ: Այո, սա սովորական դաս չէ: Սա ուսումնական նախագիծ իրականացնող սովորողների ուսումնական աշխատանք է:

<https://www.youtube.com/watch?v=hz5IPntrzx8>

16. Դպրոցական կայքը սովորողին բովանդակության սպառողից դարձնում է բովանդակության ստեղծող (Դպիր 73)

Հոդվածում տրվում է այն ուսումնական գործունեության ձևը, որը ներկայացրել էմ Մայքրոսոֆթի «Փորձագետ ուսուցիչներ» միջազգային ծրագրին:

Ներկայացվող ուսումնական գործունեության հոգեբանամանկավարժական հիմնավորվածությունը

Մայքրոսոֆթի «Գործընկերներ կրթական ցանցում» ծրագրում նշված են 21-րդ դարի կրթության հիմնական դրույթները, որոնցից ամենակարևորը համարվում է «Բովանդակության սպառողից՝ բովանդակության ստեղծող»-ը: Դասագրքերի տեքստերը, գեղարվեստական գրքերը, ֆիլմերը, էլեկտրոնային լրատվամիջոցները, ռադիոն, հեռուստատեսությունը և զանգվածային լրատվական այլ միջոցներն անընդհատ նորանոր բովանդակություն են առաջարկում սպառման համար՝ կարդացե՛ք, սա շատ հետաքրքիր է, լսե՛ք սա նորություն է, դիտե՛ք, այսպիսի բան երբեք չեք տեսել: Լինելով միայն սպառողի վիճակում՝ սովորողը դառնում է պասսիվ ու անտարբեր շրջապատի, իրական կյանքի նկատմամբ, ոչ նախաձեռնող: Լիովին այլ բան է մեր դպրոցական կայքը՝ «mskh.am»-ը: Սովորողին հնարավորություն է տրված ոչ միայն ընթերցելու, սպառելու ներկայացված բովանդակությունը, այլ նաև՝ ստեղծելու սեփականը: Եվ սովորողի ստեղծած տեքստն էլ ոչ միայն իր ուսուցիչն է կարդում, այլ նաև՝ տասնյակ ու հարյուրավոր այլ ընթերցողներ: Անձի, հատկապես դեռահասի հոգեբանական ճիշտ զարգացման համար էական նշանակություն ունի շրջապատում սեփական անձի կարևորությունը զգալը, ինքնահաստատման առաջին քայլերը կատարելը:

Ուսումնական գործունեության նախադրյալը

Այս ուսումնական գործունեության նախադրյալը «www.mskh.am»-ի անգլերեն էջի ստեղծումը» երկարաժամկետ ու անընդհատ նախագիծն է: «Մխիթար Մեբաստացի» կրթահամալիրի կայքը սովորողի ստեղծագործական աշխատանքի վիրտուալ տարածք է, որտեղ նրանք կարող են տարբեր լեզուներով տեքստեր ստեղծել: Ես անգլերեն էջի պատասխանատուն եմ, և իմ նպատակն է անգլերեն էջի բովանդակությունը, որքան հնարավոր է, մոտեցնել հայերեն էջի բովանդակությանը, որպեսզի օտարազգի ընթերցողները ճանաչեն մեզ, մեր հեղինակային մանկավարժությունը: Բայց դա չէ իմ գլխավոր նպատակը: Եթե դա լիներ իմ գլխավոր նպատակը, ես անձամբ կթարգմանեի կայքի առաջին էջի բոլոր կրթական, նախագծային, տեղեկատվական հոդվածները, կամ էլ դպրոցի ղեկավարությունը կվարձեր մի արհեստավարժ թարգմանչի: Իմ գլխավոր նպատակն է սովորողների մեջ ձևավորել սեփական անգլերեն տեքստերը ստեղծելու կարողությունները:

Ներկայացվող ուսումնական գործունեության կրթական միջավայրը

Դասարանն ունի Wi-Fi անլար ինտերնետի հասանելիություն և կահավորված է պրոյեկտորին միացված ուսուցչի անձնական համակարգիչով: Բոլոր (15-20) սովորողներն ունեն իրենց անձնական նոթբուք/նեթբուքները:

Ուսումնական գործունեության կազմակերպումը

Որպեսզի հասնեն նպատակիս, ես պետք է որոշ նախապատրաստական աշխատանք անեմ: Սովորողներին ներկայացնում եմ առցանց բառարաններից՝ translate.google.ru; translator.am; lingvo-online.ru, ճիշտ օգտվելու ձևերը:

Նախքան թարգմանչական բուն աշխատանքին անցնելը՝ կազմակերպում եմ վերջին երեք օրերի ընթացքում կայքում հրապարակված կարևոր նյութերի քննարկումներ անգլերեն: Նյութերը հայերեն են, իսկ քննարկումները՝ անգլերեն: Այս ձևով սովորողները սկսում են խոսել այն թեմաների շուրջը, որոնք նրանք թարգմանելու են: Քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իր անձնական համակարգիչը, նրանք կարող են միևնույն ժամանակահատվածում կարդալ տարբեր տեքստեր և առաջարկել դրանք որպես թարգմանչական աշխատանք: Քննարկումից հետո սովորողներին տրվում է 5-7 բառ, որպեսզի հայերեն կարծիքներ գրեն իրենց ընտրած և քննարկած նյութի համար: Հետո դասարանը բաժանվում է 3-4 աշխատանքային խմբերի: Աշխատանքային խմբերի քանակը հավասար է ընտրված տեքստերի քանակին: Յուրաքանչյուր խումբ ունի իր առաջատարը, ում անգլերենի իմացության մակարդակը ամենաբարձրն է խմբում: Առաջատարը սովորաբար աշխատում է Microsoft Office ծրագրով, իսկ խմբի անդամները բացում են տարբեր առցանց բառարաններ և արագ օգնում են առաջատարին այս կամ այն դժվար ու անծանոթ բառը թարգմանել: Ես շրջում եմ դասարանում՝ մոտենալով այս կամ այն խմբին և ուղղում եմ նրանց արած լեզվական սխալները: Դասարանում աղմուկ կա, բայց դա անգլերեն նոր բովանդակություն ստեղծող սովորողների հաճելի դժժոցն է:

Ինձ ուղարկված տեքստերը խմբագրելուց հետո հրապարակում եմ դրանք կայքի անգլերեն էջում: Երբ տեքստերն արդեն հրապարակված են, սովորողներին 5-7 բառ է տրվում՝ ընտրված և թարգմանված տեքստերին կարծիքներ գրելու համար: Նրանց համար դա դժվար չէ անելը, որովհետև լավ գիտեն տեքստի բովանդակությունը:

Կատարված թարգմանությունների գնահատումը

Յուրաքանչյուր տեքստի համար հատկացվում է առավելագույն 10 միավոր. մասնակցությունը նախաթարգմանչական քննարկումներին՝ 0-2 միավոր

- ճշգրիտ բառապաշարի համար՝ 0-3 միավոր
- լեզվական ճիշտ կառուցվածքների օգտագործելը՝ 0-3 միավոր

- լեզվի բնականությունը՝ 0-2 միավոր

Տեսաֆիլմը նկարահանել է 10-րդ դասարանի սովորող Անի Մանուկյանն իր i-phone բջջային հեռախոսով:

II Ուսումնասիրում ենք այլոց մանկավարժական առաջավոր փորձը

17. Լուրջ կրթությունը լուրջ ներդրումներ է պահանջում (Դպիր 38)

Ճապոնիայում, որը համարվում է աշխարհի ամենագարգացած երկրներից մեկը, տարբերվում է այլ երկրներից նաև նրանով, որ կրկնուսուցմանը մեծ տեղ են տալիս կրթական տարրական աստիճանում, ցածր դասարաններում, որպեսզի երեխաները կարողանան հաղթահարել ավագ դպրոցի ընդունելության քննությունները: Փաստորեն ավագ դպրոցի ընդունելության քննությունները իրենց կյանքի քննություններն են: Այս քննությունների արդյունքներն են որոշում, թե տվյալ աշակերտը որ ուղղությամբ կարող է շարունակել իր կրթությունը՝ բնագիտական, հումանիտար, արվեստ, թե՛ արհեստներ: Այդ պատճառով էլ ծնողները առաջին դասարանից սկսած դիմում են հմուտ կրկնուսուցների օգնությանը: Եկե՛ք չշտապենք քննադատել ճապոնացիներին: Նրանք օր առաջ ուզում են բացահայտել իրենց երեխաների ունակությունները: Եվ նրանք հասնում են իրենց նպատակին: Արդյունքը ակնառու է: Ճապոնացի երեխաների 97,8%-ը հաղթահարում է ավագ դպրոցի ընդունելության քննությունները: Ճապոնիայում ուսուցչի աշխատավարձը մոտ 20 անգամ գերազանցում է մեր ուսուցիչների աշխատավարձը, իսկ ծնողներինը՝ էլ ավելի:

Ավստրալիայում գործում է կրկնուսուցների ավստրալիական Միությունը (Australian Tutoring Association). Այս երկրում կրկնուսուցումը ո՛չ տարերային, այլ շատ կազմակերպված ձևով գործում է տարիքային բոլոր խմբերի և կրթական բոլոր աստիճանների համար՝ տարրական դասարաններից մինչև համալսարաններ: Կրկնուսուցները անհատական ծրագրեր են ներկայացնում և ստանում են կրկնուսուցի գործով զբաղվելու թույլտվություն: Նրանք ընտրվում են ըստ իրենց ակադեմիական գիտելիքների, դասավանդման փորձառության աստիճանի, մարդկային հատկանիշների և վստահելիության աստիճանի:

Չափազանց ուշագրավ է Ֆինլանդիայի կրթական համակարգը: Ֆինլանդիայի բնակչությունը 5,4 մլն է իսկ 2003թ կրթությանը հատկացված բյուջեն՝ 5,9 մլրդ եվրո է եղել: Այստեղ դպրոց են հաճախում 7 տարեկանից և հիմնական դպրոցի ամբողջ ժամանակաշրջանում երեխաները ստանում են երեքանգամյա անվճար սնունդ: Աշակերտները տուն են գնում կուշտ և դասերն արդեն սովորած: Ավագ դպրոցում սովորողների 60%-ը գիմնագիստներն են՝ ապագա համալսարանականները, իսկ 40%-ը ներգրավված են տարբեր արհեստների, տարբեր տեսակի աշխատանքների գործնական հմտությունների յուրացման մեջ:

Գերմանիայում այլ կերպ են հասնում այս նույն բաղձալի նպատակին: Այս երկրում դասվարների աշխատատեղերի համար շատ մեծ մրցակցություն կա տարբեր

համալսարանները գերազանց առաջադիմությամբ ավարտածների միջև, քանի որ կրթական ասպարեզում դասվարների աշխատավարձը ամենաբարձրն է: Պետական կրթական քաղաքականությունն այնպես է տարվում, որ գերմանիայում ծնողները վստահ են, որ իրենց երեխայի հետ ամեն օր շփվում է, նրան դասավանդում է իր գործին նվիրված, մեծ պատասխանատվություն ունեցող, ուսումնաստենչ, հարուստ գիտելիքներով մանկավարժը, որի գերագույն նպատակն է օգնել երեխային բացահայտելու իր ունակությունները: Արդյունքն այստեղ նույնպես ակնառու է: Ի տարբերություն մեր երկրի, Գերմանիայում աշակերտները դպրոցն ավարտելուց հետո անմիջապես չեն ձգտում համալսարաններ ընդունվել: Առաջին կուրսեցիների միջին տարիքը 20-22 է:


Իսկ մեր երկրում մ. որքա՞ն աշխատավարձ են ստանում Հայաստանի հանրակրթական դպրոցների դասվարները: Ի՞նչ կրթություն ունեն Հայաստանի հանրակրթական դպրոցների դասվարները: Ես նկատի չունեմ դիպլոմը: Ու՞մ ենք վստահում մեր փոքրիկներին: Երկար տարիներ դպրոցում աշխատելով միշտ զարմացել ու հիացել եմ առաջին, երկրորդ, երրորդ .. մի խոսքով ցածր դասարանների աշակերտների ուսումնաստենչությամբ վառվող աչքերին նայելով: Թափահարելով պարզում են ձեռքերն ու գրեթե գոռում ու պահանջում՝ ես ասեմ, ես ասեմ, ես ասեմ, ես.., ես.., ես...: Ի՞նչ պայքար է գնում, պայքար՝ աշխարհաճանաչման, պայքար՝ ինքնահաստատման, որ ես կամ, ես այստեղ եմ, նայե՛ք ինձ, սիրե՛ք ինձ: Երջանիկ են այն երեխաները, ում դասվարները այն են, ինչ պետք է որ լինեն՝ հենց այդ նույն երջանիկ պատահականությամբ: Այդ լավ դասվարներն աղետալի չափով քիչ են մեր երկրում, ու որպես դրա արդյունք՝ ինչ-որ մի օր իջնում է պարզած մի ձեռք, «ես ասեմ»-ը վախվորած է դառնում ու կամա՛ ց-կամա՛ ց մարում: Արդյունքում ունենք այն, ինչ ունենք: Մեր իններորդյակները ձևական քննություններով տեղափոխվում են ավագ դպրոց: Նրանց ճնշող մեծամասնությունը չունի ռեալ գիտելիքներ: Ավագ դպրոցներն էլ ֆինանսավորման պահանջից ելնելով ընդունում են ցանկացած դիմողի: Դպրոցի ավարտական քննությունները նորից ձևական են անցնում: Ռեալ գիտելիքներ են ցուցաբերվում միայն միասնական քննություններին, որը հիմնականում կրկնուսույցների աշխատանքի արդյունքն է: Թող գտնվի մեկը, ով կապացուցի հակառակը:

Եզրակացություն

Ինչպես ցույց է տալիս մեր և տարբեր երկրների կրթական համակարգերի վերլուծությունը, լուրջ կրթությունը լուրջ ֆինանսական ներդրումներ է պահանջում՝ կամ ծնողների կամ պետության կողմից: Իր տեղը արմատավորած ու, ինչ-որ ձևով, լուրջ կրթության գործն իրականացնող կրկնուսույցի աշխատանքին դեմ լինելուց առաջ պետք է հարց տալ. Արդյո՞ք մեր պետությունը Ֆինլանդիայի նման պատրաստ է այդ լուրջ առաքելությունը իրականում ու ամբողջությամբ իր վրա վերցնելու: Մի բան պարզ է. երեխաներին չի կարելի խաբել: Յուրա Գանջալյան

12.02.2011

18. [Մարկ Բրեյի գիրքը. դիմակայում սովերային կրթության համակարգին](#) (Դպիր 63)



Մինչև Մարկ Բրեյի գիրքը կարդալը ես սխալմամբ կարծում էի, թե հայ ծնողներն ամենաուսումնաստենչն են, ամենաուշադիրն ու հոգատարն են, երբ հարցը վերաբերում է իրենց երեխաների կրթությանը: Ես այդպես էի կարծում, որովհետև միշտ էլ լսել էի, որ հայ մարդն ամեն ինչ կանի, իր վերջին դրամը կներդնի իր զավակին լավ կրթություն տալու համար, և գոնե այդ հարցում շահեկանորեն տարբերվում ենք բոլոր այլ ազգերից: Այդպես էի կարծում, որովհետև այս նուրբ թեմայով տեղեկատվությունը դրսի աշխարհի մասին միշտ էլ շատ սահմանափակ է եղել: Տեղեկատվությունը սահմանափակ է եղել, որովհետև կրկնուսուցման լուրջ ուսումնասիրություններ չեն եղել, և արդյունքներն էլ չեն հրապարակվել:

Երբ անցյալ տարի մեր կրթահամալիրի խաղարկային դատարանն [այս հարցն](#) էր քննարկում, ես մի փոքրիկ հետազոտություն կատարեցի համացանցում ([Դպիր 38](#))՝ հիմնականում հետաքրքրվելով միայն աշխարհի զարգացած երկրներով՝ Ճապոնիա, Գերմանիա, Ֆինլանդիա, Ավստրալիա: Պարզեցի, որ միայն Ֆինլանդիայում և Գերմանիայում է գրեթե բացակայում կրկնուսուցյցի գործառույթը, քանի որ այս երկրներում դպրոցական ֆորմալ կրթության համար ահռելի ֆինանսական միջոցներ են ներդրվում պետության կողմից: Բավական է ասել, որ Ֆինլանդիան ունի 5,4 մլն բնակիչ և միայն հիմնական կրթության վրա ծախսում է 5,9 մլրդ եվրո: Իմ հոդվածի վերջում ես եկել էի այն եզրակացության, որ քանի դեռ մեր պետությունը չի կարողանում դպրոցական ֆորմալ հանրակրթությամբ որակ ապահովել, ծնողները ստիպված են դիմելու կրկնուսուցյցներին: Չի կարելի կրթության հիմնական պատվիրատուին մեղադրել այն բանի համար, որ ուզում են իրենց միջոցներով ծածկել հանրակրթության մեջ առկա սպիտակ բծերը, և առնվազն անհիմն են ՀՀ ԿԳ նախարարի՝ բազմիցս կրկնուսուցման հասցեին ուղղած որակումները՝ որպես «արատավոր երևույթ»: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում էլ այս երևույթը կա սկսած կրթական տարրական աստիճանից, որտեղ կրկնուսուցյցի գործառույթն ամենաձավալուն ընդգրկումն ունի, մինչև ավագ դպրոցը, և դա չեն համարում մոլախոտ, որը պետք է արմատախիլ անել: Ընդհակառակը՝ ուսումնասիրվում են տվյալ երկրում կրկնուսուցմանը դիմելու դրդապատճառները, վեր են հանում հանրակրթական դպրոցներում առկա թերությունները, ուսումնասիրվում են անհատական մոտեցման՝ կրկնուսուցյցների առաջավոր փորձը և աշխատում են այն որքան հնարավոր է ներդնել հանրակրթությունում:

Այս առումով աննախադեպ է Հոնգ Կոնգի համալսարանի պրոֆեսոր, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համեմատական կրթության Կենտրոնի տնօրեն Մարկ Բրեյի գիրքը “Confronting the Shadow Education System: What Government Policies for What Private Tutoring?” UNESCO 2009, որի հայերեն թարգմանության՝ «Դիմակայում սովերային կրթության համակարգին. ինչպիսի՞ պետական քաղաքականություն կրկնուսուցման յուրաքանչյուր դեպքում» գրքի շնորհանդեսը եղավ 2012թ հոկտեմբերի 19-ին Հայաստանի ֆրանսիական համալսարանում:

Մարկ Բրեյի գրքի ամենամեծ արժեքն այն է, որ կրկնուսուցմանը չի վերաբերում որպես մի մոլախոտի, որը պետք է արմատախիլ անել: Ըստ Մարկ Բրեյի գրքի տեղեկատվության՝ Չինաստանի տարրական դպրոցների սովորողների 73,8, միջին դպրոցի սովորողների 65,6 և ավագ դպրոցի սովորողների 53,5 տոկոսը ստանում է կրկնուսուցում: Հնդկաստանում միջին

դպրոցում սովորողների 32%-ը և ավագ դպրոցներում սովորողների մոտ 50%-ը դիմում են կրկնուսույցների ծառայությանը: Գրքում տեղեկություններ կան նաև մեր հարևան Վրաստանի և Ադրբեջանի մասին: Այս երկրներում կրկնուսույցի ծառայությանն է դիմում սովորողների համապատասխանաբար 81,2 և 95%-ը: Մոտավորապես նույն պատկերն է նաև այլ ասիական և աֆրիկյան զարգացած և զարգացող երկրներում: Օրինակ, Ճապոնիայում սովերային ոչ ֆորմալ կրթությունը երկար պատմություն ունի և արդեն ակնառու չափերի է հասել: Գրքում տրված են մասնավոր ոչ ֆորմալ կրթության դրական և բացասական կողմերը: Որպես ամենակարևոր դրական կողմ նշված է այն, որ մասնավոր կրթությունը աշակերտներին օգնում է սովորել և դրանով հզորացնում է մարդկային կապիտալը, ինչը կարող է իր հերթին նպաստել երկրի տնտեսական զարգացմանը: Որպես օրինակ՝ կարող ենք բերել արևելքի տնտեսապես զերգարգացած Հարավային Կորեան, որտեղ սովորողների 88%-ը ստանում է կրկնուսուցում:

Գրքում նշվում է, որ կրկնուսուցումը ունի նաև լուրջ բացասական կողմեր. Պահպանում է ավելի է խորացնում սոցիալական, տնտեսական անհավասարությունները: Կրկնուսուցումը կարող է նաև գերիշխողը լինել երեխայի կյանքում՝ սահմանափակելով նրա ազատ ժամանակը և հոգսաշատ դարձնելով նրանց ուրախ մանկությունը: Այն կարող է որոշ դեպքերում դիտվել նաև որպես կոռուպցիայի մի ձև:

Հեղինակը առաջին անգամ հրապարակել է նաև կրկնուսուցման ժամանակակից տարբեր դրսևորումները՝ առկա անհատական՝ սովորող-կրկնուսույց հարաբերություններ, կրկնուսույց-սովորողների խումբ, հեռավար՝ ինտերնետի միջոցով, skype համակարգով:

Կրկնուսուցման դրդապատճառների ուսումնասիրությունը նույնպես շատ հետաքրքիր է ներկայացված: Օրինակ, ասվում է, որ նախկին Խորհրդային երկրների ուսուցիչները կրկնուսուցումը դիտում են որպես իրենց ոչ բավարար եկամուտը լրացնելու միջոց: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Հարավային Կորեայում և Ճապոնիայում, որտեղ ուսուցիչների աշխատավարձը շատ բարձր է, ուսուցիչները կրկնուսուցումը դիտում են որպես իրենց երկրի ապագան կերտելու միջոց: Այս համեմատությունը շատ նման է Եզոպոսի հայտնի առակին, երբ մի անգամ մի անցորդ հարցնում է շինարարության մի սևագործ բանվորի, թե արդյոք նա ի՞նչ է անում: Այդ սևագործ բանվորն ասում է, որ քար է տեղափոխում՝ օրվա հացը վաստակելու համար, իսկ մեկ այլ բանվոր պատասխանում է, որ օգնում է տաճարը կառուցելու:

Տարբեր երկրների կառավարությունները միշտ էլ տարբեր միջոցներ են ձեռնարկել դիմակայելու կրկնուսուցմանը: Օրինակ, հեռուստատեսային դասեր են տրվում տվյալ ասպարեզում հայտնի մասնագետի կողմից: Վերջերս ռուսական «Կուլտուրա» հեռուստաալիքը օտար լեզուների հետաքրքիր դասեր է ցուցադրում, և կրկնուսույցը մի հայտնի պոլիգլոտ է: Դպրոցներում բացվում են խորացված ուսուցման դասարաններ: Բայց համաշխարհային փորձն ու կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անհեռանկարային է կրկնուսուցման արգելումը վարչական մեթոդներով: Արգելման բոլոր քայլերը նպաստում են տվյալ երկրում կրկնուսուցման արմատների խորացմանն ու պարարտացմանը:

Մարկ Բրեյի գրքի հայերեն թարգմանության շնորհանդեսի ընթացքում տարբեր ելույթ ունեցողներ նշեցին, որ կրկնուսուցման խնդրի վերաբերյալ համապատասխան սոցիոլոգիական հարցումներ և ուսումնասիրություններ Հայաստանում չեն արվել: Այս խնդիրը վերևից որակվել է որպես «արատավոր երևույթ», «անցյալի մնացորդ», որն իներցիայով է պահպանվում:

Արդյո՞ք մեր հանրապետությունում հանրակրթությունը այդքան բարձր մակարդակի վրա է՝ մոտավորապես Գերմանիայում և Ֆինլանդիայում իրականացվող հանրակրթություններին հավասար: Իհարկե, ո՛չ:

Արդյո՞ք մեր ծնողների համար միևնույնն է, թե ինչ կրթություն է ստանում երեխան դպրոցում, և սկսում են անհանգստանալ միայն ավագ դպրոցի երրորդ տարում՝ վճարելով կրկնուսույցներին միասնական քննություններին նախապատրաստելու համար: Իհարկե, այ՛ո:

Մեր հասարակությունն անտարբեր է դպրոցի նկատմամբ: Դրանում մեղավոր է մեր կրթական քաղաքականությունը, հանրակրթության համակարգը: Փաստորեն հայ ծնողն աշխարհում ամենաքիչն է մտահոգված դպրոցում իր երեխայի կրթությամբ:

18. [Երբեք չեմ գուվի իմ սովորողին, թե որքան խելացի է նա](#) (Դպիր 74)



[Սալման Խանը](#) մեդիակրթության՝ աշխարհում ամենահայտնի մանկավարժներից ու դրա տարածողներից մեկն է: Երկու իրողությամբ նա հոգեհարազատ է մեզ: Առաջինը այն է, որ նա ծնունդով Բանգլադեշից է՝ իրական Բանգլադեշից: Երկրորդն այն է, որ նա ընդամենը 37 տարեկան է, բայց հասցրել է հոչակ ձեռք բերել ամբողջ աշխարհում իր հիմնադրած [Khan Academy](#) առցանց մեդիակրթություն տրամադրող, շահույթ չհետապնդող կազմակերպությամբ: 2006 թվականին է հիմնել այդ

կազմակերպությունը, բայց իր ղեկավարությամբ ստեղծված 4800 էլեկտրոնային մեդիա դասերը, որոնք հիմնականում մաթեմատիկային և բնագիտական առարկաներին են վերաբերում, արդեն դիտվել են 492 մլն անգամ: [Khan Academy](#)-ին ունի 2201162 բաժանորդ, որոնցից մեկն էլ ես եմ, բայց ակտիվ բաժանորդ չեմ, որովհետև մաթեմատիկայով հիմա այնքան էլ հետաքրքրված չեմ: 2012 թվականին ամերիկյան Time շաբաթաթերթը Սալման Խանին ընդգրկել է աշխարհի 100 ամենաազդեցիկ մարդկանց ցուցակում:

Սալման Խան. «Ինչո՞ւ իմ որդուն երբեք չեմ ասի, որ խելացի է»:

Սալման Խանը գրում է, որ իր 5 տարեկան որդին նոր է սկսել կարդալ: Ամեն երեկո նա նստում է իր որդու մահճակալին, և վերջինս կարդում է հոր համար: Փոքրիկ ընթերցողն անխուսափելիորեն նոր ու դժվար ընթերցելի բառերի է հանդիպում: Մի երեկո, օրինակ, այդպիսի բառ էր «երախտագիտորեն»-ը: Մի րոպե տանջվելուց հետո նա ի վերջո

կարողացավ կարդալ այն ու հարցրեց իր հորը. «Պա, դու ուրախ չե՞ս, թե ինչպես չարչարվեցի ու հաղթեցի այդ բառին: Ես զգացի, թե ինչպես է իմ ուղեղն աճում»: Այդ պահին հայրը ժպտացել է, քանի որ իր որդին մեկ-երկու բառով արտահայտել է «Մտածողության աճը» տեսության հիմնական միտքը: Բայց որդին պատահաբար չի ասել այդ միտքը: Սալման Խանը խոստովանում է, որ հիմա ինքը կյանքի է կոչում այն հետազոտությունը, որով մի քանի տարի զբաղված է եղել և որոշել է գովել իր որդուն ոչ այն ժամանակ, երբ վերջինիս լավ է հաջողվում անել այն, ինչն արդեն սովորել է լավ անել, այլ այն ժամանակ, երբ իր որդին համառորեն իր ուզածին է հասնում դժվարություններ հաղթահարելով: Սալման Խանը անընդհատ ներշնչել է որդուն, որ նրա ուղեղը զարգանում է դժվարությունները հաղթահարելու միջոցով: Մարդու մտածողության ուսումնասիրության և իր որդու հետ կիրառած փորձերի արդյունքում Սալման Խանն ավելի քան երբևէ համոզված է, որ մտածողության զարգացումը շատ ավելի կարևոր է, քան ցանկացած այլ բան, որը մենք սովորեցնում ենք մարդուն:

Վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ ուղեղը մկանի նման է. որքան շատ ես այն գործածում, այնքան շատ է այն աճում: Գիտնականները պարզել են, որ նյարդային հյուսվածքները կազմավորվում ու ավելի են ամրանում, երբ սխալվում ենք դժվարություններ հաղթահարելիս, քան երբ անընդհատ հաջողությամբ կրկնում ենք հեշտ առաջադրանքները: Սա նշանակում է, որ մեր մտածողությունը չի քարանում մի կետում, և դրա զարգացման ամենալավ ձևը այնպիսի առաջադրանքների կատարումն է, երբ պայքարում ենք ու ձախողումներ ունենում: ***Հենց այս մտքի վրա ետ դառնանք դեպի մեր հայաստանյան իրականությանը ու գիտակցենք, թե մտածողության ինչպիսի հետաճ է տեղի ունենում մեր ավագ դպրոցների սովորողների մոտ, երբ բարձր թվանշան ստանալու ձգտումով նրանք ստիպված են լինում մի քանի անգամ կրկնել արդեն երեք-չորս անգամ ծայրից ծայր լուծված, արված, ստուգված հարցաշարային առաջադրանքները:***

Սալման Խանը նշում է, որ այնուամենայնիվ, ոչ բոլորն են գիտակցում այս ամենը: Սթենֆորդի համալսարանի դոկտոր Քարոլ Դվեքը տասնամյակներ շարունակ ուսումնասիրել է մարդկանց սովորելու և մտածողության զարգացման կապը: Նա պարզել է, որ սովորելը հանգեցնում է երկու տարբեր մտածելակերպի՝ քարացած (ֆիքսված) և աճող (զարգացող): Քարացած (ֆիքսված) մտածելակերպ ձեռք բերած մարդիկ սխալմամբ կարծում են, որ մարդիկ կա՛մ խելացի են, կա՛մ ոչ, և որ խելքը նախապես որոշվում է մարդու գեներով: Զարգացող մտածողությունն ձեռք բերած մարդիկ կարծում են, որ ընդունակությունը և խելքը կարելի է զարգացնել ջանքերով, պայքարով ու ձախողումներով: Դվեքը իր հետազոտությունների ընթացքում պարզել է, որ քարացած (ֆիքսված) մտածելակերպով մարդիկ հակված են իրենց ջանքերն ուղղելու այնպիսի առաջադրանքների կատարմանը, որտեղ հաջողության հասնելու մեծ հավանականություն կա, և խուսափում են այն առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում ստիպված էին լինելու պայքարել՝ կարծելով, որ այդ պայքարը սահմանափակում է սերտելու իրենց ձգտումը: Մինչդեռ զարգացող մտածելակերպ ունեցող մարդիկ ընդունում են մարտահրավերները և հասկանում, որ համառությունն ու դժվարությունները հաղթահարելու ջանքերը կարող են փոխել իրենց ուսման արդյունքը:

Այսպիսով, հետազոտությունների արդյունքների ավետիսն այն է, որ մտածողությունն ուսուցանվող է, դա կարելի է երկաթի նման կռել:

Դվեքի ու իր գործընկերների հետազոտությունների իրապես հրապուրիչ հետաքրքրությունն այն է, որ նրանք մշակել են այսպես կոչված «Մտածողության զարգացման գործոններ» մեթոդները, որոնք ցույց են տալիս, որ նույնիսկ փոքրիկ փոփոխությունները հաղորդակցության ընթացքում, կամ էլ չնչին ու անմեղ թվացող ակնարկներն ու մեկնաբանությունները կարող են տևական ու ազդեցիկ առնչություն ունենալ անձի մտածողության զարգացման հետ: Օրինակ, որևէ մեկի բնածին խելքը գովելու փոխարեն՝ «Ինչ խելացի ես», արժևորեն նրա աշխատանքի ընթացքը՝ «Ինձ իսկապես դուր եկավ, թե դու ինչպես չարչարվեցիր այդ խնդիրը լուծելու համար»... Հենց այս մտքի համար ստանձնեցի այս հոդվածի թարգմանություն-փոխադրությունը:

Կարծում եմ, որ մանկավարժության անկյունաքարային սկզբունքներից մեկը պետք է լինի միայն սովորողի աշխատանքը, այլ ոչ թե բնածին խելքը գովելը: Երբ գովում ենք սովորողի բնածին ընդունակություններն ու խելքը, բացի այն բանից, որ նրան ծուլության ենք դրդում, անհարկի նսեմացնում ու թերարժեքության բարդույթ ենք ձևավորում սովյալ դասասենյակում նստած ավելի քիչ ընդունակություններով ու բնածին խելքով օժտված սովորողի մոտ: Եվ ընդհակառակը բոլորին զարգացման ենք մղում ու մտքի զարգացման միտում ենք ձևավորում, երբ գովում ենք սովորողի ինքնուրույն կատարած աշխատանքը:

Իր հոդվածի եզրափակիչ մասում Սալման Խանը ցանկություն է հայտնում մի համազգային երկխոսություն-քննարկում սկսել այն հարցով, թե ինչպես օգնել մարդկանց զարգացնելու իրենց աճող մտածելակերպը: Համացանցը երազանքի նման բան է աճող մտածելակերպ ունեցողների համար: Ստեղծվել է [Չանգվածային առցանց բաց դասընթացների ցանց](#), որի միջոցով հնարավոր է անվճար մասնակցել տարբեր դասընթացների, ինչը անսխառեպ հնարավորություն է տալիս հասանելի դարձնելու անսահմանափակ ուսումնական նյութեր, որոնք կօգնեն զարգացնել մարդու միտքն ու մտածելակերպը: Այնուամենայնիվ, հասարակությունը լիովին չի օգտվելու այս հնարավորությունից, քանի դեռ աճող մտածելակերպ ունեցողները չեն կազմում այդ հասարակության գերակշիռ մասը: Այնուհետև Սալման Խանը երկու հռետորական հարց է բարձրացնում. ի՞նչ կլինի, եթե մենք ակտիվորեն փորձենք փոխել այս վիճակը: Ի՞նչ կլինի, եթե մենք մեր հասանելի միջոցներով սկսենք աճող մտածելակերպի ձևավորման միջամտություններ անել բոլոր նրանց նկատմամբ, ում մասին հոգ ենք տանում: Հարցը վերաբերում է այն բանին, թե մենք ինչպե՞ս ենք հաղորդակցվում մեր երեխաների հետ, ինչպե՞ս ենք ղեկավարում մեր աշխատանքային թիմը, ինչպե՞ս ենք նոր լեզու կամ գործիք սովորում: Եթե ամբողջ հասարակությունը ընդունի պայքարելով սովորելու այս ձգտումը, ապա մարդկային մտքի գլոբալ ներուժը որևէ սահման չի ճանաչի:

Հոդվածի վերջում Սալման Խանը թեթև հումորով է եզրափակում իր խոսքը: Դիմելով իր այս հոդվածն ընթերցողներին՝ այսինքն մեզ, նա ասում է, որ ինքն արդեն մի անակնկալ է մատուցել բոլորիս: Մենք հենց նոր ենթարկվեցինք աճող մտածելակերպի ձևավորմանն

ուղղված մի միջամտության: Մենք իմացանք, որ ուղեղն ամենաշատն աճում է, երբ սխալվում է մի դժվար խնդիր լուծելիս, այլ ոչ թե երբ ինքնավստահ հանդարտությամբ հերթական ճիշտ լուծումն է տալիս կրկնվող ու դյուրին հարցերին:

Հիմա, երբ ընթերցել ենք հոդվածն ամբողջությամբ, կարող է շատերը քննադատել «մենք դա վաղուց գիտեինք» ենթատեքստով: Դեռ մանկուց տարբեր լեզուներով լսել ենք «Մխալվելով ենք սովորում (На ошибках мы учимся. We learn by making mistakes)» արտահայտությունը: Եթե լսել ենք ու ամեն ինչ գիտենք, ապա ինչո՞ւ ենք հանդուրժում արդեն մի քանի սերունդ բթացնող շտեմարանները: Այդ քննադատ տվողներից մեկն էլ կարող է այն ծնողը լինել, ով թաքուն հպարտությամբ ասում է. «Տղաս շատ խելացի է, բայց ծուլ է»: Եթե այդպես է, ապա ի սեր Ձեր երեխայի՝ խնդրում եմ նորից կարդալ այս հոդվածը:

Աղբյուրը՝ [«Huffingtonpost» ամերիկյան էլեկտրոնային պարբերական](#)

20. [Անընդհատ սերտել ու անընդհատ քննություն՝ ևն տալ \(Դպիր 95\)](#)

Վերջին տարիների ընթացքում անգլիական [The Telegraph](#) էլեկտրոնային պարբերականը ուսումնասիրել է տարբեր երկրներում կայացած և հաջողված կրթական համակարգերը՝ պարզելու, թե որն է տվյալ երկրում կրթական հաջողությունների խթանող ուժը, և ուշագրավ հետևություններ է արել: Ավելի ամբողջական ներկայացնելու համար ուսումնասիրել եմ նաև այլ աղբյուրներ, բացի նշված պարբերականում հրատարակված նյութերից: Ուսումնասիրության շեշտը հիմնականում դրվել է տարբեր երկրների հանրակրթական դպրոցներում սովորողների գիտելիքների և կարողությունների ստուգման (քննությունների) ձևերի ու պարբերականության վրա: Նշված բոլոր երկրներում էլ կրթությանը մեծ ուշադրություն է դարձվում, և հաջողություններն էլ առկա են: Բայց ո՞ւմ փորձն է ուսանելի մեզ համար. այս է խնդիրը:

Կրթությունը Ֆինլանդիայում

Հարիեթ Ալեքսանդրը [գրում է](#), որ շատ բրիտանացի ուսուցիչների համար չափազանց դժվար է Ֆինլանդիայի գործընկերների մասին պատմող նյութերի ընթերցումից առաջացած լարվածությանը դիմանալը:

Ֆինլանդիայում մինչև երեխայի երեք տարեկան դառնալը երեխայի ծնողներից մեկին պետությունը բավականաչափ նպաստ է վճարում, որպեսզի նա կարողանա լիարժեք կերպով զբաղվել երեխայի խնամքով: Երեք տարեկանից հետո երեխաներին կարելի է ընդգրկել նախակրթարանային խմբերում, որտեղ յուրաքանչյուր 12 երեխայի հետ աշխատում են մեկ դաստիարակ և երկու դայակ: Նախակրթարանում որևէ գիտելիք չեն սովորեցնում. երեխաներն աշխարհը խաղալով են ընկալում:

Պարտադիր կրթությունը սկսվում է յոթ տարեկանում միայն ազգային ուսումնական պլանով: **Ֆինլանդիայում չկան դպրոցական կրթությունը վերահսկող տեսուչներ, չկան դպրոցների վարկանիշային սանդղակներ, դպրոցներում քննություններ չեն անցկացվում մինչև սովորողների 16 տարեկան դառնալը:** 40 տարի առաջ երկրում լայնածավալ կրթական բարեփոխումներ սկսելուց ի վեր երեխաներին չեն բաժանում ըստ ընդունակությունների, և ոչ էլ նրանք երեկոներն անցկացնում են իրենց դասերը սերտելով: Երկրում գոյություն չունի մասնավոր դասերի գործառույթ, և նույնիսկ մասնավոր դպրոցներում ապօրինի է համարվում ուսման վճարներ գանձելը: Մասնավոր դպրոցները պետությունից ստանում են դրամական նույնչափ աջակցություն, որքան պետական դպրոցները: **Կրտսեր դպրոցի յուրաքանչյուր սովորողի վրա տարեկան ծախսվում է \$7100:** Մասնավոր դպրոցը ծառայում է միայն այն նպատակին, որ որոշ մասնագետներ կարողանան դասավանդել իրենց նախընտրած այլընտրանքային դասագրքերով և ծրագրերով: Յուրաքանչյուր երեխա կրթվում է իր բնակավայրում գտնվող հանրակրթական դպրոցում: Նույնիսկ 15 տարեկանների համար տնային աշխատանքին չի կարող հատկացվել 30 րոպեից ավելի ժամանակ: Բայց սա չի նշանակում, որ սովորողներին որևէ հանձնարարություն չի տրվում: Մինչև 9-րդ դասարանը ներառյալ սովորողները պարտադիր երկարօրյա ռեժիմով են դպրոց հաճախում, որտեղ նրանց տալիս են անվճար երեքանգամյա սնունդ և կազմակերպվում է դասերի պատրաստում բարձրակարգ մասնագետների ղեկավարությամբ: Ուսուցչի մասնագիտությունը Ֆինլանդիայում ամենաբարձր վարձատրվողներից է (սկսնակ ուսուցչի աշխատավարձն սկսվում է \$2500-ից) և այդ պատճառով էլ ամենահեղինակավորներից մեկը: Ուսուցիչները, սկսած կրտսեր դպրոցից մինչև ավագ դպրոց, պարտադիր կերպով մագիստրոսի կրթական աստիճան պետք է ունենան, որպեսզի բավարարեն աշխատանքի ընդունվելու պահանջները: Երկրում առկա 17 համալսարանների գերազանց առաջադիմությամբ ավարտածների միայն 15%-ին է հաջողվում հաղթել մանկավարժի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթներում: Այսուհանդերձ, մասնագիտական խորը գիտելիքներ ունեցող մանկավարժների ներգրավվածությունը երկրի հանրակրթության մեջ դեռ բավարար պայման չէ Ֆինլանդիայի կրթական հաջողությունների համար: Ըստ մանկավարժ փորձագետ Ուելշի՝ Ֆինլանդիայի ուսուցիչներին և սովորողներին տալիս են անկախ գործելու ազատության մեծ չափաբաժին: Օրինակ, Շելսինկիում կարելի է յոթ տարեկան երեխային տեսնել ավտոբուսով միայնակ դպրոց գնալիս: Անձի անկախությունը շատ բարձր է գնահատվում Ֆինլանդիայում: Անընդհատ չեն ղեկավարում, ուղղորդում նրան: Եթե որևէ երեխա ընկնում է սառույցի վրա, թողնում են, որ նա ինքը ոտքի կանգնի՝ ցուցաբերելով կամային հատկություններ: Սովորողները համազգեստ չեն հագնում և ուսուցչին անունով են դիմում: Նշված բոլոր հիմնավոր պատճառները և ընկերական, փոխադարձ հարգանքի, սիրո վրա հիմնված փոխհարաբերությունները հանգեցրել են Ֆինլանդիայի կրթական հրաշքին: Սովորողների առաջադիմության միջազգային գնահատման արդյունքներով (PISA - Programme for International Student Assessment) Ֆինլանդիան աշխարհում 12-րդ արդյունքն ունի մաթեմատիկայից, իսկ ընթերցելով հասկանալու կարողությամբ 6-րդն է, բնագիտական առարկաների գծով՝ 5-րդն է: Եվ սա այն երկրում, որտեղ առաջին անգամ քննություն են անցկացնում 16 տարեկանում: Կարևոր փաստ է նաև այն, որ ուսումնասիրությունները

պարզել են, որ Ֆինլանդիայում ակադեմիապես ամենաուժեղ և ամենաթույլ սովորողների արդյունքների տարբերությունը ամենափոքրն է աշխարհում:

Ամբողջ աշխարհում կրթական ասպարեզի փորձագետները փորձում են պարզել, թե արդյոք հնարավոր է ֆինների փորձը կիրառել իրենց երկրներում: Մանկավարժ փորձագետ Ուելշը այն կարծիքին է, որ ամեն ինչ հնարավոր չի լինի ընդօրինակել ֆիններից, քանի որ նրանց երկրում ընդամենը 5.5 մլն մարդ է ապրում՝ գրեթե բոլորն էլ նույն մշակույթի կրողներ: Բոլորովին այլ պատկեր է Մեծ Բրիտանիայում, որտեղ ներգաղթյալների պատճառով մշակույթների բազմազանություն է: Նույն պատկերն է նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և եվրոպական մի շարք այլ երկրներում: Փորձագետ Ուելշն այն կարծիքին է, որ ֆինների նման պետք է ազատվել ընդհանրացված հարցաշարային նյարդայնացնող հաճախակի քննություններից:

Ֆինլանդիայի CIMO կրթական հաստատության տնօրեն [Փասի Սայերգը իր «Ֆիննական դասերը» գրքի ներկայացման](#) մեջ գրում է, որ միայն Ֆինլանդիայի ուսուցիչների մասնագիտական բարձր մակարդակը և կրթության կազմակերպման ուրույն ձևը չէ, որ այս երկիրը դարձրել են կրթական առաջատար երկիր: Կրթության զարգացմանը մեծապես նպաստում է նաև այն, որ Ֆինլանդիայում իշխում է խորհրդարանական իրական ժողովրդավարությունը, ունի աշխարհում մրցունակ շուկայական տնտեսություն, տնօրենների և ուսուցիչների 95%-ը միաբանված են, այսինքն՝ խոսքերը մեկ արած նույն մտահոգությամբ են աշխատում: Անգնահատելի մեծ դեր է կատարում նաև այն փաստը, որ Ֆինլանդիան բարեկեցիկ երկիր է, որի բնակչության 5,3%-ն է միայն համարվում աղքատ: Մնացած ամբողջ բնակչության տարեկան եկամուտների միջև եղած տարբերությունը ամենափոքրն է աշխարհում: Բայց Ֆինլանդիայի կրթական հրաշքի ամենահիմնավոր բնորոշումը կարդացի հանրագիտարանային [«Կրթությունը Ֆինլանդիայում»](#) հոդվածում. *«Ֆիննական վաղ մանկության կրթությունը շեշտը դնում է յուրաքանչյուր երեխայի անհատականության վրա, որպեսզի նա զարգանա որպես եզակի անհատ: Կրտսեր դպրոցի մանկավարժները զարգացնում են երեխաների սոցիալական և հաղորդակցական կարողությունները, քաջալերում են նրանց ուշադրություն դարձնել ուրիշների կարիքներին և հետաքրքրություններին, հոգ տանել ուրիշների մասին, դրական վերաբերմունք ունենալ ուրիշ մարդկանց, մշակույթների, միջավայրների նկատմամբ: Սովորողներին աստիճանաբար տրվող նոր հնարավորությունների նպատակն այն է, որ աճի նրանց ինքնուրույնությունը և անկախությունը, որպեսզի բոլոր սովորողները կարողանան իրենք իրենց համար հոգ տանել արդեն հասուն տարիքում, կարողանան որոշումներ կայացնել, որպեսզի արդյունավետորեն մասնակցեն հասարակական գործերին որպես քաղաքացիներ և ի վիճակի լինեն հասուն տարիքում էլ օգնելու ուրիշներին, եթե նրանք դրա կարիքն ունենան»:* Այ թե որն է հիրավի մարդասիրական, հայրենասիրական, քաղաքացիական կրթությունը: Ամեն ինչ մարդկային է ու հասանելի: Ուշադրություն դարձրեցի՞ք: Ֆիննական կրթական հիմնական նպատակի ձևակերպման մեջ բացակայում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ լեզվամտածողությունը, հայրենասիրությունը, բարոյահոգեբանական հատկանիշները, գրագիտությունը և նման այլ, երեխայից շատ

հեռու բաներ, որոնցով ձևակերպված է տարրական դպրոցի համար գրված մեր [պետական կրթական չափորոշիչը](#):

Ճապոնացի

երեխաներն ստիպված են անընդհատ սերտել ու քննություն հանձնել, սերտել ու քննություն հանձնել:

Ի տարբերություն Ֆինլանդիայի՝ Ճապոնիայում երեխան դեռ նախակրթարանային տարիքից անընդհատ գիտելիքների ստուգման, քննությունների նյարդային իրավիճակների միջով է անցնում: Ամեն ինչ սկսվում է էլիտար մանկապարտեզներ հաճախելու իրավունք ձեռք բերելու համար նախատեսված հարցազրույցներին նախապատրաստելուց: Էլիտար մանկապարտեզներն ապահովում են էլիտար դպրոցների բաց դռներ: Չորրորդ դասարանում ճապոնացի երեխաները հանձնում են տարրական դպրոցն ավարտելու քննություններ, որոնք համարվում են նրանց ապագա ամբողջ կյանքի ամենակարևոր քննությունները: Կրկնուսույցների գործառույթը շատ է կարևորվում հենց այս դպրոցական առաջին քննությունը հանձնելու համար: Միջին դպրոցի ավարտական քննության հաջողությունն ապահովում է ավագ դպրոցներում սովորելու իրավունքը, ինչն իր հերթին բացում է հեղինակավոր համալսարանների դռները: Այս ամենի արդյունքում բարգավաճող ընկերություններում լավ վճարվող աշխատատեղերն ապահովված են: Մի խոսքով՝ ճապոնացի երեխան ստիպված է 2-3 տարեկանից քննություններ հանձնելով պայքարել իր բարեկեցիկ ապագայի համար:

Նիդեռլանդներ: Հաջողության գրավականը անընդհատ վարժանքի վրա հիմնված ուսուցումն է:

Բոունո Ուոթերֆիլդը մաթեմատիկա է դասավանդել արդեն 25 տարի, որից 17-ը՝ Նիդեռլանդներում, իսկ 8-ը՝ Շոտլանդիայում: Նա այն կարծիքին է, որ ուսուցման հոլանդական մեթոդը շատ նման է ասիական երկրներում (Ճապոնիա, Հարավային Կորեա) կիրառվող մեթոդին, որն է՝ վարժանք, վարժանք, վարժանք: Այնտեղ որքան հնարավոր է շատ թեստեր են լուծում, քննություններ հանձնում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջին: Ստեղծականության վրա այնքան էլ ուշադրություն չեն դարձնում: Սովորողները մաթեմատիկայի տնային առաջադրանքները առցանց են անում և միշտ կապի մեջ են իրենց ուսուցիչների հետ: Դասավանդողը չի հանձնարարում վարժությունների և խնդիրների պարտադիր որոշակի քանակ: Սովորողները գրում են որքան, որ ուզում են: Քննությունների ընթացքում էլ նրանք չեն նյարդայնանում, քանի որ իրենց ամենօրյա սովորական գործունեությամբ են զբաղված:

Իռլանդիա: Հոգևոր հովվի հոգածությունը բարձր է պահում կրթական մակարդակը:

Հարիեթ Ալեքսանդրը գրում է, որ աշխարհին Օսկար Ուայլդ և Ջեյմս Ջոյս տված երկրի քաղաքացիները հպարտ են նաև նրանով, որ իրենց երկիրը գրագիտության մակարդակով 10-րդ տեղն է զբաղեցնում աշխարհում, իսկ Եվրոպայում 2-րդն է Ֆինլանդիայից հետո:

Այս երկրում Ֆինլանդիայի նման տարրական դպրոցի վերջում պաշտոնական քննություններ չկան, և միայն 15 տարեկանում են սովորողները հանձնում իրենց առաջին գրավոր քննությունները (որոշ առարկաներից էլ բանավոր հարցերի են պատասխանում, կամ էլ նախագծեր անում) և ստանում են իրենց հիմնական կրթությունը հաստատող վկայականը:

Լեհաստանի կոմունիստական անցյալից է, որ սովորողները գիտելիքի ծարավ են թվում:

Մեթյու Դեյր գրում է, որ Լեհաստանի դպրոցները արտաքինից շատ անշուք են, քանի որ դպրոցական գրեթե բոլոր շենքերը կառուցվել են կոմունիստական ժամանակաշրջանում, բայց այդ անշուք շենքերի ներսում աշխարհի ամենաառաջավոր կրթական համակարգերից մեկն է գործում: Թե որքան է Լեհաստանը հոգում իր երեխաների կրթության մասին, խոսում է այն փաստը, որ այս երկրի կրթության նախարարությունը ստեղծվել է 1773թ, որն ամենահինն է աշխարհում ([Education in Poland, Wikipedia](#)): 2014թ Լեհաստանի կրթական համակարգի վարկանիշը իր բարձրությամբ 4-րդն է եղել Եվրոպայում և 10-րդը աշխարհում:

2012-2013 ուսումնական տարվանից Լեհաստանում երեխաները սկսում են տարրական դպրոց հաճախել 6 տարեկանից՝ նախկինի 7-ի փոխարեն: Տարրական դպրոցը երկու փուլով է, որոնցից յուրաքանչյուրը տևում է 3 տարի: Առաջին փուլում առարկաներն ինտեգրված են, և մի ուսուցիչ է աշխատում երեխաների հետ ինչպես մեզ մոտ: Երկրորդ փուլում ուսուցումն արդեն առարկայական է, և տարբեր ուսուցիչներ են մտնում դասարան: 6-րդ դասարանցիները տարրական դպրոցն ավարտում են պարտադիր գրավոր քննություններով, որոնց հարցաշարերը համապատասխանում են միջազգային չափորոշիչներին: Քննությունները հաջողությամբ հանձնած սովորողները տարրական դպրոցի ավարտական վկայականներ են ստանում:

Միջին դպրոցում ուսումնառությունը տևում է 3 տարի և ավարտվում է երեք քննություններով՝ հումանիտար, բնագիտություն և օտար լեզուներ:

Մինգապուրում ավելի մեծ ուշադրության են արժանացնում ուսումնաստենչ սովորողներին, քան միայն օժտվածներին:

Մինգապուրի կրթական համակարգը բարձր է գնահատվում աշխարհում՝ շնորհիվ PISA-ի բարձր արդյունքների, բայց ի տարբերություն Ֆինլանդիայի, որտեղ մինչև 16 տարեկան դառնալը սովորողը ոչ մի քննություն չի հանձնում, և սովորողներին էլ չեն առանձնացնում ըստ ընդունակությունների, Մինգապուրում կրթական ամբողջ համակարգը կազմակերպվում է տարբեր քննությունների միջոցով սովորողներին ըստ ընդունակությունների առանձնացնելու և կրթական գործընթացը, ուսումնական պարապմունքները միանման ակադեմիական ընդունակություններով ու կարողություններով կազմված դասարաններով կազմակերպելու վրա: Այս ձևով նրանք բոլոր սովորողներին հավասար հնարավորություն են տալիս իրենց գիտելիքների և

կարողությունների զարգացման համար: Հատկանշական է, որ Մինգապուրի տնտեսության հիմքում նույնպես գործում է իրենց կրթական համակարգի սկզբունքը՝ յուրաքանչյուրին աշխատանք, պաշտոն է տրվում միայն ըստ ընդունակության և կարողությունների: Այս առումով բոլորն էլ գիտեն, որ արդարությունն է իշխում, և բոլորին էլ տրված են հավասար հնարավորություններ: *Միգուցե իրենց կրթական համակարգի և տնտեսության կազմակերպման այս սկզբունքն է սինգապուրյան տնտեսական հրաշքի գաղտնիքը:*

Մինգապուրի կրթական համակարգը ներսից ավելի լավ ուսումնասիրելու համար Էնդրյու Լինֆորդը՝ մանկավարժ Սան Ֆրանցիսկոյից, 15 ամիս աշխատել է այդ երկրի դպրոցներից մեկում՝ դասավանդելով անգլերեն և մաթեմատիկա: Նա գրում է, որ Մինգապուրում իրականացվում է դպրոցական քննությունների մի շատ խիստ համակարգ, որը սկսում է գործել սովորողների վաղ տարիքում: Նույնիսկ երրորդ դասարանում քննությունների միջոցով առանձնացնում են երեխաներին ըստ իրենց ընդունակությունների, որպեսզի հետագա ուսուցման մեջ ոչ ոք չտուժի: Վեցերորդ դասարանի վերջում սովորողները որակավորման քննություններ են հանձնում, որոնց արդյունքներով որոշում է կայացվում, թե տվյալ սովորողը ինչպիսի միջին դպրոցում է շարունակելու իր ուսումը: Այս որոշումը միջին դպրոցում սովորելու տարիներին հնարավոր է փոխել, որը շատ հազվադեպ է լինում: 10-րդ դասարանի վերջին սովորողները նորից քննություն են հանձնում, որի բովանդակությունը կախված է այն բանից, թե ինչպիսի միջին դպրոցի հետ գործ ունենք: Այս քննությամբ վերջնականապես որոշվում է, թե արդյոք սովորողը կարո՞ղ է իր ուսումը շարունակել համալսարանում, թե՞ պետք է բավարարվի միջին մասնագիտական կրթություն ձեռք բերելով:

Օգտագործված աղբյուրները

- http://en.wikipedia.org/wiki/Primary_School_Leaving_Examination
- [Finland has no inspections, no league tables and few exams approach](#) , by Harriet Alexander
- [Finnish Lessons, by Pasi Sahlberg](#)
- [Japanese students have to cram](#), by Julian Ryall
- [Մարկ Բրեյի գիրքը. Դիմակայում սովերային կրթության համակարգին, Յուրա Գանջալյան](#)
- [Confronting the Shadow Education System, by Mark Bray](#)
- [The Netherlands: Practice is the key to success](#)
- [Singapore concentrates on the pupils who struggle as well as stars](#)
- [Education in Singapore, Wikipedia](#)
- [Singapore's Education, Andrew Linford](#)
- [Education in Finland, Wikipedia](#)

21. [Մաթեմատիկական կրթության չինական հիմնարար սկզբունքները \(Դպիր 97\)](#)

Չինաստանում մաթեմատիկայի դասավանդման բնորոշ գծերը

Փոխադրաբար ներկայացվում է Ռոնգբաո Տուի (Նանկինի մանկավարժական համալսարան, Չինաստան) և Ուեյ Շենի (Հեյժուի քոլեջ, Չինաստան) «Journal of Mathematics Education» ամսագրում հրապարակված [հոդվածը](#): Հոդվածագիրները նշում են, որ դեռ 1963 թվականին չինական մաթեմատիկական կրթության ծրագրում նշվել է, որ շեշտը դրվում էրկու հիմնաքարերի վրա՝ գիտելիք և կարողություններ:

Պետք է ասել, որ ներկայումս շատ երկրներում է այս շեշտադրումն արվում հանրակրթության առարկայական ծրագրերում: Այդ երկրների թվում է նաև Հայաստանը: Շեշտադրումն արվում գրեթե ամենուր, բայց ինչպե՞ս է իրականացվում: Ինչպե՞ս են չին ուսուցիչները կարողանում ճիշտ տեղադրել այդ երկու հիմնաքարերը և հասնել հանրակրթական մաթեմատիկայից աշխարհում [ամենաբարձր արդյունքների](#): Մեզ հենց այս հարցի պատասխանն է հետաքրքրում:

Առաջինը՝ նրանք կիրառում են էվրիստիկայի (խնդրի լուծման ամենակարճ ուղին ինքնուրույն հայտնաբերելու հատկություն) մոտեցումը:

Էվրիստիկայի մոտեցումն առաջարկել է Կոնֆիցիուսը 2500 տարի առաջ: Այս մոտեցման հիմնական էությունը կարելի է ձևակերպել մեկ նախադասությամբ. «Մի՛ միջամտիր, քանի դեռ սովորողը ջանք չի գործադրել հասկանալու համար, քանի դեռ սովորողը ջանք չի գործադրել արտահայտվելու համար»: Հազարավոր տարիներ դասավանդման այս սկզբունքը արմատավորվել ու սերնդեսերունդ փոխանցվել է չին ուսուցիչներին: Չինաստանում ուսուցիչն ունակ չի համարվում, եթե չի կարողանում կիրառել էվրիստիկայի սկզբունքը: Երկրորդը՝ նրանք հարգում են մաթեմատիկական գործունեության մոտեցումը:

Ջոն Դյուիի «սովորելը մի բան անելով» և Ջորջ Փոլլայի «Ինչպես խնդիր լուծել» տեսությունները եկան հիմնավորելու մաթեմատիկայի դասավանդման չինական ավանդական մոտեցումներն ու շեշտադրումները: Մաթեմատիկայի չին ուսուցիչները հեշտությամբ ընդունեցին այս երկու տեսությունները, որոնք ժամանակակից բնութագրմամբ կոչվում են մաթեմատիկական գործունեություն:

Չինական մաթեմատիկական կրթության մի քանի բնորոշ գծեր

Հստակ նպատակներ և գտված գիտելիք

Հոդվածում նշվում է, որ ուսուցման նպատակները հասանելի են դառնում չորս փուլերի իրականացմամբ՝ իմանալ, հասկանալ, կատարելագործել և ճկուն ձևով կիրառել: Փուլերն իրականացվում են գործունեությամբ, վարժանքով: Առարկայի ուսուցման յուրաքանչյուր բաժնի, յուրաքանչյուր դասի համար հստակեցվում են սովորողների կողմից ձեռք բերվող գիտելիքները, կարողությունները և ուսուցչի կողմից կիրառվող մեթոդները: Ուսուցիչները խստորեն են պահպանում յուրաքանչյուր փուլի համար կանխորոշված նպատակները: Յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի խնդիրների համար ուսուցիչները համապատասխան պլան են գրում, որի մեջ վերլուծում են կարևոր կետերը, դժվարությունները և ուշադրության արժանի մանրամասները: Նույն

դասարաններում դասավանդող ուսուցիչները միավորվում են մի հետազոտական խմբի մեջ և միասին են նախապատրաստվում դասերին, որպեսզի միասնականացնեն ուսուցման սկզբունքները, խնդիրներն ու մեթոդները: Նրանք միասին են նաև ընտրում տվյալ թեմայի յուրացման համար անհրաժեշտ խնդիրներն ու վարժությունները: Ուսուցիչները ուղեցույցներ են ստանում նաև կրթական գործի կազմակերպման նահանգային, քաղաքային և շրջանային կենտրոններից:

Ներըմբռնումը վարժանքի արդյունք է

Այս գաղափարի իրականացումը չինական մաթեմատիկական կրթության մեթոդաբանության հիմնական բաղադրիչներից է: Տրամաբանական մտածողություն պահանջող և մի գիտելիքը մյուսի հետ համադրելու կապը գործածող բազմաթիվ վարժություններ և խնդիրներ լուծելով՝ սովորողները հիշում և հասկանում են տվյալ թեմայի գիտելիքները, ձեռք բերում այդ գիտելիքները հստակ կիրառելու կարողություններ և հմտություններ:

Խորությամբ հասկանալը և փոփոխականների գանազանությամբ վարժանքը

Նոր թեմային վերաբերող վարժություններն ու խնդիրներն են լուծվում՝ անընդհատ փոփոխելով փոփոխական մեծությունները, խնդրին տարբեր տեսանկյուններից են մոտենում, որից հետո էվրիստիկայի սկզբունքով հայտնաբերումներ են արվում, որը բերում է նոր հասկացությունների և կարևոր տերմինների և բառակապակցությունների, դարձվածքների վերլուծություն, որից հետո նոր գիտելիքի կարևոր տարրերի ամփոփում է կատարվում ինչպես նաև պարզաբանվում են նախորդ և նոր գիտելիքների կապերը: Մաթեմատիկական հաղորդակցություն և դասավանդող-սովորող փոխազդեցություն Չինական դպրոցների բնորոշ գծերից մեկն այն է, որ դասարանները մեծաքանակ են, մոտ 60 սովորողով: Նման դասարաններում կիրառվում են դասավանդող-սովորող փոխազդեցության հետևյալ ձևերը.

- Համակցվում են խոսելը և գրելը, գրատախտակի և դասագրքի հետ աշխատանքը, բանավոր թվաբանությունը և գրավոր հաշվումները:
- Ասել-կրկնել, կրկնել նորից, փոխադարձ հաճոյախոսություններ անել, միմյանց սխալներ ուղղել:
- Հարցադրումներ անել, ընդդիմախոսել և հակառակն ապացուցող օրինակներ բերել, ներդաշնակություն ստեղծել փոխհամաձայնությամբ:

Դասավանդող-սովորող նման հաղորդակցությունը բարձրացնում է սովորողների մաթեմատիկական հասկացություններով խոսելու կարողությունը: Կենցաղային լեզվից նրանք կարողանում են անցում կատարել դեպի մաթեմատիկական, խորհրդանիշային և գրաֆիկական լեզուներին:

Ռոնգբաո Տուն իր մեկ այլ հոդվածում՝ «[Assessment of Mathematics Education in China](#) – Մաթեմատիկական կրթության գնահատումը Չինաստանում» մանրամասն անդրադարձել է հանրակրթության տարբեր աստիճաններում մաթեմատիկայի

քննությունների կազմակերպմանը: Նա գրում է, որ Չինաստանում մաթեմատիկական կրթության գնահատումը ներառում է հետևյալ բաղկացուցիչները՝ դպրոցական աշխատանքի վրա հիմնված գնահատում, ընտրության նպատակով արված գնահատում, մրցութային նպատակով արված գնահատում:

Դպրոցական աշխատանքի վրա հիմնված գնահատումը երեք տիպի է լինում՝ սովորական ամենօրյա գնահատում, կիսամյակի միջանկյալ որոշակի պարբերությամբ (շաբաթը մեկ անգամ, երկու շաբաթը մեկ, ամիսը մեկ) կազմակերպվող քննություններ և եզրափակիչ քննություններ:

Սովորական ամենօրյա գնահատում

Գնահատվում են և՛ դասարանական, և՛ տնային աշխատանքները:

Դասարանական աշխատանքը կարող է լինել ուսուցչի հարցերին բանավոր պատասխան, դասագրքի կամ ուսուցչի կազմած վարժությունների և խնդիրների լուծում: Կրտսեր դպրոցում դասարանական աշխատանքը կարող է տևել մեկ դասաժամի կեսից ավելին՝ 20-ից 30 րոպե, իսկ միջին և ավագ դպրոցներում՝ 10-ից 20 րոպե:

Տնային աշխատանքը արվում է դասերից հետո և կարող է ունենալ հետևյալ ձևերը.

- Սովորողները վարժություններ և խնդիրներ են լուծում՝ գրելով դրանք իրենց տետրերում:
- Սովորողները ձեռքի փոքրածավալ աշխատանք պահանջող առաջադրանքներ են կատարում տանը (օրինակ, սխեմաներ են գծում, գրաֆիկներ են գծում, սովարաթղթից երկրաչափական տարածական մարմիններ են պատրաստում):
- Սովորողները փոքրիկ հետազոտական աշխատանք են կատարում՝ օգտագործելով մաթեմատիկական վերլուծության մեթոդներ, լուծում են կենցաղին առնչվող խնդիրներ:

Տնային աշխատանքների ծավալը այնպիսին պետք է լինի, որ կրտսեր դպրոցի սովորողը դրա վրա ծախսի 20-30 րոպե, միջին դպրոցի բարձր և ավագ դպրոցի ցածր դասարանների սովորողները տնային աշխատանքի վրա սովորաբար ծախսում են 30-50 րոպե, իսկ ավագ դպրոցի բարձր դասարանների տնային աշխատանքը պահանջում է 50-70 րոպե:

Գիսամյակի միջանկյալ՝ որոշակի պարբերությամբ (շաբաթը մեկ անգամ, երկու շաբաթը մեկ, ամիսը մեկ) կազմակերպվող քննություններ

Գիտելիքների և կարողությունների ստուգման այս ձևով մաթեմատիկա դասավանդողները պարզում են, թե որքանով են սովորողները յուրացրել ուսումնասիրվող թեման:

Ստուգումն օգնում է սովորողներին բացահայտել տվյալ թեմայի յուրացման ընթացքում թույլ տված բացթողումները, իսկ դասավանդողներին էլ օգնում է գնահատել ու ախտորոշել իրենց դասավանդման հաջողված և թերի կողմերը: Հարցաշարերը կազմում են տվյալ դպրոցի մասնագետները: Հարցաշարերը երեք տիպի առաջադրանք են պարունակում՝ բազմընտրական հարցեր, բաց թողնված մասերի լրացում և վարժությունների ու խնդիրների լուծում: Կրտսեր դպրոցում այս ստուգողական աշխատանքի տևողությունը 45-60 րոպե է, իսկ միջին դպրոցում՝ 90-120:

Եզրափակիչ քննություններ

Եզրափակիչ քննությունները կազմակերպվում են կրտսեր և միջին դպրոցներում կիսամյակի և ուսումնական տարվա վերջում: Երկու եզրափակիչ քննությունների միջև ընկած ամենակարճ ժամանակամիջոցը 4,5 ամիս է, որը կոչվում է կիսամյակային: Հաջորդը՝ տարեկան (ուսումնական տարվա վերջին) և երրորդը՝ ավարտական (6-րդ և 9-րդ դասարանների ուսումնական տարվա վերջին): Ավարտական քննությունների տևողությունը 120 րոպե է: Յուրաքանչյուր քննություն 20-25 հարց ունի, որից 10-12-ը բազմընտրական են, 4-6-ը բաց թողնված տեղերը լրացնելու և 5-6 լուծում պահանջող վարժություններ ու խնդիրներ:

Ընտրության նպատակով կազմակերպվող քննություններ

Այս տիպի քննությունները այն սովորողների համար են, ովքեր 9-րդ դասարանի վերջում հաջողությամբ հանձնել են պարտադիր հանրակրթական ծրագրին համապատասխան եզրափակիչ ավարտական քննությունը և ուզում են ու կարող են ուսումը շարունակել ավագ դպրոցում: Ավագ դպրոցն ավարտելիս սովորողը երկրորդ անգամ է մասնակցում ընտրության նպատակով կազմակերպվող քննությանը, որն արդեն իր բարդությամբ հավասարվում է ամերիկյան SAT & ACT քննությանը, ինչն ամերիկյան քոլեջի ընդունելության քննությունն է մաթեմատիկայից:

Մրցութային քննություններ

Կրտսեր, միջին և ավագ դպրոցներում հաճախակի են անցկացվում մրցութային քննություններ մաթեմատիկայից, որոնց նպատակն է ընտրել օժտված սովորողներին՝ ավելի բարձր վարկանիշային դպրոցներում ուսումը շարունակելու համար: Մրցութային քննությունների առաջադրանքները հետաքրքիր են և հետազոտական, ստեղծագործական մոտեցում են պահանջում: Մրցութային քննությունների արդյունքները հաշվի են առնվում նաև համալսարաններ ընդունվելիս: Ավագ դպրոցների այն սովորողները, ովքեր հաջողությամբ են մասնակցել մաթեմատիկական ազգային մրցույթներին, առանց ընտրական ընդունելության քննությունների ընդունվում են ամենահեղինակավոր համալսարանները:

[Այստեղ մաթեմատիկա դասավանդողները կարող են գտնել Չինաստանի կրտսեր, միջին և ավագ դպրոցներում մաթեմատիկայի առարկայական ծրագրի բովանդակային միջուկը և առաջարկվող թեստերի \(ըստ տարիքային խմբերի\), ինչպես նաև համալսարանական ընդունելության քննությունների հարցաշարերի օրինակներ:](#)

[Աղբյուրը](#)

22. [Տեխնոլոգիական կրթությամբ դպրոցի կյանքը կապվում է իրական կյանքի հետ](#) (Դպիր 103)



Կրթական համակարգը, որը հիմնված է սովորողներին միայն ակադեմիական գիտելիքներ փոխանցելու վրա, ավելի ու ավելի է հեռանում իրական կյանքից՝ այն ամենից, ինչի կարիքն իրոք ունեն նախակրթարանի սաները, միջին և ավագ դպրոցների սովորողները: Շատ երկրներում են արդեն կրթական համակարգերը բարեփոխում՝ ավելի շատ հիմնվելով տեխնոլոգիական կամ էլ ավելի լայն իմաստով՝ նախագծային ուսուցման վրա: Օրինակ, Ֆինլանդիայում այս տարվանից արդեն սկսել են [կրթական](#)

[հեղափոխություն](#) իրականացնել: Հելսինկիում երիտասարդների և մեծահասակների կրթության պատասխանատու Լիիզա Պոհյոլայնեն այն կարծիքին է, որ Ֆինլանդիայում հիմա կարիք ունեն այնպիսի կրթության, որը մարդկանց կնախապատրաստի աշխատանքային կյանքին: Երեխաները վաղ տարիքից ուզում են ինքնուրույն որևէ կարևոր բան անել, բայց շատ ծնողներ խանգարողի դերում են միայն. ասելին ձեռք չտաս՝ մատդ կծակես, մկրատին ձեռք չտաս՝ մատդ կկտրես, մուրճի հետ գործ չունես՝ մատիդ կխփես: Այսպես մենք աստիճանաբար վերացնում ենք երեխայի՝ որևէ բան ինքնուրույն անելու ձգտումը, իսկ տարիներ հետո «տեղին» հանդիմանում՝ մեծ տղա ես դարձել, բայց մի մուրճ բռնել էլ չգիտես, մեծ աղջիկ ես դարձել, բայց մի կոճակ էլ չես կարողանում կարել: Այս ամենը տանը, իսկ դպրոցում:

Ամերիկացի հոգեթերապևտ Շելլի Ռայթը իր «Ինչու ակադեմիական ուսուցումը չի օգնում երեխաներին առաջադիմել իրական կյանքում» ([Why Academic Teaching Doesn't Help Kids Excel in Life](#)) հոդվածում գրում է. «Դպրոցը պետք է մի վայր լինի, որտեղ երեխաները կարողանան հայտնաբերել, թե ինչ են իրենք սիրում կյանքում: Նրանք պետք է ի վիճակի լինեն իրենց հուզող հարցերը տալու և հետամուտ լինեն դրանց պատասխանները գտնելու: Նրանք պետք է հայտնաբերեն, թե ինչն է իրականում խանդավառում իրենց սրտերն ու հոգիները: Նրանք պետք է հայտնաբերեն, որ կարող են փոխել աշխարհը իրենց այդ խանդավառությամբ: Նրանք պետք է ավարտեն դպրոցը մի զգացումով՝ ինչ գործում են իրենք լավ: Այսօր, կարծում եմ, որ երեխաների մեծ մասն ավարտում է դպրոցը միայն իմանալով՝ արդյոք լավ, թե վատ սովորող է եղել դպրոցում: Հաճախ մեր սովորողները մեծ ընդունակություններ ունեն, որոնք պարզապես չեն տեղավորվում «իսկական ակադեմիական գիտելիքի» մեր պատկերացումներում: Իսկ ի՞նչ է դա: Կենսաբանության ծրագրի, որը ես վերջին մի քանի տարիները դասավանդում եմ, բովանդակային կետերից մեկը անձրևորդերի բազմացումն է: Ինչ-որ մեկը կամ էլ մեկից ավելի մարդիկ որոշել են, որ 17-ամյա պատանիների համար կարևորը անձրևորդերի բազմացման մասին իմանա չն է»:

Շելլի Ռայթի այս միտքը շարունակելով՝ ասեմ, որ մինչև հիմա էլ չեմ հասկանում, թե ինչու էր ինձ պետք այդքան շատ եռանկյունաչափական վարժություններ լուծելը դպրոցում: Դպրոցն ավարտելուց ի վեր, 50 տարի շարունակ իրական կյանքում ինձ պետք չեն եկել ոչ sin-ը ոչ էլ՝ cos-ը, էլ չեմ ասում arcsin-ի ու arctg-ի մասին: Պետք չէ ասել, որ այդ վարժությունները տրամաբանություն են զարգացրել: Ես մաթեմատիկոս չեի դառնալու, և դրանք սոսկ մեխանիկական գործողություններ էին ինձ համար, որոնք ձևավորում էին ոչ մի տեղ պետք չեկող կարողություններ: Համատարած գրագիտության երկիր է Հայաստանը,

միջնակարգ կրթությունն էլ՝ պարտադիր: Բոլորն էլ քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա առարկաներից քննություններ են հանձնել, բայց երբ բժիշկը որևէ մեկին ասում է, որ նա պետք է 5%-անոց աղի լուծույթով ողողում անի, նա հարցնում է բժշկին, թե որքա՞ն աղ լցնի մեկ բաժակ ջրի մեջ: Ո՞ւր կորան տե՞ս ու տե՞ք: Այստեղ Վիետի թեորեմն էլ չի օգնի, եթե նույնիսկ անգիր հիշի: Այո, դպրոցը միշտ էլ կյանքից հեռու է եղել ու կյանքում ամենաանպաշտպանները դպրոցում կարգապահ, հլու հնազանդ ու շատ լավ սովորողներն են լինում: Մայքրոսոֆթի հիմնադիր տնօրեն Բիլ Գեյթսի խորհուրդը շատ է խոսում՝ «Մի արհամարհեք ձեր վատ սովորող դասընկերներին. շատ հնարավոր է գա մի օր, երբ հարկ կլինի խնդրել նրանց, որպեսզի նրանք աշխատանքով ապահովեն ձեզ՝ որպես գործատու»:

Գերի Բենենսոնը իր բավականին ծավալուն հոդվածում «Տեխնոլոգիան որպես դպրոցական ուսումնական առարկա» ([Introducing Technology as a School Subject](#)) աշխատում է բացահայտել տեխնոլոգիական կրթության էությունը: Նա գրում է, որ շատ կրթական շրջանակներում տեխնոլոգիան նույնացնում են համակարգիչների հետ, իսկ ոմանք էլ ավելի են նեղացնում տեխնոլոգիայի իմաստը և համարում դա միայն համացանցային փնտրտույթ: Գերի Բենենսոնը այն կարծիքին է, որ առօրյա կյանքում պիտանի սովորական թղթե տոպրակներ պատրաստել սովորեցնելը կրտսեր դպրոցում առաջին տեխնոլոգիական կարողություններից է, որ երեխան կարող է ձեռք բերել: Տեխնոլոգիական մոտեցման բոլոր բաղադրիչներն էլ կարող են առկա լինել տոպրակի պատրաստման ժամանակ:

Առաջին բաղադրիչը **հետազոտելն** է: Դասվարի հետ միասին որոշում են, թե որ թղթի տեսակն է ամենադիմացկունը: Աշխատանքի **պլանավորումը** կատարում են՝ մատիտով գծելով ապագա տոպրակի բնական չափերով ձևվածքը: Օգտագործելով մկրատ և սուսինձ՝ **ստեղծվում** է առաջին տոպրակը: Սովորողները կարող են **գնահատել** իրենց աշխատանքը՝ տոպրակի մեջ որոշ իրեր լցնելով և կշռելով: Վերջում պարզում են, թե քանի կիլոգրամ միրգ է կարող պարունակել իրենց պատրաստած տոպրակը:

Ի՞նչ է տեխնոլոգիական կրթությունը

Հայերենի առցանց բացատրական բառարանում «տեխնոլոգիա» բառը երկու բացատրությամբ է ներկայացված.

1. *Նյութերի՝ արտադրանքի մշակման միջոցների և արտադրական պրոցեսների կատարման մեթոդների մասին գիտելիքների ամբողջությունը:*
2. *Որոշակի միջոցներով, եղանակներով ու հաջորդականությամբ կատարվող այն գործառնությունների ամբողջությունը, որոնցից բաղկացած է նյութերի և արտադրանքի մշակության պրոցեսը:*

Օքսֆորդի բացատրական բառարանում այդ բառն ունի այս բացատրությունները.
«Գիտության օգտագործումը արդյունաբերական կամ առևտրային նպատակներով»:

Օրինակ, կաուչուկի արտադրության տեխնոլոգիան, կոնյակի արտադրության տեխնոլոգիան...

Ամերիկյան Webster-ի մեջ ավելի պարզ է գրված.

«Գործնական նպատակին հասնելու համար օգտագործվող տեխնիկական մեթոդը»:

Միջազգային բակալավրիատի կրթական ծրագրում բացատրությանը կրթական ուղղվածություն է տրված. «Մարդու ստեղծականության կիրառումը խնդրի լուծման գործում»: Այսինքն՝ կրթությունը, ուսուցումը տեխնոլոգիայես ճիշտ կազմակերպելու համար հարկ է որ ուսման գործընթացում խթանել սովորողների ստեղծականությունը: Այդ ստեղծականությունը խթանվում է «*հաջորդականությամբ կատարվող գործառնությունների ամբողջությամբ*»: Գործառնությունների այդ ամբողջությունը 4 քայլից է բաղկացած՝ հետազոտում, աշխատանքի պլանավորում, ստեղծում և գնահատում, իսկ համակարգչային տեխնոլոգիան օգնում է, որ այդ չորս քայլերն ավելի արդյունավետ իրականացվեն: Օրինակ, հետազոտման փուլում, երբ ուսումնասիրվող նյութի մասին անհրաժեշտ է նախնական տեղեկատվության, անգնահատելի է ինտերնետին միացված համակարգիչը: Համակարգչային տարբեր ծրագրերն օգնում են նաև հավաքած տեղեկատվությունը և սեփական փորձով ձեռք բերված արդյունքները համեմատելուն, տեսանելի ու պատշաճ ձևով ներկայացնելուն, ինչը նաև կարելի է համարել աշխատանքի արդյունավետ գնահատում:

Միջին և ավագ դպրոցներում հարկ չկա տեխնոլոգիան որպես առանձին առարկա ուսումնասիրել: Մի բան անելու տեխնոլոգիական հմտությունները կարելի է կիրառել գրեթե բոլոր ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում:

Օրինակ, դիտարկենք, թե ինչն է տեխնոլոգիական ուսուցումը գրականության դասավանդման մեջ.

1. Հետազոտական աշխատանք. ընտրում ենք թեման: Ուսումնասիրվող հեղինակը Հովհաննես Թումանյանն է: Սովորողներին հանձնարարվում է կարդալ Թումանյանի բանաստեղծությունները և նրանցում գտնել այնպիսիները, որոնք հնարավոր կլինի ամփոփել մի վերնագրի տակ, որոնք գրեթե նույն թեման են շոշափում: Օրինակ, եթե ինձ տրվեր այդպիսի հանձնարարություն, մի վերնագրի տակ կամփոփեի այն բանաստեղծությունները, որոնք բացահայտում են Թումանյանին որպես մեծ հավատքով լի մի մարդ. «[Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում](#)», «[Բանաստեղծը ձերացել է](#)», «[Երբ ես տխուր, հուսահատ](#)», «[Ամառային երեկո](#)» «[Ամմահությանը](#)», «[Աստծո սպառնալիքը](#)» և այլ նմանազգի բանաստեղծություններ:

2. Պլանավորում. դասավորում ենք ընտրված բանաստեղծությունները ըստ մտքի զարգացման:

3, 4. Ստեղծում և գնահատում: Նորից ու նորից ենք կարդում այդ բանաստեղծությունները՝ առանց պարտադրված անգիր անելու՝ կարևորը միտքն է, որը պետք է հասկանալ ու գնահատել: Երբ գնահատում ենք այդ մտքերը, ստեղծում ենք մերը: Գնահատել՝ նշանակում է ստեղծել:

Տեխնոլոգիական նույն բաղադրիչներով կարող ենք ավագ դպրոցի սովորողներին առաջարկել [Շեքսպիրի «Տիմոն Աթենացու»](#) և Ավետիք Իսահակյանի [«Աբու Լալա Մահարու»](#) խոռվահույզ մենախոսությունների համեմատական հետազոտություն անել:

Մեկ այլ օրինակով քննարկենք հայերենից անգլերեն և անգլերենից հայերեն թարգմանչական կարողությունները զարգացնելու տեխնոլոգիան:

1. Հետազոտական աշխատանք. ընտրում ենք թեման:

Հայերենից անգլերեն թարգմանելու համար թեմաներն ընտրվում են ըստ սովորողների հետաքրքրությունների, նրանց արդեն ունեցած փորձառությունների: Հարկ չկա ընտրել այնպիսի թեմա, որում նույնիսկ մայրենի լեզվով անհասկանալի գաղափարներ են շարադրված:

2. Պլանավորում:

Աշխատանքի հաջորդականությունը.

Ա) Սկզբում ակտիվացնում ենք Google-ի թարգմանիչ ծրագիրը

Բ) Թարգմանվող տեքստը արտատպում ենք Microsoft Word –ում:

Գ) Կարդում ենք ամբողջ տեքստը և ընդգծում ենք այն բառերն ու բառակապակցությունները, որոնց անգլերեն ձևերը չգիտենք: Կարևոր է հասկանալ տեքստի ամբողջական բովանդակությունը, որպեսզի էլեկտրոնային թարգմանչի առաջարկած տարբերակներից հնարավորին չափով ճիշտն ընտրենք: Այդ հարցում մեզ շատ է օգնում նաև երկլեզվանի բառարանին կցված անգլերեն բացատրական բառարանը:

3. Ստեղծում:

Սկսում ենք բուն թարգմանական գործընթացը՝ յուրաքանչյուր թարգմանված նախադասություն մուտքագրելով հայերեն տեքստի վերևում և ջնջելով համապատասխան հայերեն նախադասությունը: Վերջում մեր էջում մնում է միայն անգլերեն թարգմանվածը:

4. Գնահատում: Վերջում արագ կարդում ենք մեր թարգմանած տեքստը և հնարավոր վրիպակները ուղղելուց հետո տեղադրում այն մեր բլոգում, կայքի անգլերեն էջում, ուղարկում ենք մեր արտասահմանյան ոչ հայախոս բարեկամին: Միջմշակութային կապերի, միջազգային կրթական փոխանակումների զարգացման համար կարևոր է թարգմանչական կարողությունը:

Դպրոցական տարբեր ուսումնական առարկաների մասնագետները կարող են իրենց առարկայի թեմաները մշակել նշված տեխնոլոգիական բաղադրիչներով:

Այդուհանդերձ, հանրակրթությունը պետք է այնպես կազմակերպվի, որ արդյունքում սովորողները ձեռք բերեն իրենց կյանքում միշտ էլ անհրաժեշտ հետևյալ տեխնոլոգիական կարողությունները.

Մտածելու կարողություններ

- Թեմատիկ գաղափարների վրա հիմնված լեզվական բառապաշարի ընդլայնում և կիրառում
- Օգտագործել արդեն ձեռք բերած գիտելիքը նոր երևույթի բացահայտման մեջ
- Վերլուծել երևույթները համեմատության մեջ՝ գտնելով դրանց նմանությունները և ընդհանրությունները
- Կարողանալ ստեղծել մի նոր ամբողջ՝ համակցելով տարբեր երևույթների առանձին մասեր, ստեղծել-հորինել նորը
- Կարողանալ ստեղծել՝ գնահատելով տարբեր երևույթներ
- Տարբեր տեսակետները հաշվի առնելով՝ առաջ քաշել սեփականը

Սոցիալական կարողություններ

- Պատասխանատվություն վերցնել մի որևէ հանձնարարություն կատարելու համար
- Կարողանալ լսել և հարգել ուրիշների կարծիքը, որոշումներ կայացնել ելնելով սոցիալական արդարության ու հավասարության սկզբունքներով, հարգել այլ դավանանքներ ունեցող անձանց
- Կարողանալ խմբային աշխատանք կատարել՝ իմյանց հետ կիսելով աշխատանքներ և աշխատանքային գործիքներ, ի վիճակի լինել հարթել խմբում առաջացած հակասությունները

Հաղորդակցական կարողություններ

- Կարողանալ ունկնդրել ցուցումները, տեղեկատվությունը
- Կարողանալ մի որևէ իրադարձության մասին բանավոր տեղեկատվություն տալ՝ մտքերի հստակ և տրամաբանական հաջորդականությամբ
- Կարողանալ մի որևէ երևույթի մասին տեղեկություններ հայթհայթել համացանցից, տեղեկատվական գրքերից և դրանք կարդալով՝ գրավոր և բանավոր եզրակացություններ անել լսարանի առաջ Power Point ներկայացմամբ կամ էլ՝ բլոգում
- Կարողանալ երևույթների պատկերման, զարգացման սխեմաներ ու գրաֆիկներ կարդալ և մեկնաբանել դրանք բանավոր և գրավոր

Ինքնակառավարման կարողություններ

- Կարողանալ վարքագծով այնպես անել, որ սեփական անձը և ուրիշներին վտանգի մեջ չդնել
- Կարողանալ արդյունավետորեն օգտագործել հանգստի և աշխատանքային ժամանակը
- Կարողանալ տեղանքի քարտեզից օգտվել, կարողանալ կողմնորոշվել տեղանքում կողմնացույցով և առանց կողմնացույցի
- Կարողանալ հետևել անձնական հիգիենային, առողջ սննդի և ապրելակերպի կանոններին

Համակարգչային կարողություններ

- Կարողանալ աշխատել Word office, Power Point, Paint, Photo shop, Excel, Avis, Film maker ծրագրերով
- Կարողանալ անձնական բլոգ ստեղծել և վարել այն

Ֆիզիկական և աշխատանքային կարողություններ

- Կարողանալ լողալ, թել ու ասեղով կարել
- Կարողանալ վրան խփել ու խարույկ վառել, կարողանալ գոյատևել որոշակի էքստրեմալ պայմաններում

Նյութն ուսումնասիրելիս օգտագործել եմ հետևյալ աղբյուրները

- [Հայերենի անցանց բառարան](#)
- [Oxford Learner’s Dictionary](#)
- [Ֆինլանդիայում կրթական նոր հեղափոխություն է նախապատրաստվում](#)
- [Why Academic Teaching Doesn’t Help Kids Excel in Life](#)
- [Project Based Learning](#)
- [How We Can Connect School Life to Real Life](#)
- [Introducing Technology as a School Subject](#)
- [Perspectives of the San Diego Bay](#)
- [Հովհաննես Թումանյանի քանաստեղծությունները](#)
- [Աբու Լալա Մահարի](#)

III. Համեմատության եզրեր համաշխարհային և մեր կրթահամալիրի մանկավարժական մոտեցումների միջև

23. [Բլոգաֆոնյան դասեր](#) (Դպիր 69)

Այս տարվա փետրվարի 4-ից մինչև մարտի 4-ը մասնակցում էի Բրիտանական խորհրդի կազմակերպած՝ անգլերեն դասավանդողների միջազգային մրցույթին, որն ինձ համար եղավ մասնագիտական վերապատրաստման մեծ ու կարևոր քայլ: Ի՞նչ տվեց ինձ այդ մրցույթը: Այս հոդվածում ուզում եմ շարադրել անգլերենի (և ոչ միայն անգլերենի) դասավանդմանը վերաբերող մի քանի նորարարական փորձեր, մասնագիտական հնարքներ, թվային միջոցների կիրառման արդյունավետ եղանակներ, որոնց մասին տեղեկացա և որոնք նպատակահարմար եմ գտնում փոխանցել օտար լեզու դասավանդող իմ գործընկերներին:

Բոլոր շեղատառերով գրվածները թարգմանություններ են անգլերենից:

SS արդյունավետ կիրառումը կրթության կազմակերպման գործում

[Մուդլ \(Moodle\)](#) կրթական կայքը skydrive-ի կատարելագործված տեսակն է, որը հնարավորություն է տալիս կրթության կազմակերպիչներին, համալսարաններին, դպրոցներին, դասավանդողներին և սովորողներին դինամիկ փոխադարձ կապով կազմակերպել և իրականացնել կրթությունը առցանց ձևով: Աշխարհի շատ զարգացած երկրների կրթության նախարարությունները ունեն իրենց Մուդլերը, որտեղ հետաքրքրվողը կարող է այդ երկրի կրթությանը վերաբերող ցանկացած հարցի պատասխան ստանալ փոխադարձ կապով: Համալսարանական Մուդլերում դասախոսները դնում են իրենց ստեղծած դասընթացները, առաջադրանքները, իսկ ուսանողներն էլ կարող են և՛ կարդալ այդ դասախոսությունները, և՛ հարցեր ուղղել ու ստանալ դրանց պատասխանները: Մեր հանրապետությունում ԱՅԲ ավագ դպրոցն է օգտագործում Մուդլ համակարգը և նրանք շատ գոհ են դրանից: Այս համակարգով աշխատելիս լավ է ստացվում դասավանդող-սովորող-ծնող-դպրոցի վարչական աշխատող կապը:

[One stop English](#) կայքը ծրագիր է առաջարկում, որով հնարավոր է ստեղծել ունկնդրելու ֆայլեր: Սա շատ կարևոր է օտար լեզու դասավանդողների համար: Ճիշտ է, բազմաթիվ պատրաստի նյութեր կան համացանցում, որոնք ստեղծված են ունկնդրելու համար, բայց այս ծրագիրը հնարավորություն է տալիս ստեղծելու սեփական աուդիոֆայլերը: Մասնակից Նատալին առաջարկում է նաև [Voicethread](#) կայքը, որը կօգնի տեխնիկական լուծումներ գտնելու:

Հաճախ է պատահում, երբ սովորողին հանձնարարվում է տեղեկություն գտնել համացանցում մի որևէ հարցի մասին, բայց այդ տեղեկատվությունը շատ երկար տեքստով է ու բարդ լեզվով գրված: [Այս ծրագրը](#) կրճատում և պարզեցնում է տեքստը՝ տալով հիմնական իմաստը:

[Այս կայքը](#) ստեղծված է ի [հակադրություն բլոգավարությանը](#), եթե խոսքը կրթության մասին է: Հենց առաջին էջում հորդորվում է մոռանալ բլոգի մասին և ստեղծել գլոգը, եթե օգտատերը դասավանդող է, կամ էլ՝ սովորող: Իրոք, բլոգը ավելի շատ ստեղծագործող անհատի համար է, այլ ոչ թե կրթության կազմակերպման: Բլոգով չի ապահովվում հետադարձ դինամիկ կապը: Բլոգների ձևավորումը ավելի շատ գեղարվեստական արտաքին էֆեկտների վրա է հիմնված՝ գույն, ֆոն, տառերի ձևեր: Գլոգի ձևավորումը նպատակաուղղված է կրթական խնդիրներին, ուսուցմանը: Այստեղ ձևավորման մեջ տեղ է հատկացված դասավանդողի կողմից տրվող առաջադրանքների, դասընթացների, նախագծերի, գրաֆիկական պատկերների, սովորողների պատասխանների համար: Հնարավորություն կա տվյալ թեմայով դիտարկելու նաև այլ գլոգավար դասավանդողների դասընթացները, առաջադրանքները, նախագծերը: Դասավանդողը փաստորեն միանում է կրթական համաշխարհային գլոգին՝ Glogster Edu և մասնագիտական առումով միշտ լինում է տեղեկացված:

[Teachclassdojo](#) կայքը նույնպես կրթության կազմակերպմանն է ուղղված: Այս կայքի օգտատերերը կարող են լինել դպրոցների վարչական աշխատողները, դասավանդողները, սովորողները և նրանց ծնողները: Կայքն ավելի մանրամասն կներկայացվի ուսումնասիրման փուլից հետո:

[English to go](#) կայքը նախատեսված է անգլերենը որպես օտար լեզու դասավանդողների համար: Այն ունի 1800 ուսումնական նյութ, որը պահվում է կայքի թվային գրադարանում:

Ունկնդրելու և խոսելու կարողությունները զարգացնելու համար օգտակար կայքեր

[Tedxteen](#) կայքն առաջարկվում է ավագ դպրոցի անգլերեն դասավանդողներին: Կայքը մեծապես նպաստում է սովորողների ունկնդրելու կարողությունների զարգացմանը: Ընտրված թեմաները հետաքրքիր են, և լսելուց հետո սովորողները հետաքրքրությամբ են այն քննարկում:

[Eflclassroom](#) անգլերեն դասավանդողներն այստեղ կգտնեն իրական զարմանալի պատմություններ, որոնց ձայնագրություններն արված են հստակ արտասանությամբ, իսկ տեքստերից հետո առաջարկվում են նոր բառապաշարի ամրապնդմանն ուղղված վարժություններ:

Խորվաթիայից Բոանկասը առաջարկում է ձայնագրել սովորողների [խոսքը այս կայքով](#). Երբ սովորողները լսում են իրենց խոսքը, ավելի լավ են կարողանում ուղղել իրենց արտասանական սխալները: Իմ կողմից պետք է ավելացնեմ, որ այս կայքով սովորողներն իրենք կարող են ձայնագրել իրենց խոսքը՝ որպես բանավոր պատասխան և տեղադրել իրենց բլոգում: Կարելի է նաև աուդիո նամակներ ուղարկել, կրթահամալիրի կայքում ձայնային նյութ տեղադրել: Օրինակ, այսպես՝ [Vocaroo](#) կայքը ներկայացնում է անգլերեն ստեղծված մուլտֆիլմեր: Դասավանդողները պետք է նախօրոք ընտրություն կատարեն, որովհետև այս մուլտֆիլմերի լեզվական բարդության աստիճանները տարբեր են:

Լեզվական խաղեր

Կրտսեր դպրոցում դասավանդող բլոգաֆոնյան մասնակիցները լեզվական խաղերի մի քանի կայք առաջարկեցին:

<http://www.learninggamesforkids.com/word-games.html>

<http://www.funbrain.com/>

<http://www.thekidzpage.com/freekidsgames/wordgames.htm> <http://www.primarygames.com/reading.php>

Բլոգաֆոնը անգլերենի դասավանդմանն ուղղված մի բացառիկ հետաքրքիր առցանց քննարկում էր: Որպես օրինակ կարող եմ բերել իմ «Another Way of Motivating the Students to

Speak - Սովորողների խոսելը խթանելու մեկ ուրիշ հնարք» նյութը և դրա շուրջ ծավալված կարծիքները:

Ասում են, որ երեխան կարողանում է լսել նույնիսկ նախքան ծնվելը, և ծնվելուց հետո էլ երեխան սովորաբար զբաղված է ունկնդրումով և արտաքին աշխարհի ընկալումով մոտ 1,5-2 տարի նախքան ի վիճակի կլինի խոսել: Մայրը իր երեխային չի սովորեցնում իր մայրենի լեզվի տարբեր քերականական կանոնները: Երեխաներն ամեն ինչ սովորում են լսելով և կրկնելով: Անզլերեն դասավանդելիս ես միշտ հետևում եմ այս բնական հաջորդականությանը. Սկզբում իմ սովորողները պետք է լսելու հնարավորություն ստանան, և հետո միայն ակնկալում եմ նրանց խոսելը: Եթե ես ուզում եմ, որ իմ սովորողները խոսեն, ես ինքս եմ սկսում խոսել արտահայտելով իմ սեփական մտքերը ու գործածելով դասի թեմատիկ բառապաշարը: Երբեմն ես միտումնավոր սխալ մտքեր եմ արտահայտում, որպեսզի սովորողները ծայրահեղ հետքորթրված լինեն իրենց սեփական մտքերն արտահայտելու: Օրինակ, եթե մեր թեման երաժշտությունն է, ես չեմ հարցնում նրանց, թե ինչպիսի երաժշտություն են նրանք նախընտրում լսել: Նրանք հազիվ թե որևէ բան ասեն, որովհետև դեռ հետաքրքրված չեն: Սկզբում ես ասում եմ, թե ինչ երաժշտություն էին նրանց ծնողները, տատերն ու պապերը լսել: Ես նրանց ասում եմ, թե որքան մեղեդային ու ականջներին հաճելի էին այն տարիների երգերը՝ միննույն ժամանակ օգտագործելով որոշ նոր բառեր և արտահայտություններ՝ կապված երաժշտության հետ, և միայնի ամոզված լինելով, որ նրանք արդեն բավականաչափ լսել են ինձ, ես անում եմ իմ առաջին փորձը նրանց հավասարակշռությունից հանելու համար ու ասում եմ.

«Բանի պետք չէ ժամանակակից երաժշտությունը: Այժմյան երգերը մեղեդային չեն ու բառերն էլ անմտություն են»: Բմ այս միտքն արտահայտելուն պես ես տեսնում եմ մի քանի սովորողների անհամբեր ձեռքեր: Նրանք ուզում են խոսել, չեն կարող չխոսել: Նրանք ծայրահեղ հետաքրքրված են խոսելու համար: Նրանք ուզում են ապացուցել ինձ, որ կարող են ժամանակակից լեզվի երգերի հարյուրավոր օրինակներ բերել: Այդ ժամանակ արդեն իմ պարտքն է ամենաակտիվ սովորողներին մի քիչ զսպել, որպեսզի բոլոր ցանկացողներն էլ հնարավորություն ստանան արտահայտվելու: Երբ նրանք սկսում են վիճել ինձ հետ, ես զգում եմ, որ հասել եմ իմ դասի նպատակին. Սովորողները գիտեն նոր բառերն ու արտահայտությունները, կարողանում են տեղին գործածել դրանք և ուզում են խոսել:

Հոփսիսիմե Շարունցի կարծիքը.

Թանկագին Յուրա, ես կարծում եմ՝ ճիշտ է այդ ձևով հրահրել երեխաներին խոսել: Այսպիսի քննարկումների օգնությամբ նրանք սովորում են վիճել և պաշտպանել իրենց տեսակետները տարբեր թեմաներով զրույցների ժամանակ:

Janaj անունով մասնակիցը Չեխիայից գրում է.

Յուրա, թվում է, որ լավ է աշխատում հետաքրքրություն արթնացնելու Ձեր անհատականացված ձևը: Շարունակե՛ք այդպես:

Ադեհ Հովասափյանը ԱՅԲ ավագ դպրոցից.

Թանկագին Յուրա, հետաքրքիր մոտեցում ունեք, բայց միննույն ժամանակ Ձեր մոտեցումը կարող է մեծացնել ուսուցչի խոսելու ժամանակահատվածը: Իմ պատկերացմամբ դժվար է օտար լեզվով անմիջապես պատասխան ակնկալել սովորողներից: Ես սովորաբար հարցը տալիս եմ և ժամանակ եմ տալիս նրանց մտածելու և ձևակերպելու իրենց պատասխանը: Բայց ես կփորձեմ նաև Ձեր մոտեցումը:

Իմ պատասխանը Ադեհ Հովասափյանին

Թանկագին Ադեհ, հետաքրքրություն արթնացնելու այս հնարքը գործածում եմ ավագ դպրոցում, որտեղ սովորողները բավականաչափ լեզվական գիտելիք ունեն արտահայտվելու համար, բայց երբեմն չգիտեն թե ինչասեն: Դա շատ նման է հեռուստատեսային թոքշոուններին, երբ հաղորդավարը հրահրում է ընդդիմախոսմանակիցներին վիճաբանելու: Հաղորդման հաջողությունն էլ կախված է այն բանից, թե որքան տաք էրնթանում վիճաբանությունը: Ես այս հնարքը շատ եմ փորձում իմ դասերի ընթացքում և միշտ էլ այն լավ էաշխատում:

Ադեհ Հովասափյան

Շնորհակալություն պարզաբանման համար: Ես հասկանում եմ Ձեր հիմնավորումը: Ես ուզում էի միայն իմ մոտեցումն արտահայտել: Ես փորձելու եմ ձեր հնարքը: Շնորհակալություն այդ հետաքրքիր ու արժեքավոր փորձը մեր հետ կիսելու համար:

Եվգենիա Զիմինա Կոստրոմայից

Ես աշխատում եմ համալսարանի ուսանողների հետ և հաճախ եմ գործածում այս հնարքը: Պետք է ավելացնեմ նաև, որ ես հետաքրքրում եմ իմ ուսանողներին նաև նրանցից խորհուրդ հարցնելով: Օրինակ, երբ մեր թեման հաղորդակցական տեխնոլոգիան է, ես ասում եմ, որ իմ բջջային հեռախոսով չեմ կարողանում այս կամ այն գործողությունը կատարել: Դրանով նրանք գերակա զգացողություն և կարևորություն են զգում ու ուզում են որքան հնարավոր է լավ բացատրել ինձ, թե ինչպես վարվեմ:

Ահա իմ գրած մեկ ուրիշ նյութ, որը մեծ ուշադրության արժանացավ. «Սա իդեալական դասագիրք է»

Այս դասագրքի բառապաշարը մեծ հոգատարությամբ է ընտրվել: Առաջին դասի մեջ ներկայացված բառերը ակնկալվում են, որ կլինեն երկրորդ դասի տեքստում: Այն 6-7 նոր բառերը, որոնք տրվում են երկրորդ դասում, անհրաժեշտաբար առկա են նաև երրորդում և այդպես շարունակ: Հնարավոր չէ, որ 15-

րդ դասում տրվի «դյուրիչ» բառը, եթե մինչև այդ չի հանդիպել «գրավիչ» բառը: Այս դասագրքի բառերը, բառակապակցությունները և թեմաները խստորեն համապատասխանում են սովորողների տարիքային հոգեբանական առանձնահատկություններին, մայրենի լեզվի նրանց իր ազդեցության աստիճանին և արդեն ձեռքբերված աշխարհայացքին, դեռ ավելին՝ այս դասագրքի բոլոր բառերն ու բառակապակցությունները ընտրվել են ըստ երեխաների՝ մայրենի լեզվում դրանց գործածության հաճախականության: Այս գրքի հեղինակները բավականաչափ իմաստուն էին, որպեսզի գնային տարբեր դպրոցներ ու խաղահրապարակներ՝ խառնվելու երեխաներին, լսելու և ձայնագրելու նրանց բանավոր խոսքը: Միայն նման հետազոտական աշխատանքներ կատարելուց հետո նրանք ինքնավստահություն ձեռք բերեցին սկսելու իրենց դասագրքաստեղծ աշխատանքը: Այս դասագիրքն ունի 700 էջ, բայց տարբեր արմատներով բառերի քանակը 1200 է: Մենք կարող ենք պատկերացնել, թե միջակ ակադեմիական ընդունակություններով սովորողը քանի անգամ է հանդիպում անգլերենի ամենահաճախ հանդիպող ու կարևոր բառերին ու լեզվական կառուցվածքներին կրթական տարբերաստիճաններում: Սովորողը ը չի կարող չհաղորդակցվել այդ բառերով, բառակապակցություններով ու լեզվական կառուցվածքներով ծանոթ թեմայի շուրջը: Քերականական երևույթները ներկայացված են խոսքային մոտիվներով և նախադասությունաստեղծ կառուցվածքներով, որոնց բառերն ու բառակապակցություններն արդեն ծանոթ են սովորողին: Այս դասագրքում վարժությունները սովորողների գիտելիքները և կարողությունները ստուգելու համար չեն կազմված: Դրանք ավելի լավ սովորեցնող ու կարողությունները ամրապնդող են: Այստեղ հաղորդակցական մոտեցումը որոշակիորեն գերիշխում է: Նույնիսկ գրելու գործունեությունը ունի հաղորդակցական արժեք: Սովորողներին ուսուցանվում է, թե ինչպես գրել շնորհավորական նամակներ, ինչպես հրավեր ձևակերպել, ինչպես ընդունել և ինչպես մերժել առաջարկությունը, պաշտոնական և ոչ պաշտոնական դիմելաձևերը: Գիրքն ունի նաև CD ոչ միայն լսելով հասկանալու վարժություններով, այլ նաև բոլոր տեքստերի ձայնագրություններով:

Ո՞վ գիտի, թե որտեղից կարող եմ ձեռք բերել այս դասագիրքը: Մա իդեալական դասագիրք է Կա՞ այսպիսի դասագիրք Ձեր երկրում:

ԱլեԱլեի կարծիքը. Խորվաթիա

Թանկագին Յուրա, այս նյութն ինձ անակնկալի բերեց: Մինչ ես կարդում էի այն, միակ բանը, անընդհատ մտածում էի. «Ես անպայման կհարցնեմ Յուրային, թե որտեղից կարող եմ ձեռք բերել այդ դասագիրքը», իսկ վերջի անակնկալ հարցին պատասխանում եմ, որ ես նույնպես լավ լուր չունեմ:

Մա անգլերենի իդեալական դասագրքի ամենալավ սահմանումն է, որ ես երբևէ լսել եմ: Շքեղություն կլինեի ունենալ այն: Դժբախտաբար մենք միշտ ստիպված ենք լինում ընտրել մի դասագիրք, որն ավելի քիչ վատն է, բայց պետք է ասեմ, որ մեզ թույլատրում են դասագրքի ձանձրալի ու ոչ օգտակար դասերն անտեսել և նույն թեման այլ ձևերով մատուցել: Մենք նաև կարող ենք ավելացնել տրված դասին մեր ունեցած նյութերը: Տարբեր ձևեր կան այս բաներն անելու: Մենք կարող ենք համացանցից օգտվել, կամ էլ՝ հորինել ինքներս: Այս ամենը կարելի է անել, բայց հարց է առաջանում. «Արդյո՞ք մենք դա անում ենք

ամեն անգամ»։ Իհարկե ո՛չ։ Ոչ միայն որովհետև մենք չափազանց շատ ժամանակ կանցկացնեինք դրա վրա, այլ որովհետև այդքան շատ լրացուցիչ ներդիրները դասագրքի մեջ կարող են շփոթեցնել սովորողներին, և այդպիսի դասագրքեր գործածելը պրակտիկ չէր լինի։

Մեր երկրի կրթության նախարարությունը նշում է, որ դասագրքերը ուսուցիչների համար միայն ուղեցույց են ծրագրերի կատարման համար, և նրանք կարող են ընտրություն կատարել։ Մենք ընտրությունը կատարում ենք, իսկ մեր սովորողներն էլ ստիպված են գնել մեր ընտրած դասագիրքը։ Ես չեմ ուզում քննարկել, թե ինչ դասագրքեր են առաջարկվում ընտրության համար։

Իմ վերջին, բայց ոչ ամենաքիչ կարևոր հարցը. « Արդյո՞ք դասագրքերի վաճառքը մեծ բիզնես չէ։ Յուրա, շնորհակալություն այս կարևոր ու լուրջ հարցը այս անակնկալ հումորով բարձրացնելու համար։

Ինչպե՞ս բարձրացնել մասնագիտական որակավորումը

Այս հարցին պատասխանում է Բլոգաֆոնի ամենաակտիվ մասնակիցներից մեկը՝ Եվգենիա Ջիմինան.

- 1. Կարդալ դասավանդողների համար նախատեսված մասնագիտական գրականություն։*
- 2. Մասնակցել հրատարակչությունների, Բրիտանական խորհրդի, տեղական ուսուցչական միությունների կազմակերպած մասնագիտական մրցույթներին։*
- 3. Մասնակցել ամառային դպրոցների համար նախատեսվող կրթաթոշակների մրցույթներին։*
- 4. Երբեք չմերժել անել այն, ինչը սովորողն է խնդրում անել մասնագիտական հարցերում։ Օրինակ, եթե սովորողը քո կարծիքն է ուզում իմանալ մի որևէ գրքի մասին, որը չես կարդացել, ապա կարդա այդ գիրքը և հայտնիք քո կարծիքը։*

Ալե Ալեն Խորվաթիայից գրում է, որ ինքը մի նախագիծ է իրականացրել կրտսեր դպրոցի իր սովորողների հետ, որը կոչվում է «Մեզ շրջապատող անգլերենը-English All Round Us»: Ըստ այդ նախագծի սովորողները պետք է գրի առնեին այն բոլոր անգլերեն բառերը, որոնք հանդիպում են խանութներում, շուկաներում, ցուցափեղկերում, պիտակների վրա և այլն։

Երբ բավականաչափ բառեր էին հավաքվել, դասավանդողը դրանք դասակարգել է ըստ գործածության նպատակների՝ մթերք, հագուստ, հիգիենայի պարագաներ, գործիքներ և այլն։ Դրանից հետո նա կազմել է վարժություններ այդ բառերով ու սկսել է աշխատել դրանցով։ Այս նախագիծը անգլերենի գործնական իմացության կարևոր խթան եղավ նրանց համար։

Խորվաթիայի միջին դպրոցի դասավանդող Բասնջան մի նյութ էր տեղադրել իր բլոգում, որն իրարամերժ կարծիքներ առաջացրեց: Այդ նյութի վերնագիրն էր «Արգելե՞լ, թե չարգելել բջջային հեռախոսները դասարանում»: Ահա այդ նյութը թարգմանաբար.

Մեր երկրի կրթական իշխանությունները նոր կանոնադրություն են մշակել, որով խստորեն արգելվում է բոլոր պետական դպրոցներում բջջային հեռախոսների գործածումը դասարաններում: Այժմ ոչ բոլոր դպրոցներն են հետևում այդ նոր կանոնադրությանը: Որոշ դպրոցներ մշակել են իրենց սեփական կանոնները: Արգելման կողմնակիցների փաստարկն այն է, որ սովորողները բջջայիններով խաղում են դասի ժամանակ, ստուգողականների ժամանակ կարողանում են խաբել ուսուցիչներին և անիմաստ հաղորդագրություններ ուղարկել միմյանց, և շատ հազվադեպ են դրանք պետք գալիս ծնողների հետ կապնվելու համար: Իմ արձագանքը ցնցում եղավ նրանց համար: Ինչու՞ նրանք չեն մտածում հեռախոսները օգտագործել կրթական նպատակներով: Հեռախոսներն այժմ համացանց ունեն և երբեմն կարելի է դրանցից օգտվել որպես դասագրքի այլընտրանք: Ցանկացած տեսակի արգելք հազվադեպ է լինում մի որևէ խնդրի լուծում՝ հատկապես երբ հարցը վերաբերում է դասարանի կարգապահությանը: Իմ վերաբերմունքը և աշխատանքային փորձը բջջային հեռախոսների նկատմամբ միշտ էլ դրական է եղել: Սովորողները դրանք գործածել են արագ մի տեղեկատվություն ճշտելու, առցանց բառարանից օգտվելու, կամ էլ ձայնագրություն անելու համար: Ստուգողական աշխատանքների ժամանակ բոլոր բջջայինները դրվում են իմ սեղանին: Եթե սովորողները որևէ այլ բան են անում հեռախոսներով, կամ խաղում են, ուրեմն ես մի բան այնպես չեմ արել: Մեղավորը ես եմ:

Ինչ կանոնադրություններ կան Ձեր դպրոցներում հեռախոսների վերաբերյալ: Արդյո՞ք դրանք պետք է արգելել դասարան բերել:

Իր կարծիքն է հայտնում **Խիկմատուլ Ուտազբանը Ուզբեկստանից**.

Թանկագին Բասնջա, արդեն մի տարի է, որ մեր մոտ գործում է նույն արգելող կանոնադրությունը: Այն արգելվել է բոլոր տեսակի ուսումնական հաստատություններում: Այդպես է արվել, որովհետև վերջին ժամանակներում համացանցին միանալով, բջջային հեռախոսները տարածում են տարբեր տեսակի տեսանյութեր, որոնք փչացնում են երեխաներին, շեղում են նրանց ուսումնական գործընթացից, խեղում են նրանց բարոյական զարգացումը...:

Եվգենիա Զիմինայի կարծիքը.

Դասավանդողները հաճախ կարծում են, որ բջջային հեռախոսների գործածումը որոշ առավելություններ ունի, բայց ես կարծում եմ, որ թերություններն ավելի շատ են: Ես կարծում եմ, որ բջջայինների օգտագործումը ուսումնական գործընթացում ընդունելի է միայն մասնավոր պարապմունքների ժամանակ և երբ սովորողները մեծահասակներ են:

Բասնջայի պատասխանը. *Ո՞վ է սովորեցնելու երեխաներին ճիշտ օգտագործել հեռախոսը, եթե ոչ դպրոցը:*

Ես հարգում եմ Ձեր կարծիքը, բայց ինձ մտատանջում է երկու հարց.

- 1. Եթե երեխաներն արդեն ունեն այդ հեռախոսները և օգտագործում են դրանք դրսում, արդյո՞ք դպրոցը ճիշտ է վարվում ասելով միայն. «Արա, ինչ ուզում ես անել դրանով, բայց ոչ այստեղ»: Որտե՞ղ են երեխաները սովորելու ճիշտ օգտագործել հեռախոսները, եթե ոչ դպրոցում: Չէ՞ որ դպրոցն է նրանց սովորելու վայրը:*
- 2. Իմ կարծիքով արգելելով հեռախոսի օգտագործումը, մենք արգելում ենք մի մի շատ հասանելի թվային միջոցի օգտագործումը, որն առկա է ու երեխաներն էլ հետաքրքրված են դրա օգտագործումով: Մենք բաց ենք թողնում տեխնիկական միջոցի օգտագործման մի լավ հնարավորություն:*

«Midsummer» կեդճանունով մասնակիցը մի շատ հետաքրքիր հոդված էր գրել էլեկտրոնային մենթորության վերաբերյալ "E-MENTORING": Հոդվածը երևի միայն ինձ շատ հետաքրքրեց, միգուցե, այն պատճառով, որ նրա շատ հեռահար մտքեր արդեն իսկ իրականացվում են մեր կրթահամալիրում, բայց ես որոշակի տարաձայնություններ ունեցա հեղինակի հետ: Դա մանկավարժության մեջ նոր ուղղություն է: Նորի դեմ պայքարելն անիմաստ է, բայց գոնե այն ճիշտ հունի մեջ պետք է դնել: Նյութը ներկայացնում եմ որոշ կրճատումներով:

Թանկագին գործընկերներ, կարող էք հարցնել, թե ինչու եմ մտահոգված էլեկտրոնային մենթորությամբ մեր այս անգլերեն դասավանդողների բլոգաֆոնյան մրցույթում: Մի քանի պատճառներ կան դրա համար.

- 1. Լեզուներ սովորելը անհատական գործընթաց է, ես ավելի շուտ կասեի մասնավոր գործընթաց է: Յուրաքանչյուր սովորող ունի իր ընկալելու արագությունը, իր անհատական ընտրությունը, սովորելու իր անհատական ոճը և նախասիրությունները, խնդիրները և դժվարությունները: Սովորողները տարբեր գործունեություններով են սիրում զբաղվել և մասնակցել տարբեր իրադարձություններին: Լեզուն հաղորդակցության միջոց է, և վաղ թե ուշ սովորողը ստիպված է լինում դիմել այլ մարդկանց խորհրդի համար, թե ինչպես օտար լեզվի մեջ առաջընթաց ունենալ, կամ էլ՝ սեփական ձեռքբերումների գնահատման համար: Այս գործընթացն ավելի կարիք ունի մենթորության, քան դասավանդման: Մարդիկ կարող են լեզուներ սովորել առանց ուսուցիչների: Դա փաստ է, բայց հաջողության համար այդ գործընթացը պետք է ղեկավարել:*
- 2. Օտար լեզուները ինքնուրույն սովորելու համար ավելի ու ավելի շատ ինքնուսույցներ ու առցանց դասընթացներ են ստեղծվում: Ավելի ու ավելի շատ սովորողներ են նախաձեռնում օտար լեզուներ սովորել առանց ուսուցիչների, բայց նրանք ուզում են, որ որևէ մեկին դիմեն ինչ-որ բան պարզելու համար: Վատ ուսուցիչն անմիջապես սկսում է սովորեցնել նրանց, բայց նրանք ուսուցիչների կարիք չունեն. նրանք փորձառու խորհրդատուի կարիք ունեն:*

3. *Դեռ ավելին՝ Ռուսաստանի դաշնային միության կրթական նոր չափորոշիչները հայտարարվել են որպես սովորողի անհատական զարգացման արժեք (վերջապես) և անհատի ամբողջականացված իրազեկություններ: Այժմ դասավանդողներն իրենք կարիք ունեն խորհրդատվության, որպեսզի կարողանան իրականացնել դպրոցական այս անհատական չափորոշիչների ներդրումը, քանի որ նրանցից շատ քչերն են իրապես հասկանում, թե ինչպես կազմակերպել սովորողի օտար լեզվի իմացության (իրազեկության) զարգացումը, ինչպես այն կապել այլ առարկաների ուսումնասիրման հետ: Երբ այս գործընթացը սկսվի, սովորողները խորհրդատուներ (մենթորներ) կփնտրեն, որպեսզի նրանք ոչ թե դասավանդեն, այլ գրուցեն իրենց հետ իրենց առաջընթացի մասին, կամ էլ՝ գնահատեն ձեռքբերումները:*
4. *...Նոր երիտասարդ սերունդը աճել և դաստիարակվել է համակարգիչների և համացանցի առկայությամբ: Նրանք հիմա, միզուցե, ավելի հարմարավետ են զգում և իրենց համակարգիչով զգայականորեն ավելիաջակցված, քան երես առ երես փոխհարաբերություններում: ...Բացի դրանից երեխաներն ավելի անկախ են դառնում դպրոցից, որը նրանց համար շատ կարևոր է: Այսպիսով էլեկտրոնային մենթորությունը անհրաժեշտություն է այսօրվա կրթության համար: Այն սերտորեն կապված է նոր տեխնոլոգիաների հետ, որոնցից դասավանդողը պետք է սովորի օգտվել: Զարգացումներն աստիճանաբար վերափոխելու ենուսուցիչ-սովորող կապը մենթոր-մենթորական կապի: Դա մարդկանց կապում է մեծ տարածությունների վրա:*

Իմ կարծիքը այս նյութի վերաբերյալ.

Թանկագին Midsommer, մեծ հետաքրքրությամբ կարդացի Ձեր նյութը և որոշ չափով համաձայն եմ Ձեր հետ, երբ գործ ունենք միջին դպրոցի ավագ դասարանների և ավագ դպրոցի սովորողների, կամ էլ մեծահասակների հետ, ովքեր արդեն կարողանում են ընդհանրացնել իրենց կարդացած կամ լսած տեղեկատվությունը և վերացականորեն մտածել: Ես լիովին համաձայն եմ նոր մանկավարժական մոտեցման հետ, որ ավելի կարևոր է սովորել սովորեցնելը, քան պարզապես սովորեցնելը: ... Մյուս կողմից ես դեմ եմ սովորական դասավանդման իսպառ վերացմանը դպրոցներում: Կրտսեր դպրոցում, երբ երեխան դեռ ոչինչ չգիտի, ուսուցիչ հետ ամենօրյա շփումը անհրաժեշտ է: Մենթորությունը կրտսեր դպրոցում չի կարող ներդրվել: Միջին դպրոցում սովորողներին կարելի է տալ մի առարկա ընտրելու հնարավորություն, որպեսզի նա կարելի է տալ մի առարկա ընտրելու հնարավորություն, որպեսզի նրանք այդ սիրած առարկան մենթորական կապով ուսումնասիրեն: Ավագ դպրոցում սովորողները կարող են երեք առարկա ընտրել, որպեսզի կարողանան դրանք ուսումնասիրել ուսուցիչ-մենթորի ղեկավարությամբ: Եթե մաթեմատիկորեն արտահայտվենք, ապա այս մոտեցման հնարավոր օգտագործումը ուղիղ համեմատական է կրթական աստիճանների բարձրացմանը՝ միջին դպրոց, ավագ դպրոց, բակալավրիատ, մագիստրատուրա:

Մասնակիցը, որի բլոգի անունը **Տանագորիա** է այն կարծիքին է, որ հատկապես կրտսեր դպրոցում օտար լեզվի ուսուցանումը հաջողություն է ունենում, եթե նոր նյութը ուղեկցվում է նպատակային գործողություններով՝ ձեռքի աշխատանքով: Օրինակ, երեխաները սիրում են սոսինձով, գունավոր թղթերով, մկրատով աշխատելը: Անգլերենի դասը դարձվում է ձեռքի աշխատանքի դաս, որի ընթացքում սովորում են վերը նշված գոյականները և «փոխանցել», «կտրել», «սունձել», «ծալել», «փակցնել» բայերը:

Տարբեր հարցերի մասին շատ այլ նյութեր և կարծիքներ եղան: Նյութերը հարյուրավոր էին իսկ կարծիքները՝ հազարավոր: Հնարավոր չէ բոլորի մասին խոսել ու ամեն ինչ ասել: Նյութեր էլ կան, որոնք դեռ չեն կարդացել: Մնացածի մասին իմ հետագա հոդվածներում կանդրադառնամ: Իսկ այս հոդվածն ուզում եմ վերջացնել օտար լեզվի ժամերին մայրենի լեզվի գործածմանը վերաբերող իմ փոքրիկ նյութով:

Գործածե՛լ մայրենի լեզուն, թե՛ չգործածել

(Նորից համլեդայան հարցը): Մա մի հարց է, որն անհանգստացնում է գրեթե բոլոր օտար լեզու դասավանդողներին: Որոշ դասավանդողներ հպարտանում են, որ երբեք չեն գործածում այն, և նրանց սովորողներին պակասում է բառագիտական ճշգրտությունը և շարահյուսական կունությունը: Մյուսները ոչ անհրաժեշտաբար շատ են օգտագործում այն՝ մոռանալով, որ իրենք օտար լեզվի ուսուցիչներ են, և նրանց սովորողները բոլորովին չեն կարողանում հաղորդակցվել այդ օտար լեզվով: Այսպիսով, գործածե՛լ մայրենի լեզուն, թե՛ ոչ: Կարծում եմ, որ դա նման է հաց ուտելուն: Եթե մենք բոլորովին հաց չուտենք, մենք չենք ստանա որոշ էական սննդային տարրեր, իսկ մյուս կողմից՝ եթե չափազանց շատ խաղաքում ու տաք հաց ուտենք, մենք կթունավորվենք:

24. Windows-ը դասարանում-1 (Դպիր 71)

Թարգմանություն-փոխադրություն- վերլուծություն անգլերենից

*Մասնագիտական զարգացման դասընթացի ներկայացում
Աղբյուրը՝ Մայքրոսոֆթի «Գործընկերներ ուսուցման մեջ» ծրագիր
1-3-րդ մոդուլները*

Փաստորեն ամբողջ աշխարհում էլ հասկանում են, որ 21-րդ դարի կրթությունը պետք է հիմնովին վերափոխվի: Մայքրոսոֆթի աջակցությամբ լայնածավալ հետազոտություններ են կատարվել կրթական ասպարեզում և առաջարկվում են նորարարական կրթության իրենց եզրահանգումները: Առաջին հարցը, որը որպես պարապմունքի թեմա, հետաքրքրել է նրանց, այն է, թե ինչ հմտություններ, կարողություններ են անհրաժեշտ 21 դարի սովորողների համար: Հարյուրավոր ձևակերպումներից նրանք ընտրել են 7-ը.

1. խնդիրների լուծման և նորարարության կարողությունը
2. տեղեկացված լինելու կարողությունը
3. գիտելիքների կառուցումը

4. հաղորդակցման հմտությունների ձևավորման կարողությունը
5. ինքնակառավարման և ինքնագնահատման կարողությունը
6. համագործակցության կարողությունը
7. SՀS գործածումը:

Իսկ որո՞նք են այն գործոնները, որոնք կխթանեն այդ նշված կարողությունների զարգացմանը: Մատնանշում են 10 գործոն՝

1. փոխադարձ հետադարձ կապը
2. իրական աշխարհի հետ կապված ուսուցումը
3. սովորողներն իրենք են կրկնում և արժևորում իրենց կատարած աշխատանքը
4. խորությամբ արվող նախագծային աշխատանքը
5. սովորողներն անդրադարձ են անում իրենց կատարած աշխատանքին
6. կրթական գործիքների ազատությունը
7. թեմաների ընտրության ազատությունը
8. միջմշակութային կապերը
9. մասնակցություն սեփական աշխատանքի գնահատմանը
10. համընդհանուր փոխկապակցվածության հարցեր:

Նշվում է, որ դեռ վերջնական հստակեցված չեն 21-րդ դարի համար անհրաժեշտ ունակությունները: Դեռ չի հստակեցված այն գաղափարը, թե ինչպես կառուցել տարբեր ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը: Նշվում է նաև, որ այժմ շատ ավելի դպրոցներում են գործածում SՀS միջոցներ ուսումնական գործընթացում, բայց հազվադեպ է լինում, երբ սովորողները դրանք գործածում են ինքնուրույնաբար իրենց ամենօրյա ուսումնական աշխատանքներում, սովորելու պրոցեսում: Մի շատ հետաքրքիր նորություն կա մաթեմատիկա դասավանդողների համար, ովքեր հնարավորություն ունեն կիրառելու OneNote ծրագիրը: Դասավանդողը կարող է գրատախտակի վրա իր արագ ու անփույթ գրած հավասարումը միանգամից փոխակերպել մուտքագրված տպագրական ձևի: Փաստորեն վերանում են բոլոր այն հակափաստարկները, որ համակարգիչով շատ դժվար ու ժամանակատար է մաթեմատիկական ձևակերպումներ մուտքագրելը: Սեմինարի առանցքային նշակետերից է այն, որ 21-րդ դարի սովորողը համակարգիչի օգնությամբ կարող է բովանդակության սպառողից վերածվել բովանդակության ստեղծողի:

Մայքրոսոֆթի OneNote համակարգչային ծրագիրը որպես թվային սևագրության տեսք

Մայքրոսոֆթի OneNote ծրագիրը շատ հարմար է պլանշետների համար: Այն կարող է գործածվել նաև սովորական նոթբուք-նոթբուքով, ստացիոնար պրոցեսորներով աշխատող համակարգչով աշխատելիս: Ինչի՞ համար է այս ծրագիրը, նախ և առաջ, նախատեսված: Այն փոխարինում է թղթային տետրին: Ունենալով այսպիսի ծրագիր անձնական համակարգչում, կարելի է արագ, նույնիսկ ոտքի վրա, ձեռագիր, մի բառ կամ միտք գրել ծրագրային էջի վրա, որն ավտոմատ պահպանվում է՝ առանց պահպանող կոճակը

սեղմելու: Հետո կարելի է այդ արագ ու անփույթ գրված ձեռագիրը վերածել մուտքագրված տպատառ տեքստի մի քանի վայրկյանում:

Այս ծրագիրը շատ հարմար է ուսանողների համար, երբ ուզում են դասախոսության ժամանակ արագ որևէ նշում անել: Հնարավոր է նաև գրել մաթեմատիկական հավասարումներ և այլ սիմվոլներով ձեռագիր տեքստեր: Պետք է ավելացնենք, որ եթե մենք այս տարվա սեպտեմբերի մեկից անցնելու ենք բացառապես նոթբուք-նոթբուքերով ուսուցմանը, ապա այս OneNote ծրագրի ներբեռնումը բոլոր սովորողների և դասավանդողների (հատկապես անգլերենի, մաթեմատիկայի, ֆիզիկայի և քիմիայի) համար անհրաժեշտ է լինելու: Եթե այս ծրագրով չաշխատենք, ապա մաթեմատիկական աշխատանքներ մուտքագրելը շատ աշխատատար և անհարկի ժամանակատար կլինի, և ամենավատն այն կլինի, որ սովորողները մեկընդմիջտ հետ կվարժվեն ձեռագիր գրելուց, որը ցանկալի հետևանքներ չի կարող ունենալ: Ուղեղի աշխատանքը կապված է մեր ձեռքի շարժումների հետ: Մենք կարող ենք սահմանափակել ուղեղի աշխատանքը միայն մատներով միանման սեղմումներ կատարելով: Երեխան ամեն ինչ կանի ձեռքով, որից հետո կատարված աշխատանքը այս ծրագրի օգնությամբ կվերածվի մուտքագրված տպատառերով և զանազան սիմվոլներով տեքստերի: Այսպիսով անցումը թղթային տետրերից համակարգիչների շատ սահուն կլինի:

OneNote ծրագրով աշխատելիս հեշտանում է նաև տեքստերի և թվային դասագրքերի հետ աշխատելը: Շատ մարդիկ սիրում են մատիտով նշումներ անել գրքերի վրա, առանձնացնել կարևորն անկարևորից: Մենք կարող ենք մեր ուզեցած բառը կամ նախադասությունը գրել տվյալ էջի ցանկացած մասում: Մեր նշումները չեն սահմանափակվում միայն ամենաձախ, կենտրոն և ամենաաջ մասերով: Մեր գրած բառը մնում է այնտեղ, որտեղ մուտքագրել կամ ձեռագրով գրել ենք՝ առանց սեղմելու պահպանման կոճակը: Ամեն ինչ ավտոմատ է պահպանվում:

Ծրագիրը կարևոր առավելություն ունի նաև այն պատճառով, որ էջի վրա կարելի է մի որևէ նյութի հղումի փոխարեն դնել հենց դրա ֆայլը, անկախ այն բանից, թե դա սովորական Word office փաստաթուղթ է, տեսանյութ, թե Power Point-ով ներկայացում: Հղումները միշտ էլ անօգնական են լինում, երբ բացակայում է ինտերնետը:

Մի լրացուցիչ հնարավորություն էլ կա անգլերեն սովորողների համար: Այս ծրագրով բացված տեքստի յուրաքանչյուր բառի ճիշտ արտասանությունը կարելի է լսել՝ ակտիվացնելով բառը և սեղմելով audio կոճակը:

Բովանդակության սպառողից՝ բովանդակության ստեղծող

Ամերիկացի սեմինարավարն այս թեմային հատկացրել է ընդամենը 24 վայրկյան՝ տալով միայն հիմնական միտքը: Ցույց տալով իր ձեռքի նոթբուքը՝ նա ասում է, որ այս գործիքը հնարավորություն է տալիս սովորողին բովանդակության սպառողից դառնալ բովանդակության ստեղծող, ասել է թե՛ զբաղվել ստեղծարար աշխատանքով: [Տեսք](#)

ներկայացումը: Այս հարցն այնքան արդիական է, ու խոսելու, արտահայտվելու գայթակղությունն այնքան մեծ, որ չեմ կարող չկապել այն մեր այսօրվա իրողության հետ ու լռել, ինչպես մեր հարգարժան սեմինարավարն արեց:

Մեր կրթահամալիրում 2013-2014 ուսումնական տարին հայտարարված է նախագծային կրթության անցման տարի: Նախագծային կրթության հիմնական էությունն էլ հենց բովանդակության ստեղծումն է սովորողների կողմից: Բացի դրանից՝ կրթության կազմակերպման հիմնական շեշտը նախագծայինի վրա դնելով մենք ավելի ենք հեշտացնում կրթությունը կառուցողական, առաջադեմ մանկավարժական սկզբունքներով կազմակերպելու գործը: Կառուցողական կրթության սկզբունքներից մեկը **երկխոսության մեջ մտնելն է՝** աովորող-սովորող, դասավանդող-սովորող, դասավանդող-դասավանդող: Սովորական ոչ նախագծային ուսումնական գործունեության կազմակերպման ժամանակ շատ հմուտ դասավանդողի և ուսումնասենչ սովորողի առանձնակի ջանքեր են պետք, որպեսզի կայանա ցանկալի երկխոսությունը տարբեր խմբային աշխատանքների, դերախաղերի, մտածածին իրավիճակների ստեղծման ժամանակ: Նախագծային աշխատանքներ իրականացնելու ընթացքում այդ երկխոսությունը բնական է ստացվում, և հնարավոր չէ որևէ նախագիծ իրականացնել առանց երկխոսության, քանի որ ամեն ինչ արվում է աշխատանքային խմբերով:

Կառուցողական կրթության հիմնական սկզբունքներից է նաև **իմաստի որոնումը**: Նախագիծն էլ հենց նրանով է նախագիծ, որ կայանում է իմաստի որոնում. Սովորողներն իրենց կատարած նախագծով իմանում են այն ինչ նախկինում չեն իմացել, հետազոտական աշխատանքներով գալիս են այնպիսի եզրահանգման, որ ոչ մի աղբյուրում նշված չէ:

Նախնական գիտելիքով աշխատելը նույնպես կառուցողական կրթության սկզբունքներից է, որը միշտ էլ առկա է նախագծային աշխատանքում: Յուրաքանչյուր նախագիծ սկսելուց առաջ աշխատանքային խումբը դասավանդողի ղեկավարությամբ որոնում և գտնում է նախագծի համար անհրաժեշտ նախնական տեղեկատվություն: Ամեն ինչ արվում է հայտնիից դեպի անհայտը սկզբունքով:

Սովորողի կարծիքը հաշվի առնելը մի սկզբունք է, որը հնարավոր չէ անտեսել և նախագիծ իրականացնել:

Կառուցողական կրթության ամենակարևոր սկզբունքներից է **իմացածի արժևորումը**: Յուրաքանչյուր ուսումնական նախագիծ երկու նպատակ է հետապնդում՝ ուսումնական և գործնական: Եթե իր առարկան անսահման սիրող դասավանդողի համար ուսումնական նպատակը միշտ էլ առաջնայինն է, ապա սովորողի համար ավելի է արժևորվում գործնական նպատակը տեսաֆիլմերի, ստեղծած էլեկտրոնային ուսումնական նյութերի, կարտկենների և այլ հոգևոր ու նյութական արժեքների ձևով: Այլ կերպ ասած՝ սովորողն ավելի հակված է արժևորել իր **ստեղծած բովանդակությունը**, որը նախագծային աշխատանքի արդյունքն է:

25. «Շրջված դասարան»․ ի՞նչ է սա (Դպիր 80)



Վերջին մի քանի տարիների ընթացքում «Դասարանի շրջում» դարձվածքն ամենից հաճախն է հասնում մեր ականջներին, ու այդ ձայնը նոր թափ ստացավ 2012թ. «Նյու Յորք Թայմզ»-ում հրատարակված Ֆիցպատրիկի հոդվածով: «Դասարանի շրջում» մեթոդի էությունն այն է, որ նոր նյութի հետ սովորողների առաջին ծանոթությունը կայանում է դասարանից դուրս՝ սովորաբար կա՛մ կարդալով, կա՛մ տեսադաս դիտելով, իսկ հետո հասկացված դասաժամի ընթացքում ավելի դժվար աշխատանքն է կատարվում՝ նյութի ամրապնդումը խնդիրների լուծմամբ, քննարկումով կամ բանավեճով:

Հիմնավորումը ըստ Բլումի 2001թ. լրամշակված տեսության

Սա նշանակում է, որ սովորողները իմացական ավելի ցածր մակարդակի աշխատանքն (գիտելիքի ձեռքբերումը և ընկալումը) անում են դասարանից դուրս, իսկ ավելի բարձր մակարդակի իմացական աշխատանքի վրա կենտրոնանալը (կիրառումը, վերլուծումը, համադրումը, արժևորումը) կատարվում է դասարանում, որտեղ նրանք ունեն դասընկերների և ուսուցչի աջակցությունը: Այս մոդելը հակադրվում է ավանդականին, որում նոր նյութի հետ առաջին ծանոթությունը լինում է դասարանում, իսկ դրա ամրապնդումը տնային աշխատանքի միջոցով կատարվում է տանը: Այստեղից էլ տերմինը՝ «Շրջված դասարան»:

«Շրջված դասարան»․ ի՞նչ է սա

Որոշ առարկաների ուսուցման համար «Շրջված դասարան»-ի մոտեցումը նորություն չէ: Այն արդեն մի քանի տարի օգտագործվում է հատկապես հումանիտար հոսքում: Բարբարա Վոլվուդը և Վիրջինիա Ջոնսոն Անդերսենը այս մոտեցումը զարգացրել են իրենց «Արդյունավետ գնահատում» (1998) գրքում: Նրանք մի մոդել են առաջարկում, որով սովորողները սկզբնական գիտելիքն ստանում են նախքան դասը, իսկ դասի ընթացքում կենտրոնանում են համադրման, վերլուծության, խնդիրների լուծման և այլնի վրա: Որպեսզի համոզված լինեն, որ սովորողներն իրոք անում են անհրաժեշտ նախադասարանային աշխատանքը տանը, Վոլվուդը և Անդերսենը նոր նյութի հետ առաջարկում են նաև այդ նյութի վրա հիմնված որոշ տնային առաջադրանք (գրավոր շարադրանք, ոչ բարդ խնդիրներ):

2000թ. Մորին Լեյջը, Գլեն Պլատը և Միշել Տրեգլիան նկարագրել են շրջված դասարանի մեթոդի կիրառումը տնտեսագիտության ներածական դասընթացի ուսուցման համար: Նրանք նախաձեռնեցին իրենց գիտափորձը, քանի որ ըստ նրանց դիտարկումների՝ ավանդական դասախոսության ձևաչափն անհամատեղելի էր ուսանողների ուսանելու որոշ

ոճերի հետ: Որպեսզի իրենց դասընթացը համատեղելի լիներ իրենց ուսանողների ուսանելու բազմազան ոճերի հետ, նրանք իրենց դասընթացը ներկայացրին էլեկտրոնային տեքստերով, տեսադասերով, ձայնագրությամբ ուղեկցվող Powerpoint ներկայացմամբ և Powerpoint սահիկներով, որոնք հնարավոր էր նաև տպել թղթի վրա: Որպեսզի համոզված լինեն, որ ուսանողները նախապատրաստվում են դասին, նրանց հանձնարարվում է գործնական առաջադրանքներ անել, որոնք պարբերաբար բայց պատահական ընտրությամբ հավաքվում և գնահատվում են: Այնուհետև դասաժամին ուսանողներին մղում են տնտեսագիտական սկզբունքների կիրառման գործունեությամբ զբաղվել՝ ուսանողների բարձրագրած հարցերին պատասխանելուց մինչև տնտեսագիտական գիտափորձերը, փոքրիկ խմբերով կիրառական խնդիրների քննարկումները: Ե՛վ ուսանողները, և՛ դասախոսները այս նոր մեթոդը դրական են համարում: Դասախոսներն ասում են, որ ուսանողները հիմա ավելի նպատակային են ուսանում, քան երբ նրանց դասավանդում էին ավանդական ձևաչափով:

Զննողական ուսուցումը

Էրիկ Մագուրը և Կատերին Քրոուչը նկարագրում են «շրջված դասարան»-ի **ձևափոխված** մոտեցումը, որը նրանք անվանել են «**Զննողական ուսուցում**» (2001): Զննողական ուսուցման մոդելը նույնպես պահանջում է, որ ուսանողները նախնական գիտելիքն ստանան նախքան ուսումնական պարապմունքը, և նորից օգտագործվում են առաջադրանքներ (այս դեպքում վիկտորինայի տիպի), որպեսզի օգնեն ուսանողներին լավ նախապատրաստվելու դասին: Դասապրոցեսը կառուցվում է փոքրիկ դասախոսություններով և հասկացությունների մասին հարցերի ճիշտ պատասխանների մատնանշումով: Այս դեպքում որպես գործիք օգտագործվում են կա՛մ ուսանողների համակարգիչները, կա՛մ էլ ձեռքի օգտագործման հարցումային համակարգերը: Հարցերին պատասխանելը կամավոր չի լինում, ինչպես ավանդական ուսուցման ժամանակ: Յուրաքանչյուր ուսանող պետք է մասնակցի հարցմանը: Հարցման պատասխաններն անանուն են լինում, և դասախոսի համար միանգամից պարզ է լինում, թե ուսանողների որ տոկոսն է հասկացել նոր նյութը: Եթե դասարանի 30-ից 60%-ը սխալ է պատասխանել, ապա կազմակերպվում են փոքր խմբերով քննարկումներ, որից հետո ուսանողները նորից պատասխանում են հարցերին: Լավ արդյունքից հետո հաջորդ թեմայի հարցերն են տրվում: Յուրաքանչյուր ցիկլը տևում է 13-ից 15 րոպե:

Արդյո՞ք դա աշխատում է

Մագուրը և իր գործընկերները հրապարակել են արդյունքներ, որոնք ցույց են տալիս, որ գննողական ուսուցման մեթոդը նշանակալի առավելություն ունի ավանդական ուսուցման նկատմամբ (2001): 1998թ. Ռիչարդ Հեյքը ավանդական մեթոդով ուսուցանված 2084 ուսանողի տվյալներ հավաքեց պարզելու համար, թե միջին հաշվարկներով ինչպես են նրանք յուրացրել ներածական ֆիզիկայի 14 տարբեր դասընթացներ: Այդ տվյալները նա համեմատեց ինտերակտիվ գննողական մեթոդով 48 դասընթացների մասնակցած 4458 ուսանողների տվյալների հետ, որոնց ուսումնական գործունեությունը առանձնացել է՝

«գլուխները միշտ միացած» իսկ ձեռքերն էլ սովորաբար բարձրացված» սկզբունքով, որից անմիջապես հետո հաջորդել է ուսանող-ուսանող փոքրիկ խմբերով քննարկումները: Այս համեմատությամբ Հեյքը պարզեց, որ ինտերակտիվ ուսուցման մեջ ներգրավված ուսանողների՝ գիտելիքի յուրացման մակարդակը երկու անգամ ավելի բարձր է:

Տեսական հիմքը

Ջոն Բրանսֆորդը, Աննա Բրաունը և Ռոդնի Քոքինգը գիտական հետազոտություն են կատարել պարզելու համար, թե ինչպես են մարդիկ սովորում: Նրանք սովորելու գիտության երեք կարևոր հայտնաբերում են կատարել, որոնցից երկուսը շրջված դասարանի հաջողության ապահովման տեսական հիմքն են: Բրանսֆորդը և իր գործընկերները հիմնավորում են հետևյալը. «Հարցաքննման բնագավառում իրազեկության զարգացման համար ուսանողները պետք է՝ ա) ունենան փաստերի վրա հիմնված խորը գիտելիք, բ) հասկանան փաստերը և գաղափարները հասկացություններով կառուցված ենթատեքստում, գ) հեշտացնել գիտելիքի ձեռքբերումը դրա կիրառմամբ:

Նոր ձեռք բերված գիտելիքի օգտագործման հնարավորություն տրամադրելով ուսանողներին մինչ նրանք ունեն իրենց ուսանող ընկերների և դասավանդողի անմիջական հասանելիությունը դասապրոցեսին, շրջված դասարանի մեթոդը օգնում է ուսանողներին ուղղել հասկացությունների իրենց սխալ ըմբռնումները և կազմակերպել իրենց նոր գիտելիքն այնպես, որ այն հեշտությամբ հասանելի լինի ապագա կիրառմանը:

Սկզբնական գիտելիքի տրամադրումը նախքան դասը

Սկզբնական գիտելիքի տրամադրման մեխանիզմը կարող է բազմազան լինել՝ պարզ տեքստային տարբերակից մինչև Powerpoint ներկայացումներ և դասախոսությունների տեսաֆիլմեր: Օրինակ, Գրանդ Վելի նահանգային համալսարանի մաթեմատիկայի պրոֆեսոր Ռոբերտ Թալբերտը տեսադասեր է տրամադրում YouTube-ով, իսկ Վանդերբիլտի համալսարանի համակարգչային գիտության պրոֆեսոր Դյուգ Ֆիշերը իր ուսանողների համար դասախոսությունների տեսաֆիլմեր է պատրաստում, որոնք կարելի է գտնել YouTub-ում, Khan Academy-ում, MIT's-ում, OpenCourseWare-ում:

Աղբյուրը՝ [Վանդերբիլթի \(ԱՄՆ Թենեսի նահանգ\) համալսարանի կայք](#)

26. Անգլերենի դասավանդման մասնագիտական փորձառություն (Դպիր 96)

Բրիտանական խորհուրդը անգլերենը որպես օտար լեզու դասավանդող ուսուցիչների համար մասնագիտական զարգացման վեցշաբաթյա անվճար առցանց դասընթաց է կազմակերպել: Դասընթացը մեկնարկեց օգոստոսի 31-ին և շարունակվելու է մինչև 2015-ի հոկտեմբերի 15-ը: Դասընթացի անվանումն է «Անգլերենի դասավանդման

մասնագիտական փորձառություն»։ Ես մասնակցում եմ այս դասընթացին և կարծում եմ, որ այն շատ հետաքրքիր և օգտակար է անգլերեն դասավանդողների համար։ Հիմա աշխարհի տարբեր երկրներից անգլերենը որպես օտար լեզու դասավանդող մոտ 67000 ուսուցիչ է մասնակցում այս դասընթացին։ Ամեն օր հազարավոր ուսուցիչներ իրենց մտքերը, գաղափարները, մեթոդական հնարքներն են փոխանցում միմյանց [Future learn](#) կայքում։

Մի նոր բան սովորելուն պես անմիջապես ոգում եմ փոխանցել այն «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում աշխատող իմ գործընկերներին։ Այսպիսով որոշել եմ այս դասընթացի նոր գաղափարները, մտքերը և մեթոդական հնարքները փոխանցել իմ գործընկերներին անգլերեն և հայերեն մի հոդվածաշարով։

1. Սովորողների մոտիվացիան
2. Դասի պլանավորումը
3. Լեզվի իմացությունը (հաշվի է առնվում և ուսուցչի և սովորողի լեզվական իմացությունը)
4. Ռեսուրսների արդյունավետ օգտագործումը
5. Դաս վարելը (ուսուցչի դերը դասարանում)
6. Մասնագիտական զարգացման համար պատասխանատվություն ունենալը

Այսպիսով, դասընթացի առաջին շաբաթը նվիրված է սովորողների մոտիվացիային։ Շաբաթվա գլխավոր խնդիրը՝ որքան հնարավոր է շատ գաղափարներ լուսաբանել, որոնք կարող են տալ այս հարցի պատասխանը. «Ինչպե՞ս մոտիվացնել սովորողներին։ Ինչպե՞ս ստիպել նրանց խոսել»։

Կլարան՝ այս դասընթացը վարողներից մեկը, ամերիկացի հոգեբան Կարլ Ռոջերսի տեսության վրա հիմնված այն գաղափարն է հայտնում, որ սովորողների մոտիվացիայի երկու տիպ գոյություն ունի՝ ներքին մոտիվացիա և արտաքին մոտիվացիա։ Ըստ այս տեսության ներքին մոտիվացիան սովորողից է գալիս. սովորողի համար ուսումնական գործունեությունը և միջավայրը բավականություն ստանալու աղբյուր են։ Արտաքին մոտիվացիան արտաքին աղբյուրից է ծագում սպասվող մի ինչ-որ օգուտի կամ պարգևի ձևով։ Հնարավոր բացասական հետևանքներից խուսափելը նույնպես կարող է մոտիվացնող լինել։

Այստեղ ստիպված եմ ասել, որ տարբեր երկրների ուսուցիչների մեծ մասը՝ գրեթե բոլորը, ցավով են փաստում, որ իրենց սովորողներին խթանում է միայն արտաքին մոտիվացիան. կրտսեր և միջին դպրոցներում՝ ուսուցչի և ծնողների կողմից գովասանքի արժանանալը և ստացած բարձր գնահատականները, իսկ ավագ դպրոցում՝ մոտեցող քննությունները։ Նույնն է նաև Հայաստանում։

Ահա կրտսեր և միջին դպրոցներում սովորողների ներքին մոտիվացիան բարձրացնելու մի քանի հնարքներ է առաջարկում Աննա Բլեքմորը։

- Անիմացիոն կամ խաղարկային ֆիլմ ցուցադրել՝ անջատելով ձայնային ուժեղացուցիչը: Սովորողները պետք է նայեն պատկերին և հանպատրաստից ստեղծեն ֆիլմի սցենարը՝ ինչ է կատարվում. ովքե՞ր են այս մարդիկ. ինչ են անում. ինչ են ասում իրար:
- Ընտրել թեմատիկ բառապաշար (սա կարող է լինել վերջերս ուսուցանած բառապաշարը, կամ ներմուծել նոր թեմա իր բառապաշարով): Սովորողներին առաջարկվում է գրել այդ թեմային վերաբերող 10 բառ: Կարելի է գործունեությունն անել ավելի քիչ բառերով:
- Այդ բառերի հետ գործածել հետևյալ լեզվական կառուցվածքները.
Սա, մի իր է, որը ...
Սա օգտագործվում է...
Սրա հակահիշը...:
- Սովորողներին ժամանակ տալ, որպեսզի մտածեն, թե ինչպես կարելի է իրենց ցանկի բառերի անգլերեն բացատրությունները տալ:
- Աշխատանք փոքր խմբերով: Սովորողներն աշխատում են գույգերով կամ 3 հոգիանոց խմբերով: Իրենց թիմակիցը պետք է գուշակի այն բառը, որի անգլերեն բացատրությունը տրվում է:

Իմ կարծիքով սրանք շատ լավ հնարքներ են, որոնք ստիպում են սովորողներին խոսել, բայց ես այն կարծիքին չեմ, որ այս լեզվական խաղի հեղինակը Աննա Բլեքմորն է: Հազարավոր ուսուցիչներ հիմա և տարիներ առաջ միշտ էլ կազմակերպել են նման լեզվական խաղեր: Մեր դպրոցում մենք այն անվանում ենք «կենդանի բառարան»:

Ես իմ մեկնաբանության մեջ գրեցի, որ երբեմն դասավանդողները չեն կարողանում ստիպել սովորողներին խոսել, որովհետև խոսելու համար ընտրված թեմաները արհեստական են, ծեծված ու չնչին: Սովորողները ավելի մոտիվացված են լինում խոսելու համար, երբ դասի նպատակը սուկ խոսելը չէ: Դասավանդողները դասի ընթացքում պետք է ստեղծեն իսկական կյանքն արտահայտող իրավիճակներ, և սովորողներն էլ պետք է զգան, որ ուսուցիչը կամ իրենց դասընկերը իսկապես ուզում է իմանալ իրեն հետաքրքրող, անհանգստացնող հարցի պատասխանը: Երբեմն տարբեր սերունդների հավերժական վեճը՝ այսպես կոչված «Հայրեր և որդիներ»-ը օգնում է ինձ կտրուկ բարձրացնել իմ սովորողների խոսելու մոտիվացիան: Օրինակ, ես հայտարարում եմ, որ այն ֆիլմերը, որոնք իրենք են դիտում հիմա, նկատի ունեմ ժամանակակից ֆիլմերը, շատ ավելի վատն են, քան այն ֆիլմերը, որոնք մենք ենք դիտել մեր երիտասարդ տարիներին, կամ էլ ասում եմ, որ անարժեք է այն երաժշտությունը, որ առավոտից մինչև երեկո սմարթֆոններով լսում են: Իմ խոսքերին տաք բանավեճ է հաջորդում, այնքան տաք, որ հազիվ եմ կարողանում նրանց հակադարձել: Այդ տաք բանավեճերով դասերը ամենահաճելին են ինձ համար:

Պատանիներին մոտիվացնելը

Բրիտանական խորհրդի իսպանական մասնաճյուղի մասնագետ Ջոաննա Բադենը օգտագործում է Կարլ Ռոջերսի մտքերը և պատանիների ներքին մոտիվացիայի բարձրացման երեք ճանապարհ է առաջարկում.

1. Սովորողների զգացմունքների հանդեպ կարեկցանք տաձելը՝ օգտագործելով նրանց օրագրերը:
2. Հասնել վավերականության՝ գործածելով ծանոթ մարդկանց ու տեղանքի լուսանկարներ և խոսելով իրական փաստերի մասին:
3. Ընդունելի լինել սովորողների կողմից՝ լսելով նրանց սիրելի երաժշտությունը, հաշվի առնել սովորողների ճաշակը և կարծիքները:

Կարեկցանք տաձել: Ջոաննա Բադենը առաջարկում է սովորողների օրագրեր պահել և դրանցով աշխատելը: Նա խորհուրդ է տալիս դա անել այնպես, որ մի սովորողի օրագիրը հասանելի չլինի այլ սովորողներին: Դասավանդողին խորհուրդ չի տրվում դասարանում բարձրաձայն կարդալ որևէ մի սովորողի օրագրի գրառումները: Գրառումների բովանդակության գաղտնիությունը հարկ է որ ապահովվի: Նույնիսկ խորհուրդ է տրվում սովորողի արժանապատվությանը չդիպչելու համար չուղղել սովորողի օրագրում առկա շարահյուսական, ձևաբանական և ուղղագրական սխալները: Դասավանդողը դուրս է գրում այն սխալները, որոնք ընդհանուր են բոլորի համար, և այլ օրինակների վրա է դրանք բացատրում առանց ասելու, թե ով է այդ սխալներն արել:

Մեր կրթահամալիրում օրագրերի փոխարեն բոլոր [դասավանդողները](#) և [սովորողները](#) օգտագործում են ուսումնական բլոգներ, և դրանք հասանելի են բոլորի համար: Չեմ հասկանում, թե ինչու՞ պետք է այդքան գաղտնապահ լինել:

Վավերականություն ապահովել: Ջոաննա Բադենը այն կարծիքին է, որ սովորողներն ու դասավանդողները պետք լավ ճանաչեն իրար, որպեսզի ջերմ ու սիրով լի մթնոլորտ ստեղծվի դասարանում: Այս նպատակին հասնելու համար առաջարկում է դասի ընթացքում օգտագործել ուսուցչի և սովորողների ընտանեկան, արտադպրոցական պայմաններում արված լուսանկարներ: Ըստ Ջոաննայի դրանք ավելի ջերմություն ու հետաքրքրություն կհաղորդեն քննարկվող թեմաներին: Իմ մեկնաբանության մեջ ես նշեցի, որ վավերականությունը առաջնայնություն ունի մեր կրթահամալիրում, ինչը լիովին ապահովում է մեր www.mskh.am կայքը: Իմ մեկ ուրիշ մեկնաբանության մեջ առաջարկեցի մի հնարք, որը հաճախ եմ օգտագործում ավագ դպրոցում՝ հատկապես անգլիախոսների ակումբում: Մենք բացում ենք մի հայկական էլեկտրոնային ամսագիր, գտնում ենք մի հետաքրքիր հոդված, տեղեկատվություն և կարդում այն: Կարդալուց հետո սկսում ենք թարգմանել անգլերեն: Դրանից հետո բացում ենք նույն նյութի հրապարակված անգլերեն տարբերակը և կարդում: Սովորողները հեշտությամբ կռահում են տեքստում հանդիպող անծանոթ բառերը, որոնք իրենք չեն գործածել: Ընթերցումին հետևում են քննարկումը և բանավեճը: Այսպիսով բարձրանում է սովորողների ներքին մոտիվացիան: Նրանք խոսում են անգլերեն այն թեմաների մասին, որոնք մեր իրական հայաստանյան կյանքում քննարկման առարկա են:

Երաժշտության միջոցով ընդունելի լինել: Պատանիների սիրած երաժշտությունը լսելը նրանց ներքին մոտիվացիայի բարձրացման մեկ այլ ճանապարհ է: Պատանեկան

տարիքում նրանք կարող են միևնույն երգը առավտից մինչև երեկո լսել իրենց սմարթֆոններով, և Ջոաննան պնդում է, որ այդ երգերի բառերը կարող են պատանիների համար անգլերենի շատ հաճելի դասեր լինել: Նա նույնիսկ առաջարկում է դասի ընթացքում ձայնի ցածր հզորությամբ անընդհատ հնչեցնել դրանք: Երգերի ընտրությունը սովորողներն են անում քվեարկությամբ:

27. Ֆինլանդիայում կրթական նոր հեղափոխություն է նախապատրաստվում (Դպիր 101)

Անգլիական «The Independent» և ավստրալիական The Conversation էլեկտրոնային լրատվականներում հրապարակված Ռիչարդ Գարների և Փասի Սահլբերգի հոդվածների վերլուծական փոխադրություն:

Ֆինլանդիայի կրթական համակարգին մի անգամ արդեն անդրադարձել էի իմ [«Անընդհատ սերտել ու անընդհատ քննություն և տալ»](#) հոդվածում: Ունենալով այդպիսի առաջավոր կրթական համակարգ՝ ֆինները կանգ չեն առնում և որոշել են մի իսկական կրթական հեղափոխություն իրականացնել հանրակրթությունում՝ հրաժարվելով առարկայական ուսուցումից՝ հոգուտ թեմատիկ ուսուցման: Այս հեղափոխությունը նրանք ծրագրում են ավարտել մինչև 2020 թվականը: Տարբեր երկրների քաղաքագետներ ու մանկավարժության կազմակերպիչներ ուխտագնացության նման սկսել են այցելել Ֆինլանդիա, որպեսզի ավելի մոտիկից ծանոթանան այս երկրում նախապատրաստվող կրթական համակարգի նոր ու բովանդակային փոփոխություններին: Նրանց թվում էր նաև անգլիական «The Independent» լրագրի մանկավարժության ուղղվածության թղթակից Ռիչարդ Գարները, որի Հելսինկի ուղևորվելու հիմնական նպատակն էր պարզել, թե ի՞նչ կարծիք ունեն ֆինն մանկավարժական ոլորտի կազմակերպիչները կրթական նոր ու մեծ փոփոխությունների մասին, ի՞նչ են մտածում իրենց ամբողջ կյանքը որևէ առարկայի դասավանդմանը նվիրած ուսուցիչները:

Ռիչարդ Գարները զրուցել է Հելսինկիում երիտասարդների և մեծահասակների կրթության պատասխանատու Լիիզա Պոհյոլայնենի և քաղաքի զարգացման հարցերով կառավարիչ Փասի Սիլանդերի հետ: Թղթակիցը պարզել է, որ Ֆինլանդիայում հիմա կարիք ունեն այնպիսի կրթության, որը մարդկանց կնախապատրաստի աշխատանքային կյանքին: Փասի Սիլանդերն ասել է. «*Երիտասարդները հիմա բավականին հզոր համակարգիչներ են օգտագործում: Անցյալում բանկը թվերի հետ աշխատող շատ աշխատակիցների կարիք ուներ, բայց հիմա ամեն ինչ փոխվել է: Այդ պատճառով էլ մենք ստիպված ենք փոփոխություններ անել կրթության մեջ, որպեսզի այն համապատասխանի արդյունաբերությանը և ժամանակակից հասարակության պահանջներին*»: Նրանք կարծում են, որ հատուկ առարկայական դասերը՝ մի ժամ պատմություն, մի ժամ աշխարհագրություն, արդեն պիտի դուրս մղվեն ավագ դպրոցների 16-ամյա սովորողների

ուսումնական պլաններից: Դրանք փոխարինվում են, ինչպես ֆիններն են ասում, «երևույթի» կամ թեմայի ուսուցմամբ: Օրինակ, «սրճարանային սպասարկում» մասնագիտության դասընթացը յուրացնել ցանկացող պատանին պետք է սովորի մաթեմատիկայի որոշ տարրեր, լեզուներ՝ օտարերկրյա հաճախորդներին սպասարկելու համար, գրելու և հաղորդակցական կարողություններ: Ավելի ակադեմիական հակումներով սովորողներին առաջարկվում են թեմաներ, որոնք առնչվում են տարբեր ուսումնական առարկաների հետ: Օրինակ, «Եվրոմիություն» թեման ներառում է տնտեսագիտությունը, պատմությունը, լեզուները և աշխարհագրությունը:

Այդուհանդերձ, այս հարցի մասին ավելի լավ պատկերացում ունենալու համար պետք է նշեմ կրթության փորձագետ, Հարվարդի համալսարանի դասախոս, մանկավարժ-գիտնական [Փասի Սահլեբգի հոդվածում](#) արծարծված միտքը. «Ֆինլանդիայի կրթական բարեփոխումները ամբողջովին չեն վերացնելու ուսումնական առարկաները. հանգստացե՛ք, չնայած առաջիկա բարեփոխումներին, ֆիննական դպրոցներում շարունակվելու են դասավանդվել մաթեմատիկա, պատմություն, արվեստ, երաժշտություն և այլ առարկաներ: Հիմնական դպրոցի նոր բարեփոխումներով բոլոր երեխաների համար ուսումնական տարվա ինչ-որ ժամանակահատվածներում ուսուցումը կտարվի ավելի ընդգրկուն թեմաներով, ինչպիսիք են՝ Եվրամիությունը, հանրությունը և կլիմայական փոփոխությունները, Ֆինլանդիայի 100-ամյա անկախությունը, որոնք կներմուծեն լեզուների, աշխարհագրության, բնագիտության և տնտեսագիտության ինտեգրված գիտելիքներով մոդուլներ»:

Շարունակելով իր հոդվածը՝ Ռիչարդ Գարները գրում է, որ այլ կարգի փոփոխություններ էլ կան. չի լինելու դաս-դասարանի ավանդական ձևաչափը, երբ աշակերտները շարքով լուռ նստած են և ուշադիր նայում ու լսում են իրենց ուսուցչին, կամ սպասում են, թե երբ ուսուցիչը հարց կտա: Դասերն ավելի համագործակցային բնույթ են ունենալու, երբ սովորողներն աշխատելու են փոքր խմբերով, խնդիրներ լուծելով ու զարգացնելով իրենց հաղորդակցական կարողությունները: Այստեղ պետք է նշեմ, որ մեր կրթահամալիրում արդեն մի քանի տարի է, ինչ խրախուսվում է ոչ ավանդական դաս-դասարանային ձևը, որը հիմա պարապմունք ենք անվանում, և որն ավելի լայն տարածում գտավ ամբողջ կրթահամալիրում, երբ սկսեցինք նախագծային ուսուցում կազմակերպել:

Հելսինկիի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչ Մարյո Կուլոնենը պատրաստվում է կրթության զարգացման իր ծրագիրը ներկայացնել քաղաքապետարանի խորհրդին: Ռիչարդ Գարներն իր հոդվածում մեջբերում է անում Մարյո Կուլոնենի մտքերից. «Մենք իսկապես կարիք ունենք վերաիմաստավորելու և վերաձևելու մեր կրթական համակարգը, և որպեսզի այն նախապատրաստի մեր երեխաներին ապագայի համար, սովորեցնում ենք մեր երեխաներին այն հմտությունները, որ անհրաժեշտ են այսօր և վաղը: Կան դպրոցներ, որոնք սովորեցնում են հնաոճ ձևերով, որոնք օգտակար էին 1900-ականների սկզբներին, բայց պահանջները հիմա այլ են, մեզ 21-րդ դարին համապատասխան կրթություն է պետք»:

Այս բարեփոխումներն աճող արձագանքներ են ունենում նաև Միացյալ Թագավորությունում. ահա, մասնավորապես Բրիտանական արդյունաբերողների միության և Պառլամենտի անդամ, լեյբորիստական կուսակցության կրթության գծով քարտուղար Տրիստամ Հանթի անդրադարձը. «Մենք այնպիսի կրթության կողմից ենք, որը ձևավորում է բնավորություն, հոգու տոկունություն և հաղորդակցական հմտություններ, այլ ոչ թե երեխաներին անընդհատ «քննական մատակցություն» անցկացնելու:

Բայցևայնպես, Ռիչարդ Գարների կարծիքով քիչ հավանական է, որ Միացյալ Թագավորությունում երես թեքեն ավանդական ուսումնական առարկաներից:

Նույնիսկ Ֆինլանդիայում այդ բարեփոխումներին դեմ են շատ ուսուցիչներ և տնօրեններ, որ իրենց ամբողջ կյանքում կենտրոնացած են եղել մի առարկայի դասավանդման վրա և չեն կարողանում փոխել իրենց մոտեցումները: Տիկին Կուլոնենը պաշտպանում է այն տեսակետը, որ դասը պետք է պլանավորվի և անցկացվի առնվազն երկու տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների համագործակցությամբ, և այն դասավանդողները, որ կընդունեն սա ու կաշխատեն այս համակարգով, հավելյալ վարձատրություն կստանան:

Ըստ պարոն Միլանդերի քաղաքի ավագ դպրոցներում դասավանդողների 70%-ը նոր մոտեցման ծրագրով վերապատրաստումներ է անցել: Շատ դժվար է համոզել դասավանդողներին անել առաջին քայլերը, բայց ով սկսում է նոր մոտեցմամբ աշխատել, այլևս չի նահանջում:

Հոդվածի այս մասում առաջարկվում է լրացուցիչ կարդալ Ռոյզին Օ'Քոնորի [«Ֆինլանդիան ուսումնական պլանից հանում է ձեռագիր գրել կարողանալու պահանջը»](#) հոդվածը, որը հրատարակվել է «The Independent»-ում 2015-ի փետրվարի 4-ին: Պետք է նշեմ, որ ես այդ հոդվածը կարդացել եմ Facebook-ում մարտի 24-ին և հենց այդ ժամանակ Facebook-ում թողեցի իմ այս կարծիքը. «Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում մենք արդեն մի քանի տարի է, ինչ գործնականում կիրառում ենք համակարգչային մուտքագրումը ձեռքով գրելու փոխարեն: Մեր կրթահամալիրի կրտսեր, միջին և ավագ դպրոցների սովորողները դպրոց են գալիս իրենց անձնական ներքուքերով: Բացի սովորական տեքստերից նրանք նույնիսկ մաթեմատիկական վարժություններ և խնդիրներ են լուծում մուտքագրելով: Կրտսեր դպրոցի դասավանդողները տնային առաջադրանքները ուղարկում են իրենց սովորողների էլեկտրոնային հասցեներին, իսկ սովորողներն էլ հետ են ուղարկում արդեն կատարած առաջադրանքները: Միջին և ավագ դպրոցների սովորողները անում են իրենց առաջադրանքները և ուսումնական նախագծերը իրենց բլոգներում, իսկ դասավանդողներն էլ՝ այցելելով այդ բլոգները ցուցումներ և խորհուրդներ են տալիս սովորողներին: Հայաստանը փոքր և հնադարյան երկիր է: Եկեք Հայաստան, այցելեք Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրը և կտեսնեք կրթական հեղափոխական գաղափարները գործողության, ընթացքի մեջ: www.mskh.am-ը մեր կրթահամալիրի

դպրոցական բազմալեզու կայքն է: [Այս մասին մի հոդված հրապարակեց mskh.am-nu](http://mskh.am-nu) 2015-ի մարտի 24-ին: Այս կարծիքը, իհարկե համապատասխան գրանցումից հետո, մուտք արեցի նաև Independent-ի «Comments» բաժնում: Facebook-ում, իհարկե, իմ կարծիքը հրապարակվեց ու որոշ ժամանակ հասանելի եղավ հանրությանը, իսկ անգլիական պարբերականում այն անհետ կորավ, բայց կարծում եմ, որ պետք չէ նահանջել: Պետք է շարունակել տարածել մեր հեղինակային մանկավարժական փորձը [օտար լեզուներով](#):

Հիմա նորից դառնանք Ռիչարդ Գարների հոդվածի վերլուծությանը: Նա գրում է, որ ֆիննական դպրոցներն այժմ տարին մեկ անգամ պարտավոր են մի քանի շաբաթ տևողությամբ կրթությունը կազմակերպել թեմատիկ-նախագծային ձևով: Հելսինկիում տարին երկու անգամ են նախագծային ուսուցում կազմակերպում, որպեսզի ավելի շուտ ընդունվի նոր մոտեցումը: Ըստ տիկին Կուլոնենի կազմած կրթության զարգացման ծրագրի՝ մինչև 2020 թվականը բոլոր ֆիննական դպրոցները անցած կլինեն կրթական նոր համակարգին: Վերջին մտքի կապակցությամբ հարկ է, որ նորից անդրադառնանք Փասի Սահլեբերգի հոդվածին: Նա գրում է. «Ֆինլանդիայի կրթական համակարգի վերաբերյալ կարևոր է ընդգծել երկու հիմնարար առանձնահատկություն, որպեսզի ունենանք ճշմարիտ պատկերը: Առաջին, կրթության կառավարումը մեծապես ապակենտրոնացված է, որը 320 համայնքային կառավարման մարմիններին նշանակալից ազատություն է տալիս, որպեսզի նրանք կրթությունը կազմակերպեն հաշվի առնելով տեղական պայմանները: ... Երկրորդ, Ֆինլանդիայի ազգային տիպական ուսումնական պլանն ընդհանրություններ ունի բոլոր տեղական համայնքների կառավարման մարմիններում, բայց այն նշանակալից չափի ազատություն է տալիս մանկավարժներին՝ գտնելու ուսուցման և ուսման լավագույն ձևերը՝ տեղական պահանջներին համապատասխան»:

Այնուհետև Ռիչարդ Գարներն իր հոդվածում անդրադառնում է նախադպրոցական կրթական բարեփոխումներին: Նա գրում է, որ կրթական նախադպրոցական աստիճանում նույնպես գրկաբաց են ընդունում այս բարեփոխումը մի նորարարական նախագծով, որը կոչվում է «Խաղային ուսումնական կենտրոն», որը հիմա քննարկման փուլում է: Քննարկվում է այն հարցը, թե ինչպես կարելի է համակարգչային ուսումնական խաղերով նոր «խաղային» մոտեցում ներդնել փոքրիկների ուսման գործընթացում: «Խաղային ուսումնական կենտրոն» նախագծի տնօրեն Օլավի Մենթանենի նպատակը սա է. «Մենք ուզում ենք, որ Ֆինլանդիան նախադպրոցական տարիքի երեխաների խաղային ուսուցման առաջատար երկիր դառնա»: Եթե միայն իմ ձայնը լսելի լիներ, կառաջարկեի Օլավի Մենթանենին գալ մեր կրթահամալիր և ուսումնասիրել նախադպրոցականների խաղային ուսուցման մեր առաջավոր փորձը, կամ էլ գոնե ընթերցել [Տաթև Մելքոնյանի](#), [Աիդա Պետրոսյանի](#), [Մարինե Մարտիրոսյանի](#), [Մանուշակ Աբրահամյանի](#), հոդվածները:

Ռիչարդ Գարները շարունակում է Օլավի Մենթանենի միտքը գրելով, որ կրթական աշխարհի հայացքը կուղղվի Ֆինլանդիայի վրա, երբ այն ընտրի փոփոխություններ

ճանապարհը. արդյո՞ք նա կկարողանա պահպանել կամ բարելավել իր կրթական մակարդակը PISA-ի ցուցանիշներով: Եթե այդպես լինի, ինչպես կարձագանքի դրան կրթական աշխարհը: Դրան հակառակ էլ՝ Փասի Սահլբերգը իր հոդվածում նշում է, որ Ֆինլանդիան հիմա իր կրթական բարեփոխումներով ավելի շատ մտահոգված է երեխաներին իրական կյանքին, քան քննություններին նախապատրաստելով:

Կրթության իրականացման ֆիննական մոտեցման օրինակներ

Անգլերենի դաս է, բայց գրատախտակի վրա Եվրոպայի քարտեզն է: Երեխաները պետք է խոսեն եվրոպական տարբեր երկրների եղանակային պայմանների մասին: Օրինակ, այսօր արևոտ է Ֆինլանդիայում, իսկ Դանիայում՝ մառախլապատ: Սա նշանակում է, որ սովորողները ինտեգրում են անգլերենի և աշխարհագրության ուսանելը:

Մեկ այլ օրինակ. Հելսինկիի Սիլտամակի կրտսեր դպրոցում, որտեղ 7-12 տարեկան 240 երեխա է սովորում, և որը գրկաբաց է ընդունել Ֆինլանդիայում իրականացվող ուսուցման նոր ձևը: Դպրոցի տնօրեն Աննե-Մարի Յաստինեն բացատրում է դպրոցի փիլիսոփայությունը. «Մենք ուզում ենք, որ աշակերտները սովորեն ապահով, ուրախ, հանգիստ և ոգևորող միջավայրում»: Մենք հանդիպում ենք մի միջանցքում շախմատ խաղացող երեխաների, իսկ այլ միջանցքներում որոշ երեխաներ խաղում են կամ էլ վազվզելով տեղեկատվություն են հավաքում Աֆրիկայի տարբեր մասերի մասին: Տիկին Յաստինեն բացատրում է, որ այն ինչը կատարվում է հիմա, «Ուրախ ուսում» է կոչվում: Նա ուզում է, որ աշակերտների միջև ավելի շատ համագործակցություն և հաղորդակցություն լինի: Սա էլ մեր «Իմացումի հրձվանք» կրթական ծրագրի ֆիննական տարբերակն է:

Աղբյուրը՝

- [Finland schools: Subjects scrapped and replaced with 'topics' as country reforms its education system](#), Richard Garner, The Independent, March 20, 2015
- [Finland's school reforms won't scrap subjects altogether](#) Pasi Sahlberg, The Conversation, March 25, 2015

28. [Պլանշետները նախակրթարանում](#) (Դպիր 104)



Մանկավարժներին և ծնողներին վերջին տարիներին հուզում է այն հարցը, թե արդյո՞ք ո՞ր տարիքի երեխաների զարգացմանը կարող են նպաստել տեղեկատվական թվային միջոցները: Ամերիկայի մանկաբուժական ակադեմիայի խորհուրդը միաձայն պնդում է, որ [արգելվում է էկրանային պատկերները հասանելի դարձնել երեխաներին մինչև նրանց երկու տարեկան դառնալը](#): Մինչև երկու տարեկան երեխաների ուղեղները զարգանում են կենդանի շփումներով և ֆիզիկական միջավայրում՝ չկանոնակարգված

խաղերով: Բարձրորակ ինտերակտիվ մեդիա միջավայրը կարող է բարելավել երեխայի սոցիալական, լեզվական կարողությունները և նույնիսկ նախապատրաստել դպրոցին միայն երկու տարեկանից ավելի բարձր հասակում: Այդուհանդերձ, նախակրթարանային տարիքի երեխաների կրթության ամերիկյան ազգային միությունը և Ֆրեդ Ռոջերսի՝ վաղ հասակում կրթության ու մանկական մեդիայի կենտրոնը միասնաբար պնդում են, որ պետք է բացառել վաղ հասակի երեխաների կողմից պլանշետների և այլ թվային միջոցների պասիվ, ոչ ինտերակտիվ օգտագործումը առանց մեծահասակների բանիմաց ուղղորդման և համապատասխան ինտերակտիվ համակարգչային ծրագրերի: Դեռ խորը ու հիմնավորված ուսումնասիրություններ չեն արվել այս ասպարեզում, բայց մտավախություն կա, որ մեդիայի պասիվ օգտագործումը վաղ տարիքային հասակում կարող է հանգեցնել խոսքի զարգացման հապաղման, գիրացման, ապասոցիալականացման, ուշադրության խնդիրների և նույնիսկ կանոնավոր քնի խանգարման, բայց այն արդեն մեր կյանք է մտել, և երեխան կօգտագործի այն՝ անկախ մեծահասակների կամքից: Մեր կարևոր գործն այն է, թե ինչպես այն ճիշտ օգտագործվի, որպեսզի թվարկած բացասական ազդեցությունները նվազագույնի հասցվեն, և կիրառումը առավելագույնս նպաստի երեխայի զարգացմանը:

Ամերիկյան մանկավարժական «Highscope» էլեկտրոնային ամսագիրը առաջարկում է հետևյալ սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվել, երբ գործ ունենք նախակրթարանային տարիքի երեխաների հետ.

Յուրաքանչյուր սկզբունքը նշելուց հետո հնարավորինս հիմնավորում ենք մեր կրթահամալիրային փորձով.

- *Տեխնոլոգիան պետք է չափավոր օգտագործվի. պետք չէ նրանով լիովին փոխարինել իրական ուսումնական նյութերը, որոնք ապահովում են ֆիզիկական, զգայական, մտավոր և սոցիալական ամբողջ փորձառությունները:*
Այս սկզբունքը լիովին պահպանվում է մեր կրթահամալիրի նախակրթարաններում: Մաները օրվա մեծ մասը [իրական մանկական աշխույժ կյանքով են ապրում](#):
- *Տեխնոլոգիան պետք է ինտերակտիվ լինի և զարգացնի բացահայտումով սովորելը, ստեղծականությունը՝ շեշտը չդնելով կրկնողական վարժանքների վրա:*
«Այսօր նախագծային ուսուցման երկրորդ օրն էր, ըստ [մեր աշխատանքային նախագծի](#), սովորողների հետ նոր պլանշետներով ներբեռնեցինք ծրագիր, որը թույլ էր տալիս գունավորել և զարդարել գատկական ձվիկներ: Մենք աշխատում էինք, իսկ «Արմթաբ» ընկերությունը նկարահանում էր իր գովազդային տեսահոլովակը»:
- *Տեխնոլոգիան պետք է սոցիալական շփման, փոխազդեցության կատալիզատոր (խթանիչ) լինի: Այն պետք է թվային սարքը և ծրագիրը միասին օգտագործելու, միմյանց օգնելու, փորձը փոխանցելու հնարավորություն տա երեխաներին:*
Տպավորությունն այնպիսին է, որ ամերիկացի փորձագետները այս սկզբունքները գրելուց առաջ 2016-ի փետրվար-մարտ ամիսները մեր կրթահամալիրում են անցկացրել: Ահա, [երրորդ դասարանցիները պլանշետներով շախմատ խաղալ են սովորեցնում երեք տարեկաններին](#):

Կարեն Քոքսը՝ նախակրթարանի դաստիարակ Ջորջիա նահանգից, իր 70,000 գրանցված օգտատեր ունեցող կայք-էջում [հոդված](#) է հրապարակել Չիկագո քաղաքի դպրոցներից մեկի նախակրթարանի դաստիարակ Բրայան Փյուրլինգի ([Brian Puerling](#)) «Ուսուցանումը թվային տարիքում՝ 3 տարեկանից մինչև 3-րդ դասարան» գրքի 8-րդ գլխի վերաբերյալ, որն այսպես է վերնագրված «Շարժական բազմակի հպումով թվային սարքերը աշխարհը մոտեցնում են մեր մատների ծայրերին»: Կարեն Քոքսն իր հոդվածն սկսում է գոհունակություն արտահայտելով առ այն, որ Փյուրլինգը իր գրքում չի կենտրոնանում համակարգչային խաղերով հագեցած պլանշետի օգտագործման ձևերի վրա: Նա այն կարծիքին է, որ երեխաները, միննույնն է, այդ խաղերը բավականաչափ տանն են խաղում: Նա այն կարծիքին է, որ մեր մանկավարժների կարևոր գործն այն կլինի, թե ինչպես այն ճիշտ օգտագործեն: Անօգուտ է երեխային ասել. «Պլանշետը մեծերի համար է, քեզ համար չէ»: Կարեն Քոքսն իր հոդվածում ներկայացում է Նախակրթարանում պլանշետների օգտագործման Բրայան Փյուրլինգի փորձը՝ հիմնական դրույթները, որոնք կարող են օգտակար լինել նախակրթարանի դաստիարակների համար: Ներկայացնելով նրանց փորձը՝ ես զուգահեռաբար ներկայացնելու եմ նաև այն, ինչն արդեն արվում է մեր կրթահամալիրի նախակրթարաններում:

1. Հեշտացնում ենք սաների խոսքը՝ նկարներ դիտելով

Պլանշետը շրջապատող աշխարհը ճանաչելու համար լայն հնարավորություններ է տալիս: Ոչ մի դասագիրք չի կարող բույսերի, ծաղիկների, կենդանիների այդքան շատ լուսանկարներ պարունակել, որքան պլանշետը: Ուսուցումն ավելի հետաքրքիր է դառնում, երբ սաներն իրենք են լուսանկարում իրենց պլանշետներով: Խորհուրդ է տրվում պլանշետներով գնալ էքսկուրսիա դեպի բնության գիրկը տարբեր եղանակներին՝ զարնանք՝ ծաղկած ծառերով, ամռանը՝ բազմագույն ու բազմապիսի ծաղիկներով, աշնանը՝ երփներանգ տերևաթափով, ձմռանը՝ ձյունապատ դաշտերով ու մշտադալար եղևնիներով հիանալու: Մոտիկից ու մեծ պլանով լուսանկարելով տարբեր ծառերի տերևներ, կարելի է տերևների ձևով ծառաճանաչման տեղեկատու ստեղծել: Այստեղ ես կավելացնեի, որ կարելի է գնալ կենդանաբանական այգի և արդյունքում կունենանք կենդանիների ճանաչման տեղեկատու: Սաների համար շատ ավելի է հեշտանում խոսելը, երբ դիտում են իրենց պլանշետներով արված լուսանկարները:



Կրթահամալիրային փորձը: Նոր դպրոցի նախակրթարանի դաստիարակ Աննա Ստեփանյանն գրում է իր բլոգում. «Այս շաբաթ նախատեսված էր ներքին բակում ստեղծել մեր դասարանական ծաղկանոցը: Պլանշետների ֆոտոխցիկներն անհարժեշտ էին ֆիքսելու ծաղկանոցի ստեղծման աշխ

ատանքները, ինչն էլ առանց միջամտության կատարեցին մի խումբ սովորողներ»:

2. Պլանշետների միջոցով երեխաները առնչվում են գրականության հետ

Խորհուրդ է տրվում պլանշետներում ստեղծել «Ունկնդրելու կենտրոններ», որտեղ երեխաները կարող են մատով խփել էջերին տարբեր հեքիաթների նկարներին և լսել հեքիաթների ձայնագրությունները և [վի օրինակ](#) է բերվում:

Կրթահամալիրային փորձը: Անահիտ Հարությունյանի ստեղծած «Բզեզ» ենթակայքում հատուկ տեղ է հատկացված [այս գործունեությանը](#): Դեռ ավելին՝ երեխաները կարող են կարդալ Արեգ Պարսիլյանի, Վիկա և Անի Մինասյանների ընթերցարանները, պատասխանել դրանցում գրված հարցերին և ստեղծել իրենց [գիր-օրագիրը](#):

3. Պլանշետները զարգացնում են երեխաների երաժշտական ունակությունները

Պլանշետներում ներբեռնվում են մանկական ինտերակտիվ երգեր, երաժշտական ռիթմը զգալու վարժանքներ, ինչպիսին են, օրինակ, [Wheels on the Bus](#) երգը և ռիթմիկ մեքենա [Monkey Drum](#)-ը: Այստեղ մոտ 10000 ռիթմիկ խփոց է ձայնագրված՝ աստիճանական բարդեցմամբ: Երեխաները լսում են խփոցները և փորձում են կրկնել:

Կրթահամալիրային փորձը: «Բզեզ»-ում առկա են [երգ](#) և [պար](#) բաժինները: Պարը դեռ ստեղծման փուլում է, իսկ «երգ»-ը արդեն ունի մի քանի անգլերեն և Կումիտասի մանկական երգերը, որոնք ձայնագրվել են մեր կրթահամալիրում:

4. Նկարչական ունակությունների զարգացումը պլանշետներով

Առաջարկվում է պլանշետներում ներբեռնել [Penultimate](#) ծրագիրը, որը հնարավորություն է տալիս երեխաներին ձեռագիր գրել և նկարել էկրանի վրա: Այս ծրագիրը ինչ-որ ձևով մեղմ հակափաստարկ է պլանշետով աշխատելու ընդդիմախոսների այն պնդումին, որ չի զարգանում երեխայի ուղեղի և մատների շարժումների փոխկապակցվածությունը: Ասում եմ մեղմ, որովհետև, այնուամենայնիվ, խորհուրդ չի տրվում լիովին հրաժարվել մատիտներից, թղթից, ջրաներկից ու պլաստիլինից:

Կարծում եմ, որ այս ծրագիրը հարկ է ներբեռնել կրթահամալիրում օգտագործվող պլանշետներում:

Պլանշետը հնարավորություն է տալիս երեխաներին աստիճանաբար ծանոթացնել նաև մեծ նկարիչների գործերին՝ [Art Authority](#) ծրագրի օգնությամբ:

5. Տեսաֆիլմերի ստեղծում պլանշետներով

Պլանշետները հնարավորություն ունեն նաև տեսաֆիլմեր նկարելու՝ օգտագործելով imovie պլանշետներով նկարահանած տեսաֆիլմերի մոնտաժման ծրագիրը: Նախակրթարանի սաները կարող են նկարահանել, իսկ դաստիարակները այս ծրագրով արդեն կարող են մոնտաժել և ստեղծել ֆիլմն իր վերջնական տեսքով:

Առաջարկում եմ կրթահամալիրի «5-6 տարեկանի ուսումնական ծրագրի» աշխատակարգի «Ուսումնասիրության թեմաներ» բաժնում հաշվի առնել նաև imovie ծրագիրը:

Եզրահանգում

Հաճելի է, երբ այլոց մանկավարժական առաջավոր փորձն ուսումնասիրելիս պարզվում է, որ մեր փորձը նույնպես արժանի է ուսումնասիրման ու գնահատման: Ընդամենը երկու ամիս է անցել, կրթահամալիրի դպրոց-պարտեզներում սկսվել է իրականանալ «5-6 տարեկանի ուսումնական պլանշետ» նախագիծը, բայց արդեն բավականին գործ է արված՝ շնորհիվ նախագծի համակարգող Անահիտ Հարությունյանի և նախակրթարանների դաստիարակների: Հաջողություն մաղթելով նրանց՝ ուզում եմ ավելացնել, որ եթե նույնիսկ հայտնաբերենք նախակրթարանում պլանշետների օգտագործման ավելի արդյունավետ, ավելի հետաքրքիր ու հաջողված ձևեր, պետք չէ մոռանալ դարերից եկող հարատև ճշմարտությունը առ այն, որ փոքր երեխաները ամենից լավ սովորում են մարդկանց և տարբեր առարկաների հետ անմիջական շփումով, ինչը զարգացնում է նրանց լեզուն ու մտածողությունը, դրդում է իրավիճակին համապատասխան գործողությունների ու գործունեության: Տեխնոլոգիան վաղ հասակի երեխաների ուսումնական ծրագրի միայն մի մասն է: Այն պետք է այլ գործունեությունների հետ հավասարակշռված և ստեղծականորեն օգտագործել:

Աղբյուրներ

- [Fred Rogers Center](#)
- [Highscope](#)
- [Using Technology Appropriately in the Preschool Classroom](#)
- [iPads in the Preschool Classroom](#)
- [Why Use Technology in Education?](#)
- [Teaching in a Digital Classroom](#)
- [bzez.mskh.am](#)

29. [Սովորողների ակումբների մասին](#) (Դպիր 107)



Ժամանակակից առաջադեմ մանկավարժությունն այսօր արդեն չի դիտում դպրոցը որպես մի վայր, որտեղ միայն առարկայական գիտելիք և կարողություն են փոխանցում տարաստարիք սովորողներին: Լավագույն կրթօջախներ են համարվում այն դպրոցները, որտեղ բացահայտվում ու զարգացնում են ապրում յուրաքանչյուր սովորողի միայն իրեն հատուկ ունակություններն ու հետաքրքրությունները, և անհատի մեջ այնպիսի ներուժ են ձևավորում, որը շրջապատին, մարդկանց ու երկրին արդեն դպրոցական հասակում

պիտանի լինելուն է օգնում: Այս կարևոր առաքելությանն է ուղղված դպրոցական ոչ ֆորմալ կրթությունը՝ ակումբային գործունեությունը:

Վերջին տարիներին «Միխիթար Մեբաստացի» կրթահամալիրի միջին և ավագ դպրոցներում սովորողների ընտրությամբ ձևավորված մի շարք ուսումնական ակումբներ են աշխատել՝ «Խաղարկային դատարան», «[Գիտակների](#)», «[Ընթերցասերի](#)», «[Հայրենագետ-բնապահպանների](#)», «[Անգլախոսների](#)», «[Ծրագրավորողի](#)», «[Ռոբոտիքս](#)», «[TV mskh](#)», «[Վրացախոսների](#)», «[Երաժշտական լաբորատորիա](#)», «[Տիեզերք](#)», թատերական, դիզայներների, արվեստագետների, տնտեսագետի և այլ: 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում ակումբային գործունեությունը Ավագ դպրոցի բոլոր սովորողների համար պարտադիր ուսումնական գործունեություն էր՝ ընդգրկված կրթական ծրագրի օրինական ուսումնական պլանի և սովորողի անհատական ուսումնական պլանի մեջ, ներառված դասացուցակային պարապմունքներում: Որոշակի ձեռքբերումներով հանդերձ՝ ակումբային գործունեության կազմակերպման այդ ձևը լիովին չարդարացրեց իրեն, քանի որ խաթարված էր ակումբների ձևավորման հիմնական սկզբունքը՝ հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական հետաքրքրություններն ու ներքին ունակությունները: Ինչպե՞ս կարող է ակումբի գործունեությունը հաջողված համարել, եթե նրա անդամներից մի քանիսը պարտադրված ու չուզենալով են հաճախում պարապմունքներին: Երբ 2015-2016 ուսումնական տարում ակումբային գործունեությունը հանվեց ուսումնական պլանից և դասացուցակային պարապմունքներից, ակումբներից դուրս եկան պարտադրված հաճախողները, և թվում էր, որ վերջապես ակումբներում կընդգրկվեն միայն տվյալ ակումբի ամենախիստ անդամները, պարզվեց, որ այդ ամենախիստ անդամների թիվը շատ քիչ է, և որոշ ակումբներ դադարեցրին իրենց գործունեությունը հենց միայն այդ պատճառով: Կարծում եմ, որ ակումբի գործունեության նոր կարգ պետք է առաջադրվի, քանի որ ներկայիս կարգը հետ է մնացել արդի պահանջներից: Կարո՞ղ են լինել ինքնաֆինանսավորվող ակումբներ, որոնց դեպքում դեպքում կվերանա ակումբի անդամների նվազագույն թվաքանակի պահանջը: Ավելին՝ կարո՞ղ են արդյոք գործել սովորողների նախաձեռնությամբ ինքնադեկավարվող ակումբներ:

Ընդհանրապես, որո՞նք են լինելու ակումբային գործունեության զարգացման ուղիները մեր կրթահամալիրում: Կարո՞ղ ենք այս հարցում մեզ համար ընդունելի լուծումներ գտնել՝ ուսումնասիրելով դպրոցական ակումբային գործունեության համաշխարհային փորձը: Իմ կատարած ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս հարցում մեծ ձեռքբերումներ ունեն երեք երկրներ՝ ԱՄՆ, Կանադան և Ճապոնիան:

Միացյալ Նահանգներում դպրոցական ակումբային գործունեությունը երեք ուղղություններով է զարգացած՝

- բարեգործական հիմնադրամների ստեղծման կամ ստեղծվածներին աջակցության,
- հանրային ծառայությունների
- մասնագիտական կողմնորոշման:

ԱՄՆ-ի դպրոցներում ակումբային գործունեությունը պարտադիր չէ և չի ընդգրկված ուսպլաններում և դասացուցակային պարապմունքներում, բայց սովորողների մեծամասնությունը կամավոր սկզբունքով ընդգրկվում է այս կամ այն ակումբում, քանի որ քոլեջներ, համալսարաններ ընդունվելիս և ապագայում աշխատանքի ընդունվելիս ներկայացվող ինքնակենսագրական տեղեկատվության մեջ կարևորվում են անձի կատարած կամավորական աշխատանքները, հանրային ծառայությունները, ինչպես նաև տարբեր մասնագիտությունների նկատմամբ ցուցաբերած գործնական հետաքրքրությանը:

Հիմնադրամների ստեղծման և դրանց աջակցության ակումբներից է օրինակ, չինական խնամքի ակումբը (China Care Club), որը գործում է Վեպոնի ավագ դպրոցում և, որի առաքելությունն է որք չինացի երեխաների խնամքի համար դրամահավաքներ կազմակերպելը: Մեկ այլ օրինակ է Լիվինգսթոնի ավագ դպրոցի «Փշրելով շրթաները» ակումբը, որի անդամները կապ են հաստատում մի որևէ հետամնաց ու աղքատ երկրի դպրոցի հետ և սկսում են դրամահավաքը, որով օգնում են նորոգել այդ դպրոցը: Այս տիպի ակումբներից են «Ամբոխային դրամահավաք» (Crowdfunding) անունով ակումբները, որոնք գործում են տարբեր քաղաքների դպրոցներում: Այս ակումբները կրթական նպատակների համար դրամահավաքներ են կազմակերպում համացանցի միջոցով:

Հետաքրքիր է հանրային ծառայություններ իրականացնող ակումբների գործունեությունը:

- Նրանք նոր կամ քիչ օգտագործված խաղալիքներ են հավաքում և տանում են դրանք մանկական հիվանդանոցներ ու այդ քայլով հոգեպես ոգևորում, ուրախացնում են երեխաներին:
- Գնում են իրենց թաղամասի փոստատունը և խնդրում են իրենց տալ Սանտա Կլաուսին հասցեագրված նամակներ, որոնք անապահով ընտանիքների երեխաներ են գնել և հավաքած գումարով իրականացնում այդ նամակներում նշված փոքրիկ երազանքները:
- Նամակ են գրում իրենց նահանգից ընտրված կոնգրեսմենին՝ հանրային մի որևէ հարցի լուծման ակնկալիքով:
- Մեծահասակներին համակարգիչներով և բջջային սմարթֆոններով աշխատել են սովորեցնում:
- Անվճար առցանց կրկնուսույցի աշխատանք են կատարում տարբեր ուսումնական առարկաներից հետ մնացող սովորողների հետ, ովքեր ի վիճակի չեն վճարել կրկնուսույցներին:
- Հավաքարարի կամավորական աշխատանք են կատարում գետափերին, զբոսայգիներում և այլ հասարակական վայրերում:
- Մի օր ապրում են անտուն մարդկանց կյանքով, ինչը կարեկցանք է արթնացնում նման մարդկանց հանդեպ և դրամահավաք են անում նրանց համար:
- Գրքեր են հավաքում մանկատների, գիշերօթիկ դպրոցների գրադարանների համար:
- Որոշ ակումբների անդամներ էլ իրենց նպատակն են դարձնում շատ ժամանակ անցկացնել հատուկ կարիքով երեխաների հետ, օգնել նրանց ներառվել կյանքում և ուսման մեջ:

- Մենթոր ընկեր են դառնում կրտսեր դասարանում մի որևէ սովորողի հետ:
- Պարտիզայանի ակումբի անդամները պարտիզայանական աշխատանքներ են կատարում, գեղեցկացնում միջավայրը:

Կարևորն ու հետաքրքիրն այն է, որ այս բոլոր նշված գործունեությունների նախաձեռնողներն ու իրականացնողները հենց իրենք սովորողներն են:

Մասնագիտական կողմնորոշման ակումբները յուրաքանչյուր երեխայի թաքնված հնարավորությունները, ունակությունները, հակումները բացահայտելու նպատակն են հետապնդում: Այս ակումբները սեր ու հետաքրքրություն են արթնացնում այս կամ այն մասնագիտության նկատմամբ: Այս խմբի մեջ մտնող ակումբներից են՝ «Ճարտարապետի», «Բնագետի», «Ծրագրավորողի», «Գրականագետի», «Ռոբոտիքսի», «Լրագրողի», «Գրողի», «Հոգեբանի», «Տնտեսագետի», «Կայք ձևավորողի»: Այն սովորողները, ովքեր առաջնորդի որակներ են ցուցաբերում, ընդգրկվում են համապատասխան ակումբներում՝ «Հանրային կառավարում», «Աշակերտական խորհուրդ»: Մեղիայով հետաքրքրվողները կարող են ընտրել այս ակումբները՝ «Դպրոցական ռադիոկայան», «Դպրոցական հեռուստակայան», «Դպրոցական ամսագիր»: Երաժշտությամբ հետաքրքրվողները ունեն հետևյալ ընտրությունը՝ «Դպրոցական երգչախումբ», «Պարային համույթ», «Սովորողների ստեղծած երաժշտախումբ», «Մենանվագ», «Վոկալ»: Այն սովորողները, ովքեր զգում են, որ հեշտությամբ են կարողանում հաղթել բանավեճերում և բավականություն են ստանում մեծ լսարանի առջև խոսելուց, կարող են միանալ այս ակումբներին՝ «Խաղարկային կոնգրես», «Դեռահաս հանրապետականներ», «Դեռահաս ժողովրդավարներ», «Արտաքին գործերի», «Բանավեճի»: Գործում են նաև ամենատարբեր մարզական ակումբներ:

Ակումբների գործունեության ֆինանսավորումը ԱՄՆ-ում

Պետական հանրակրթական դպրոցի ղեկավարությունը դիմում է կառավարությանը ակումբային գործունեությունը ֆինանսավորելու համար և հիմնավորում այդ ծախսերը, սակայն ակումբային ոչ բոլոր ծրագրերն են կառավարության կողմից ֆինանսավորվում: Կան հասարակական կազմակերպություններ, որոնք ֆինանսավորում են բավարար եկամուտներ չունեցող երեխաների արտադպրոցական գործունեությունները: Այդպիսի կազմակերպություններից է Կալիֆորնիայի «Think Together»-ը:

Ֆինանսավորման այլ աղբյուրներից է ակումբների անդամներից անդամավճարի գանձումը: Հաշիվ է բացվում բանկում, և անդամավճարները փոխանցվում են այդ հաշվին: Ինքնաֆինանսավորվող ակումբներն ունենում են իրենց հաշվապահը, որը հաշվետու է ակումբի անդամների առաջ: Նա պետք է հաշվետվություն ներկայացնի կատարված ծախսերի մասին:

Ճապոնիայի դպրոցական ակումբները

Այս երկրում դպրոցական ակումբները երկու ուղղության են՝ մարզական և մշակութային: Դպրոցներում գործում են ֆուտբոլի, բասկետբոլի, թենիսի, լողի և այլ մարզաձևերի ակումբներ: Մշակութային ակումբներից են՝ անգլախոսներինը, խոհարարականը, կինոյինը, թեյախմության արարողակարգինը և ճապոնական մշակութին վերաբերող այլ ակումբներ:

Ճապոնիայի որոշ հարուստ դպրոցներում ակումբային գործունեությունը պարտադիր է և ուսպլանի մեջ է ընդգրկված: Ավելի աղքատ դպրոցներում այս գործունեությունը կամավոր է՝ ավելի սահմանափակ հնարավորություններով:

Կանադայում դպրոցական ակումբները սովորողների ուսումնական տարիները ավելի հետաքրքիր դարձնելու համար են:

Ակումբները ուսումնական պլանների մեջ չեն ընդգրկված, բայց ներառվում են ընդհանուր կրթական ծրագրում: Ակումբների պարապմունքները կազմակերպվում են դասերից հետո: Դրանք հիմնականում սպորտային ակումբներ են. Բասկետբոլ, վոլեյբոլ, ֆուտբոլ, լող, թիավարություն, հոկեյ:

Կան նաև միջազգային միջմշակութային ակումբներ, որոնց նպատակն է սովորողներին ծանոթացնել այլ երկրների մշակույթներին, լեզվին: Աշնանային արձակուրդների ընթացքում այս ակումբի անդամները երեք շաբաթ անցկացնում են այն երկրում, որի մշակույթը և լեզուն ուսումնասիրում են:

Կան նաև երաժշտական ակումբներ՝ ջազ ակումբ, ռոք ակումբ և այլն...

Դպրոցում կարող է գործել նաև «Դպրոցական լրագիր» ակումբը, որտեղ սովորողները լրագրողի աշխատանք են կատարում:

Եզրակացնող հետևություններ ուսումնասիրությունից հետո

Որոշակի իմաստով հանրային ծառայությունների ոլորտում է գործել մեր կրթահամալիրի հայրենագետ-բնապահպանի ակումբը: Կանադական ակումբների նման մեծաթիվ սովորողների համար դպրոցական տարիները հետաքրքիր է դարձրել մեր «Գիտակների ակումբը»: Մասնագիտական կողմնորոշման միտումներ են ունեցել մեր «Տնտեսագետի», «Ընթերցասերի», «Անգլախոսների», «Ծրագրավորողի», «TV mskh», «Խաղարկային դատարան», «Ռոբոտիքս» ակումբները, «Երաժշտական լաբորատորիան»: Այնքան շատ հոդվածներ եմ կարդացել այս թեմայով և պետք է առանձնահատուկ ոգևորությամբ նշեմ, որ իր բնույթով եզակի է մեր «[Սեքսստացիներ](#)» ուսուցչական երգչախմբի գործունեությունը՝ իր համերգային շրջագայություններով, ինչն ամենախիսկական հանրային ծառայություն է: Եզակի են նաև մեր կրտսեր, միջին և ավագ դպրոցների ռադիոհաղորդումները, որոնց ամենաակտիվ մասնակիցները կարող են ստեղծել իրենց

ռադիոակումբները: Մեծ աշխարհն էլ մեզանից բան ունի սովորելու: Իսկ մենք սովորելու բան ունենք ակումբների միջոցով հանրային ծառայություններ մատուցելու ոլորտում:

Աղբյուրներ՝

- [Վիքիպեդիա](#)
- [Լիվինգստոնի ավագ դպրոցի կայքը](#)
- [japan-guide.com](#)
- [Սուրբ Մարգարիտի օրիորդաց դպրոցի կայքը \(Վիկտորիա\)](#)
- [edb.gov.hk](#)
- [blog.prepscholar.com](#)

30. [Ուսումնական նյութ](#) (Դպիր 109)



Կրթահամալիրի մանկավարժական աշխատողների օգոստոսյան սեմինարներից մեկի ժամանակ դասավանդողներն ուզում էին հստակ պարզաբանում ստանալ այն մասին, թե ինչը կարող է ժամանակակից ուսումնական նյութ համարվել: Սկսեցի ուսումնասիրել ու այդ հարցի պատասխանը փնտրել անգլիալեզու և հայկական աղբյուրներում, ինչպես նաև «Տիգրան Հայրապետյան» մեդիագրադարանում և կրթահամալիրի դասավանդողների բլոգներում:

Էլեկտրոնային ուսումնական նյութերի հայկական ամենամեծ աղբյուրը [Հայկական կրթական միջավայր. պաշարների շտեմարան](#)ն է: Հնարավոր չէր ուսումնասիրել այդ շտեմարանում հրապարակված հարյուրավոր նյութերը: Պատահական ընտրությամբ արված ուսուսումնասիրությունն էլ բավական էր, որպեսզի հասկանայի, որ այստեղ տարբեր առարկայական դասագրքերի մի քիչ ձևափոխված կրկնություններն են: Օրինակ, մոտավոր պատկերացում կազմելու համար, թե ինչպիսին են այս շտեմարանում հրապարակված «Հայոց լեզու» ուսումնական առարկայի ուսումնական նյութերը, մեջբերեմ Power Point ծրագրով կազմված «Բայի սեռը» ուսումնական նյութի մեկ էջը՝ չնշելով հեղինակին.

Բայի սեռ

Բայի սեռը ցույց է տալիս գործողության հարաբերությունը ենթակայի և նրան առնչվող առարկայի հետ:

Բայն ունի երեք սեռ՝

Ներգործական, կրավորական և չեզոք:

Մի քանի նույնանման կանոնային «ուսումնական նյութեր» կարդալուց հետո համոզվեցի, որ հայկական կրթական իրականության մեջ ավելի առաջադեմ են [«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում](#) ստեղծված էլեկտրոնային ուսումնական նյութերը, որոնք գրեթե ամբողջությամբ ներառում են S2S-ների ժամանակակից հնարավորությունները:

Նախ պետք է ասեմ, որ անգլերենում օգտագործվում է TLM (Teaching/Learning Material) հասկացումը, որն իր մեջ ներառում է ն' ուսուցանելը, ն' ուսանելը: Որոշ մանկավարժներ օգտագործում են միայն Teaching Material տերմինը, որը բառացի նշանակում է «ուսուցողական նյութ», և դասավանդողներն օգտագործում են այն ուսուցանելու համար: Դրան հակառակ՝ «Learning Material»-ը սովորողներն օգտագործում են ինքնակրթության համար: Teaching/Learning Materials տերմինի լրիվ իմաստը տալիս է մեր հայերենի «ուսումնական նյութ»-ը: Իրոք որ փառավոր լեզու է հայերենը:

Ուսումնական նյութերի տեսակները

1. Թեմայի ուրվագիծը

Նախքան մի որևէ թեմայի դասավանդումը սովորողներին է տրվում թեմայի ուրվագիծը: Թեմայի ուրվագիծը ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

- Սովորողին մատչելի ձևով բացատրվում է, թե ինչ գիտելիք և կարողություններ է նա ձեռք բերելու տվյալ թեման ուսումնասիրելուց հետո
- Գործունեությունների ժամանակացույցը
- Թեմայի յուրացման գնահատման կարգը

Անսովոր և ուսանելի է այս մոտեցումը. փաստորեն սա սովորողին ուղղված դասի պլան է՝ ամենակարևոր և ամենաարդյունավետ դասի պլանը: Դասը սովորողին է, ուրեմն դասի պլանն էլ պետք է սովորողինը լինի: Սա ուսումնասիրվող թեմայի արժևորման ուսումնական նյութ է:

2. Ուսումնական կայքեր

Անդառնալիորեն անցել են այն ժամանակները, երբ ուսուցիչը գիտելիքի, կարողությունների ձեռքբերման միակ աղբյուրն էր: Գիտելիքի ձեռքբերման անսպառ աղբյուր է համացանցը: Օրինակ, [Բրիտանական խորհրդի կայքը](#) անգլերեն դասավանդողի և տարատարիք սովորողների համար գիտելիքների և լեզվական կարողությունների ձեռքբերման անընդհատ թարմացվող աղբյուր է: Այստեղ կան ն' տեսադասեր և՛ լեզվական կառուցվածքների վարժություններ և գիտելիքների ու կարողությունների ուսուցողական հարցաշարեր:

MathTv.com կայքում դասավանդողները, ծնողները և սովորողները կարող են լսել և դիտել, թե ինչպես է մաթեմատիկայի մի հմուտ մասնագետ բացատրում իրենց հետաքրքրող մաթեմատիկական երևույթը:

Աշխարհագրությամբ հետաքրքրվողները կարող են օգտվել Geography.com կայքից:

Մի իսկական հեռավար դպրոց է <https://www.quora.com/> կայքը, որտեղ կարելի է ընտրել քեզ հետաքրքրող ուսումնական առարկան, ու քո առաջ կբացվի հետաքրքրություններիդ մի ամբողջ աշխարհ:

3. Վեբ-ֆորումներ

Վեբ-ֆորումները լրացուցիչ կրթության, ինքնակրթության յուրօրինակ տեղեկատվական աղբյուրներ են ավագ դպրոցի բոլոր այն սովորողների համար, ովքեր արդեն հաստատապես որոշել են իրենց ապագա մասնագիտությունը: Մա ընտրած մասնագիտության մեջ արդեն հաջողություններ ձեռք բերած մասնագետների հետ առցանց շփումների, քննարկումների, հետաքրքրող հարցերի պատասխանները անմիջապես նրանցից իմանալու մեծ հնարավորություն է: Ընտրած ապագա մասնագիտության Վեբ-ֆորումներին մասնակցելու համար հարկ է, նախ և առաջ, օտար լեզուներ լավ սովորել, որովհետև հայերեն ֆորումներ գրեթե չկան: Ես գիտեմ միայն, որ գոյություն ունի հայերեն «[Մայրենի լեզվի դասեր](#)» ֆորումը Ֆեյսբուքում:

4. Դասագրքեր, առանձին տեքստեր, ընթերցարաններ

21-րդ դարի դասավանդողը չի կարող կառչել դասավանդվող առարկայի մի որևէ դասագրքին և ամբողջ ուսումնական աշխատանքը սահմանափակել տվյալ դասագրքում եղած թեմաներով: Յուրաքանչյուր թեմայի համար կարող են գործածվել մի քանի էլեկտրոնային դասագրքեր, կամ էլ առանձին դասագրքերից վերցված տեքստեր, որոնք լավ են բացատրում ուսումնասիրվող տվյալ թեման: Սովորողներն էլ ազատ պետք է լինեն և համացանցից այնպիսի տեքստեր գտնեն, որոնք հակադրվում են դասագրքի շարադրանքին, կասկածող հարցադրումներ են անում:

Իր ուսումնական բլոգում բնապահպանության և աշխարհագրության յուրահատուկ էլեկտրոնային դասագրքեր է ստեղծել [Էմանուել Ագջոյանը](#):

Մնայուն արժեք ներկայացնող ուսումնական նյութ է «[What is it? – Ի՞նչ է սա» անգլերեն-հայերեն պատկերազարդ բառարանը](#), որը ստեղծվել է կրթահամալիրի անգլիախոսների ակումբի սովորողների ներգրավմամբ: Համաաշխարհային պատմության [այլընտրանքային դասագիրք](#) են ստեղծում կրթահամալիրի Ավագ դպրոցի սովորողները Աշոտ Տիգրանյանի ղեկավարությամբ:

5. Պատճենահանված բաժանվող նյութեր

Դրանք մի որևէ թեմայի սեղմ բացատրություններն են, որոնք օգնում են սովորողներին ավելի լավ հասկանալ բացատրվող նյութը: Երբ սովորողը իր ձեռքի տակ ունենում է պատճենահանված նյութը, նա ուշադրությունը կենտրոնացնում է հասկանալու վրա, այլ ոչ թե գրի առնելու այն, ինչը դասավանդողն ասում է:

Բաժանվող նյութերը կարելի է նաև էլեկտրոնային փոստով ուղարկել սովորողներին:

6. Տեսողական դիդակտիկ նյութեր

- Դիագրամներ
- Գրաֆիկներ
- Քարտեզներ
- Լուսանկարներ

Կարելի է սովորողներին ոգևորել, որպեսզի իրենք ստեղծեն գրաֆիկներ, քարտեզներ, տեսողական այլ նյութեր՝ մի որևէ նյութի ընթերցումից հետո կամ ուսումնական ճամփորդությունից առաջ և հետո: Դրանք նույնպես կարող են ուսումնական նյութեր համարվել:

7. Դասախոսության ձայնագրություն, տեսաֆիլմեր և տեսադասեր

Եթե նախկինում գիտա-մանկավարժական ամսագրի խմբագիրն էր որոշում մի որևէ ուսուցչի առաջավոր փորձի մասին հոդվածի ճակատագիրը, ապա այժմ հենց ինքը ուսուցիչը կարող է ձայնագրել, նկարահանել իր խոսքը և տեղադրել տեսանյութերի սոցիալական ցանցերում՝ youtube, rutube, livestream և այլ:

Նախակրթարանային և կրտսեր դպրոցի սովորողների և դաստիարակ-դասվարների համար [ծիսական խաղերգերի](#) տեսաֆիլմերի մեծ հավաքածու է ստեղծել կրթահամալիրի երաժշտության դասավանդող Մարինե Մկրտչյանը:

8. Ֆլեշմոբ

Մեր կրթահամալիրում արդեն երկրորդ ուսումնական տարին է, ինչ անցկացվում են ամենամսյա ֆլեշմոբներ ուսումնական առարկաներից՝ հայոց լեզվից, մաթեմատիկայից, բնագիտությունից, պատմությունից, շախմատից , օտար լեզուներից:

Ֆլեշմոբերի առաջադրանքները չեն նմանեցվում առարկայական քննությունների, օլիմպիադաների առաջադրանքներին, ընդհակառակը՝ դրանք պարզեցվում և հնարավորինս մոտեցվում են կյանքի պահանջներին, լինում են ուսանելի և կիրառելի կյանքում: Մեր մաթեմատիկայի ֆլեշմոբի առաջադրանքները զարգացնում են

տրամաբանական մտածողությունը, այլ ոչ թե պահանջում տարբեր մաթեմատիկական բանաձևերի իմացություն և կիրառում: Նույն կերպ էլ պատմական տարեթվերի մեխանիկական հիշողություն չեն պահանջում մեր պատմության ֆլեշմոբի առաջադրանքները: [Անգլերենի սեպտեմբերյան ֆլեշմոբի](#) նպատակն էր սովորողների մոտ հետաքրքրություն ձևավորել և զարգացնել հատկապես հաղորդակցական կարողությունները, քանի որ լեզուն, նախ և առաջ, հաղորդակցության միջոց է:

Չնայած այն անվերապահ պնդմանը, որ օտար լեզուների դասավանդման ժամանակակից մոտեցումը պետք է լինի հաղորդակցականը, ամբողջ աշխարհում շատ քիչ աշխատանք է արված հաղորդակցական կարողությունները ստուգող-զարգացնող առաջադրանքների ստեղծման ուղղությամբ: Անգլերենի քերականության տարբեր բաժինների լավ իմացությունը, ինչպես նաև, ընթերցելով հասկանալու կարողությունները ստուգող քննությունը գերազանց հանձնած սովորողը երբեմն շփոթվում է և չգիտի ինչպես արտահայտվել իրական կյանքում հանդիպող իրավիճակներում, երբ պետք է լինում դիմացինին քաջալերել, հանդիմանել, նրանից ներողություն խնդրել, ուշադրություն հրավիրել, ներել, շնորհավորել տարբեր առիթներով, շնորհակալությունը արտահայտել և պատասխանել շնորհակալությանը, ցավակցել, նրա հետ համաձայնվել կամ չհամաձայնվել, կասկած ու զարմանք, կարծիք ու խորհուրդ, ավստասանք ու գոհունակություն արտահայտել: Փաստորեն այս նախագծով, ֆլեշմոբային թեթև ու ուրախ ոգով օտար լեզուն՝ անգլերենը, որքան հնարավոր է ակադեմիական ոլորտից հեռացվում և մոտեցվում է իրական կյանքին:

9. Ուսումնական խաղեր, խաղ-գործունեություններ

Կարծում եմ, որ ամբողջ աշխարհի 5-6 տարեկանների դաստիարակների համար ուսանելի խաղ-գործունեություն է մեր կրթահամալիրում երկու տարի առաջ մեկնարկ տրված [«Տառփսիկ. ուրախ այբբենարան»](#) նախագիծը:

Դպրոց-պարտեզի դաստիարակների համար հետաքրքիր կլինի կարդալ [Մարինե Մարտիրոսյանի «5 տարեկանների խաղ-ուսուցում-գործունեություն»](#) հոդվածը:

Նախակրթարանի և կրտսեր դպրոցի սովորողների և դաստիարակ-դասավար-դասավանդողների համար բավականաչափ ուսումնական խաղեր են հավաքված [Բզեզ](#) և [Պարտեզ](#) ամսագրերի խաղադարաններում, ինչպես նաև [«Մոծակ» կայքում](#):

Կարծում եմ, որ Դպիրի 24-րդ համարում հրապարակված իմ [Լեզվական խաղեր](#) հոդվածում նկարագրված լեզվական խաղերը հիմա էլ հետաքրքիր կլինեն իրենց ինտերակտիվությամբ, հաղորդակցական մոտեցմամբ: Դրանք կարող են գործածվել նաև մայրենիի դասերին:

Օգտագործված գրականություն

- [Instructional Materials: Definition, Examples & Evaluation](#)
- “TLM – Teaching/Learning Materials” By Beth Lewis
- [Variety in teaching materials](#)
- [Teaching resources](#)
- <http://dpir.mskh.am/>

IV. Իմ բողոքը

31. [Հանրապետական օլիմպիադայի համայնքային փուլից](#) (Դպիր 28)

Առարկայական օլիմպիադայի անգլերենի հարցաշարերը, ինչպես նաև նրանք, որոնք տրվում, են ավարտական և միասնական քննությունների ժամանակ, ստուգում են միայն աշակերտների ընկալելու կարողությունները: Աշակերտը միայն պասսիվ ընտրողի դերում է: Այստեղ նույնիսկ որոշակի դեր է խաղում բախտը:

Անցյալ տարի ես փորձելու համար նմանատիպ մի իտալերենի հարցաշարի պատասխանեցի: Չնայած, որ ես իտալերեն ոչ մի բառ չգիտեմ, հարցերի 48%-ին ճիշտ պատասխանեցի: Ընդամենը 12% չբավականացրեց, որպեսզի համակարգիչը գրանցեր իտալերենի իմ բավականին լավ իմացությունը: Դա անհեթեթ է:

Իմ կարծիքով օլիմպիադայի, ինչպես նաև ավարտական ու միասնական քննությունների հարցաշարերում պետք է տեղ գտնեն նաև ստեղծագործական առաջադրանքներ: Օրինակ՝

ա/ Ուղղորդվող շարադրություն. Տրվում են բառեր և բառակապակցություններ, որոնցով պետք է որոշակի թվով նախադասություններից բաղկացած կապակցված խոսք գրել: Ստուգվում է աշակերտի գրելու կարողությունը:

բ/ Ազատ շարադրություն, բայց ոչ թե աշնան դեղնած տերևների մասին, այլ ստուգվի մի որևէ վիճահարույց հարցի մասին աշակերտի սեփական կարծիքը արտահայտելու կարողությունը:

գ/ Իրավիճակային առաջադրանքներ. « Ի՞նչ կանես, եթե...»

դ/ Թարգմանություն մայրենի լեզվից օտար լեզու:

Օլիմպիադայի կազմակերպման մասին

Ես այդպես էլ չիմացա համայնքային օլիմպիադայի կազմակերպման կարգի մասին: Չկա այդպիսի մի իսելամիտ կարգ: Ամենակարևոր հարցը, թե ով է իրավունք ստանում մասնակցելու մարզային փուլին, շատ մշուշոտ է և անհամոզիչ:

Օրինակ՝ մեր տասներորդ դասարանցի Շուշան Բլեյանը համայնքում երկրորդն էր իր

արդյունքով, բայց իրավունք չստացավ շարունակելու իր պայքարը: Ութերորդցի Արտակը առաջին տեղն էր գրավել, և նույնպես անարդյունք:

Մի քանի ամիս առաջ իմ դասարանի երկու Շուշանները կատաղի, բայց արդար մրցակցությունում հաղթահարեցին ԱՄՆ-ի դեսպանատան կողմից կազմակերպված մրցույթի առաջին փուլը, իսկ Սողոմոնյան Շուշանը նույնիսկ հաղթահարեց երկրորդ՝ ստեղծագործական փուլը: Հարյուրավոր իր հասակակիցների մեջ ընդգրկվեց 30 լավագույնների մեջ: Սողոմոնյան Շուշանին չեն զիջում Առաքելյան Լիաննան, Սուքիասյան Սոնան, Ավանեսյան Հայարփին ու առավել ևս՝ մյուս Շուշանը: Ես չեմ կարծում, որ Մալաթիա-Սեբաստիա համայնքում կա այդպիսի մեկ այլ դասարան, ուր այսպիսի գիտելիքներ են ստացել միայն շնորհիվ դպրոցում ճիշտ կազմակերպված ուսումնական պլանի, որը նոր տիպի ավագ դպրոցի խորհուրդն է կրում իր մեջ: Եվ եթե այս դասարանից որևէ մեկը չի ներկայացնելու մեր համայնքը մարզային փուլում, ապա ինչպես Սարոյանը կասեր իր հերոսի՝ մանկան անմեղ շուրթերով. «Ինչ-որ տեղ ինչ-որ մի բան սխալ է»: Պետք է ուղղել այդ սխալը:

32. Կրթությունը Հայաստանում (Դպիր 32)

Մի՛ փնտրիր ակնոցդ. աչքիդ է



Վերջերս Հայաստանի Կրթության և գիտության նախարարությունը որոշել է Հայաստանում հիմնել 15 «միջազգային չափանիշներին համապատասխանող դպրոց»: Ի՞նչ ենք հասկանում «միջազգային չափանիշներին համապատասխանող դպրոց» ասելով: Արդյո՞ք դպրոցում սովորած մաթեմատիկական բանաձևերի, ֆիզիկայի օրենքների, կենսաբանական տերմինների, աշխարհագրական տեղանունների, պատմական փաստերի ու գրական

ստեղծագործությունների անգիր իմանալն է ապահովում միջազգային չափանիշներին համապատասխանող պայմանները: Չէ՞ որ Երևանի «Քվանտ» վարժարանի, Շահինյանի անվան Ֆիզմաթ թեքումով դպրոցների սաները միշտ էլ աչքի են ընկել միջազգային առարկայական օլիմպիադաներում: Բայց արդյո՞ք այդ դպրոցները կարելի է համարել միջազգային չափանիշներին համապատասխանող առաջադեմ դպրոցներ: Իսկ, միգուցե, այդ նշված գիտելիքների օտար լեզուներով իմանալն է համարվում «միջազգային»... Այդ դեպքում եկեք շատ լուրջ ընդունենք այս կատակը՝ «Գիտե՞ս, որ Անգլիայում 3 տարեկան երեխան էլ է անգլերեն խոսում: Տեսնում ե՞ս՝ ինչ զարգացած ժողովուրդ է»: Իսկ մյուս կողմից մենք հավատում էինք ու հիմա էլ հավատում ենք կրթական բարեփոխումներին:

Մեմինարներ էինք անում պետական կրթակարգի ու առարկայական չափորոշիչների վերաբերյալ: Հավատացել էինք ու հիմա էլ հավատում ենք, որ միջին դպրոցի հիմնական նպատակն է՝ «մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների, բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովումն է, որն անհրաժեշտ է սովորողին ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու, ինչպես նաև տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար:

Ավագ դպրոցի հիմնական նպատակը սովորողի մասնագիտական կրթություն ստանալու, ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումն է» (*Հանրակրթության պետական կրթակարգ, միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004, էջ 9*):

Միջազգային չափանիշները օտար ափերում փնտրել պետք չէ: Անգլիական “The Times” էլեկտրոնային պարբերականի այս տարվա հունվարի հինգի համարում կրթությանը վերաբերող մի հոդվածում գրված է, որ Անգլիայի դպրոցների մեծ մասը անաշխատունակներ է պատրաստում: Հոդվածագիրը բողոքում է, որ դպրոցն ավարտողը չունի աշխատանքային որևէ կարողություններ կամ հմտություններ: Փաստորեն Անգլիայում էլ դպրոցներն ունեն նույնատիպ թերություններ, թեկուզև, անգլերեն են խոսում: Մեզ մոտ և ամենուր առաջադեմ կարող է համարվել այն դպրոցը, որտեղ աշակերտները **ձեռք են բերում իրենց գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու կարողություն:** Միջին դպրոցում այդպիսի կարողությունները ձեռք են բերվում նախասիրությունների զարգացման և մասնագիտական կողմնորոշման դասարաններում, որտեղ ուսումնական պլանով աշակերտները բացի նախատեսված հանրակրթական առարկաներից ընտրում են նաև մի որևէ գործունեություն՝ ըստ նախասիրության: Օրինակ, եթե աշակերտն ընտրել է «Լրագրություն և համակարգչային ծրագրեր» գործունեությունը, ապա նա՝ նախորոք կարդացած լինելով, թե ինչ միջոցառում է լինելու դպրոցում, անպայման ներկա է լինում այդ միջոցառմանը իր թվային ֆոտոխցիկով: Նա անկաշկանդ կատարում է իր գործը՝ լուսանկարում է, գրառումներ է անում, միջոցառումից հետո հարցազրույց է վերցնում մասնակիցներից և հետո շտապում է համակարգչային մի որևէ ազատ սենյակ, որտեղ սկսում է մուտքագրել իր նյութը: Մուտքագրելուց հետո նա նյութը էլեկտրոնային փոստով ուղարկում է գործունեության ղեկավարին: Ղեկավարը խմբագրում է նյութը և տեղադրում կայքում, թերթում: Փաստորեն երեխան դեռ միջին դպրոցում անում է լրագրողական առաջին իրական քայլեր: Կինո-ֆոտո գործունեություն ընտրած աշակերտը նկարահանում է իր առաջին ֆիլմը և կարող է նույնիսկ դրանով մասնակցել տարբեր ստուգատեսներին և դպրոցական կինոփառատոներին: Կարող էմ թվարկել նախասիրության գործունեության այլ տեսակներ՝ երաժշտության, մարզական, օտար լեզուներ-թարգմանություն, մաթեմատիկա-ծրագրավորում, կենդանաբանություն, բուսաբուծություն, կերպարվեստ-դիզայն, մոդելավորում: Ապագա լրագրողի գործունեության նկարագրությունից ելնելով՝ կարող էք երևակայել, թե ինչպիսի կարողություններ կարող են ձեռք բերել աշակերտները՝ ներգրավվելով նշված գործունեություններում: Կարծում եմ, որ մանկավարժության ամենակարևոր նպատակը յուրաքանչյուր երեխայի թաքնված տաղանդը բացահայտելն է. ու երեխան երջանիկ է լինում, երբ ինքնաարտահայտման հնարավորություն է ստանում:

Ավագ դպրոցում աշակերտները շարունակում են իրենց նախասիրած գործունեությամբ զբաղվել նախամասնագիտական խորացված ուսուցման դասարաններում: Ընթերցողի մոտ կարող է տրամաբանական հակափաստարկ առաջանալ՝ երևակայել կարելի է ամեն ինչ: Պետք է ասեմ, որ այս ամենը երևակայություն չէ: Դա իրական դպրոց է Երևանի Հարավարևմտյան թաղամասում, որը 2009 թվականին ընդգրկվեց աշխարհի 30 առաջադեմ-նորարար դպրոցների շարքում:

Ես դեկավարում եմ մեր ավագ դպրոցի անգլերենի խորացված ուսուցման 10-րդ դասարանը: Դեռ երկու ուսումնական տարի կա, բայց դասարանի աշակերտների կեսն արդեն կարողանում է դպրոցի ավարտական և բուհական ընդունելության միասնական քննության հարցաշար լրացնել, որը մեր գերնպատակը չի եղել: Իմ դասարանի աշակերտներն արդեն կարողանում են կարդալ անգլերեն էլեկտրոնային պարբերականներ համացանցում և կատարել հետաքրքիր հոդվածների թարգմանություններ՝ մեր դպրոցի կայքում տեղադրելու համար: Նրանք նույնիսկ կարողանում են լրագրողական աշխատանք անել թե՛ հայերեն և թե՛ անգլերեն: Վերջերս մեր դպրոցում հրատարակեցինք մեր թարգմանչական խմբի առաջին գրքույկը՝ անգլիական, ամերիկյան և հնդկական պոեզիայի ընտրանի՝ մեր թարգմանությամբ: Մեր աշակերտների համար դպրոց գալը տհաճ պարտականություն չէ, քանի որ դպրոցը կապված է իրենց նախասիրությունների հետ ու երբ ես լսեցի, որ Հայաստանում ուզում են հիմնել միջազգային չափանիշներին համապատասխանող դպրոցներ, մի քիչ վիրավորվեցի: Իսկ մենք ինչո՞վ ենք զբաղված: Ուրիշ տեղ մի՛ փնտրիր ակնոցդ. աչքիդ է:

33. 2010թ. անգլերենի միասնական քննությունների թեստերը (Դպիր 38)

Միասնական քննությունների առաջին փուլում ներկայացված էր չորս տարբերակ, որոնցից առաջինը և երկրորդը նույն թեստերն էին՝ հարցերի տարբեր հերթականությամբ: Դա ԳԹԿ-ի կողմից ընդունված կարգն է:

Երկրորդ և չորրորդ տարբերակները լեզվական առումով ավելի բարդ են, քան առաջինը և երրորդը:

Երկրորդ և չորրորդ թեստի առաջին առաջադրանքի առաջին հարցի ոչ մի պատասխան ճիշտ չի կարող համարվել: Եթե b և c պատասխանները կարելի է համարել ակնհայտ սխալ, ապա d-ն նույնպես սխալ է, քանի, որ առաջին պարբերության մեջ կանոնները չեն բացատրվում: Միայն է նաև a տարբերակը, քանի որ այստեղ չի խոսվում խաղը խաղալու փորձագիտական մեթոդների մասին(technique): Առաջին պարբերության մեջ շեշտը դրվում է միայն յուրաքանչյուր խաղացողի նպատակի վրա, և այն բանի վրա, թե որ խաղացողն է հաղթող ճանաչվում: Այս ամենը հաշվի առնելով ճիշտ հարց կարող էր համարվել a) the purpose of each player տարբերակը:

Երկրորդ տարբերակի առաջին առաջադրանքի երկրորդ հարցով պահանջվում է գտնել exorbitant (չափազանց բարձր՝ ինչ-որ բանի արժեքի մասին) բառի հոմանիշը՝ excessive (չափազանց շատ, չափազանց մեծ). Լեզվական թեստ կազմելու կանոններից մեկն այն է, որ տեքստին տրվող հարցերի բառապաշարը պետք է ավելի պարզ լինի, քան տեքստի պառապաշարը: Թեստեր կազմելու այս կանոնը չի պահպանվել:

10-րդ տողում սկսվող այս երկար նախադասությունը անիմաստ է: He set the original game as might be expected in his hometown of Germantown, but in Atlantic City, New Jersey, the site of numerous pre-Depression vacations, where he walked along the Boardwalk and visited Park place. Այս երկարաշունչ, աշակերտի համար անծանոթ տեղանուններով լեցուն նախադասությունը ավելի խրթին ու գրեթե անհասկանալի է դառնում՝ շարահյուսորեն սխալ ձևակերպված

լինելու պատճառով: Անգլերեն չիմացողների համար փորձեմ թարգմանել նախադասությունն այնպես, ինչպես որ կա թեստում. «Նա իր խաղի սկզբնական տարբերակը համադրեց, ինչպես և սպասվում էր, իր հայրենի քաղաք Գերմանթաուն-ում գտնվող վայրերին, այլ Նյու Ջերսիի Ատլանտիկ Սիթիի վայրերին, ուր զբոսնել էր Բորդոուորթով և այցելել էր զբոսայգին բազմաթիվ նախաձգնաժամային ուսումնական արձակուրդների ժամանակ»:

Այս նախադասությունը մի քիչ ավելի հասկանալի կլիներ, եթե «համադրեց» բառը լիներ «չհամադրեց», անգլերեն՝ didn't set:

Եթե բոնցքամարտի տերմիններով խոսենք, ապա խեղճ դիմորդը քննության հենց սկզբում ուժգին հարված է ստանում ծնոտին: Նա նոկդաունի մեջ է: Թեստ կազմողները հասան իրենց նպատակին: Նրանց համար կարևորը վերևից իջեցված պատվերն է՝ այս տարի ապահովել անգլերենի միասնական քննության միջինը 12-13 բալ: Կարևորը նպատակն է, միջոցների առջև կանգ չենք առնում: Այս պայմաններում նույնիսկ 17 բալը սակարկելի է դառնում: Կեցցեն «ճարպիկները»:

Ընդհանուր առմամբ ես դեմ եմ այս տիպի թեստերին: Դիմորդներից հիմնականում պահանջվում են ընկալողական (receptive) կարողություններ:

34. [Ավարտական քննությունը պետք է արտացոլի չափորոշային կարողությունները](#) (Դպիր 81)

«Ավագ դպրոցները և կրկնուսուցումը» կլոր սեղանի նյութերից

Անգլերենի իմացության միջազգային քննությունները՝ ամերիկյան TOEFL և անգլիական IELTS հանձնելու համար անհրաժեշտ են մոտավորապես այն կարողությունները, որոնք նշված են ՀՀ ԿԳ նախարարության կողմից ավագ դպրոցի համար հաստատված «օտար լեզուներ» ուսումնական բնագավառին վերաբերող չափորոշիչներին: Որոշ առումներով մեր չափորոշիչներում նույնիսկ ավելին է պահանջվում. օրինակ, «...սովորողների բանավոր և գրավոր խոսքի միջոցով Հայաստանը, նրա մշակութային արժեքները ներկայացնելը և ... թարգմանական գործընթացում ոճական և գեղագիտական որոշ հնարներ կիրառելու համար անհրաժեշտ գիտելիքների կարողությունների և հմտությունների ձևավորելը...»: Այս ամենը նման է մեր սահմանադրությանը, որն իր էությամբ չի զիջում աշխարհի ամենաժողովրդավարական պետությունների սահմանադրություններին: Իսկ ինչպե՞ս են այդ օրենքները կիրառվում իրական կյանքում: Սա արդեն բոլորովին այլ բան է:

Տարբեր ուսումնական աստիճանների համար հաստատված ուսումնական բնագավառների չափորոշիչներն էլ կրթական ասպարեզի մեր հիմնադրույթներն են, որոնք շատ լավ են գրված ու իրենց էությամբ չեն զիջում աշխարհի առաջավոր կրթական համակարգեր ունեցող երկրների ուսումնական բնագավառների հիմնադրույթներին ու չափորոշիչներին:

Իսկ ինչպե՞ս են մեր հանրապետության ավագ դպրոցների սովորողները ձեռք բերում այդ չափորոշիչներում նշված գիտելիքները կարողություններն ու հմտությունները: Աշխարհում ընդունված կարգ է, որ լեզվի քննությունը պետք է ներառի այն բոլոր կարողությունները, որոնք նշված են չափորոշիչներում: Եթե այդ կարողությունները ներառված չեն քննություններում, ապա այդ քննությունները թերի են՝ ոչ օրինական, ոչ հավաստի:

Եկեք տող առ տող ներկայացնենք և քննարկենք «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի համար հաստատված չափորոշիչները և ավագ դպրոցի անգլերենի ավարտական քննությունների պահանջները: Գաղտնիք չէ, որ հանրապետության պետական հանրակրթական ավագ դպրոցների սովորողների ուսումնառության երեք տարիների ամենօրյա աշխատանքն ուղղված է ավարտական և միասնական քննությունների շտեմարանային առաջադրանքների պահանջները կատարելուն, հիմնականում կրկնուսույցների հետ: Պարզվում է, որ ավարտական քննությունների պահանջները որևէ ձևով չեն համապատասխանում պետական չափորոշիչներին:

Պետական չափորոշիչ	Ավարտական քննությունների առաջադրանքներ
<p>Ավագ դպրոցի ծրագրի «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝</p> <p>1) սովորողների բանավոր և գրավոր խոսքի միջոցով Հայաստանը, նրա մշակութային արժեքները ներկայացնելուն.</p>	<p>Ավարտական քննությունների որևէ առաջադրանք չկա չափորոշիչների այս կետի վերաբերյալ:</p> <p>Ընդհանրապես՝ բանավոր և գրավոր խոսքի հաղորդակցական կարողության ստուգում չկա: Եթե ստուգում չկա, ապա օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը բոլոր դպրոցներում մնում է անհասանելի:</p> <p>Սովորողը կարող է օտար լեզվի ավարտական քննությունից 20 միավոր ստանալ՝ չունենալով խոսելու և գրելու նվազագույն կարողություններ:</p> <p>Կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրով 10 և 11-րդ դասարաններում շտեմարանային նպատակաուղղված ուսուցում չի իրականացվում, և այդ պատճառով էլ կարողանում ենք բավարար չափով իրականացնել պետական չափորոշիչների այս կետը՝ լայնորեն օգտագործելով համացանցի հնարավորությունները և կատարելով բազմաթիվ թարգմանություններ հայերենից անգլերեն, ռուսերեն, վրացերեն, ֆրանսերեն: Ամենակարևորն այն է, որ օտար</p>

	<p>լեզվով ներկայացվում է մեր կրթահամալիրային բազմազբաղ կյանքը:</p>
<p>2) օտարալեզու աղբյուրներից ինքնուրույն օգտվելու, ստացված տեղեկությունը բնութագրելու, վերլուծելու և ընդհանրացնելու, օտար լեզվով հաղորդակցության միջավայրում ինքնուրույն մտածողություն դրսևորելու, թարգմանական գործընթացում ոճական և գեղագիտական որոշ հնարներ կիրառելու համար անհրաժեշտ</p> <p>գիտելիքների կարողությունների և հմտությունների ձևավորմանը.</p>	<p>Ավարտական քննությունների առաջադրանքները կարող են միայն խիստ մասամբ բավարարել չափորոշիչի այս կետը՝ «<i>օտարալեզու աղբյուրներից ինքնուրույն օգտվելու</i>» առումով: Մնացած պահանջները, որոնք են՝ բնութագրելը, վերլուծելը և ինքնուրույն մտածողության դրսևորելը, լիովին անտեսված են: Սովորողից չի պահանջվում որևէ ինքնուրույն միտք, նախադասություն, բառակապակցություն և նույնիսկ բառ գրել կամ ասել: Սովորողը միայն պասիվ ընտրողի դերում է: Նա բերանը փակ հերթական խաչն է դնում բազմընտրական լուծում պահանջող առաջադրանքներում:</p> <p>Մեր 10-11-րդ դասարաններում ուսումնական նախագծեր են իրականացվում, որոնք հնարավոր չէ անել առանց պետական չափորոշիչների այս երկրորդ կետի բոլոր պահանջները բավարարելու:</p> <p>Օրինակներ՝ մեր սովորողների բլոգներից.</p> <p>Մկրտչյան Աննայի բլոգը Գասպարյան Անիի բլոգը:</p> <p>1998-ից մինչև 2010 թվականների միջև ընկած ժամանակահատվածում անգլերենի գրավոր քննությունները ներառում էին նաև թարգմանություններ հայերենից անգլերեն: Ներկայիս շտեմարաններում դրանք վերացած են և «թարգմանական գործընթացում ոճական և գեղագիտական որոշ հնարներ կիրառելու համար անհրաժեշտ կարողությունների» մասին նույնիսկ երազելը անհույս կարող է լինել:</p> <p>Մեր ծրագրով բավարար ուշադրություն է դարձվում թարգմանական կարողություններին: Դրա վառ ապացույցն են «Լուսաստղը», mskh.am-ի անգլերեն էջը:</p>
<p>3) սովորողների կողմից օտար լեզուների կարևորության և</p>	<p>Շտեմարանային ուսուցմամբ օտար լեզուների իմացության անհրաժեշտությունը գիտակցվում է միայն պետական</p>

<p>դրանց իմացությունը հարստացնելու</p> <p>անհրաժեշտության գիտակցմանը, տվյալ օտար լեզուն կրող ժողովրդի արժեքների և ավանդույթների գնահատմանը:</p>	<p>ավարտական և միասնական քննությանը պատրաստ լինելու հանգամանքով:</p> <p>Հեղինակային կրթական ծրագրի տարբեր առարկաների դասավանդողներ նախագծեր իրականացնելու համար սովորողներին հանձնարարություններ են տալիս տվյալ թեմայի վերաբերյալ օտար լեզուներով տեղեկատվություն որոնել համացանցում և թարգմանել դրանք հայերեն, որն օգնում է նախագիծն ավելի բովանդակալից դարձնելու համար: Աշխատանքներ են տարվում օտար լեզուները որպես գործիք օգտագործելու համար:</p> <p>Օրինակները կարելի է գտնել «Լուսաստղ»-ում:</p>
---	---

Եզրակացություն

Անգլերենի պետական ավարտական և միասնական քննությունների պահանջները բոլորովին չեն համապատասխանում «Օտար լեզու» ուսումնական բնագավառի համար հաստատված պետական չափորոշիչների պահանջներին: Օտար լեզվի իմացության հինգ բաղադրիչները՝ լսելով հասկանալը, խոսելը, ընթերցելով հասկանալը, գրելը և թարգմանելը ծայրահեղ նեղացվել է՝ սահմանափակվելով միայն «ընթերցելով հասկանալու» կարողությամբ: Չափորոշիչներով սահմանված բարձր նպատակն իջեցվել է ծնկից էլ ցածր: Սովորողն իր ուսումնառության հատկապես վերջին տարվա ընթացքում վերածվում է բազմընտրական առաջադրանքների լուծումների տարբերակների փակ բերանով պասսիվ ընտրողի: Այս պայմաններում նույնիսկ կրկնուսույցների դերն է ավելորդ դառնում. բոլոր առաջադրանքների պատասխանները տրված են, հարկ չկա խոսելու, միտք շարադրելու, ունկնդրելու, թարգմանելու: Կարդա, մտածիր կամ չէ, ընտրիր ու քո հերթական խաչը դիր:

35. Անցյալի իներցիան հաղթահարելու համար հնարամտություն է պետք, այլ ոչ թե ուժ (Դպիր 47)

Մեր հանրակրթությունն ամուր կառչել է անցյալից եկող ու իներցիայով շարժվող անշոգեքարշ գնացքի վերջին վագոնից ու չի էլ տեսնում, որ դիմացն անխուսափելի վերելք է, և գնացքը շուտով մի պահ կանգնելու է, ու սկսվելու է հետընթաց անկառավարելի շարժումը: Այդպես է, որովհետև հանրակրթության հետ վարվում են այնպես, ինչպես քաղաքային տրանսպորտի հետ: Մեր քաղաքային տրանսպորտը ոչ այնքան կոչված է լուծելու ուղևորափոխադրումների խնդիրը, որքան երթուղայինների գծատերերին եկամուտ ապահովելու գերխնդիրը:

Մեր հանրապետության ավագ դպրոցների տնօրենների ու դասավանդողների գերխնդիրը ոչ այնքան առարկայական նոր գիտելիքներ հաղորդելն ու կարողությունների ձևավորելն է, որքան կրկնուսույցների սեփական ներուժով հնարավորին չափ շատ սովորողներ ներգրավելը կրկնուսուցման գործառույթում: Նախարարության գերխնդիրն էլ, ինչպես իրենք են ձևակերպել, կրկնուսույցի գործառույթի վերացումն է՝ շնորհիվ բուհերի ընդունելության քննությունների պարզունականացման: Եթե խորը մտածենք, ապա նախարարության մտուցումն ավելի անընդունելի է, քանի որ այն հակակրթական է և միտված է միայն ու միայն զրկելու կրկնուսույցներին իրենց եկամուտներից: Արդյունքում՝ բուհերում կլինեն տարրական մաթեմատիկան չյուրացրած, բայց արդեն բարձրագույն մաթեմատիկա «սովորող» ուսանողներ, համալսարանի թարգմանչական ֆակուլտետում օտար լեզվի իմացության A1 մակարդակի առաջին կուրսեցիներ:

Իսկ ո՞րն է ճիշտ ուղղությունը: Ինչպե՞ս անել, որ և՛ ավագ դպրոցը արժանի լինի իր կոչմանը, և՛ ավագ դպրոցի բարձրակարգ դասավանդողը արժանապատիվ կյանքով ապրի, և՛ բուհերը ունենան արժանի ուսանողներ: Մի՞ թե անլուծելի խնդիր է սա: Այս խնդիրը անլուծելի է կմնա, քանի դեռ ոչ մի կողմը փոխզիջում չի ընդունում, քանի դեռ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի՝ հանրապետությունում միակ փորձարարական ուսումնական հաստատության, հեղինակային մանկավարժական ծրագրերի հոկտեմբերյան բաց հավաքն ընթանում է առանց ՀՀ ԿԳ նախարարության և հանրապետության ավագ դպրոցների ներկայացուցիչների ներկայության:

Հավաքի ամենակարևոր ծրագրերից մեկն էլ վերնագրված էր այսպես՝ «Կրթության կազմակերպումը ավագ դպրոցի ավարտական դասարանում»: Զարմանալի է, որ այս հարցը չհետաքրքրեց ոչ մի ավագ դպրոցի, կրթության ոչ մի բարձրաստիճան կազմակերպչի: Կարելի է կարծել, որ բոլոր ավագ դպրոցներն արդեն լուծել են այս հարցը և շատ գոհ են իրենց վիճակից: Մթափվել՝ ք, նախարարությունն այն վերելքի դերն է կատարելու, որը ստիպելու է ձեր անշոգեքարշ գնացքին մի պահ կանգ առնել ու հետո հետ գահավիժել:

36. [Զգու՛յշ, Գնահատման և թեստավորման կենտրոնն է առաջարկում \(Դպիր 55\)](#)

Մի քանի օր առաջ մեր կրթահամալիրը նամակ ստացավ ԳԹԿ-ից, որում առաջարկվում էր գնել Լուսինե Աթոյանի գիրքը՝ «Անգլերեն պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի ժողովածու», Երևան «Կռունկ տպագրատուն», 2012: Գրքի շապիկի վրա գրված է, որ Լուսինե Աթոյանը Գնահատման և թեստավորման կենտրոնի առաջատար մասնագետ է: Ես առաջարկեցի իմ աշակերտներին գնել այդ գիրքը, քանի որ դա կողմնորոշիչ դեր էր ունենալու այս տարվա ընդունելության քննությունների լեզվական մակարդակը որոշելու համար: Գնեցինք և հիասթափվեցինք:

Երբ առաջին սխալը նկատեցի, համարեցի, որ դա վրիպակ է. ո՞ւմ հետ չի պատահում: Բայց գալիս է մի պահ, երբ քանակը որակ է կազմում, և արդեն յուրաքանչյուր սխալ աններելի է դառնում: Ավելի լավ է՝ իմ ասածները հիմնավորեմ օրինակներով:

Բացում ենք գրքի 96-րդ էջը, որտեղ սկսվում է 6-րդ թեստը:

Կարդում ենք «Ա» մակարդակի առաջին տեքստի առաջին հարցը, որի միակ ճիշտ պատասխանը կարող է համարվել “a” տարբերակը, որը նույնպես սխալ է, քանի որ տեքստում խոսվում է նաև Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների մասին, որոնք Լոնդոնում չեն:

98-րդ էջի 11-րդ հարցի բաց թողնված մասից հետո կարդում ենք՝ ...to tell time... Բոլոր քերականական գրքերում գրված է, որ “the” հոդի գործածության կայուն կապակցություններից է “to tell the time”-ը: Ինչո՞ւ պետք է սովորողը տեսնի առանց հոդի սխալ ձևը: “To tell the time” ձևը ոչ մի բացառություն չունի:

14-րդ հարցի ճիշտ պատասխանը պետք է լինի “Simple Past” բայական ժամանակաձևով, որը ոչ մի տարբերակում չի նշված: When three parts of the candle burned down, an hour had passed by. Իսկ գրքի հեղինակները պահանջում են, որ լինի “When three parts of the candle had burned down, an hour had passed by”, ինչը կոպիտ քերականական սխալ է:

26-րդ հարցի մեջ անհրաժեշտ է “in” նախդիրի առկայությունը “here”-ից առաջ: Պետք է լինի “It’s dark in here”, քանի որ դրան հաջորդող նախադասությունից պարզ է դառնում, որ նրանք սենյակի մեջ են: Այդ դեպքում “in” նախդիրը գործածվում է:

V առաջադրանքի տեքստի մեջ կանոնավոր բայը կրավորական սեռով գործածված է առանց “ed” վերջավորության է: “Nothing can be exempt, neither a stone thrown into the air nor an exploding star.” “Exempt” բառը հազվադեպ հանդիպողներից է: Լավ սովորողը անպայման այն կնայի բառարանում, և եթե բառարանում նշված չլինի, որ այն կանոնավոր բայ է, ապա կմտածի, որ դա անկանոն բայ է, քանի որ չունի “ed” վերջավորությունը:

V առաջադրանքի երկրորդ կոպիտ սխալը “need” բայի գործածումն է հաստատական նախադասության մեջ որպես մոդալ բայ, որին հետևում է բայը առանց “to” մասնիկի: Դա նույնպես քերականական կոպիտ սխալ է: Կասկածողները կարող են կարդալ Michael Swan “Practical English Usage”, կետ 399:

VI առաջադրանքի վերևից երրորդ տողում գրված է. “...even the best skateboards fall sometimes.” Պետք է լինի “... even the best skateboarders fall sometimes.” Չէ՞ որ այդ “er”-ը առարկան դարձնում է գործողություն կատարողը: Ինչու՞ ենք անհարկի շփոթեցնում քննություն սվողին:

44-րդ հարցի միակ ճիշտ պատասխան համարվող “a” տարբերակը նույնպես սխալ է: “Could” բառը հարցական նախադասություններում շատ հաճախ գործածվում է հարցին ավելի նուրբ ու քաղաքավարի երանգ տալու համար: Այդ դեպքերում նախադասությունը ձևով

հարցական է, բայց իմաստով խնդրանք է արտահայտում: Այդ պատճառով էլ ճիշտ պատասխանը պետք է լիներ. “He asked me to speak more slowly”:

48-րդ հարցում գրված է. ...because I’ve met her an hour before. Պետք է լինի. ...because I met her an hour ago. Չի կարելի գործածել գործածել “Present Perfect” բայական ժամանակաձևը, երբ նշվում է գործողության կատարման փաստացի ժամանակը:

58-րդ հարցի պատասխանների բոլոր տարբերակները վերաբերում են 6-րդ պարբերության 27-32 տողերին, այլ ոչ թե 3-րդ պարբերության 12-19 տողերին: Ինչու՞ եք շփոթեցնում քննություն սվողներին:

77-րդ հարցում տրված նախադասության մեջ պակասում է շաղկապը: Կա՞մ պետք է շաղկապ դնել, կա՞մ վերջակետ՝ առաջին մասից հետո: Ինչու՞ եք շփոթեցնում քննություն սվողներին:

78-րդ հարցի նախադասության մեջ պակասում է մի “no”: Այս նախադասությունը ուզում եմ հայերեն թարգմանել, որպեսզի ավելի պարզ լինի:

«Մեզ համար հիմա դժվար է պատկերացնել, որ երբ մեր տատիկը փոքր աղջիկ էր, կային էլեկտրական լամպեր»: Այս նախադասության մեջ «չ» ժխտական մասնիկը «կային» բառի առջևում ուղղակի անհրաժեշտություն է:

Այս բոլոր սխալները հայտնաբերեցի պատահականորեն ընտրված մեկ թեստի մեջ: Իսկ մնացած 9 թեստերո՞ւմ: Ավելի լավ է չկարդամ:

“To be or not to be?” շեքսպիրյան հավերժական հարցն ինձ ստիպեց անտարբեր չլինել և գրել այս նյութը՝ ի պաշտպանություն ավագ դպրոցների սովորողների և դասավանդողների:

2010թ հունիսին Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում մասնակցում էի Ժամանակակից եվրոպական լեզուների կենտրոնի փորձագետ Ջոզե Նոյջոնսի սեմինարին, որը անգլերենի տարբեր գրավոր քննություններին ներկայացվող պահանջների մասին էր: Իմ այն հարցին, թե քանի մարդ է մասնակցում “IELTS”-ի մի թեստը կազմելու աշխատանքին, նա պատասխանեց. «Սովորաբար Քեմբրիջի համալսարանի փորձագետների խումբն է աշխատում մի քանի ամիս»: Այդ սեմինարի ժամանակ ես առաջարկեցի 2010թ պետական ավարտական և միասնական քննությունների անգլերենի հայաստանյան մի թեստ քննարկել և պարզել, թե արդյոք այն բավարարում է գրավոր քննության եվրոպական պահանջներին: Անգլերենի թեստերի փորձագետ դոկտոր Ջոզե Նոյջոնսի տրամադրությունն ու ոգևորությունը մի քանի թույլով ընկավ, որովհետև մի հարցի ճիշտ պատասխանը նա ինքն էլ չկարողացավ գտնել. ոչ մի ճիշտ տարբերակ չկար:

Երբ ուզում եմ հայերին բնորոշ անպատասխանատվությունից խուսել, անմիջապես հեռահար ամաչում եմ “Նոր բառգիրք հայկազեան լեզուի” բառարանի ստեղծողներից, Հրաչյա Աճառյանից, Մանուկ Աբեղյանից, Հովհաննես Մասեհյանից, Պարույր Սևակից, Ռուբեն Զարյանից, Վահրամ Փափազյանից, Խաչիկ Դաշտենցից ու Գևորգ Աբաջյանից: Ամեն

անգամ մի որևէ գիրք հրատարակելիս պետք է հիշել այս մարկանց անունները և լցվել մեծագույն պատասխանատվությամբ:

37. Գնահատել թե՛ ... (Դպիր 99)

Երբ գնահատվում է երկրի հանրակրթությունը

Ժամանակակից աշխարհում որևէ երկրի հանրակրթության կազմակերպման մակարդակի մասին պատկերացում են կազմում միջազգային PISA քննություններից այդ երկրում ցույց տրված արդյունքներով: Յուրաքանչյուր երեք տարին մեկ աշխարհի մոտ 70 երկրներում միլիոնավոր 15 տարեկան դպրոցականներ մասնակցում են PISA-ի երեք հիմնական քննություններին՝ «մաթեմատիկա», «բնագիտություն» և «ընթերցանություն» ուղղություններով: Կամավորության սկզբունքով կազմակերպվում են նաև հավելյալ քննություններ՝ «Թիմային աշխատանքով որևէ խնդրի լուծում» և «Ֆինանսական գրագիտություն» ուղղություններով: Այս միջազգային քննությունները կազմակերպում է OECD «Organization for Economic Co-Operation and Development – Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն» միջազգային կազմակերպությունը, որի կենտրոնը ԱՄՆ-ում է: Այս միջազգային կազմակերպության նպատակը հանրակրթության զարգացման տեմպերը տնտեսության զարգացմանը համահունչ դարձնելն է:

Հայաստանի Հանրապետության ԿԳ նախարարությունը հանրապետության դպրոցներում իրականացվող հանրակրթության մակարդակները որոշելու համար վարկանիշային սանդղակներ է սահմանել, որոնք ճիշտ չեն բնորոշում դպրոցներում իրականացվող հանրակրթական գործընթացը: Օրինակ, տվյալ դպրոցի շրջանավարտների կրթության շարունակումը համալսարաններում, սովորողների հաջողությունները տարածքային, հանրապետական և միջազգային օլիմպիադաներում: Մի որևէ երկրի տնտեսության զարգացման համար շատ ավելի կարևոր է այդ ամբողջ երկրի հանրակրթության բարձր մակարդակը, քան ունենալ միջազգային օլիմպիադաների ոսկե կամ արծաթե մեդալակիրներ: Միջազգային օլիմպիադաներում հաջողություններն ապահովում են մի քանի սովորողներ իրենց ուսուցիչներով, ովքեր վառ անհատականություններ են, մինչդեռ՝ PISA-ի քննություններում հաջողություններ ունենալը ապահովում են տվյալ երկրի հազարավոր 15 տարեկաններ իրենց հարյուրավոր ուսուցիչներով: Այստեղ պարտվողներ չկան, հաղթողներ են բոլորը, ամբողջ երկրի հանրակրթությունը, մինչդեռ՝ միջազգային առարկայական օլիմպիադաներում հաղթողներն իրենց երկրում թողել են պարտված ու մի քիչ էլ հուսահատված աշակերտների և ուսուցիչների մի հզոր բանակ օլիմպիադաների անցկացման նախորդ 4 փուլերում՝ դպրոցական, համայնքային (տարածքային), մարզային և հանրապետական:

Երբ գնահատվում են օժտված սովորողների գիտելիքներն ու կարողությունները

Դպրոցական առարկայական օլիմպիադաները կարևոր դեր են խաղում, երբ նպատակը տվյալ երկրի օժտված սովորողներին հայտնաբերելն է: [ՀՀ ԿԳ նախարարի 2011թ](#)

[ապրիլի 5-ի N 280 հրամանով](#) հաստատված է Հայաստանի հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգը: Ըստ հրամանի օլիմպիադաները անցկացվում են հանրակրթական 16 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ինֆորմատիկա, աստղագիտություն, հայ առաքելական եկեղեցու պատմություն, ՆԶՊ) 4 փուլերով՝ ներդպրոցական, տարածքային (Երևան քաղաքում ըստ վարչական շրջանների), մարզային (Երևանում՝ քաղաքային), հանրապետական:

Դպրոցում ստեղծվում է առարկայական օլիմպիադայի կազմկոմիտե, որը սահմանում է հունվար-փետրվար ժամանակահատվածում օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացման ժամանակացույցը ըստ առարկաների: Դպրոցական փուլին մասնակցում է 5-12-րդ դասարանների ցանկացած սովորող, ով ցանկություն է հայտնում: Առարկայական հանձնաժողովներն էլ կազմում են առաջադրանքները: Դպրոցական փուլի արդյունքները հաշվի առնելով դպրոցի կազմկոմիտեն պարզևատրում է հաղթողներին և որոշում է կայացնում, թե որ սովորողներն են մասնակցելու տարածքային (համայնքային) փուլին, որին մասնակցում են 7-12-րդ դասարանների սովորողները:

Մոտավորապես նույն գործառույթներն են անում տարածքային կազմկոմիտեները և առարկայական հանձնաժողովները, ովքեր որոշում են կայացնում, թե որ սովորողներն են մասնակցելու մարզային (մեր դեպքում Երևան քաղաքի) փուլին: Երրորդ փուլին մասնակցում են տվյալ մարզի տարածքային կազմկոմիտեների կողմից երաշխավորված սովորողները. հայոց եկեղեցու պատմությունից՝ 8-12-րդ դասարանների սովորողները, մյուս առարկաներից՝ 9-12-րդ դասարանների սովորողները: Կազմակերպչական սխալներով անվստահելի ու անհամոզիչ որոշումներ են կայացվում հենց այս փուլում:

Կազմակերպչական սխալ: Հանրապետական դպրոցական օլիմպիադաների անցկացման կարգի մեջ գրված չէ, որ «Քվանտ» վարժարանը, «Անանիա Շիրակացի» ճեմարանը և Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցը ազատված են տարածքային փուլից, բայց փաստացի նրանք ազատված են և միանգամից մասնակցում են մարզային փուլին:

Տարածքային կազմկոմիտեների որոշումները անհամոզիչ և անվստահելի են: Տարածքային կազմկոմիտեները իրենց որոշումները կայացնում են՝ հաշվի առնելով միայն օլիմպիադայի մասնակիցների ստացած միավորները: Օրինակ, շատ է պատահել, որ մեր կրթահամալիրի սովորողները անգլերենից 1-3-րդ տեղերն են զբաղեցրել Մալաթիա-Մեքաստիա համայնքում, բայց նրանց մարզային փուլի մասնակցության մասին որոշում չի կայացվել, որովհետև նրանց միավորները եղել են ավելի ցածր, քան այլ համայնքների հաղթողներինը: Արդյո՞ք հանրապետության բոլոր համայնքների առարկայական հանձնաժողովները նույն անաչառությունն ունեն և նույնքան անկողմնակալ են:

Առաջարկություն:

1. Արդար կլինի, եթե համայնքային (տարածքային) փուլի բոլոր տարածքների հաղթողները՝ անկախ իրենց հավաքած միավորներից, իրավունք ունենան մասնակցելու մարզային փուլին:
2. Եթե առաջին առաջարկությունը անհնար լինի իրականացնել, ապա իմ կարծիքով մեր կրթահամալիրն էլ պետք է միանգամից մասնակցի մարզային փուլին՝ շրջանցելով տարածքային փուլը:
3. Եթե առաջին երկու առաջարկությունները չիրականանան, ապա պետք է միայն չխանգարել այն անհատ սովորողներին, ովքեր կուզենան նկարագրված պայմաններում մասնակցել օլիմպիադաների տարածքային փուլին:

Միջազգային առարկայական օլիմպիադաներին մասնակցող թիմերի

ձևավորումը: Հանրապետական օլիմպիադաների արդյունքները ամփոփելուց հետո հանրապետական առարկայական հանձնաժողովների առաջարկությամբ կազմվում է յուրաքանչյուր առարկայի հավաքական թիմի անդամների թեկնածուների ցուցակը՝ համաձայն սահմանված ընթացակարգի: [2015-ին Հայաստանը քավակյանին հաջող է մասնակցել միջազգային օլիմպիադաներին:](#)

Այս ամենով հանդերձ՝ դպրոցական առարկայական օլիմպիադաներն ունեն մի մեծ

թերություն: Նրանք որևէ կերպ չեն նպաստում հանրակրթության զարգացմանը: Դրանց նպատակն է հազարավոր սովորողների միջոց հայտնաբերել մի քանի օժտված սովորողների: Դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպման սկզբունքներից առանձնանում է մեկը, որն իմ կարծիքով չի իրականացվում: Այդ սկզբունքն է՝ «Օլիմպիադաներում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը» □

Դպրոցական առարկայական օլիմպիադաների առաջադրանքներն այնպիսին են, որ որևէ կերպ չեն խթանում սովորողների ստեղծագործական աշխատանքը, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը: Հանրապետական առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման թերությունների մասին ես ժամանակին արել եմ իմ [դիտարկումները](#):

Բովանդակային առումով նույնպես մեր հանրապետությունում անցկացվող օլիմպիադաները չեն նպաստում կարողությունների առաջընթացին:

Ստեղծագործական բնույթի օլիմպիադաներ

Համացանցում հնարավոր չէ գտնել դպրոցականների ստեղծագործական բնույթի օլիմպիադաներ: Երկար որոնումներից հետո կարողացա գտնել

միայն [արվեստին վերաբերող ստեղծագործական օլիմպիադա, որն անցկացվում է ԱՄՆ-ում:](#)

2011-ի գարնանը «Միխիթար Սեբաստացի» կրթահամալիրում առաջին անգամ տարբեր առարկաներից ստեղծագործական ոգով [բաց օլիմպիադա](#) անցկացվեց, որը մեծ ոգևորություն առաջացրեց և՛ սովորողների, և՛ դասավանդողների մոտ: Կանխամտածված էր, որ մեր բաց օլիմպիադաները միջազգային էին լինելու և այդ պատճառով էլ տարբեր առարկաների առաջադրանքները թարգմանվում էին անգլերեն ռուսերեն, իտալերեն, ֆրանսերեն: Հատկապես ուշագրավ էին փորձերի վրա հիմնված բնագիտական առարկաների առաջադրանքները: Ստեղծագործական երևակայություն էին պահանջում անգլերենի առաջադրանքների կատարումը: Մեր ստեղծագործական օլիմպիադաները նույնպես կարճ կյանք ունեցան՝ երկու տարի: Ստեղծագործական բնույթի օլիմպիադաների ոգևորությունը մարեց, երբ բոլորը թե՛ դասավանդող, և թե՛ սովորող, դարձան օլիմպիադաների առաջադրանքների կազմողներ: Ոգևորությունը հատկապես մարեց ամռանը, երբ ամառային արձակուրդներին առարկայական առաջադրանքները փոխարինվեցին արձակուրդային, լողափային բնույթի առաջադրանքներով:

Առարկայական ֆլեշմոբներ

Ֆլեշմոբը հանպատրաստից հանրային կատարում-ներկայացում է, որը հայտնվում է հանկարծակի, չսպասված՝ մեկ մարդու նախաձեռնությամբ, այդ պահին իր տրամադրության և երևույթների համընկումով ու հոգեկան մեծ վերելքի առկայությամբ նա սկսում է պարել: Այդ ոգևորությունը, տրամադրությունը փոխանցվում է ներկա գտնվող մեկ այլ մարդու, երրորդին, չորրորդին: Որոշ ժամանակ հետո արդեն պարում են հարյուրից ավելի մարդիկ: Մարդիկ հրճվում ու զարմանում են, որ այդ պահին պարում են:

Կրթահամալիրի մանկավարժական լաբորատորիայի ղեկավար Գևորգ Հակոբյանի նախաձեռնությամբ ֆլեշմոբի այս ոգին հետևողականորեն բերվում է մաթեմատիկական մտածողության թվերի աշխարհ. հետաքրքիր է հնչում՝ մաթեմատիկական ֆլեշմոբ: Ես կարդացել եմ 4-5 –րդ դասարանների համար նախատեսված առաջադրանքները: Հետաքրքիր, զվարթացնող խնդիրներ են, որոնք երբեմն էլ կարող են ծնողներին ու ընտանիքի այլ անդամներին էլ մարտահրավերներ նետել: Աշխատում ենք առցանց: Ժամանակը սկսում է աշխատել: Թվում է՝ հեշտ է, բայց կարող ես լուծել... դե՛, միացիր: Այս ոգին կարող է աշխատել նաև այլ ուսումնական առարկաների համար: Կարևորը ֆլեշմոբի ոգուն հարազատ առաջադրանքներ կազմելն է:

Աղբյուր՝

- [Հայաստանի դպրոցական առարկայական օլիմպիադաներ](#)
- [Հայաստանի մասնակցությունը միջազգային օլիմպիադաներին](#)
- [Ստեղծագործական օլիմպիադաներ](#)

V. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին՝ սիրով

38. Ավարտվեց մեր մայիսյան հավաքը (Դպիր 42)

Հավաքի պատասխանատուի ամփոփիչ խոսքը



Երբ Վանաձորցի Անուշ Թորոսյանի հետ Միջին և Նոր դպրոցները այցելելուց հետո գնում էինք Գեղարվեստի դպրոց, նա մանկական անկեղծությամբ ու ամենալավ իմաստով լռեցու պարզությամբ մի հասարակ, բայց պատասխանելու համար շատ բարդ հարց տվեց. «Երանի ես այս թաղամասի երեխա լինեի ու սովորեի ձեր դպրոցում: Այդ ինչպե՞ս է գոյատևում ձեր դիմացի դպրոցը: Ինչո՞ւ են մարդիկ, ձեր

հրաշքը թողած, իրենց երեխաներին սովորական դպրոց ուղարկում»: Այդ ժամանակ ես չկարողացա սպառիչ պատասխան տալ ու միայն ասացի, որ շատերը դեռ չեն հասկանում մեզ: Եվ հիմա, երբ նստած եմ համացանցին միացած համակարգիչի առջև, մի ավելի դժվար հարց տվեցի ինքս ինձ. «Իսկ միգուցե մե՞նք ենք սխալ»: Իմ այս սադրիչ հարցին պատասխանելու համար դիմեցի այն մարդկանց օգնությանը, որոնք դարեր շարունակ եղել են մարդկային մտքի անվիճելի հեղինակություններ՝ անկախ իրենց ազգային պատկանելությունից ու դավանանքից: <http://www.inspirational-quotes.info/success-quotes.html> հասցեում գտա Արիստոտելի, Ցիցերոնի, Անատոլ Ֆրանսի, Ալբերտ Էյնշտեյնի և այլ երախտավորների կրթության, ուսուցիչների, ինքնակրթության, իմացումի հրճվանքի, ընթերցանության, սովորել սովորեցնելու, գործունեությամբ կրթելու վերաբերյալ այնպիսի հարազատ մտքեր, որ ամեն ինչ իր տեղն ընկավ: Այդ ասույթները խմբավորեցի, թարգմանեցի, ու ահա, թե ինչ ստացվեց:

Հավաքի ամփոփիչ նիստի վերջում տիար Բլեյանն ասաց, որ պետք չէ քննադատել նախարարությանը՝ մեր հավաքին մեծ ուշադրություն չդարձնելու համար, և որ քննադատելը ամենահեշտ ու անպտուղ ճանապարհն է մեր գործում: Եվ պետք էլ չէ փորձել վերափոխել ուրիշներին, եթե նրանք դա չեն ուզում: Նա խորհուրդ տվեց մեզ ավելի շատ նվիրվել գործին: Այս մտքի ճշմարիտ լինելը վաղուց հավաստել է անգլիացի գրող **Բենջամեն Ռոբերտ Հայդոնը**. «*Ուրիշներին բարեփոխելու փոխարեն ինքնակատարելագործվելու սկզբունքն ամենաապահովն է կյանքում*»: “The safest principle through life, instead of reforming others, is to set about perfecting yourself.” B. R. Haydon

«Մերը գործունեության դպրոցն է», - հաճախ է կրկնում Աշոտ Բլեյանը: Մեր կրտսեր ու միջին դպրոցները իրոք որ գործունեության դպրոցներ են: Կենսաբանության խրթին դասագրքերի խրթին դասերի խրթին տերմինները սերտելու փոխարեն մեր սովորողներն իրենց դասավանդողների հետ ջերմոց են ստեղծել մայր դպրոցի տանիքին ու սերմեր ցանելով, ջրելով ու խնամելով, առաջին ծիլերով ուրախանալով են սովորում այդ առարկան: Հին չինական ասույթն ասում է. «*Ես լսում եմ ու մոռանում եմ: Ես տեսնում եմ ու հիշում եմ: Ես անում եմ ու հասկանում եմ*»: “I hear and I forget. I see and I remember. I do and I understand.”
Նման միտք արտահայտելու հավակնություն ունեն նաև բնիկ ամերիկացիները (աղբյուրում

չի նշվում, թե հնդկացիական որ ցեղն է դրա հեղինակը). *«Ասա ինձ և ես կմոռանամ: Ցույց տուր ինձ և ես կարող է չհիշեմ: Ներգրավիր ինձ և ես կհասկանամ»*: Tell me and I'll forget. Show me, and I may not remember. Involve me, and I'll understand. Native American Saying

Հին հույն բանաստեղծ Պինդարոսը (518թ) ասել է. *«Բնական կարողությունը ամենալավն է, բայց շատ մարդիկ են հասել մեծ ճանաչման՝ ունակություններ ձեռք բերելով, որն ուսուցման ցանկալի պտուղն է»*: “Natural ability is by far the best, but many men have succeeded in winning high renown by skill that is the fruit of teaching.” Pindar

Ես հիշում եմ, որ դեռ շատ վաղուց մեր կրթահամալիրի կրտսեր դպրոցի այցեքարտն էր «Իմացումի հրճվանք» բառակապակցությունը: Մեր կրտսեր դպրոցում փոքրիկ սովորողի ձեռքերը չեն դողում վախից, երբ նա գրում է: Գրելու ժամանակ այստեղ կարևորվում է ոչ թե ինչպեսը, այլ՝ ինչը: Դասավանդողն անկեղծորեն ուրախանում է, երբ տեսնում է փոքրիկի գրած առաջին, թեկուզև, ծուռուժուռ բառը: Այդ ուրախությունը երեխային է փոխանցվում, ու նա հրճվանքի պահեր է ապրում: Ուրախության ու հրճվանքի պահերով է լցվում դասը, երեխայի ենթագիտակցության մեջ ուսումը կապակցվում է ուրախության հետ, և նա սկսում է սիրել դասն ու իր ուսուցչին: Անգլիացի քաղաքական գործիչ, հնէաբանություն գիտության հիմնադիր Ջոն Լուբոկը նշել է. *«Ամենակարևոր բանը ոչ այնքան այն է, թե ինչ և որքան սովորեցնել երեխային, այլ այն, որ ամեն երեխայի մեջ պետք է արթացնել սովորելու ցանկությունը»*: “The most important thing is not so much that every child should be taught, as that every child should be given the wish to learn.” John Lubbock

Այս առումով շատերը կարող են առարկել, որ իրենց դպրոցում էլ կան այնպիսի նվիրյալ դասվարներ, ովքեր երեխաների մեջ սեր են արթացնում ուսման նկատմամբ: Մի բան է առանձին նվիրյալների աշխատանքը, մեկ այլ բան՝ հենց այդ նպատակին ուղղված ծրագրային ուսուցումը մեր կրթահամալիրի չորս կրտսեր դպրոցներում: Ցանկացած պահի կարող էք բացել առաջինից վեցերորդ դասարանների ցանկացած դասասենյակի դուռ ու կտեսնեք իմացումի այդ հրճվանքը: Դասավանդողի անհատականությունն այստեղ շատ մեծ դեր չի խաղում: Գործում է հստակ մշակված մեխանիզմ: Հիմա արդեն տեղին է մեջբերել Անատոլ Ֆրանսի խոսքը. *«Կրթության ինը տասներորդը քաջալերանքն է»*: “Nine-tenths of education is encouragement.” Anatole France

Գրեթե ամեն օր ընդհանուր պարապմունքի ժամանակ Աշոտ Բլեյանը հիշեցնում է, որ մեր դպրոցը ստեղծողի դպրոցն է, որ մեր դպրոցը անգիրի դպրոցը չէ: Դրան նպաստում են նաև կրթահամալիրի www.mskh.am կայքն ու մասնաճյուղերի ենթակայքերը: Վաղ առավոտից մինչև ուշ երեկո բառիս բուն իմաստով ստեղծագործում են սովորողները: Գրում են իրենց խոհերը, լրատվություն են անում, վիճահարույց հարցեր են բարձրացնում, բանավիճում իրար հետ: Մեղիաօլիմպիադաներն էլ ստեղծագործական առաջադրանքներով են հազեցած, որոնք մեկ միանշանակ պատասխան չեն ակնկալում: Ըստ Ալբերտ Էյնշտեյնի՝ *«Ուսուցչի գերագույն արվեստը ստեղծագործող և գիտելիք ձեռք բերող երեխայի մեջ ուրախություն արթնացնելն է»*: “It is the supreme art of the teacher to awaken joy in creative expression and knowledge.” Albert Einstein

Այս տարվա անգլերենի գարնանային օլիմպիադայի առաջադրանքն այնպիսին էր, որ 90 սովորող, յուրաքանչյուրը մոտ 300 բառով ինքնուրույն մտքեր, շարադրություններ գրեցին:

Առաջադրանքների վերջում գրեթե բոլոր սովորողները նշել էին, որ հաճույքով են պատասխանել հարցերին:

Մեդիահանրակրթությունը իր «Կա մեդիա, կա կրթություն» որակումով դարձել է մեր կրթահամալիրի նշանաբանը: «**Կրթությունը քաղաքակրթության փոխանցումն է**», Ուիլ Դուրանտ. Education is the transmission of civilization. (Will Durant) Իսկ մեդիան այս գործը ամենալավը կարող է անել: Գերարագ զարգացող տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների 21-րդ դարում կրթությունը և կրթական համակարգը չեն կարող փակ լինել և սահմանափակվել միայն դասագրքերի կանոնները անգիր անելով: Այդ են վկայում մեր մայիսյան հավաքին ներկայացված մոտ 150 նյութերը: 20-րդ դարի մեծագույն բանաստեղծ Թոմաս Սթերնզ Էլիոտը գրել է. «**Փաստորեն կրթության խնդիրն է օգնել մեզ փախչելու ոչ մեր սեփական ժամանակից, քանի որ մենք զամված ենք դրան այլ մեր ժամանակի ինտելեկտուալ և հուզական սահմանափակումներից**»: It is in fact a part of the function of education to help us escape, not from our own time - for we are bound by that - but from the intellectual and emotional limitations of our time. (T.S. Eliot) Իսկ Ջոզեֆ Հոլը, որին կոչում են անգլիական Սենեկա, գրել է. «**Գիտելիքը ոչ թե պահելու, այլ բաժանելու համար է տրվել: Այս թանկարժեք գոհարի հմայքը կորչում է, երբ այն պահում են**»: “Seldom learning was any knowledge given to keep, but to impart; the grace of this rich jewel is lost in concealment.”(Bishop Joseph Hall)

Մեր կրթահամալիրի կայքն իր «Դպիր» մանկավարժական էլեկտրոնային պարբերականով բաց է բոլորի համար: Իսկ մեդիայի շնորհիվ բաց են ինքնակրթվելու բոլոր դռները մեր սովորողների և դասավանդողների համար: Համոզված եմ, որ բոլոր դպրոցներում էլ կան անընդհատ ինքնակրթվող մանկավարժներ, բայց մեր կրթահամալիրում դա հրամայական պահանջ է, որն ամրագրված է կրթահամալիրի ներքին կանոնակարգով, և գործում են վերահսկման վարչարարական ձևեր:

Վերջում ուզում եմ **Ալբերտ Էյնշտեյնի** խոսքն ուղղել մանկավարժության մեջ մեծ հաջողությունների՝ այսինքն գիտությունների դոկտորի աստիճանի հասած հաջողակների, որոնք երբևէ չեն զբաղվել իրական մանկավարժությամբ. «**Ձգտիր լինել ոչ թե հաջողակ, այլ արժեք ներկայացնող մարդ**»: “Try not to become a man of success but a man of value.” (Albert Einstein)

Արժեք է ներկայացնում այն մարդը, ով արժեք է ստեղծում: Մի ամբողջական արժեք է «Մխիթար Մեբաստացի» կրթահամալիրը, քանի որ նա գետի մեջ պատահաբար ընկած ու հոսանքին համընթաց լողացող մի անշունչ գերան չէ: Նա իր սովորողներով ու ամբողջ անձնակազմով իր նավակը թիավարում է հոսանքին հակառակ ուղղությամբ՝ դեպի վեր:

39. [Մեր առաջնեկը՝ մեր զարնանայինը](#) (Դպիր 39)

Ավարտվեց մեր գարնանային օլիմպիադան:

Ի՞նչն էր մեր գարնանային բաց օլիմպիադայի ծննդյան ամենակարևոր ազդակը: Ինչու՞ մեզ նորից ու նորից չգոհացրին համայնքային ու հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջադրանքները: Արդյո՞ք բոլորից տարբերվելու ու միայն թե մի նոր այլընտրանքային բան անելու ձգտումն էր դա: Ոչ՛, հազար անգամ ո՛չ: Եթե բացենք մեր հանրապետության Կրթակարգը ու վերընթերցենք այն, ապա վստահությամբ կարելի է ասել, որ այն, ինչը գրված է այնտեղ, իրապես հուզում է ու գործնականորեն վերաբերում է միայն մեր կրթահամալիրին: Օրինակ՝ Կրթակարգում պարզ գրված է, որ տարրական, միջին և ավագ դպրոցներում պետք է զարգացնել օտար լեզվով հաղորդակցվելու կարողությունները, և սակայն կրկին ու կրկին մեր համայնքային ու հանրապետական օլիմպիադաների առաջադրանքները անհետաքրքիր, ամեն տեսակ ստեղծագործական տարր բացառող, որոշակի գիտելիքներ ստուգող, աշակերտների հնարավոր սխալները բռնացնող խորամանկ հարցաշարեր են: Այս մասին ես ավելի հանգամանորեն խոսել եմ իմ [«Խորհրդածություններ անգլերենի հանրապետական օլիմպիադայի համայնքային փուլից հետո»](#) հոդվածում («Դպիր», 38):

Թվում է, որ հանրապետական օլիմպիադայի առաջադրանքները կազմողների գերագույն նպատակը հազարավոր լավ սովորող աշակերտներին համոզելն է, որ իրենք այնքան էլ լավ չեն սովորում, որ իրենք չգիտեն այս ու այն: Ենթադրենք ապացուցեցիք և համոզեցիք. հետո՞ : Ենթադրենք, որ գտաք մեր հանրապետության այն միակ աշակերտին՝ առաջին մրցանակակիրին, ով գիտի թե՛ այսը և թե՛ այնը, և սա այն դեպքում, որ խիստ կասկածելի է դպրոցի ավանդը այդ միակ աշակերտի գիտելիքների հարցում: Մի՞թե սա էր մեր Հանրապետության Գիտության և Կրթության նախարարության հանրակրթության հիմնական նպատակը: Սարը մու՛կ ծնեց: Մի՞թե աշակերտների ստեղծագործական ունակությունների և կարողությունների զարգացման պահանջները պետք է լինեն միայն Կրթակարգի թղթերի վրա: Այնպիսի տպավորություն է, որ մեր կրթահամալիրը ոչ թե այլընտրանքային, այլ ամենախիսկական պետական հանրակրթություն իրականացնողն է: Այսպես ասելու իրավունքն ունենք, որովհետև մեր հանրակրթության պատմության մեջ աշակերտն առաջին անգամ է գիտակցում, որ օտար լեզու սովորում են հաղորդակցվելու համար և կարելի է նույնիսկ ստեղծագործական հաճույք ստանալ օլիմպիադային մասնակցելով, այլ ոչ թե հոգեպես ընկճվել ու վհատվել, որ ինչ-որ նախդիր կամ հոդ ու հոմանիշ սխալ է կիրառվել:

Օլիմպիադան կրթահամալիրն էր կազմակերպել, բայց այն բաց էր և առաջադրանքները պետք է կատարվեին էլեկտրոնային եղանակով: Այդ էր պատճառը, որ մեր օլիմպիադային կարողացան մասնակցել նաև աշակերտներ ոչ միայն մեր հանրապետության տարբեր մարզերից, այլև արտասահմանից: Օրինակ՝ մեր մրցանակակիրներից են նաև Դավիթ և Անի Մաթևոսյանները Բելյուրի Եդիշե Մանուկյանի անվան քոլեջից: Այո՞ մրցանակակիրներ և ոչ թե՛ մրցանակակիր: Մեր նպատակը չէ փնտրել և գտնել բացառիկ գիտելիքներով այն միակ աշակերտին: Իմ խորին համոզմամբ դա չէ հանրակրթության նպատակը: Եթե մեր գործողություններով չենք խթանում, որ նույնիսկ համեստ ընդունակություններով օժտված աշակերտները արժևորված զգան շնորհիվ իրենց ձգտումների, ստեղծագործական առաջին

քայլերի և ուսումնական տարբեր առարկաներին վերաբերող կարողությունների ձեռքբերման, ապա մենք դեռ չենք բարեփոխել մեր կրթական համակարգը և մանկավարժությունն ընդհանրապես:

Անգլերենի առաջադրանքները կազմված են երկու մասից: Առաջին մասն իրենից ներկայացնում է հարցազրույց աշակերտի հետ: Հարցազրույցի հարցերը համապատասխանում են VII-VIII, IX, X-XI դասարանների աշակերտների հետաքրքրություններին և այդ դասարանների առարկայական չափորոշիչներին: Առաջադրանքները այժմ էլ կարելի է կարդալ մեր կրթահամալիրի կայքում www.mskh.am: Երկրորդ մասով պահանջվում է, որ աշակերտը շարադրի իր մտքերը առաջարկվող թեմայով: Միևնույն հարցին բազմաթիվ աշակերտներ են պատասխանել, և բոլորի պատասխաններն էլ տարբեր են: Հետաքրքիր է, որ սովորական ստուգողականների ժամանակ աշակերտները ձգտում ու հաջողեցնում են իրարից արտագրել նույնիսկ խիստ ուսուցչի հսկողության ներքո, որովհետև այդ ստուգողականը նրանց համար միայն թվանշանի ձեռքբերում է՝ սին թվանշանի:

Դրան հակառակ մեր օլիմպիադան, պարզվում է, որ հոգևոր արժեք է, որը տարբեր է տարբեր աշակերտների մոտ: Օրինակ՝ մի սովորող հույսը դրել է անգլերենի իր եղած գիտելիքների վրա ու շարադրում է այդ պահին մտքին եկածը, իսկ մյուսը օրեր շարունակ քրքրում է տարբեր բառարաններ, որպեսզի որքան հնարավոր է հարուստ լինի իր շարադրանքը: Մի տղա իրական կյանքում իրեն հատուկ տղայական լակոնիկ ոճով կարճ պատասխաններ է տալիս հարցերին, իսկ անհա այս աղջնակն էլ պատեհ առիթ է ստացել այդքան շատ գեղարվեստական գրքեր կարդալուց հետո մի լավ փայլել իր պերճախոսությամբ: Մեկը պատկերել է հարցերի պատասխանները նկարներով ու երաժշտությամբ, իսկ մյուսը դրանց ավելացրել է նաև բավակաին հաջողված տեքստ, թեկուզև, քերականական սխալներով: Բայց պետք է խոստովանեմ, որ ես առաջին անգամ սիրել եմ հատկապես այդ քերականական սխալները, քանի որ դրանցով առկա աշխատանքներն ամենաարդարն են: Այսպիսով պետք է խոստովանեմ, որ աշակերտներն առաջին անգամ գնահատվել են նաև իրենց արդարության համար: Հավատացե՛ք, որ արդարները երեխաների մեջ ճնշող մեծամասնություն են կազմում:

40. [«Գնահատել նշանակում է ստեղծել»](#) (Դպիր 98)

2014-2015 ուսումնական տարին համերգային-երաժշտական էր:

2014-2015 ուսումնական տարին նախագծային ուսուցմամբ էր:

2014-2015 ուսումնական տարին նորարարական էր բոլոր ուղղություններով:

Իսկ միգուցե պարզապես ասել. «2014-2015 ուսումնական տարում շարունակեցինք ապրել ու հիմա էլ ապրում ենք մեր հեղինակային կրթական աշխատանքով»:

Փարիզի Գրանդ Օպերայի դահլիճը լեփլեցուն էր 1928 թվականի նոյեմբերի 22-ին: Այդ օրը Մորիս Ռավելի «Բոլերո» ստեղծագործության պրեմիերան էր, որը հանդիսատեսին գերեց, հիպնոսացրեց 15 րոպե անընդհատ կրկնվող միևնույն մեղեդու պարզությամբ ու անմիջականությամբ և միևնույն ժամանակ՝ 20-րդ դարում գիտության ու տեխնիկայի հարաձուլում ու ահագնացող թափի ազդարարմամբ: Վերջում, երբ բոլորն ուժգին ծափահարում էին ու «բրավո» բացականչում, մի կին շատ ավելի բարձր ու զիլ ձայնով բղավեց. «Նա խե՛նթ է, խե՛նթ է»: Այդ կանչին Մորիս Ռավելն արձագանքեց. «Որքա՛ն ճիշտ է նա հասկացել իմ երաժշտությունը»:

Որոշ երաժշտագետներ շտապեցին գրել, որ Մորիս Ռավելը երաժշտությամբ իր բողոքի ձայնն է բարձրացնում գործարաններում շարժափոկների (կոնվեյեր) ներդրման դեմ, երբ մարդը ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում շարժափոկի առջև կանգնած ստիպված է միևնույն պարզ գործողությունը կատարել, որը ոչ մի ստեղծականություն չի պահանջում և շատ ձանձրալի է, բայց աշխատանք է ու պետք է անել, քանի դեռ մի ավտոմատ սարք էլ իրեն չի փոխարինել: Պետք է ասել, որ Բոլերոյի այս մեկնաբանությունը շատ տրամաբանական է հնչում, բայց համոզիչ չէ հենց միայն այն պատճառով, որ ստեղծագործությունը մեկ տարվա ընթացքում գրավեց ամբողջ աշխարհի երաժշտասեր մարդկանց սրտերը և մինչև հիմա էլ շարունակում է իր հաղթարշավը: Ինչպե՞ս կարող է ձանձրությո՞ւր, տանջանքը, ատելությունը գրավել մարդկանց սրտերը: Հետագայում արդեն Մորիս Ռավելը խոստովանեց, որ այդ ստեղծագործությամբ պարզապես ցանկացել է իր սերն արտահայտել երաժշտական գործիքների և ամբողջ նվագախմբի նկատմամբ (պարզ մարդկային ցանկություն) և չի ակնկալել դրա տարածումը, ու որքան էլ որ չէր ցանկանա, Բոլերոն իր ամբողջ ստեղծագործական կյանքի այցեքարտը դարձավ: Պատճառը երաժշտական գործիքների, նվագախմբի յուրաքանչյուր երաժիշտի և միասին ամբողջ նվագախմբի ու ընդհանրապես՝ երաժշտության մոզական ազդեցության նկատմամբ սիրո արտահայտությունն էր: Նվագախմբում, ինչպես և կյանքում, յուրաքանչյուր մարդ իր տեղն է գտնում ու իր մասնակցությունն է ունենում սեփական ներուժի սահմաններում: Նույնն է նաև մեր կրթահամալիրում:

Բոլերոն և մեր կրթահամալիրը

Առաջարկում եմ սկզբում լսել և դիտել «Բոլերոն» Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ՝ Վալերի Գերգիևի ղեկավարությամբ. տևում է ուղիղ 15 րոպե և 50 վայրկյան: Ուշադրություն դարձրեք դիրիժորի փայտիկին և աչքերին:

https://www.youtube.com/watch?time_continue=1&v=dZDiaRZy0Ak

Տեսաերիզը դիտելուց ու լսելուց հետո նորից միացրեք այն՝ շարունակելով կարդալ հովաձը:

Բոլերոյի սկիզբը – նախակրթարան ու կրտսեր դպրոց

Թմբուկի վրա երկու փայտիկներն այնքան թեթև ու նուրբ են հարվածում, որ կարծես չեն ուզում խախտել քար լռությունը, բայց որքան էլ որ խորհրդավոր լինի այդ լռությունը, այն պետք է խախտել, որովհետև Գերգիևը թարթեց աչքերը, ու հարկ է սկիզբն ազդարարել: Եվ հանկարծ, այդ բազմամարդ նվագախմբի տասնյակ շողշողացող դեպի վեր ցցված ու ներքև ուղղված գործիքներից մեկը սկսում է նվագել: Թմբուկի հազիվ լսվող ձայնին միացել էր պիկկոլոն (փոքր չափսերով ֆլեյտա): Տպավորությունն այնպիսին է, որ այդ պիկկոլոն սխալվել է, որովհետև բոլորն անշարժ ու լուռ են, և միգուցե, պիկկոլոյի երաժիշտը փորձում էր իր գործիքը: Ո՛չ, նա չէր սխալվել: Նա մի պարզ ու հասանելի մեղեդի սկսեց ու վերջացրեց: Ավելի ճիշտ՝ չէր էլ վերջացրել, երբ նրան միացավ սովորական ֆլեյտան, ու նորից լսվեց նույն մեղեդին: Նրանք դա արեցին Գերգիևի գուսպ հայացքի ու 5-6 սանտիմետրանոց սրածայր փայտիկի աննշան շարժումին ի պատասխան: Հաջորդ քայլին նույն մեղեդիով նրանց է միանում հոբոյը: Երաժիշտներն այնքան լուրջ են, ու անգնահատելիորեն մեծ է յուրաքանչյուր երաժիշտի սերը իր գործիքի նկատմամբ: Նրանք չեն ուզում զարմացնել իրենց վարպետությամբ: Նրանցից յուրաքանչյուրն իր գործիքի անունից է խոսում. «Ես թմբուկն..., ես պիկկոլոն եմ..., ես ֆլեյտան եմ..., իսկ ես հոբոյն եմ...դուրդ գալի՛ս է իմ ձայնը»: «Այո, դու լավն ես, մենք քեզ սիրում ենք», ի պատասխան այս հարցումի ձայնակցում են պիկկոլո կլարնետը իր ընկերոջ՝ սովորական կլարնետի հետ միասին:

Առաջին անգամ մայրիկից հեռու, մի քիչ վախվորած, հազիվ արցունքները զսպելով 2-ից 4 տարեկանների խմբին է միանում առաջին անգամ նախակրթարան ոտք դրած մանուկը, և կամաց-կամաց, խաղալով ու գրեթե չխաղալով, երբեմն լացելով իր ես-ն է ձևավորում նոր միջավայրում: Նրա ցանկությունը որևէ մեկին իր գիտելիքներով և կարողություններով զարմացնելը չէ: Նա պարզապես ուզում է, որ իրեն սիրեն այս նոր միջավայրում: Նա միայն կարող է ասել. «Ես Անին եմ.., ես Վահագն եմ..., ես Նարեկն եմ..., ես Նարեն եմ...»: Այստեղ է, որ վրա է հասնում 2-ից 4 տարեկան երեխաների զարգացման միայն սիրո վրա հիմնված ծրագիրը իր [ավագաթերապիայով](#), [տառթխիկներով](#), [խաղերով ու ծխական խաղիկներով](#), [չմփոցներով](#) ու շրխկաններով:

«Իմացումի հրճվանք» ծրագրով կրտսեր դպրոց հաճախելը գրավիչ է նրանով, որ շեշտը չի դրվում միայն օժտված երեխաների, նրանց սրտացավ ու գերպահանջկոտ ծնողների հետևողական աշխատանքի վրա, երբ տանը տառապանքով երեխաների հետ միասին դասեր են սերտում: Կարևորն այն է, որ երեխան սկսի սիրել սովորելը:

Հենց այսպես էլ ապրում ենք մեր հեղինակային-այլընտրանքային կրթական աշխատանքով:

Փողային գործիքներ – միջին դպրոց

Արդեն հոգեհարազատ դարձած մեղեդին նույնությամբ կրկնում են ֆագոտները և երեք սաքսոֆոնները, տրոմբոնները և տարբեր տեսակի շեփոնները: Յուրաքանչյուր գործիք

կարծես ասում է. «Ես համբերությամբ լսեցի բոլորիդ, հիմա էլ թույլ տվեք ձեզ միանալ»: Նորից նույն մեղեդին, իսկ ունկնդիրը չի ձանձրանում, որովհետև զգում է Մորիս Ռավելի մեծ սերը երաժշտական գործիքների նկատմամբ՝ նրանցից ոչ մեկին նախապատվություն չտալով: Բոլոր գործիքները նույն նպատակին են ծառայում՝ երաժշտություն են ստեղծում: Բոլորի գրավչության երկրորդ կարևոր պատճառը, որն ասոցացվում է հասարակական կյանքին ու մարդկային փոխհարաբերություններին, յուրաքանչյուր գործիքի առանձնացված գնահատումն ու արժևորումն է:

Միջին դպրոցում արդեն մանկավարժության շեշտը դրվում է յուրաքանչյուր սովորողի ինքնադրսևորման, անհատականության բացահայտման վրա: Ուսումնական գործընթացում մեծ դեր ունի նաև [ստեղծված թափանցիկ միջավայրը](#): Սովորողները կարողանում են ինքնարտահայտվել, ինքնադրսևորվել [Միջին դպրոցի ենթակայքում, սովորողների բլոգներում](#), Մարմարյա սրահում, [ուսումնական նախագծերում](#), [«Ռադիո բան»-ում](#), [ուսումնական ճամփորդություններում](#):

Հենց այսպես էլ ապրում ենք մեր հեղինակային այլընտրանքային կրթական աշխատանքով:

Միանում են լարային գործիքները, և ամբողջանում է սիմֆոնիկ նվագախումբը. Ավագ դպրոց

Բոլերոն ներկայացնելիս սիմֆոնիկ նվագախմբում ամենահամբերատարները լարային գործիքներն են՝ ջութակները, ալտերը, վիոլոնչելիները, կոնտրաբասերը և իհարկե՝ աստվածային տավիղը: Իրենց հերթին սպասելիս երաժիշտները մատներով են հպվում ջութակների լարերին, ինչպես կիթառահարներն են վարվում: Դա արդեն նվագող գործընկերներին գոհունակություն արտահայտելու, ծափահարելու յուրօրինակ արտահայտչամիջոց է: Եվ երբ գալիս է լարայինների ժամանակը, իր հանգիստ նիրհից արթնանում է նույնիսկ Վալերի Գերգինը, և դահլիճը հոգեցնցումի հաճելի սարսուռ է ապրում՝ արդեն որերորդ անգամ ծանոթ մեղեդին այս ուժգնությամբ լսելու հնարավորություն ստանալով, երբ թմբուկի ուժգին հարվածներին հետևում է նաև ցիմբալի շաչոցը: Ոգևորված է Գերգինը, ամբողջ նվագախմբի բոլոր գործիքները դրսևորում են իրենց ողջ ներուժը ու հանկարծ՝ լռություն...: Ի՞նչ եղավ, վերջացավ... Իսկ ո՞ւր մնաց երաժշտական գրեթե բոլոր ստեղծագործությունների ավարտն ավետող ու այս առումով շատ բնորոշ վերջաբանը: Բոլերոն սրանով էլ է առանձնանում բոլոր ուրիշ երաժշտական ստեղծագործություններից: Այն չունի բնորոշ վերջաբան, այն կարծես անավարտ է և իր անավարտությամբ շարունակում է ապրել ունկնդիրների հոգիներում: Երաժշտությունը չի ավարտվել, այն միայն մի պահ ընդհատվեց ու հիմա արդեն շարունակվում է իմ հոգում:

Հանրապետության բոլոր այլ հանրակրթական ավագ դպրոցների կրթական կարևորագույն փաստացի նպատակը [Պետական ավարտական և միասնական քննություններին նախապատրաստվելն է, որը որևէ կապ չունի պետական չափորոշիչների պահանջների](#)

հետ: Փաստորեն բոլոր այդ դպրոցներում երեք տարի շարունակ առարկայական շտեմարանների հարցաշարերը վերացնում են սովորողների սովորելու նկատմամբ սերը և անհատականության դրսևորման հնարավորությունները: Համահարթեցվում է ամեն ինչ՝ և՛ սովորողների կարողությունները, և՛ գիտելիքների պաշարը: Նրանցից պահանջվում է միայն փաստերի, տեղեկատվության, բանաձևերի կիրառման մտապահում և համապատասխան տեղերում խաչերի տեղադրում: Իսկ ի՞նչ է կատարվում մեզ մոտ: Ստացվել է այնպես, որ մեր Ավագ դպրոցում հեղինակային, այլընտրանքային մանկավարժությամբ, նախագծային և ոչ ֆորմալ ուսումնական պարապմունքների կիրառմամբ շատ ավելի մեծ ուշադրություն ենք դարձնում պետական չափորոշիչների իրականացմանը, քան պետական ծրագրերով առաջնորդվող բոլոր այլ հանրակրթական ավագ դպրոցները: Այսուհանդերձ, մեր ավագ դպրոցում առկա է մի կարևոր բացթողում: Անհատական ուսումնական պլանները, մտրակի՝ ամենօրյա դասասերտման բացակայությունը, նախագծային ուսուցման հիմքի վրա իրականացվող կառուցողական աշակերտակենտրոն ուսումնական պարապմունքները իդեալական դրախտային պայմաններ են ստեղծել և սովորող անհատի, և չսովորող անհատի ձևավորման համար: Ինչպե՞ս անել, որ մեր մոտ սովորելու գա միայն նա, ով ... Այս է մեր Ավագ դպրոցի այսօրվա խնդիրը:

Գյուղատնտեսության մեջ աշունն է բերքահավաքի շրջանը, իսկ մեր կրթահամալիրում՝ ամռան սկիզբը: Որքան զբաղված բերքահավաքի շրջան էր այս տարվա հունիսը իր ուսումնական ամառային ճամբարով, ստուգատեսներով և փառատոներով. հանդիպումներ, քննարկումներ, ստուգատեսային ու փառատոնային նյութերի դիտումներ, հյուրեր, ուսճամփորդություններ: Որքան ոգևորիչ էին Աշոտ Բլեյանի հունիսյան գրառումները: Հունիսի սկիզբն ու ընթացքն այս առումով համեմատելի է Բոլերոյի կատարման մեջ լարային գործիքների մուտքին: Դասավանդողների ամառային ճամբարի վերջին օրը նշանավորվեց անցնող ուսումնական տարվա ամենահաջողված նախագիծ-նորարարությամբ՝ համերգային մեդիաուրբաթով: Հունիսի ավարտով սկսվեց դասավանդողների ամենամյա արձակուրդային շրջանը, բայց կյանքը կրթահամալիրում շարունակվու է, ինչպես Մորիս Ռավելի անվերջաբան երաժշտությունը:

Հիմա հուլիսն է, շոգ ամառ, բայց կրթահամալիրը շարունակում է ապրել [սկումբային կյանքով](#), [ամառային ճամփորդություններով](#), [դաստիարակների ամառային դպրոցով](#), [դասվարների ճամբարով](#), [ինտելեկտուալ քննարկումներով](#), [մեդիաուրբաթներով](#):

Նվիրվում է [Գևորգ Հակոբյանի](#) 60-ամյակին:

41. [Media Public Education ... But Why Media?](#) (Դպիր 40)

The contents of the 6th annual meeting of the authors of author pedagogy is Media Public Education, ...but why media? The word “media” in English explanatory dictionaries is defined as “mass communications” eg television, radio and the press. The primary task of these three has always been the illustration of life in our country as well as in the whole world. They illustrate warm spots of conflicts, position or power abuses, election campaigns, car accidents, disasters, relationships between daughters-in-law and mothers-in-law, murders and causes of suicides, political views of different parties, repellent talk shows of arrogant “stars”. In a small clearing of this media forest of thick trees, in “Mkhitar Sebastatsi” Educational Complex has come out a new sprout Media Public Education by name. That sprout has already got its small shoots which are just being formed: media library, public school website www.mskh.am , media self education, media Olympiad, media festival, electronical pedagogical periodical, “personal computer-classmate” programme.

The library after Tigran Hayrapetyan is media because it is no longer only ours. Due to www.gradaran.mskh.am the library is accessible not only for the children of our educational complex, but also for the children of other schools and for Armenian Diaspora.

The library has begun making electronic versions of books. Our young compatriot, if You have had to temporarily interrupt Your education because of living in another country with your parents, You may visit the site www.gradaran.mskh.am, and find electronic versions of text-books there. It is two months that this work has begun and now there are 40 electronic books in the site. Teachers’ guidebooks on different school subjects have also been digitized. Hundreds of electronic teaching materials have been made in our educational complex for the last two years. Most of them have been placed in You Tube. Here science teachers can find DVDs of biology, chemistry and physics experiments with explanations. The History teachers can make their lessons more interesting and effective with such electronic teaching materials as: The Battle on Avarair, Armenian Kingdom of Kilikia, Ghars and Sevr Contracts, the Battle at Sardarapat, Mesrop Mashtots, Grigor Narekatsi, Komitas, Mkhitar Sebastatsi. Are you interested in Mathematics? Mathematical quizzes and geometrical problems are waiting for you. Are our historical monuments especially dear to you? Here are tens of teaching materials born during the educational trips about Armenia from Lori to Meghri. The teaching material “Drawing skills” is a real gift to teachers of drawing. Junior school teachers can find animated electronic cartoons of tales by Tumanyan and Andersen made by our computer teachers. Everything is unexpectedly fresh.

At our media library one can even find an electronic teaching material on vocational school subjects eg “Carpentry”.

The Public School Website www.mskh.am takes the second place in Armenia among educational websites as far as the number of everyday page viewers is concerned, but it is sure to be unique of its kind. It is unique, first of all, for its being democratically. Written materials, articles, photos or videos can be placed in the site by primary school pupils with their teachers’ assistance, high school pupils, teachers and the director of the educational complex without any initial censorship.

The site is breathing every minute and every hour. For example, having heard her Granma's memories about Easter celebrations in Gavar, Azatuhi Harutunyan, a pupil of grade 2, has placed a most colourful and lovely material on today's page with the help of her teacher. The material was posted in the evening, and it has already had 31 viewers early in the morning.

Children here learn to write not by writing dictations constantly being afraid of making spelling mistakes but by creating their own texts. A child is given a chance to reveal his or her capabilities which is the most difficult and important problem of pedagogy. Learners are encouraged to express their own opinions, raise a question which later may become a topic for discussion for all the pupils and the staff of the educational complex.

Nearly 30 new materials and articles are placed in the site every day, and the number of everyday page viewers is more than 1000. In fact the www.mskh.am is the only kind of mass media in Armenia which helps children find, read and create texts according to their interests. And the most important thing is that the website helps the children to evaluate their each day and to feel that they live a busy and interesting life.

The 39th issue of the Electronic Pedagogical Periodical www.dpir.mskh.am has already come out to help the teachers with their everyday self education. Articles on world-wide experience of progressive pedagogy as well as methods of teaching different school subjects and classroom activities by our teachers are published in the Dpir. We learn in order to teach and teach to enable the children to learn.

We are inviting all the pedagogues with progressive ideas involved in public education to take part in the 6th annual meeting of the authors of author pedagogy which is to take place in the media centre of "Mkhitar Sebastatsi" Educational Complex on May 12, 13 and 14. The meeting is entirely devoted to media public education. Come to study our experience, come with your own ideas, and come to collaborate with us. Media public education belongs to the 21st century.

42. [Մեդիահանրակրթություն... Իսկ ինչու՞ մեդիա](#) (Դպիր 41)

Հեղինակային մանկավարժության հեղինակների ամենամյա մեր 6-րդ հավաքի բովանդակությունը [մեդիահանրակրթությունն է](#): Իսկ ինչու՞ մեդիա: «Media» բառի հայերեն թարգմանական համարժեքը ՋԼՄ է՝ զանգվածային լրատվական միջոցներ, որոնցից են ռադիոն, հեռուստատեսությունը, մամուլը: Այս երեքի առաջնային գործը միշտ էլ եղել է մեր և ամբողջ աշխարհի կյանքի լուսաբանումը:

Լուսաբանվում են հակամարտությունների թեժ կետեր, պաշտոնական պարտականությունների չարաշահումներ, նախընտրական քարոզարշավներ, ավտովթարներ, հարս ու սկեսուրի հարաբերություններ, սպանություններ և ինքնասպանությունների դրդապատճառներ, տարբեր կուսակցությունների քաղաքական հայացքներ, շուրփիզնեսի «աստղերի» արդեն վանող թոքշոուններ: Մեդիայի այս հաստատրուն

ծառերով անտառի մի փոքրիկ բացատում՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, ծիլ է տվել մի նոր շիվ՝ **մեդիահանրակրթություն** անունով: Այդ շիվն ունի իր նոր ձևավորվող ճյուղերը՝ մեդիագրադարան, հանրակրթական դպրոցի համացանցային կայք՝ www.mskh.am, մեդիաինքնակրթություն, մեդիաօլիմպիադա, մեդիափառատոն, էլեկտրոնային մանկավարժական պարբերական, «անհատական համակարգիչ-դասընկեր» ծրագիր: Տիգրան Հայրապետյանի անվան մեր գրադարանը մեդիա է, որովհետև այն արդեն միայն մերը չէ: Շնորհիվ www.gradaran.mskh.am կայքի այն հասանելի է ոչ միայն մեր մարզերի ուսումնաստենչ երեխաների և ուսուցիչների համար, այլ նաև աշխարհի տարբեր ծայրերում սփռված մեր հայրենակիցների համար: Գրադարանը սկսել է գրքերի թվայնացման աշխատանքները: Քո ծնողների հետ ժամանակավորապես արտերկրում ապրող և այդ պատճառով էլ կրթությունը ընդհատած մեր փոքրիկ հայ բարեկամ, այցելի www.gradaran.mskh.am կայքը ու այնտեղ կարող ես գտնել հայերեն թվայնացված դասագրքեր: Երկու ամիս է, ինչ սկսվել են գրքերի թվայնացման աշխատանքները, և արդեն գրադարանի կայքում կարելի է գտնել 40 թվայնացված գիրք: Դասավանդողների պատվերով թվայնացվել են նաև տարբեր ուսումնական առարկաների դասավանդման մեթոդական ուղեցույցներ: Վերջին երկու տարիների ընթացքում կրթահամալիրում հարյուրավոր էլեկտրոնային ուսումնական նյութեր են ստեղծվել ուսումնական գրեթե բոլոր առարկաների տարբեր թեմաներով: Բնագետներն այստեղ կարող են գտնել կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի փորձերի տեսանյութերով նկարագրություններ: Պատմություն դասավանդողները կարող են ավելի հետաքրքիր ու արդյունավետ դարձնել իրենց դասերը Ավարարայրի ճակատամարտի, կիլիկիայի հայկական թագավորության, Ղարսի և Սևրի պայմանագրերի, Սարդարապատի ճակատամարտի, Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու, Կոմիտասի, Մխիթար Սեբաստացու և այլ պատմական կարևոր իրադարձությունների ու մշակույթային գործիչների մասին պատմող ուսումնական նյութերով: Հետաքրքրվում ես մաթեմատիկայով, ուրեմն քեզ են սպասում մաթեմատիկական ռեբուսներն ու երկրաչափական խնդիրները: Ձեզ համար առանձնապես թանկ են մեր պատմական ուշարձանները: Ահա՛ տասնյակ ուսումնական նյութեր, որոնք ծնվել են հայրենագիտական ճամփորդությունների ժամանակ՝ Լոռիից մինչև Մեղրի: Իսկ «գծագրական հմտություններ» ուսումնական նյութը մի անգնահատելի նվեր է գծագրություն դասավանդողների համար: Ամենափոքրիկների դասվարներն այստեղ կարող են գտնել Թումանյանի, Անդրեսենի հեքիաթները պատմող էլեկտրոնային շարժանկարները երեխաների ձայնագրություններով: Ամեն ինչ անսպասելի է ու թարմության շունչն ունի:

Մեր մեդիագրադարանում կարելի է նույնիսկ գտնել արհեստագործական առարկներին վերաբերող էլեկտրոնային ուսումնական նյութ, օրինակ՝ «Ատաղձագործություն»:

Հանրակրթական դպրոցի համացանցային կայք՝ www.mskh.am: Կայքն իր այցելուների թվով կրթական հաստատությունների մեջ երկրորդն է Հայաստանում, բայց վստահությամբ կարելի է ասել, որ եզակի է իր տեսակով: Այն եզակի է, նախ և առաջ նրանով, որ ամենաժողովրդավարականն է: Կայքում նյութ կարող է տեղադրել և՛ երկրորդ դասարանցին, և՛ տասներորդյին, և՛ դասավանդողը, և՛ կրթահամալիրի տնօրենը: Կայքը շնչում է ամեն րոպե ու ամեն ժամ: Օրինակ՝ կայքի այսօրվա էջում «Գավառի գատիկ» վերնագրով դպրոց-

պարտեզի երկրորդ դասարանցի Ազատուհի Հարությունյանն իր տատիկի պատմածով ու իր դասվարի օգնությամբ անցյալի հիշողություններով ու խորհրդավոր սպասումով լի մի ջերմ ու գունեղ նյութ է տեղադրել: Նյութը տեղադրվել է երեկոյան, իսկ վաղ առավոտյան այն արդեն ունեցել է 31 ընթերցող: Այստեղ գրել են սովորում հիմնականում ոչ թե թելադրությամբ, երբ աշակերտը գրվող նյութի բովանդակությանը բացարձակապես անտարբեր, բայց և տառասխալ չանելու վախը սրտում գրում է, իսկ ավելի ճիշտ՝ կրկնում է ուրիշի գրածը, այլ՝ իրենը ստեղծելով: Երեխային հնարավորություն է տրվում ինքնաբացահայտվելու, որը մանկավարժության մեջ ամենակարևոր ու ամենադժվար իրագործելի խնդիրն է: Կրտսեր դպրոցի աշակերտները իրենց ուսուցիչների օգնությամբ, իսկ ավագ դպրոցի աշակերտները լիովին ինքնուրույն ու առանց վերահսկվելու կարող են կայքում նոր նյութ տեղադրել, կարծիք հայտնել, իրեն հուզող հարց բարձրացնել, որը հետո կարող է դառնալ համադպրոցական քննարկման նյութ: Յուրաքանչյուր օր մոտ 30 նոր նյութ է դրվում կայքում, իսկ կայք այցելողների ընդհանուր թիվը յուրաքանչյուր օր անցնում է 1000-ի սահմանը: Փաստորեն կայքը ՁԼՄ-ների այն միակ տեսակն է, որն օգնում է երեխաներին իրենց հետաքրքրության սահմաններում տեքստեր ընթերցելու և ստեղծագործելու: Իսկ ամենակարևորն այն է, որ կայքն օգնում է երեխաներին արժևորելու իրենց ամեն մի օրը ու զգալու, որ իրենք զբաղված ու հետաքրքիր կյանքով են ապրում:

Էլեկտրոնային մանկավարժական պարբերական www.dpir.mskh.am, որի 39-րդ համարն է այժմ օգնում մեր մանկավարժներին ինքնակրթվելու: «Դպիր»-ում հրապարակվում են հոդվածներ մանկավարժության համաշխարհային առաջավոր փորձից, ինչպես նաև՝ տարբեր ուսումնական առարկաների դասավանդման մեր ուսուցիչների մեթոդներն ու դասարանական գործունեության ձևերը: Սովորում ենք սովորեցնելու համար և սովորեցնում ենք սովորել:

Հրավիրում ենք Հայաստանի Հանրապետության հանրակրթության մեջ ներգրավված բոլոր նորը գնահատող, առաջադեմ մանկավարժներին՝ մասնակցելու մայիսի 12-ին, 13-ին, 14-ին «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մեդիակենտրոնում տեղի ունենալիք հեղինակային մանկավարժության հեղինակների ամենամյա 6-րդ հավաքին, որն ամբողջովին մեդիահանրակրթությանն է նվիրված: Եկե՛ք ուսումնասիրելու մեր փորձը, եկե՛ք Ձեր գաղափարներով, եկե՛ք համագործակցելու: Մեդիահանրակրթությունը 21-րդ դարինն է:

43. [Կրեդոն ընդդեմ դոգմայի](#) (Դպիր 108)

Կրթական պարտեզ բնակելի արվարձանում



«Մխիթար Մեբաստացի» կրթահամալիրի բարեկամներ հովանդացի Առնոտ Փիթերսի և Իրիս Հոնդերդուսի վերջին ինստալացիան եղել է Նորվեգիայում՝ ազատատենչ գրող Էնս Ինգվալդ Բյորնոուի տուն-թանգարանի մոտ: Նոր աշխատանքը կոչվում է [CreDogma](#): Վերնագրում միահյուսվել են «կրեդո» (անձի սկզբունքների համակարգ) և «դոգմա» (հաստատված ճշմարտություն, որն ընդունում են առանց

կասկածելու) բառերը: «Կրեդոն ընդդեմ դոգմայի» թեման միշտ էլ արդիական է եղել տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր երկրներում: Միշտ էլ եղել է մարդկանց մի խումբ կամ գունե մեկ անձ, որ չի համակերպվել բոլորի կողմից ընդունելի դոգմա դարձած գորշ իրականության հետ ու պայքարել է իր սկզբունքների՝ կրեդոյի կենսահաստատման համար: Մեր իրականության մեջ արդեն անվիճելի ու ընդունելի դոգմա է, որ որքան մեծահարուստ է անձը, այնքան ընդարձակ է հանրային տարածքից զավթած նրա հողակտորը, և նույնքան էլ բարձր է այդ հողակտորը երիզող պարիսպը: Արդեն պարսպապատվել են նաև Սևանի առափնյա տարածքները, Ծաղկաձորի անտառները... Ամենուր հայաստանցուն, քաղաքացուն հիշեցնում են, որ կոնկրետ հողակտորը, փողոցը, բակը, քաղաքը, երկիրը իրենը չեն այլևս: Երևանի բազմաբնակարանոց շենքերին կից շատ տարածքներ հանրայինից առանձնացված են ժանգոտած փշալարերով, տարատեսակ ցանցերով, երկաթյա հին մահճակալների շրջանակներով, մազլցող փշոտ թփուտներով վեր խոյացող պարիսպներով:

Իմ աչքին էլ այս ամենը սովորական ու չվիճարկվող դոգմայի նման ընդունելի էր դարձել: Ես նույնիսկ լավ չեի պատկերացնում [«Կրթական պարտեզ»](#) նախագիծն իր քարտեզով, մինչև որ ինքս, ֆոտոխցիկը ձեռքիս, ոտքով չքայլեցի իրական ցանկապատազուրկ տարածքով, հետիոտնի արահետներով, թարմ ճիմապատված լանջերի կողքով: Այս լուսանկարը ես նույնպես կանվանեի «կրեդոն ընդդեմ դոգմայի»: Սա արդեն ոչ թե արվեստի գործի ինստալացիա է, այլ՝ իրական կյանքի:



Մի կողմում անհրապույր, վանող ցանկապատն է, որի տերն ասում է. «Սա քո՛նր չէ: Սա իմն է»: Մյուս կողմում Մեր Նոր դպրոցի բաց կանաչապատ տարածքը, կարծես, հրավիրում է. «Սա քո քաղաքն է, քո թաղն ու քո դպրոցը»: Իսկ սա էլ մեր Քոլեջի պարտիզպանների աշխատանքի արդյունքն է:



Ճաշակ, մաքրություն, հանրային տարածքի հետ ներառում... Որտեղ է վերջանում F4 թաղամասում մեր Դպրոց-պարտեզի դպրոցամերձ տարածքը, որտեղ է սկսում հարակից շենքերի բակը: Ամեն ինչ միահյուսվել ու ներառվել է՝ բաց յուրաքանչյուրի խնամքի համար:

դպրոց-պարտեզ է դարձել: Այստեղ կանաչն ամենուրեք է:



Երբ 2014-ի ամռանը սկսեցինք փորել Մայր դպրոցի նկուղային հարկերի դիմացի լանջերը, դեռ չգիտեի, չէի տեսնում մեր աշխատանքի նպատակը: Չգիտեի, որ մասնակցում եմ նոր ուսումնական տարածքների ստեղծմանը՝ «Հեծանվային ակումբ», «Հրաձգարան», «Գրադարան»... իրենց ապագա ճիմապատ լանջերով:

Անցյալ օրը հեռուստացույցով ցույց տվեցին, թե ինչպես է «Գրանդ հոլդինգի» սեփականատեր Վարդանյանների ընտանիքը բարեկարգել Մասիս քաղաքի կենտրոնը՝ կառուցելով մի ճիմապատ հանգստի գոտի՝ երեխաների խաղահրապարակով: Իհարկե շնորհակալության արժանի գործ է արված, բայց դա արվել է ֆինանսական մեծ ներդրումով, ընտանիքը գործել է «գրչով»: Եղել է ցանկություն, քաղաքապետի, մարզպետի աջակցություն ու գոհունակություն, իսկ հետագայում էլ՝ մասնագիտացված խնամք:



Մեր դեպքն ուրիշ է: Երբ կրթահամալիրն է այս ծավալի գործ ձեռնարկում մայրաքաղաքի ծայրամասային թաղամասերից մեկում, իր սուղ միջոցներով, իսկ խնամքն էլ իրականացվում է սովորողների ներգրավմամբ՝ որպես կյանքի դպրոցի ուսումնական աշխատանք, ամեն ինչ արդեն «Կրեդոն ընդդեմ դոզմայի» գաղափարի տիրույթում է:

